

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՌՈՐԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

Հատոր ութերորդ

## ԽԱՉ ԵՎ ՍՈՒՐ

Գիրք առաջին

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀՈԴԿԱԾՆԵՐ  
ԱԿՆԱՐԿՆԵՐ  
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ  
ՆԱՄԱԿՆԵՐ

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն  
Ստեփանակերտ-2017

**ՌՈՒԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ**

**ԵՐԿԵՐ**

*Հատոր ութերորդ*

## **ԽԱՉ ԵՎ ՍՈՒՐ**

*Գիրք առաջին*

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀՈԴՎԱԾՆԵՐ**

**ԱԿՆԱՐԿՆԵՐ**

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ**

**ՆԱՄԱԿՆԵՐ**

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն  
Ստեփանակերտ-2017

ՀՏԴ 821.19-8Եսայան  
ԳՄԴ 84(5Յ)  
Ե 583

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ

**Գիրքը լույս է տեսել Համազգային Հայ Կրթական և  
Մշակութային Միության Թորոնթոյի «Գլաձոր»  
մասնաձյուղի մեկենասությամբ:**

*Շապիկին և գրքի մեջ օգտագործված են  
Սամվել Գաբրիելյանի ստեղծագործությունները*

Եսայան Ռ.  
Ե 583 Երկեր/ Ռ.Եսայան.–Եր.:«Վաչագան Բարեպաշտ» հրատ.,  
2017. Հ. 8: Խաչ և սուր, Գիրք I: Բանաստեղծ., հոգվածներ,  
ակնարկներ, հարցազրույցներ, նամակներ. - 240 էջ:

«Խաչ և սուր» ժողովածուն, ուր ընդգրկվել են հեղինակի չափածո և արձակ էջերը, հոգևոր մի նոր տարածություն է բացում բանաստեղծի որոնումների դաշտում, ընդգծելով նրա հետաքրքրությունների, ձգտումների և առնչությունների հորիզոնը:

Գիրքը նվիրվում է ԼՂՀ պաշտպանության բանակի 25-ամյակին:

ՀՏԴ 821.19-8Եսայան  
ԳՄԴ 84(5Յ)

ISBN 978-9939-1-0538-3

□ Ռոբերտ Եսայան, 2017



## ՈԳՈՒ ՃԱՆԱԴԱՐՅ

ՀՈՂ ԱԶԶԻ ԼՈՒՅՍ Է.  
ԿՈՐՅՐԵՅԻՐԻ ԴԱՐԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ  
ԿԽԱՐԽԱՓԵՍ ԽԱՎԱՐՈՒՄ

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

**ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵԿԵԼ Է ՄԱՐՏԱԴԱՇՏԻՑ...  
ՉՐԱՆՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌՌԲԵՐՏ ԵՍԱՅԱՆԻ ՉԵՏ**

Չ.Ա.

*Երկիր, քո շնչի մեջ եմ ես գտնում հանգստությունս,  
Քո շնչի մեջ եմ ընդլայնվում և իմ անհանգստությամբ,  
Եվ քո հնամյա շունչն է ի զորու միայն որոշել,  
Թե ինչքանով եմ ես նահատակված  
Եվ կամ կենդանի:  
Ինչքան եմ մաքուր,  
Ինչքան աղարտված...*

Այս տողերը ես մեջ բերեցի «Երկիր» բանաստեղծությունից, և կարծում եմ՝ դիպուկ բնաբան եմ գտել մեր երկխոսության համար: Իրոք, գործ ունենք անհանգիստ մի հեղինակի հետ, որի հոգին անդադար չարժման մեջ է ոչ միայն բանաստեղծական ոլորտներում, այլև այս անհաշտ իրականության մեջ: Նա Ռոբերտ Եսայանն է՝ երեկ գրչով ու հոգևորով ապրող անհատ, այսօր՝ նաև զենքի մարդ, ազգապաշտպանության մարտիկ:

Ռոբերտի համար չեմ ասում, ինքը գիտե՝ միշտ էլ սպասում եմ նրա գալստյանը, մարտադաշտից նրա յուրաքանչյուր այց ինձ համար վերածվում է իսկական ապաստարանի՝ այս ռումբերից, մահերից, ծանր ու բիրտ խոհերից... Նա դարձյալ այստեղ է՝ Ստեփանակերտում, և ես ընկերական իմ պնդերեսությամբ խաթարում եմ նրա հանգիստը, ու նրան պարզապես քաշում երկխոսության մեջ՝ համոզված, որ Ռոբերտը մեզ համար բացահայտելու է այնպիսի ճշմարտություններ, որոնց կարիքը շատերս ենք զգում: Բացի այդ՝

հով չի կարող ճշմարիտ բանաստեղծի ու սրտանվեր զինվորի խոսքին...

**- Ռոբերտ, դժվար էր անցումը բանաստեղծ-լրագրողի քո կյանքից կռվող զինվորի առօրյային:**

Ռ.Ե.- Անցումը պոետական-լրագրական աշխարհից մարտական կյանքին ինձ համար և՛ դյուրին էր, և՛ դժվար: Դժվար չէր այն առումով, որ պատերազմը արդեն ներծծվել էր իմ մեջ իր տագնապներով, արհավիրքներով, հերոսականությամբ ու ողբերգականությամբ, ես հոգեբանորեն կիսով չափ պատրաստ էի: Դժվարությունը ներքին երկվության հաղթահարումն է: Երևի յուրաքանչյուր զինվոր մինչև զենքը ձեռքն առնելը ստիպված է լինում ինքն իր մեջ որոշակի հարցեր քննարկել, ու գտած պատասխաններից էր կախված լինելու՝ ինքը կարո՞ղ է դառնալ զինվոր, թե՞ ոչ: Ինքն իրեն պատկերացնում է պատերազմական բոլոր պայմաններում, բոլոր դժվարությունների առաջ կանգնում է մտովի և եթե դժվարությունները հաղթահարելու ուժ է գտնում իր մեջ, դրանով ավարտվում է հոգեկան երկվության կռիվը:

**Յ.Ա.- Այսօր քեզ ավելի շատ ինչ ես զգում, Ռոբերտ: Ինչ-որ բան խեղաթյուրվել է քո ներաշխարհում, թե՛ հավելյալ երանգներ ես որսացել...**

Ռ.Ե.-Առաջին անգամ երբ զենք եմ վերցրել ձեռքս, իմ մեջ արթնացել է տիրոջ զգացողությունը, ես տերն եմ այն հողի, որի վրայով քայլում եմ, որն ինձ սնում է և իմ գոյությունը նրան պաշտպանելու մեջ է: Պահը ճակատագրական է: Մեր ընթացքին հետևում են ոչ միայն մեր նախնիները, այլև ապագա սերունդները: Մեզնից, մեր կռվից ու պայքարից է կախված, թե նրանք որպես ստրուկներ են ծնվելու, թե՛ որպես ազատ մարդիկ: Կա նաև ավելի ահավոր հարցը՝ նրանք ծնվելու են արդյոք: Իմ հոգեբանության մեջ կատարվել են մասամբ դրական փոփոխություններ... Հոգով ավելի ամուր եմ զգում ինձ, կյանքի հետ հաղորդակցությունն ավելի ան-

միջական ու խորն է դարձել:

**Յ.Ա.- Ռոբերտ, հիշում ես իտալացի բանաստեղծ Ունգերետտոյի պատիկ բանաստեղծությունը, Արմեն Շեկոյանն է թարգմանել.**

Ջինվորները

աշնան ծառերի վրա

ճոճվող տերևներ են:

Մոտավորապես այդպես է: Ինչպե՞ս ես նայում զինվորի այդ վիճակին: Եվ հետո՝ այս պատերազմի մեջ ի՞նչ է քեզ համար ամենից արտառոցն ու անըմբռնելին:

Ռ.Ե.- Ունգերետտոյի պատկերն, իհարկե, բավականին խորն է: Բայց ես այն ընկալում եմ ավելի լայն իմաստով: Բանաստեղծի ընդգծած հատկանիշը ոչ միայն զինվորին է վերաբերում:

Այս պատերազմի մեջ ինձ համար արտառոց ու անըմբռնելի շատ բան կա: Արցախի փրկության երազանքով ապրում է ամեն մի հայ: Սակայն բոլորը չեն, որ հանուն այս սուրբ երազանքի կարող են գնալ զոհողության: Մեր ձեռքի ոչ բոլոր մատներն են սեղմված, և հարվածի պահին առաջին հերթին փշրվում են չսեղմված մատները: Մեր մարմնի մի մասը պրկվում է, պայքարում, կռվում, մյուս մասը հանգիստ ու թմրած վիճակում է: Ադրբեջանական ինքնաթիռը շուկայի տարածքը ռումբ գցեց: Ես տեսա, թե ինչպես էին պարետային խմբի տղաները օգնում վիրավորներին: Լսվում էին վիրավորների տնքոցներն ու աղաղակները: Նույն պահին շուկայի մոտ շարունակվում էր սոխի վաճառքը: Ոչ ոք հերթից դուրս չեկավ, կարծես ոչինչ էլ չի կատարվել: Ահա սա՛ է արտառոցն ու անըմբռնելին ինձ համար: Իմ զգացողության սահմաններում այս անտարբերությունը չի տեղավորվում:

**Յ.Ա.- Ինչպիսի՞ բարոյա-հոգեբանական մթնոլորտ է իշխում ձեր մարտկոցում: Յամերաշխ ու կո՛ւռ եք տղաներով, դարձել եք պրոֆեսիոնալ ռազմիկներ:**



Ռ.Ե.- Երկու շաբաթ առաջ մենք կորցրինք մեր մարտկոցի ամենահամարձակ ու հրաշալի տղաներից մեկին՝ հրետանաձիգ Դերենիկին: Այնքան անսպասելի հեռացավ նա մեզնից, որ մենք չենք հավատում, թե նա մեզ հետ չէ: Երևի երբեք էլ չենք հավատա: Դերենիկի կորստի կսկիծը մեր տղաներին ավելի է մոտեցրել ու հարազատացրել իրար: Շնորհիվ մարտկոցի փորձառու տղաների՝ Ժորայի, Ռադիկի, Ալյոշայի, Արսոյի, Ռուդիկի, Ալբերտի, Պետյայի, Մխիթարի, Գրիշայի ամենօրյա ջանքերի ու հմտության, ոչնչացվել են թշնամու ռազմական տեխնիկայի զգալի մասը, կենդանի ուժեր: Միակ բանը, որ մեր տղաներին «խեղձացնում է», դա զինամթերքի պակասությունն է:

**Յ.Ա.- Ռոբերտ, քո կարծիքով մեր պայքարի այս՝ զինված փուլը համաժողովրդական նույն խորությունն ու ծավալն ունի: Այդ ուղղությամբ ինչ է երևում քո «բանաստեղծական» ու «զինվորական» դիրքից:**

Ռ.Ե.- Արցախի խնդրի լուծման ձգձգումը շարժումը հանգեցրեց զինված պայքարի: Մեր Շարժման պտուղների քաղցրությունից օգտվեցին ուրիշները: Իսկ մեզ վիճակված է վայելելու և դառնությունը, և քաղցրությունը: Եթե ազգային երազանքն ունի իր քաղցրությունը, ունի և իր դառնությունը: Երկուսն էլ մերն են: Մեր արյան մեջ ենք կրում: Իհարկե, պարզ է, որ պայքարի այս՝ զինված փուլը համաժողովրդական նույն խորությունն ու ծավալը կունենա, եթե անցումը պատերազմական փուլին և հետագա մարտական գործողությունները կատարվեին պետական մակարդակով: Պետական ուժեր կառուցվածքների բացակայությունը բացասաբար անդրադարձավ թե կռվողների և թե խաղաղ բնակչության հոգեբանության վրա: Այստեղից էլ՝ անորոշության զգացողությունը, անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ, հոգեբանական ճեղքվածքները, խուճապը, տարածքային կորուստները... Խաղաղ բնակչության կյանքը պիտի դրվեր պատերազմական ժամանակ-

ներին հատուկ ռելիեֆի վրա: Չդրվեց: Երևի հնար չեղավ:

**Յ.Ա.- Դու ունես մի գեղեցիկ բանաստեղծություն «Ոգու տոն»:** Իմ նկատածով տոնն այդ նախկին տարերքը չունի: Ռոբերտ, դու ինչ «գեղամիջոցներ» կառաջարկեիր ազգի ու բանակի ոգին ամրապնդելու համար: Սա նախորդ հարցիս շարունակությունը եղավ:

Ռ.Ե.- Պատերազմը ոչ միայն զենքի, այլ հոգեբանությունների բախում է: Ադրբեջանը, որպես պետություն ձևավորման սաղմնային շրջանում է: Արցախը՝ նույնպես: Ադրբեջանն ունի տնտեսական ու ռազմական գերակշռություն: Ո՞րն է մեր առավելությունը: Մարտավարական դարավոր փորձը: Հոգեբանությունը: Ադրբեջանցի զինվորը չգիտի, թե ինչի համար է կռվում: Հայ զինվորը գիտի, որ կորցնելով հայրենի հողը, կորցնում է ամեն ինչ. ինքնություն, դեմք, մշակույթ, անցյալ, ներկա և ապագա...

Ազգի և բանակի ոգին ամրապնդելու համար արհեստական միջամտության կարիք չկա: Պարզապես պետք է վերջ տալ բոլոր խաղերին: Պետություն չխաղանք: Բանակ չխաղանք: Լինենք պետություն: Ստեղծենք պրոֆեսիոնալ բանակ:

**Յ.Ա.- Ամեն ճշմարիտ բանաստեղծ օժտված է նաև կանխատեսելու ձիրքով:** Ռոբերտ, դու ինչպիսին ես տեսնում մեր վաղը:

Ռ.Ե.- Կանխատեսումները այլքվում են իրականության հողից: Ինչքան էլ դաժան ու ծանր է մեր իրականությունը, դրական կանխատեսումների հող ունի իր մեջ: Այս հինգ տարիների ընթացքում ինձ միշտ ուղեկցել և ուղեկցում է արևմտահայության ողբերգական ճակատագիրը: Արևմտահայության ստեղծած մշակույթը այնքան խորն է ներծծվել հոգուս մեջ, որ դարձել է իմ արյան տեսողությունը: Ես միշտ ինձ համոզում եմ, որ մեզ այս անգամ բաժին չի ընկնի արևմտահայության դաժան ճակատագիրը: Եվ այդ միտքը խորապես սփոփում է ինձ: Եվ դա կույր սփոփանք չէ, ոչ էլ վարա-

գույր, որով ծածկվում է մեր իրականության ողբերգական պատկերը: Արևմտահայությունը «գործ ուներ» ուժեղ, կազմակերպված, իսկ մենք՝ նոր ձևավորվող պետության հետ: Եվ ամենագլխավորը (որ ինձ լուսավոր ապագայի հույս ու հավատ է ներշնչում), դա այն է, որ արցախահայությունը կարողացավ ժամանակին զինվել:

**Յ.Ա.- Քեզ հիմա էլ ձգում է գրիչը:**

Ռ.Ե.- Գրիչն ինձ ձգում է, ինչպես իմ ճակատագիրը: Իմ ամբողջ կյանքը տառապանքի պես կաթկթել է գրչիս ծայրից ու թղթի վրա բաբախել որպես հոգի: Ստեղծագործական դադարի շրջանը, որ լցվելու և ինքնորոնման ընթացք է, արդեն չորս ամսվա տևողություն ունի: Եվ նախազգացման նշաններ էլ չկան, որ մոտ ժամանակներս գրելու եմ: Սովորաբար այսպես է լինում. ահավոր հաճելի մի այլք հեռվից շոշափում է ինձ, և ես մեկ-երկու շաբաթ առաջ նախապես զգում եմ, որ գրելու եմ: Այս զգացումը երբեք ինձ չի խաբում: Ասածիս բանաստեղծական արտահայտությունը սա է.

*Գեղեցկություն մի ահավոր, որ տեսք չունի,  
Չունի մարմին, չունի նշան ու ոչ էլ ծայն.  
Չայտնվում է իբրև անհաս տենչի արձան,  
Իբրև վրեժ դարձնում տողս զոհասեղան,  
Իբրև պարզև-խառնում շունչս Անսահմանին  
Ու ոլորում աստղեր ի վեր ծեն մի կարմիր:*

**Չրանտ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**



### ԼՂՅ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Քո ճանապարհը՝ լույսի զարկերակ,  
դու՝ ավյուն Ոգու, հավատի կրակ:  
Խաչքարի ծայնն էր քեզ առաջնորդում,  
պատմության շունչը՝ հոգիդ փոթորկում...  
Հետո՝ Պայքարի կարմրածուփ օրեր.  
հնչեցին երգեր, որ այնքան խորն են...  
Քո ցավից հիմա բխում է երազ,  
ելքդ դառնում է հույսերի երան:  
Խղճի դարպաս էր վարքդ հերոսի,  
թեկուզ և ծանր էր... Խաչը Հիսուսի:



**ԱՐՅԱԽ**

*ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ*

Պատանդ երազանքիս նկուղներում փակված՝  
Ոգիս երազում էր օդ ու տարածություն,  
Մինչև որ հառնեց անձավներից նոր կյանք,  
Նկարագիր դարձան ամեն բառ ու անուն:

Ղարաբաղը, որպես Տրոյական մի ձի,  
Ծանու եղավ ու կործանեց ներսից ամեն մի շղթա,  
Ամեն բերդ ու ավան վերաճեց ոգով  
Ու դարձրեց բռննցք, ու դարձրեց ական...

Արդ՝ շարունակում է ընթացքն իր հաղթական,  
Որպես Արցախի հզոր մի տերություն,  
Արծիվ, որի թևերին կա՛ Մասիսի ձյուն,  
Կա՛ Անիի կարոտ, Սասնա հանդգնություն...  
Հայաստանի շրնչն է բաբախում կրծքի տակ,  
Եվ գլխին կրում է Տիգրան Մեծի սուրբ թագ:

03.02.2017թ.



### *Սպարապետ ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ*

Այս ճանապարհը ձգվում է ոգու  
 խորխորատներով, լեռներով տենդի,  
 նոր տարերքներ ու խոսքեր ես ոգում  
 սպարապետական քո բարձունքներից,  
 բացում ես աստղերը՝ որպես ոգու հանց,  
 ժպիտդ՝ իբրև հավանտ պարզում  
 լեռներին, հողին, ծառերին ծաղկած,  
 որտեղ վեհության օրերն են թևում...  
 Սպարապետ, կամքդ ուղի է դառնում,  
 հայացքդ՝ ոգու սրբագործություն,  
 քո մարտիկներն են ելքերից հառնում  
 և գնում դեպի... սխրագործություն:

## ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԸ

Մարտի 5-ին Արցախի և Հայաստանի հերոս Վազգեն Սարգսյանը կդառնար 58 տարեկան: ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի հավաստմամբ՝ Վազգեն Սարգսյանը կանգնած էր մեր ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ակունքներում, եղել է հայոց պետականության վերականգնման առաջամարտիկներից, հայոց բանակի հիմնադիրներից և առաջին հրամանատարներից մեկը և դեռևս կենդանության օրոք արժանացել է Սպարապետ պատվավոր կոչմանը:

Վազգեն Սարգսյանի հիշատակը վառ պահելու լավագույն միջոցը նրա պատգամների իրականացումն է, հայոց անկախ պետության շարունակական ամրապնդումը և բանակի հզորացումը:

Այսօր էլ արդիական հնչողություն ու նշանակություն ունի Երկրի նվիրյալ զավակի, գրողի ու հրապարակախոսի խոսքը. «Ղարաբաղի հարցի կարգավորումը պիտի իրականացնի ողջ հայ ժողովուրդը Հայաստանում, Ղարաբաղում, Սփյուռքում: Բայց առաջին հերթին պետք է հաշվի առնել Ղարաբաղի ժողովրդի կարծիքը, որովհետև նա իր կյանքի, արյան, իր զավակների գնով կարողացավ այս պատերազմում հիմնական դերակատարը լինել: Ինքը նվաճեց իր հողի վրա անկախ ապրելու իրավունքը, և ողջ հայ ժողովուրդը պարտավոր է պաշտպանել այն»:

Վ. Սարգսյանի հավաստմամբ՝ հասարակության միասնականությանը կարող ենք հասնել՝ ստեղծելով բարոյականության, հավասարության դաշտ: Անհրաժեշտ է ունենալ ոչ թե տարածաշրջանի ամենաուժեղ բանակը, այլ մեր ժամանակի լավագույն բանակներից մեկը: Մենք պիտի կարողանանք ամուր կանգնել մեր հողի վրա, կարողանանք մեր բեկված ընթացքը, ի վերջո, ուղղել և մտնել համաշխարհային զարգացած պետությունների, լավագույն ժողովուրդների շարքը:

Մեծ է ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի դերակատարությունը հայոց բանակի կազմավորման և կայացման գործում: Նրա կարծիքով՝ հայ զինվորից լավ զինվոր չկա: Այսօր էլ Սպարապետի խոսքը թևավորում և սատարում է մեզ՝ ուղենշելով մեր լինելության ճշմարիտ ընթացքը. «Մեր հավաքական կամքն ու դիմադրողականությունը պիտի մեծացնենք, փրկությունը դա է»:

Ճշմարիտ է ասված. «Հաղթում է նա, ով ցանկանում է հաղթել, ով համոզված է, որ հաղթելու է, ով վստահում է իր ուժերին, ով ապավինում է իր ոգու ու բազկի զորությանը ու երբեք չի համակերպվում պարտության մտքի հետ»: Վազգեն Սարգսյանի կարծիքով՝ մարտադաշտում հաղթում է զինվորի ոգին: Մենք հաղթեցինք հերոսական պայքարով և ամուր հավատքով: Հայրենի հողն ու ջուրը, եկեղեցին ու խաչքարը մեր միասնական ոգուն ավյուն և ուժ հաղորդող սրբություններ են: Արցախյան պատերազմի ժամանակ թափված արյան գինը հաղթանակն է:

Վ. Սարգսյանի մայրը՝ Գրետա Սարգսյանը, այսպիսի խոսքերով է բնութագրել որդուն. «Ազգային հպարտությունը, հայի պատվախնդրությունը շատ ուժեղ էին Վազգենի հոգում: Ատում էր մազապուրծ բառը, որ եկել կպել էր մեզ, ասում էր՝ ավելի լավ է ագրեսոր լինել, քան մազապուրծ»:

Վազգեն Սարգսյանը հայոց բանակը համարում էր իր զավակը. «Չսիրված երեխան լավ մարդ չի դառնում: Բանակը մեր բոլորիս զավակն է, և բոլորս պարտավոր ենք հարազատի պես սիրել նրան»: Ժամանակը ցույց տվեց, թե որքան հեռատես էր ու իմաստուն հայ ազգի նվիրյալը: Մարդ, որն իր ուժն ու էությունը նվիրեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին՝ սերունդներին թողնելով գոյատևման և արիության բացառիկ դասեր:

Վազգեն Սարգսյանը հայ ժողովրդի ոգու պատմության մեջ կգոյատևի նաև որպես գրող: Նրա ստեղծագործությունը «հավա-



տավոր մարդու խոստովանություն է»: «Պատմության սկիզբն ու շարունակությունը», - այսպես է խորագրվել Վ. Սարգսյանի գիրքը՝ հոգեկերտվածքը, որտեղ ամփոփվել են նրա ստեղծագործությունները և որոնք, Յրանտ Մաթևոսյանի կարծիքով, ինքնահաստատման արձագանքներ են. «Խոստովանանքի նրա բառը ծեփվել է, նրա հեռանալուց հետո իր խորանն ամայի չէ, Ճշմարիտ Բանի տաճարն իր հիշողությունն է ներքաշել կայուն դիմագծի մի նույնքան խոշոր անհատի, որքան ռազմի ու քաղաքականության սպարապետին ու գործչին»:





**ԽԱՉ ԵՎ ՍՈՒՐ**

*Արցախի հերոս  
ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ*

1.

Երազանքս կապույտ աղեղն է լեռան,  
Սերմի ընդվզումն է ելնում հավատն ի վեր,  
Իսկ իմ հայացքում և ժայռերի վրա  
Բռնկվում են հույսի կրակները դեղին:

Իմ թևերի տենդն են թափում. հողի վրա  
Զրույցի և ասքի խարույկն է բռնկվում,  
Վայրկյանները իրենց կտուցները խրած  
Երկնքի մեջ՝ աստղի պահուստն են քրքրում.-

Եվ արյուն է թափվում ու արյան հետ՝ փետուր,  
 Եվ թռիչքի աճյուն ու ապարանք հողմի,-  
 Աստված իմ ոտքիս տակ ճանապարհի չէ, այլ՝ թո՛ւր,  
 Յորիզոնը՝ վահան, որ նախնին է թողել՝  
 Իբրև ժառանգություն: Խավարի մեջ հիմա  
 Ես իմ քայլն եմ խրում հրե սեպի նման:

13.03.1992թ.

2.

Լուսաբացի քանի՞ օրորոց է քերել  
 Թուրքը հայոց հողի արգանդներից բեղուն,  
 Քանի՞ երազ ու տենչ հանդգնորեն գերել,  
 Որ դեռ թփրտում են մահի ուռկաններում:

Քանի՞ աչքի տաճար փոշիացել անհետ  
 Ու հառնել է մի օր վերքերի մեջ հայի,  
 Ցավերի մեջ հայի լեռնացել են մահեր  
 Ու փլվել են գահեր... կանչով Ավարայրի...

Եվ արյուն է հոսում: Եվ ձիչեր են մեխվում:  
 Եվ որբեր են ծնվում ստվերներում դխի:  
 Եվ երկնքից երկիր ձգվող սյունը՝ մոխիր...  
 Սրի շեղբին երկրի բախտն է լուսավորվում.  
 Եվ պրկվում է բախտը աղեղի պես Յայկի,  
 Որով դժոխային վիհը պիտի փակվի:

09.03.1993թ.

**ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԱՄԵՆԱՎԵՅ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ Է**



*Հարցազրույց Արցախի հերոս, ԼՂՀ պաշտպանության փոխնախարար, ԱԱՄ նախագահ, գեներալ-մայոր Ս. Զ. Կարապետյանի հետ:*

**- Սեպտեմբերի 2-ին լրանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 26 տարին: Իրոք, ԼՂՀ անկախությունը համայն աշխարհի հայության հպարտությունն է, երջանկության գրավականը և միավորող ուժը: Մեծ ավանդ ունենալով ԼՂՀ անկախության պահպանման և ամրապնդման գործում, Դուք այսօր էլ շարունակում եք ձեր եռանդուն և նպատակասլաց գործունեությամբ նպաստել երկրի հզորացմանը: Ինչպես յուրաքանչյուր հայրենասեր հայի, Ձեզ համար նույնպես այլընտրանք չկար: Եթե հռչակել ես ԼՂՀ անկախությունը, ապա պիտի պատրաստ լինես զենքով պաշտպանելու նրա անվտանգությունը: Սա է միակ ճանապարհը: Մեր հերոս նախնիներից և պատմությունից եկող ճշմարիտ դասը: Ի՞նչ խորհուրդ ունի Ձեզ համար Անկախության տոնը:**

**- Նախ ուզում եմ շնորհավորել մեր ժողովրդին՝ Անկախության տոնի կապակցությամբ, մաղթել քաջառողջություն, երջանկություն և նորանոր երազանքների իրականացում:**

**- Նախ ուզում եմ շնորհավորել մեր ժողովրդին՝ Անկախության տոնի կապակցությամբ, մաղթել քաջառողջություն, երջանկություն և նորանոր երազանքների իրականացում:**

**26 տարի առաջ մեր ժողովուրդն հռչակելով Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետություն, կատարեց ճիշտ ընտրություն:**

Ազատ ու անկախ ապրելու տենչը, որը դարեր շարունակ եռացել է արյան մեջ հայի, Արցախյան գոյապայքարում դարձավ համայն աշխարհի հայությանը միավորող ուժ, ճանապարհ, որը տանում է դեպի հավիտենական ընթացք: Անկախությունը ձեռք է բերվել քաջորդիների արյան գնով. այն պահելն ու ամրապնդելը մեր այսօրվա գերխնդիրն է:

Արցախի անկախության տոնը կարելի է համարել համայն հայության անկախության տոնը: Պաշտպանելով հող-հայրենին՝ մենք առաջին հերթին պաշտպանեցինք հայ ազգի արժանապատվությունը, փրկեցինք ոչ միայն հողը, այլև մեր մշակութային բացառիկ արժեքները:

Անկախության հռչակումով մեր ժողովուրդն արտահայտեց ազատ ու անկախ ապրելու իր անսասան կամքը: Դա միասնական ոգու հաղթանակ է, որ դրսևորեց մեր ժողովուրդը՝ հաղթահարելով նաև երկրի վերակերտման ու զարգացման հետ կապված դժվարությունները:

Մեզանից յուրաքանչյուրն իր տեղում և ուժերի ներածի չափով ավանդ է ունեցել Արցախյան գոյապայքարում՝ հաջողությամբ պաշտպանելով երկրի սահմանները, կառուցելով ու ամրապնդելով մեր պետությունը, որը հայ ժողովրդի միասնության ու հպարտության խորհրդանիշն է:

Մենք մեր ապրելու իրավունքը ինքներս ենք կռել՝ շարունակական պայքարում պահպանելով մեր ազգային ավանդույթները, մշակութային դիմագիծն ու հաղթական ոգին: Այսօր մեր խնդիրն է նաև՝ հայաշունչ ու հայակերպ պահպանել մեր պապենական հողերը, միասնական ուժերով հասնել նաև տնտեսական նվաճումների, որը ավելի կամրապնդի մեր լինելության ներկան ու ապագան: Այսօր կարող ենք հպարտությամբ ասել, որ ունենք հզոր ու մարտունակ բանակ, որը հանդիսանում է խաղաղության պահպանման կարևորագույն երաշխիքը: Մենք պարտավոր ենք իրա-

կանացնել նաև մեր նահատակների երազանքը, այն է՝ հասնել Արցախի Չանրապետության միջազգային ճանաչմանը:

**- Անկախության անցած տարիները հաստատում են, որ միայն սեփական ուժերով և միասնաբար կարելի է կերտել հզոր պետություն:**

**Ինչպիսի դեր ունի ուժեղ բանակը տարածաշրջանում խաղաղություն, կայունություն և անվտանգություն պահպանելու գործում:**

- Կառուցելով ու ամրապնդելով մեր պետությունը՝ մենք իրական ու շոշափելի ենք դարձնում ժողովրդի երազանքը, այն է՝ պահպանել Արցախյան գոյապայքարում ձեռք բերած արժեքները՝ ազատասեր ոգին, միասնական ու անկտրում կամքը, մարտունակությունը՝ սեփական ուժերով կռելով վաղվա հաղթանակը: Չամոզված ու վստահ եմ, որ մեր պետությունը անհրաժեշտ ամեն ինչ ունի՝ ապահովելու համար իր ժողովրդի խաղաղ ապագան:

Պաշտպանության բանակը բազում մարտերում կոփվելով ու զորանալով, դարձավ տարածաշրջանային անվտանգության գործոն և զսպեց Ադրբեջանի նվաճողական նկրտումները: Պաշտպանության բանակը հանդիսանալով Չանրապետության անվտանգության ամենամեծ երաշխիքը, միաժամանակ հաղթանակներ կերտած ազատամարտիկների ոգու և ջանքերի արտահայտիչն է, բացարձակ մի արժեք, որ կրում է իր մեջ մեր ժողովրդի փառավոր անցյալը, հաստատուն ներկան և լուսավոր ապագայի հեռանկարը:

**- Պատերազմի ժամանակ իրագործված յուրաքանչյուր կարևորագույն մարտագործողություն յուրօրինակ հայրենյաց դաս է, որ փոխանցվում է սերունդներին: Ի՞նչ նշանակություն ու խորհուրդ ունի Շուշիի ազատագրումը:**

- Շուշիի ազատագրումը մեր նորօրյա տարեգրության ամենափառավոր էջերից մեկն է, պատմական երազանք, որ իրականու-

թյուն դարձրին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը՝ փրկելով Ստեփանակերտ մայրաքաղաքը ամենօրյա ռմբահարումից և ցամաքային ծանապարհի հարթելով դեպի Մայր Յայաստան: Ճշմարիտ է ասված. «Դժվար է գերագնահատել Շուշիի ազատագրման բարոյական նշանակությունը. այդ օրը հայը վերջնականապես հավատաց իր ուժերին, իսկ ողջ աշխարհի համար ակնհայտ դարձավ, որ հայ զինվորի ոգուն և իր հայրենիքն ազատագրելու նրա կամքի առջև անգոր են անգամ բարձրաբերձ ժայռերն ու անդնդախոր կիրճերը, ոչինչ են թշնամական սպառազինությունն ու տեխնիկան»: Այո, Շուշիի ազատագրումը մեծ նշանակություն ունեցավ մեր գոյապայքարի տարեգրության մեջ՝ ԼՂՀ անկախությունը դարձնելով իրական ու անշրջելի:

Յուրաքանչյուր հաղթանակի ու հաջողության հիմքում մեր նվիրյալների մաքառումն ու պայքարն է, անմնացորդ նվիրվածությունը, այն քաջորդիների վաստակը, ովքեր, իրենց ուսերին վերցրին փորձությունների ծանրությունը, հաղթահարելով մեծագույն դժվարություններ, հասան բաղձալի ելքին, որ Յաղթանակների ոգին է:

**- Այո, անչափ թանկ գին է վճարվել մեր ազատության ու անկախության համար: Ազատամարտիկի անունը, որպես վեհանձնության խորհրդանիշ, շարունակում է ուղեկցել սերունդներին դեպի նպատակակետ: Ո՞րն է Արցախի ազատամարտիկների միության առաքելությունը ընդհանրապես և այդ տեսանկյունից:**

- Արցախի ազատամարտիկների միությունը ամենից առաջ մեր երեկվա պատերազմի բոլոր մասնակիցներին համախմբող ուժ է, որը պետք է ծառայի մեր պետության ամրապնդման և նրա հզորացման շահերին: Անհրաժեշտ է, որ միության յուրաքանչյուր անդամ ճիշտ գիտակցի իր տեղն ու դերը պետականակերտման գործում և իրենից կախված ամեն բան անի հանուն գերխնդրի լուծ-

ման, այն է՝ մասնակցել պետության հոգևոր, տնտեսական և ռազմական հզորացմանը:

Ճշմարիտ է ասված. «Մեր հաղթանակի գրավականը ամեն հայի ամենօրյա բարձրորակ աշխատանքի և մեր թշնամիների դեմ հերոսական պայքարի մեջ է»:

Արցախի ազատամարտիկների միությունը նպաստում է նաև բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, խթանիչ ու ներգործուն դեր կատարում մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

Չերոսների արյան գնով ազատագրված հող-հայրենին արիության ու ոգու դարբնոց է, մեր ժողովրդի միասնության խորհրդանիշը: Գլուխ խոնարհենք Արցախյան գոյամարտում նահատակված ազատամարտիկների անմահ հիշատակի առաջ:

Անշուշտ, տարեցտարի ավելի է բարձրանում Արցախյան ազատամարտի մասնակցի անունն ու դերը, հասարակության կյանքում զգալի դառնում նրա բացառիկ առաքելության կարևորությունն ու նշանակությունը: Մենք չէ՛ որ պիտի գնահատենք... Մեր կատարած աշխատանքը կարող է գնահատել միայն ժողովուրդը:

Խաղաղությունը լավագույն ասպարեզն է՝ ամրապնդվելու համար ոգով ու կամքով, զենքով ու մարտունակությամբ, դրանով իսկ մենք կհաստատենք մեր ինքնության գերակայությունը՝ մեզանից մշտապես հեռու վանելով պատերազմի վերսկսման իրողությունը:

Բոլորս պետք է գիտակցենք, որ պատերազմը դեռևս ավարտված չէ: Հակառակը, եթե հետևենք առաջին գծում այսօր տեղի ունեցող իրադարձություններին, ապա կհամոզվենք, որ հակառակորդը օրվա ընթացքում անընդհատ խախտում է հրադադարի ռեժիմը, իսկ որոշ դեպքերում էլ դիմում դիվերսիոն գործողությունների: Իսկ դա նշանակում է, որ մենք գտնվում ենք չհայտարարված պատերազմի մեջ, մանավանդ, որ դրանց արդյունքում ունենում ենք նաև զոհեր և վիրավորներ: Նման պայմաններում մեր ազգի



բոլոր ուժերի վերամիավորումն ու ներքին համերաշխությունը անհրաժեշտ է:

Արցախի ազատամարտիկների միությունը երեկվա պատերազմի մասնակիցներին միավորող, նրանց ճակատագրով մտահոգ մի կառույց է, որը հարկ եղած դեպքում կանգնելու է մեր բանակի կողքին և պաշտպանելու է հայրենիքը:

**- Ուշագրավ է նաև այն փաստը, որ ազատամարտիկները եռանդուն գործունեություն են ծավալում նոր սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:**

- Միության գերնպատակը ոչ միայն ազատամարտիկների հիմնախնդիրների լուծումն է, այլև այն, որ, կազմակերպությունը իր արդյունավետ և նպատակասլաց գործունեությամբ նպաստում է հանրապետության անվտանգության ամրապնդմանը և, որ շատ կարևոր է՝ նոր սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Պաշտպանության բանակի և Արցախի ազատամարտիկների միության նախաձեռնությամբ արդեն ավանդույթ է դարձել «Արիության դասեր»-ի կազմակերպումը հանրակրթական դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նպատակը մեկն է՝ դաստիարակել այնպիսի սերունդ, որն ի վիճակի կլինի պաշտպանելու և հզորացնելու մեր հայրենիքը, պատրաստ դիմակայելու թշնամու ոտնձգություններին:

**- «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպության անդամները բազմիցս հաստատել են իրենց գործունեությամբ, որ արժանի են իրենց կոչմանը: Իրոք, «հայրենիքի պաշտպան» հասկացությունը պետք է հասկանանք ու ընդունենք լայն իմաստով, որովհետև, մեծ հաշվով, հայրենիքի պաշտպան է յուրաքանչյուր մարդ, ով պարզապես իր երկրի նվիրյալ քաղաքացին է, ով պարզապես նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր գործը, ով պատրաստ է հարկ եղած դեպքում ոտքի կանգնել՝ իր հողը, իր արժեքները:**

**րը պաշտպանելու»:** Այս առումով ևս կարող ենք վստահաբար ասել, որ հայրենյաց պաշտպանները արժանի հետնորդն են Արցախյան գոյապայքարի բովով անցած ու հաղթանակներ կռած ազատամարտիկների, ովքեր այսօր էլ շարունակում են ակտիվ գործունեություն ծավալել՝ ի շահ Չայրենիքի բարօրության: Սպասելիքները այսօր էլ մեծ են երիտասարդ սերնդից:

- Այո, «Չայրենյաց պաշտպան»-ը կոչված է բարձրացնելու մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության արդյունավետությունը: Ստեղծվել է հենց երիտասարդության շրջանում միության աշխատանքները կանոնակարգելու և երկրի պաշտպանների շարքերը արժանի հերթափոխով համալրելու նպատակով: Նա իր առջև խնդիր է դրել համախմբել հայ երիտասարդությանն ազգային գաղափարների շուրջ, նպաստել նրանց հոգևոր և ֆիզիկական զարգացմանն ու հայրենասիրական ոգու բարձրացմանը: Կազմակերպության համար շատ կարևոր է Պաշտպանության բանակի հետ համագործակցությունն ու համատեղ միջոցառումների իրականացումը: Ուշագրավ է հայրենյաց պաշտպանների խոստովանությունը. «Մեզ վիճակվել է լինել ազատության դրոշակակիրին հաջորդող սերունդ, ու դա առավել քան պարտավորեցնում է այդ դրոշը սրբությամբ պահել ու փոխանցել հաջորդ սերնդին, և մեզանից յուրաքանչյուրն այսօր իրավամբ հպարտանում է այդ պատասխանատու առաքելությամբ»:

«Չայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպությունը դեռևս մեծ աշխատանք ունի կատարելու: Հավատանք, որ նորանկախ հայրենիքի երիտասարդ պաշտպանները լինելու են մեր հերոս ազատամարտիկների արժանի հետնորդները և ջանք ու եռանդ չեն խնայելու մեր երկրի հզորացման ու բարգավաճման համար:

**- Հայտնի է, որ տարեցտարի ավելի են ընդլայնվում Արցա-**

խի ազատամարտիկների միության գործունեության շրջանակները, ինչին նպաստում են նաև մեր ժողովրդի հայրենանվեր զավակները: Ինչ խոսք, բարեգործությունն էլ հայրենասիրություն է:



- Անչափ կարևոր է, որ մեր միության կողմից իրականացվող գործընթացները պաշտպանվում և իրենց դրական գնահատականն են ստանում մեր երկրի իշխանությունների կողմից: 2013թ.-ին ավարտվեց Արցախի ազատամարտիկների միության կենտրոնական գրասենյակի շինարարությունը: Հատկանշական է, որ այն ԼՂՀ նախագահի և բարձրաստիճան մեր ղեկավարների օժանդակության շնորհիվ կառուցվեց հենց Ստեփանակերտի կենտրոնում և ունի խորհրդանշական իմաստ: Համոզված եմ, որ երկրի իշխանությունների նման վերաբերմունքը լավագույն գնահատականն է մեր միության կողմից կատարված և կատարվող աշխատանքների: Իսկ այդ ամենը մեզ ոչ միայն ոգևորում, այլև պարտավորեցնում է մեր աշխատանքում լինել առավել կատարողական և նպատակային:

Արցախի ազատամարտիկների միությանը աջակցում են նաև բարերարները, որոնք ձգտում են մաս կազմել երկրում ընթացող հայրենանվեր գործընթացներին: Նրանք բարձր գնահատելով Միության գործունեությունը, կարևորում են նաև նրա հայրենապահպան ու ազգանպաստ դերը, երկրի և բանակի հզորացմանը նպաստող անփոխարինելի առաքելությունը: Եվ պատահական չէ, որ բարեգործական առինքնող զգացողությամբ համակվում են հատկապես այն հայորդիները, ովքեր մասնակցել են Արցախյան պատերազմին, հաղթահարել բազում դժվարություններ, իրենց ոգու և արյան ընդվզումը խառնել հաղթանակով պսակված համաժողովրդական պայքարին:

Չատկանշական է, որ մեր հայրենանվեր բարերարների փոխանցած միջոցներով ԱԱՄ-ը օժանդակում է այն ազատամարտիկների ընտանիքներին, որոնք գտնվում են սոցիալապես անապահով վիճակում, աջակցում նրանց բնակարանների վերանորոգման գործում: Ուշադրության կենտրոնում է պահում նաև հաշմանդամ ազատամարտիկների խնդիրները, հնարավորության դեպքում օժանդակում զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշակոթողների կառուցման և վերանորոգման գործում:

Բարեգործությունն էլ հայրենասիրություն է, որ փոխանցվում է սերնդեսերունդ, դառնում ասպետական վարք, հայրենապաշտության վառ արտահայտություն:

**- «Խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի»,- Գ. Նժդեհի խոսքերը այսօր էլ ժամանակահունչ են և արդիական: Կարծում եմ երեկվա պատերազմի մասնակիցները իրենց մարտական փորձով ոչ միայն օգտակար կարող են լինել դիրքապահ զինվորներին, այլև ոգեշնչել ու ոգևորել նրանց հայրենասիրական գաղափարներով: Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվում Միության կողմից՝ Ազատամարտի մասնա-**

**Կիցների փորձն ու եռանդը այսօրվա բանակաշինության գործում ձիշտ ու նպատակային կիրառելու ուղղությամբ:**

- Այսօր չափազանց կարևոր է նաև մեր քաղաքացիական ակտիվությունն ու պատասխանատվությունը հայրենիքի վաղվա օրվա համար: Ժամանակի պահանջն է, որ հայ ժողովուրդը վճռական լինի մեր երեկվա տարած հաղթանակների պահպանման և նոր ձեռքբերումների կերտման գործում:

Անչափ կարևոր է նաև Միության կողմից հանրապետության զորահավաքային ռեսուրսի հետ տարվող աշխատանքների համալիրը: Մեր կազմակերպության յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ պատերազմը վերսկսվելու դեպքում, առաջինը հենց ինքն է կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքերում ու նաև իրենով է պայմանավորված լինելու վաղվա ռազմական հաջողությունը: Իսկ վաղը հաղթանակի հասնելու համար մեզնից յուրաքանչյուրը պետք է նախապատրաստվի այսօր:

Ճշմարիտ է ասված. «Ցանկացած բնագավառում հաջողության հասնելու համար առաջնահերթ նախապայման են հանդիսանում նպատակի հանդեպ ունեցած հավատն ու հանուն դրա գործելու կամքը»:

Արցախյան Ազատամարտի մասնակիցը, լինելով հայրենասիրության և ազգապահպանության խորհրդանիշ, այսօր էլ իր բացառիկ դերն է կատարում սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում: Պատերազմում հաղթում է զինվորականի ոգին: Եվ հաղթած զինվորականի ոգու պատմությունն է դառնում ուղեցույց ամեն հայի համար, ով ձգտում է պահպանել հայրենի երկրի դիմագիծը, ով սիրում և պաշտում է հայրենիքը ոչ միայն վտանգի պահին, այլև ամեն օր և ամեն ժամ: Չէ որ հայրենիքի պաշտպանությունը հայ մարդու ամենավեհ առաքելությունն է:

**- Հայտնի է, որ հայ կնոջ դերն ու առաքելությունը կյանքում**

**մեծ է ու անփոխարինելի: Չայ կինն հաստատեց իր անփոխարինելի դերը Արցախյան գոյապայքարում՝ վստահորեն կանգնելով ազատամարտիկների կողքին: Ո՞րն է հայ կնոջ լինելիության գաղտնիքը:**

- Այո, դարեր շարունակ հայ կինը եղել է ազգային ավանդների սերմանողն ու պահապանը, հայ գրի ու մշակույթի կենարար լուսով սերունդներ դաստիարակող ու կրթող նվիրյալը, ով անմնացորդ նվիրումով ու անխոնջ ավյունով շենացրել և այսօր էլ շարունակում է բարգավաճ պահել ոչ միայն սեփական օջախը, այլև հասարակական կյանքն ու հայրենիքի ապագան:

Մեծ ու անգնահատելի է հայ կանանց ու դուստրերի դերը նաև Արցախյան գոյապայքարում, մարտագործողությունների ժամանակ նրանց ցուցաբերած արիությունն ու կամքը բացառիկ էին և ոգևորիչ, արժանի հիացմունքի:

Չայ տղամարդը միշտ էլ պաշտել է կնոջ գեղեցկությունն ու մայրության խորհուրդը, հիացել նրա ազգապահպան գործունեությամբ: Կինը՝ որպես հավատի, հույսի և ոգևորության աղբյուր, այսօր էլ ներշնչում է բոլորիս՝ նորովի իմաստավորելով կյանքը:

Ուզում եմ նաև առանձնակի հիշել և մեծարել այն կանանց և դուստրերին, ովքեր իրենց կյանքն են զոհաբերել հանուն Չայրենիքի ազատության:

Մենք ազգովին փորձում ենք մեզ ընձեռնված հնարավորության սահմաններում վերաիմաստավորել հայ կանանց ու աղջիկների գեղեցկությունն ու կերպարի վեհությունը: Իսկ դա բնական ու օրինաչափ է, քանզի հայ մարդու համար մայրն ու գեղեցկությունը միշտ էլ եղել են հույսի, հավատի և ոգեշնչման աղբյուր, եղել են մեր զինակիցն ու թիկունքը թե՛ խաղաղ ժամանակներում և թե՛ օրհասական պահերին:

**- Դուք նաև ԼՂՅ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն եք: Չասարակական լայն գործունեություն ծավալելով, ձգտում**

**եք երիտասարդների համար ստեղծել բարգավաճ ու առողջ մթնոլորտ, նպաստել նաև նրանց ֆիզիկական պատրաստվածությանը: Ֆուտբոլի միջոցով հասարակությանը նախապատրաստում եք հաղթական խաղաղության:**

- Գաղտնիք չէ, որ սպորտը մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Իսկ ֆուտբոլը բոլոր ժամանակների ամենասիրված և երկրպագունների մեծ բանակ ունեցող խաղն է, որը, հավատացած եմ, Արցախում կխթանի նաև երիտասարդների ֆիզիկական պատրաստվածությանը, նրանց մեջ կամրապնդի դժվարություններն հաղթահարելու կամքն ու վճռականությունը: Մեր ֆուտբոլիստներին և ֆուտբոլասեր հասարակությանը 2009թ. մատուցած անակնկալ էր Ստեփանակերտում փորձարկված արհեստական խոտածածկույթով առաջին մարզադաշտը: Մարզադաշտի վերանորոգումը կյանքի է կոչվել ՀՀ և ԼՂՀ ֆուտբոլի ֆեդերացիաների համագործակցության շնորհիվ: Այժմ ֆուտբոլի զարգացման համար միջոցներ են ներդրվում, ջանքեր են գործադրվում ազգային ֆուտբոլի փառքը վերականգնելու նպատակով:

**- Սեփական ուժերով երկիր կերտելն ավելի ճիշտ է ու հուսալի: Ունենալով մարտունակ բանակ, զարգացող տնտեսություն և ինքնատիպ մշակույթ, տարեցտարի դառնում ես ավելի հզոր ու անխոցելի: Ինչպիսին եք տեսնում Արցախի ապագան:**

- Մեր ողջախոհությունը հուշում է, որ այսօր մենք առավել ևս պարտավոր ենք լինել միասնական և համախմբված, որպեսզի կարողանանք համատեղ ուժերով լուծել մեր առջև դրված խնդիրները:

Անշրջելի է պատմության ընթացքը: Ազատության գինն իմացող ժողովուրդը երբեք չի հանդուրժի ստրկության որևէ կաղապար ու ձև:

Մենք անցանք պատերազմական փորձությունների միջով,



դառնալով ոգով ավելի ամուր, հաստատակամ և միասնական: Արցախի ազատագրական զարթոնքը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից, ինչպես նաև՝ ուժացումից, աշխարհի տարբեր ծայրերում բոցավառվեց հայապահպանության լույսը՝ բանուկ դարձնելով սերունդների հավատի և ոգու ճանապարհը: Համոզված եմ, որ ժողովուրդը երբեք թույլ չի տա դարաբաղյան խնդրի լուծման այնպիսի տարբերակ, որը կհակասի ազգային արժեքներին:

Ազատամարտի մասնակիցներն այսօր էլ ակտիվորեն մասնակցում են Հայրենիքի զարգացման ու բարգավաճման, նրա վաղվա օրվա կերտման սուրբ գործին: Մենք անչափ թանկ գին վճարելով մեր ազատության ու անկախության համար, բացառիկ սխրանքով ու հաստատակամությամբ ամրապնդել ենք սեփական ճակատագիրը տնօրինելու մեր իրավունքը: Այո, այս խաղաղության համար մենք թանկ գին ենք վճարել: Բայց եթե հարկ լինի, Արցախի ազատամարտիկները պատրաստ են կրկին զենքով պաշտպանելու



հայրենիքի սահմանները, հաստատելով մի ճշմարտություն. «Չավատն ու գործելու կամքն է, որ բանակը կարող են տանել հզորացման ու նորանոր հաղթանակների, երկիրը դարձնել անխոցելի, ժողովուրդը՝ ազատ և հպարտ»:

Գործենք միասին: Միասնական ուժերով հաղթահարենք բոլոր դժվարությունները և կերտենք մեր երազած անկախ Արցախը: Ես համոզված եմ, որ այսպես կհասնենք մեր բաղձալի նպատակին՝ ասել է թե՛ վերջնական հաղթանակի:

**- Սամվել Ջամիլի, սեպտեմբերի 11-ին լրանում է Ձեր ծննդյան 55-ամյակը: Այդ առիթով ի սրտե շնորհավորում ենք Ձեզ, մաղթում քաջառողջություն, երջանկություն և նորանոր երազանքների իրականացում:**


Օգտվելով առիթից, ուզում եմ շնորհավորել Ձեզ՝ նաև Երևանի «Ոսկե մեդալով» պարգևատրվելու կապակցությամբ:

**Տարիների հեռվից նայելով Ձեր կյանքի անցած ճանապարհին, հպարտությամբ եք զգում, ավստսանք՝ չարածների համար, թե՛...**

- Չպարտություն՝ որ կարողացա օգտակար լինել Չայրենիքիս:

**- Շնորհակալություն՝ զրույցի համար:**

- Շնորհակալություն և Ձեզ... Միաժամանակ՝ կուզենայի «Չայրենյաց պաշտպան» թերթի աշխատակիցներին և ընթերցողներին մաղթել ստեղծագործական հաջողություններ, անսպառ եռանդ և նորանոր մտահղացումներ:



*Աշոտ Բեկորի աստղային երթից մնաց մի արձան, մի անուն, մի սյուն, մնաց երազի հավիտենություն...*

**ԱՇՈՏ ԲԵԿՈՐ**

Աշոտ Բեկորը Արցախյան գոյապայքարի այն անհատականություններից է, ով իր կյանքով ու անմնացորդ նվիրվածությամբ կերտեց Ազատության ճանապարհը՝ հարստացնելով Ազատամարտի տարեգրությունը սխրագործության անկրկնելի օրինակներով: Նրա մահը ոչ թե վերջակետ է, այլ մի նոր Սկիզբ: Անմահ հրամանատարի կյանքը արիության դաս է սերունդների համար: Նրա անունն անգամ ոգևորող է և ներշնչող ուժ ունի, որ ժամանակային սահմաններ չի ձանաչում, հատում է տարածությունը անմահության շնչով:

2012թ. օգոստոսի 24-ին Ստեփանակերտի՝ նրա անունը կրող պուրակը մարդաշատ էր: Մարտական ընկերները ՊԲ բարձրատիճան սպաները, ԱԱՄ աշխատակիցները եկել էին ծաղիկներ դնելու անմահ հրամանատարի հուշակոթողին և խոնարհվելու նրա հիշատակի առաջ: Այստեղ էին հարազատները, մտավորականներ, աշակերտներ, որոնք ևս մի անգամ հարգանքի տուրք մատուցեցին լեգենդար հերոսի հիշատակին:

Աշոտ Ղուլյանը այն անհատականություններից է, ով դարձել է Արիության խորհրդանիշ: Նրա կյանքը սխրագործություն և նվիրումի մի դասագիրք է, որ սերունդների կյանքն է կոփում, ամրապնդում նրանց մեջ հայրենասիրության ոգին:

Հերոսն իր գիտակցական կյանքը նվիրաբերեց Հայրենիքի ազատագրության սուրբ գործին: Առաջին վաշտի զինվորների սրտերում միշտ բաբախում է հայրենյաց նվիրյալի առաքինի կերպարը: Այսօր Բեկորը սերունդների համար հայրենասիրության ոգի է, որ միավորում է ազգը, դարձնում մի բռունցք:

«Բեկոր» անունը նա ստացել է ինքնաշեն զենքերի փորձարկումների ժամանակ, երբ բազմաթիվ անգամ վիրավորվելով, չի ընկճվել, մարմնի մեջ պահելով ցավի բեկորները, շարունակել է համառ պայքարը ազատության համար: Մասնակցելով բազմաթիվ մարտագործողությունների, իր ծանրակշիռ ու բացառիկ ավանդն է ներդրել Հայրենիքի ազատագրության սուրբ գործում: Նա իր վաշտի տղաների հետ բազմաթիվ հաղթանակներ է կռել՝ ազատության ու անկախության շունչը սփռելով հայրենի երկնքի տակ: Արցախի բազում բնակավայրերում (Կրկժան, Ասկերան, Հադրութ, Շահումյան, Քարին տակ, Շուշի), որտեղ նա մարտնչել է իր վաշտի տղաների հետ, ոգու հունդեր է ցանել, սխրանքներով փառավորել մարտական ճանապարհը:

Աշոտ Բեկորը Արցախյան գոյապայքարի այն անհատականություններից է, ով իր կյանքով ու անմնացորդ նվիրվածությամբ կերտեց Ազատության ճանապարհը՝ հարստացնելով Ազատամարտի տարեգրությունը սխրագործության անկրկնելի օրինակներով: Նրա մահը ոչ թե վերջակետ է, այլ մի նոր Սկիզբ: Անմահ հրամանատարի կյանքը արիության դաս է սերունդների համար: Նրա անունն անգամ ոգևորող և ներշնչող ուժ ունի, որ ժամանակային սահմաններ չի ճանաչում, հատում է տարածությունը անմահության շնչով:

## ՀՈՂՆ ԱՉՔԻ ԼՈՒՅՍ Է



Ժորա Գասպարյան... հարազատ մի անուն-ազգանուն... Եվ... սկսվում է մի սրտառուչ խոսք, թե մի հին զրույց իր ջերմ շարունակությունն է գտնում աղբյուրի մոտ կամ վրանի դիմաց, ուր անցած մարտերի կարմիր ծվեններն են բաբախում, փափուկ ծվենները, որոնք հետագայում միայն կարծրանալով, կդառնան հիշողություններ: Հետո, հայացքդ բարձրացնելով, մի պահ նայում ես նրա թախծոտ աչքերի մեջ. մոխիրներում հունցված ճանապարհներն են սլա-

նում՝ կախված հայենակարոտ կռունկի թևերից, հետքերի բողբոջներն են պայթում, լույսերը ծիլ են տալիս նոր հղացումների հորիզոնից: Հայացքը շրջում է քեզնից. նոր հոգսերն են ծանրացել... Ձեռքերով շփում է դեմքը. «Հրետանին դեռևս իր տարերքի մեջ չէ»: «Պենք է ավելի զգոն լինել, քան թշնամին,- մտածում է նա,- ավելի հմուտ լինել, քան թշնամին, ավելի խիզախ լինել, քան թշնամին, ավելի, ավելի, ավելի...»: «Հողն աչքի լույս է, կորցրեցիր՝ դարեր շարունակ կխարխափես խավարում: Եվ ապագայի միջանցքներում գնալ-գալուց կմաշեն համբերությանդ եզրերը: Ապարանքներ ունեցող ազգերի ծիծաղը ասեղի պես կծակծկի սիրտդ, ողորմության փշրանքները միայն ընդառաջ կգան քեզ: Դու կմոռացվես խավարի մեջ... Հողն աչքի լույս է: Հավերժության քանի բիբեր ենք կորցրել: Հիշողության քանի ափեր: Կարծես կարճատես ենք դարձել, նաև մոռացկուտ: Մի դար այս կողմ, մի դար այն կողմ՝ ի զորու չենք տեսնել: Մեր ոտքի տակն էլ մեզ համար անծանոթ մոլորակի



մաշկ էր դարձել: Այս արթնացումը դարերի խորքից մի քանի սերունդների ճակատի մուրը կմաքրի: Հողն աչքի լույս է,- մտածում է Ժորա Գասպարյանը՝ ափի մեջ տրորելով հողի փշրանքները:

Արցախը փրկելու մտահոգությունները նրա ուղեղի մեջ փոթորկվում էին երկար ժամանակ, ելքեր որոնում:


Թշնամու զանգվածների դեմ պարսպված մի ուժ է հարկավոր,- մտահոգվում էր նա: Իսկ ոտքերի տակ ձգվում էր հրետանու սովերը, որպես ապագայի միջանցք:

Անհնար է գնահատել ու ամփոփել կատարվածի արդյունքը մարդկային մի հայացքում: Վառողաբույր բառերով չես կարող անմնացորդ պատկերել ոգու այն լուսաբացը, որը բարձրացավ դարերի խորքից, մեզ միաձուլելով հայոց երազանքի հավերժական ընթացքին:

Պատմության հողմապտույտում մենք մեր արմատների տեսողությունն ենք վերականգնում, որ չկորչենք խավարի լաթերի տակ:

- Ժողովուրդը հույսը ձեզ վրա է դրել,- ամեն անգամ լինելով մարտադաշտում,- ասում էր Արցախի հրետանու պետը,- մարդիկ վերադառնում են իրենց օջախները: Մարտակերտն իր առօրյայով է սկսել ապրել, չտարվեք խաղաղության պատրանքով, քանզի թշնամին հանգիստ նստած չէ: Յիշե՛ք, հրետանավորներ, դուք միշտ պիտի զգոն լինե՛ք: Այնպես արե՛ք, որ մարտակերտցիների ցաված սիրտը նորից չխոցվի:

Զարդախաչ գյուղի առավոտն է փարվում իր ռազմիկ որդուն, բազում մարտերում կոփված սրտի զարկերն է լսում, ամեն զարկի մեջ հողի կրակե հառաչանքն է բարձրանում և հատվելով հայոց երազանքի շողերին՝ բռունցքված ընկնում է ճանապարհների սլացքի մեջ: Վաստակաշատ հրամանատարի ուսերից փառքի ծվեններ են թափվում և ծածկելով հողի վերքերը, դառնում սպեղանի: Այսպես նա իր նվաճած դափնիներն է վերադարձնում հայրենի հողին՝ իր համար թողնելով միայն տառապանքը, որպես անսպառելի հարստություն:



**ԱՐՑԱՆԻ ՀԵՐՈՍ  
ՊԵՏՐՈՍ  
ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ**

Մաքառումների էջերից լուսե  
հողը քո ոգու պատկերն է հանում,  
Պետո՛ր, թևում են արծիվներ հույսի  
և մեր Պայքարի կանչին միանում:  
Մեր ազգահավաք ու լուսե կամքի  
երակն է բացում ընծյուղներ ոգու.  
ահա քո ձայնը եզերքից եզերք  
մեր Միասնության հիմքն է նորոգում:  
Ավյո՛րն է տալիս գինվորի բազկին,  
մղում աստղային տեղաշարժերի.  
Պետո՛ր, դու խորան սրբազան Ազգի,  
դու՛ երազ, դու՛ բախտ ու շունչ Ելքերի:  
Ոգիդ երակն է մեր ազգահավաք  
ու լուսե տենչի,  
ոգիդ ավի՛շն է հավիտենության  
սրբազան կանչի...



**ԱՐՑԱՆԻ ՀԵՐՈՍ  
ՔՐԻՍՏԱՓՈՐ  
ԻՎԱՆՅԱՆԻՆ**

Մի բուռ հողում իմաստության  
 նոր շիվեր ես տնկել ոգու,  
 Ռազմի լույսով բացել ճամփան՝  
 կայծակնով ես բախտը թրծել,  
 Դու չուզեցիր, որ դագաղվի  
 երազը քո երթի խորքում,  
 Ձի կանչում էր Գոյամարտի  
 հայրենաեռ տագնապը քեզ:  
 Եվ դու եկար՝ որպես ռազմի  
 ու պայքարի քարտեզագիր,  
 Բերիր ոգուդ լույսը վարար  
 և ավյունդ՝ հացի պես սուրբ,  
 Եվ ռազմական մի վարժարան,  
 իբրև կրակ հիշատակի,  
 Պատգամներ է հղում կյանքին,  
 և սիրո պես դարն է հոսում...




**ԱՐՅԱԽՅԱՆ  
ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՆՎԻՐՅԱԼ  
ԼԵՈՆԻԴ  
ԱԶԳԱԼ ԴՅԱՆԻՆ**



Հայրենի հողի լույսն է հաղորդել  
 Քո ոգուն կորով և զգաստություն,  
 Դու ռազմի գործի կնճիռն ես հարթել,  
 Քարտեզագրել սեր ու վեհություն,  
 Քարտեզագրել ոգու պատմություն,  
 Քարտեզագրել լինելիություն...  
 Ե՛վ մարտնչել ես, և՛ մահին հաղթել...  
 Հայացքդ դանս էր, շարժումներդ՝ դանս,  
 Արիության դաս և հերոսության,  
 Ձայնդ մարտի՛ էր մղում անդադար,  
 Իսկ հոգիդ հյուսում հաղորդության ցանց:  
 Մահվան սահմանը դու անցել էիր,  
 Քո մեջ պտղում էր լույսն ազատության,-  
 Է՛հ, երկինքներում թևածո՞ւմ էին  
 Հրեշտակները ոգևորության:  
 Դու՛ հոգու ասպետ, հավատի զինվոր,  
 Անունդ շենն է սխրագործության,  
 Քո ճանապարհը՝ վեհ ու լուսավոր,  
 Ձայնդ խորան է, եզերք սրբության:

## ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ՄԵՋ ՀԱՄԱՐ ՂԱՐԱԲԱՂՆ Է, ՈՐՏԵՂ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ



...Ջորի Բալայանը Ղարաբաղյան շարժման նախաձեռնողներից մեկն է, նրանից ուղղակի Ղարաբաղի շունչ է փչում և հայրենիքի սեր:

*Անդրեյ ՍԱԽԱՐՈՎ*

Արցախի ազատամարտիկների միության վարչության որոշման համաձայն՝ գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը պարգևատրվել է «Հայրենյաց պաշտպան» մեդալով:

Ջորի Բալայանի համար Ղարաբաղն այն ճանապարհն է, այն ոգին, որից հայոց տարերքն է ծնվում ու ծավալվում լինելիության ու պայքարի թևերի վրա... Ղարաբաղը հայության բռունցքն է, որով ջարդվում են ստրկության կաղապարները: Հայոց գրերը շնչում են ազատության երկինքներով, գոյատևում՝ ոգու կայծակներով: Գրող-հրապարակախոսի ամեն խոսքը ըմբոստության ու պայքարի ոգեղեն ասպարեզ է, ուր կերպավորվում է ազատության տարերքը:

2010թ. մարտի 16-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճում տեղի ունեցավ հորեյանական երեկո՝ նվիրված Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանի ասպետ, գրող, հրապարակախոս Ջորի Բալայանի ծննդյան 75-ամյակին: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրի համա-

ծայն՝ պետական, հասարակական-քաղաքական ակնառու գործունեության համար և ծննդյան 75-րդ տարեդարձի կապակցությամբ գրող, հրապարակախոս Զորի Բալայանը պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

ԼՂՀ նախագահ Բակո

Սահակյանն իր ողջույնի խոսքում մասնավորապես նշեց. «Մենք տեսնում և վերծանում ենք Զորի Բալայանի լրությունը, որի մեջ կար այնպիսի կանչ, ճիչ, որը հնարավորություն է

*Ազատության համար պայքարը շարժում է: Պատահական չէ, որ իմ սերնդի կյանքում սրբության սրբոցը՝ մեր պայքարը, ունի իր անունը՝ Ղարաբաղյան շարժում:*

*Զորի ԲԱԼԱՅԱՆ*

տվել ճիշտ սկսել մեր հասուն գիտակցության ճանապարհը ու այդ պահի համար երախտապարտ լինել: Նա մեզ համար բացահայտեց, որ աշխարհի մարդկության ամենամեծ արժեքը հայրենիքն է, որի զինվորն է ինքը: Այսօր էլ նրա նպատակը հայրենիքի ապագան է, և ամեն անգամ Արցախ գալով՝ նա հայրենի հողից ուժ է առնում և ուժ է տալիս, և մենք նրա հետ դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու՝ շնորհավորելով իրար հաղթանակների համար»:

ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Յակոբյանի կարծիքով՝ Զորի Բալայանի ամեն մի բառ ունի իր հոգեբանական քարտեզը, որով քայլում ենք դեպի ապագան:

Խոսվեց նաև Զ. Բալայանի հրապարակախոսական ճիրքի ազդեցության և խոսքի արարչագործ տարերքի մասին: Նշվեց, որ մեծ ու անգնահատելի է նաև Զորի Բալայան ազգային գործչի դերակատարությունը արցախյան հիմնախնդրի միջազգայնացման գործում:

Յոթեյարի մասին իրենց իմաստավոր և առանձնահատուկ խոսքն ասացին ՀՀ ԳՄ նախագահ, հրապարակախոս Լևոն Անանյանը, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն, գրա-

կանազետ Ավիկ Իսահակյանը, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանը, արձակագիր Մաքսիմ Յովհաննիսյանը, թոշակառու ուսուցիչ, արձակագիր Նորայր Ավետիսյանը, Գրիգոր Նարեկացի համալսարանի դասախոս, բանաստեղծուհի Տաթևիկ Սողոմոնյանը:

«Ամենակարևորը մեզ համար Ղարաբաղն է,- վերջում ընդհանրացրեց հորեյարը, ոչ թե նրա համար, որ ես այս երկրից եմ, այլ, որ այստեղ է որոշվում հայ ժողովրդի ճակատագիրը, լինել-չլինելու հարցը: Արցախը բացեց ճանապարհը դեպի Վան ու Արդահան, որտեղ մեր նախնիների գերեզմաններն են: Ղարաբաղը ճանապարհ է, ոգի, որ չպիտի կորցնենք»:

Ձորի Բալայանի համար Ղարաբաղն այն ճանապարհն է, այն ոգին, որից հայոց տարերքն է ծնվում ու ծավալվում լինելիության ու պայքարի թևերի վրա... Ղարաբաղը հայության բռունցքն է, որով ջարդվում են ստրկության կաղապարները: Յայոց գրերը շնչում են ազատության երկինքներով, գոյատևում՝ ոգու կայծակներով: Գրող-հրապարակախոսի ամեն խոսքը ըմբոստության ու պայքարի ոգեղեն ասպարեզ է, ուր կերպավորվում է ազատության տարերքը:

## «ՌԳՈՒ ԼԵԳԵՆԴԸ»

2012թ. հունիսի 9-ին Մարտակերտում տեղի ունեցավ Արցախյան պատերազմի առանցքային դեմքերից մեկի՝ Վլադիմիր Բալայանի հիշատակին նվիրված միջոցառում, որին ներկա էին Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավար Լևոն



Չայանը, ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռուդիկ Յուսնունցը, Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գայա Առստամյանը, ԱԱՄ Մարտակերտի տարածքային խորհրդի նախագահ Գրիգորի Միրզոյանը, ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ, ֆրանսահայ Հովսեփի Հովսեփյանը, Վլադիմիր Բալայանի մայրը՝ Դարիկո Բալայանը, լրագրողներ, մտավորականներ: Վլադիմիր Բալայանը ռազմաշխարհի անհատականություններից էր, կենդանության օրոք լեզենդ դարձած մի զինվորական, ում համար ամենամեծ տենչը հայրենի երկրի ազատագրումն էր:

Քաջերի վարքն ու գործը իրենց ապրած ժամանակի մեջ չեն սահմանափակվում, որովհետև նրանք կյանքն ու ճակատագիրը մշտապես ապրում են՝ սերունդների համար դառնալով արհուրյան ու սխրագործության դաս: Եվ այս օրը ևս մի առիթ է՝ վերարժևորելու Անմահների անցած ճանապարհի բացառիկությունը, Ոգու անկրկնելի տարերքն ու ուժը, սխրանքներով լի վարքի նկարագիրը: Միջոցառման մասնակիցները ծաղիկներ դնելով Արցախյան գոյամարտի նվիրյալի, աննկուն ազատամարտիկի և քաջարի հրամանատարի հուշակոթողին և գերեզմանաքարին, իրենց խո-

նարիումն ու անմնացորդ սերը ևս մի անգամ արտահայտեցին մեծ զինվորականի և ազգանվեր հայի նկատմամբ:

Յերոսի կերպարն ամբողջացնելու միջոցներից մեկն էլ մարտական ընկերների արտահայտած կարծիքն է, որը լինելով հակիրճ ու կրակով լի, միաժամանակ զսպանակված լռություն է կրում ոգու խորքերում: Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանի կարծիքով՝ Վլադիմիրի նման տղաները հստակ և քաջ գիտակցում էին, որ երկիրը պաշտպանելն ավելի մեծ խնդիր է... Այդ խառնակ իրավիճակում Լեոնիդի, Վլադիմիրի ու Ասկուլայի տղաներն էին, որ հույս ու հավատ էին ներշնչում, հեռու ամեն տեսակ կուսակցական խառնակ խաղերից ու դավերից: Նրանք էին հաղթանակների հիմքը դնողները և նրանք պետք է համարժեք գնահատականի արժանանան:

Քաջերի վարքագրությունը պատասխանատու և դժվարին գործ է, որը համարձակորեն ձեռնարկել և հաջողության հանգրվանի է հասցրել բանաստեղծուհի և արձակագիր Սիրվարդ Մարգարյանը, մի հեղինակ, ով իր ստեղծագործություններում բացահայտել է Արցախյան ազատամարտի նվիրյալների ոգու դիմագիծը, սիրանքներով լի կյանքի անկրկնելի նկարագիրը: Բառի զգացողության նուրբ աուրա ունեցող հեղինակ է Սիրվարդ Մարգարյանը, օժտված՝ իրերի խորքը թափանցելու շնորհով, պահի դինամիկան որսացող դիտողական հայացքով, որոնք նախադրյալներ են ստեղծել ստեղծագործական առաջընթաց ու հաջողություն ունենալու համար: «Ոգու լեգենդը» գրքի շնորհանդեսի ժամանակ ելույթ ունեցողները («Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար, «Մարտիկ» թերթի խմբագրի տեղակալ, մայրը Միեր Յարությունյան, Չոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գայյա Առստամյան) նշեցին, որ Արցախյան գոյապայքարի տարեգրությունը հարստացավ ևս մի ճշմարիտ գրքով, որը հիշատակի հուշարձան է մեր լինելիության ճանապարհին: ԼՂՅ

«Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Վլադիմիր Ալեքսեյի Բալայանը Արցախյան պատերազմի այն առանցքային դեմքերից էր, ում անվան շուրջ հյուսված լեգենդը բերնեբերան էր անցնում դեռևս պատերազմական թոհուրոհի մեջ: Մարտական ընկերների ու նրան ծանաչողների հուշապատումներում հառնում է հերոսի անպաճույճ կերպարը:

Տպավորիչ ու ազդեցիկ է Վլադիմիր Բալայանի մարտական ընկեր Սուրեն Գալստյանի խոսքը. «Երբ վերջնականապես կազմավորվեց Մարտակերտի պաշտպանական շրջանը, մենք տեղափոխվեցինք Մարտակերտ, Առաջածոր, Դրմբոն, Չլդրան, Մարտակերտի ողջ պաշտպանական գիծը հատել ենք: Հրամանատարության կողմից մեր առջև դրված խնդիր չի եղել, որ չկատարեինք: Գլուխ պահել չկար: Մենք պիտի պահեինք Լեոնիդի և Վլադիմիրի ջոկատի պատիվը ու պահել ենք: Առաջնորդվել ենք Լեոնիդի ռազմական գիտելիքներով ու Վլադիմիրի ոգով: Շատ քչերին է հաջողվել թե իրենց հրամանատարների անունը պահել և թե իրենց անունը ստեղծել-ձևավորել: Իսկ մենք դա արել ենք ու միաժամանակ ուժ առնելով նրանց ոգուց, մեզնից հետո եկողներին էլ դաստիարակել ենք նրանց ոգով»:

- «Վլադիմիրը,- վկայում է մարտական ընկեր Հովսեփ Հովսեփյանը,- մեծ զինվորականի կերպար էր: Ես վերապահումով եմ վերաբերվում այն խոսքերին, երբ ասում են՝ ի ծնե զինվոր է, բայց առնչվելով Վլադիմիրի հետ, համոզվեցի, որ նա թաքնված տաղանդ է: Ես միշտ մտածել եմ, որ այս մարդը չպիտի լինի քարագործ, քանդակագործ: Նա ծնվել է գեներալ դառնալու և գեներալ էր, սակայն առանց ուսադիրների ու աստղերի: Նա մեծ արժեք էր Մարտակերտի համար, նվիրումի բացարձակ արժեք ու նվիրվածության օրինակ, և ժողովուրդը դա տեսնում, հասկանում, գիտակցում էր: Ժողովուրդն այդպես էլ չհաշտվեց նրա կորստի հետ ու իր սրտում պահեց որպես կենդանի հուշ ու լեգենդ»:

Սիրվարդ Մարգարյանի «Ոգու լեգենդը» գիրքը ամբողջացնում է Արցախյան պատերազմի հերոսներից մեկի՝ Վլադիմիր Բալայանի կերպարը՝ սերունդներին փոխանցելով մեծ զինվորականի և նրա մարտական ընկերների ոգու կրակը, պայքարի ու մաքառման անկրկնելի տարերքը, այն բացառիկ դասերը, որոնք ազգային արժեք են և ուղեցույց՝ մեր լինելիության ճանապարհին: «Ոգու լեգենդը» գիրքը հայրենի հողը սիրելու և հայրենիքին անմնացորդ նվիրվելու պատգամը, ազատամարտիկների մաքառող ոգու բանալին է տալիս ընթերցողին, հաստատելով մի ճշմարտություն, որ արտահայտել էր Լեոնիդ Ազգալոյանը. «Պատերազմը երկնքում է լինում, սա արտացոլանքն է երկրի վրա...»:





## ԵՐԱՋԻ ՎԱՌՈՂԱԲՈՒՅՐ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ



Վլադիկ Խաչատրյան... Նրա խոսքերը հոսում էին դիրքերի շիկացած հողակտորներից ու փոթորկում օդը: Խրամատը դառնում էր քաջության մղում, իսկ երկինքն իջնում էր դիրքերում հսկող զինվորի ձեռքերի վրա, թերթվում նրա պապակ հայացքով՝ որպես կարոտի նամակ: Երազի վառողաբույր ճանապարհին կայծկլտում էին աստղերը: Կորուստները սպիներ էին թողնում ճանապարհների եզրերին, և արյան միջով ձգվում էր Ոգու երթը՝ աներեր ու պիրկ: Կայ-

ծակի շրթին կասկածն էր ծաղկում և մշուշի թելերի նման իջնում ծառերի կատարներին, ուր քամու նվազի տակ համբուրվում էին վայրկենական պատրանքները: Կատաղի մարտեր էին ընթանում: Յետևակի ոգին բարձրացնող հրետանու անձնակազմը ելքեր էր որոնում... Անորոշությունը լափում էր խրամատի մտքերը: Մեհմանայից Կիչան ձգվող նահանջի ճամփան քերում էր տազնապի կարմիր շերտը և ծածկում ավազի տակ... «Պետք է դիմադրել ոգու բռնցքներով», - ասում էր հրետանու ոտքերը հողի մեջ մխրձող Դերենիկ Ավանեսյանի հայացքը: Ասում էր... և խփում երկաթե սեպը ավելի խոր... Գառնիկ Իսրայելյանը, Գարիկ Յարությունյանը, Կարեն Գրիգորյանը, Արտուր Մնացականյանը, Սուրիկ Գրիգորյանը Վլադիկի հայացքից իրենց հույսերի ու երազների քարտեզն էին հանում և փռում եփվող հողի վրա: Յողը կարծես թե պարում էր՝ քարտեզը դարձնելով շրջագգեստ: Եվ երգը հողի կնճիռներից խմվում էր ասես կոշտ ու կոպիտ ձեռքերի ճաքերով: Երգը զինվորի շուրթերով համբուրում էր կարոտի լեռներն ու կածանները, որտեղ

վազվզող եղնիկների շնչառությունից պայթում էին բողբոջները խրամատի եզրին օրորվող ծառի միակ ճյուղին... Իսկ այդ ճյուղից, ահա, Վլադիմիր Յովսեփյանը կախել էր ինքնաձիգը և բահով փորում էր հողը. խրամատի նեղվածքում կարծես օջախի պատրանք էր ստեղծում... մի վառարան էր պակասում ու լավաշ հաց: Յրետանու դիրքերով ալիքվում էր հումորի կենարար ավյունը և լցվում ճաշարանի վերածված տեղամասը, որտեղ ջերմ ու հուզառատ զրույց-կատակները անընդհատ դուրս էին մղում մթնոլորտից տազնապի ու վտանգի՝ դեպի վեր թռչող ծվենները...

Շողը բուրում էր վստահություն ու կամք: Երկիրը բազուկներն էր երկարում դեպի... գալիք լույսը, որի փշրանքներից լուսավորված դիրքերը անդրադարձնում էին զինվորների շուրջպար բռնած հայացքների վրա... հայոց լեռների անպարտելիությունը:

Կիչանն օրորվում էր լինել-չլինելու նժարի վրա: Յրետանին կոտրեց թշնամու դիմադրությունը,- այս խոսքերն էր անդրադարձնում Վլադիկ Խաչատրյանի քայլվածքը, երբ նա քայլում էր Ստեփանակերտի փողոցներով ու լսում հպարտության ձայնը... «Յրետանու այդպիսի զարկերով կարելի է ծակել նաև պատմության կեղևը,- մտածում էր նա,- որպեսզի այդ անցքով դուրս հորդեն ընդմիշտ կեղծիքն ու սուտը, քենն ու ոխը... և ազատության ու խաղաղության փողոցներում մարմին առնի մարդկային դարավոր երազը...»:

Դիվիզիոնի հրամանատարի համար մարտական ամեն գործողություն անկրկնելի բավականություն էր: Իսկ դադարի ժամին... միտքն իրենից անկախ գնում փարվում էր հեռավոր Չայլու գյուղի բնությանը, իր տան պատերից հարազատության բուրմունք էր առնում, հետո մտնում իր ձեռքով մշտապես մշակվող երբեմնի բոստանը, որի ամեն մի թիզ հողը վերափոխում էր ստեղծագործորեն: «Նույնիսկ կնոջս թույլ չեմ տվել... Ինքս էի անում ամեն մի աշխատանք: Վախենում էի՝ սրտիս ուզածով չլինի և... հասկանում ես, ինձ համար հողի հետ աշխատելը մի ուրույն ու բացառիկ ստեղծագործություն էր», - մի անգամ խոստովանել էր նա՝ աչքե-

րում փայլեցնելով հեռավոր երազի փշրանքները: Յետո նրա միտքը փարվում էր հայրենի դպրոցի պատերին, իր աշակերտների հայացքներն էր հիշում մեկ առ մեկ, և մի տխուր երջանկություն էր դողանջում նրա էության փոթորիկներում:

«Իմ տեղը դիրքերում է», - Վլադիկ Խաչատրյանի դեմքի գծերը այս բառերով էին հաղորդակցվում իրար հետ, երբ գնում էր թշնամու դիրքերը հետախուզելու, երբ վերադառնում էր կամ...

Իսկ երբ Վլադիկ Խաչատրյանը՝ նվիրյալ զինվորականը մի փոքր... փորձում էր հանգստանալ՝ թիկնելով փայտե թախտին, ես բանաստեղծության աշխարհի կապույտ ծվեններն էի բացում... Նա սարսռում էր երկնքի մոտիկ շրշյունից: Դեմքի ջղաձգված մկաններն աստիճանաբար խաղաղվում էին, անարատ ու հեռաւլաց հայացքով կախվում մանկության տեսիլք-գնդակից ու ճոճվում երկար, ինչպես հեքիաթի տարածության մեջ...

Մի օր, երբ դիրքերում բաբախում էր անհայտության ոգին, Վլադիկ Խաչատրյանը՝ արդեն Մարտակերտի շրջանի հրետանու պետը, հարմար դիրք էր որոնում ականանետային մարտկոցի համար: Պահը բաբախում էր ճակատագրի ափի մեջ: Ճանապարհին... անակնկալի եկավ: Պարզվեց, որ դիմացի դիրքը գրավված էր թշնամու կողմից: «Ուրալ» մեքենայի ուղղությունը փոխելով, առաջացավ... Բայց... ականի պայթյունը հսկա մի վիհ բացեց իրականության և երազի միջև...

«Իմ տեղը դիրքերում է», - նույն խոսքի կայծերն էին անընդհատ ցայտում Վլադիկ Խաչատրյանի հայացքից, երբ նա պառկած էր Դրմբոնի հոսպիտալում և պիտի կտրվեր ոտքը...

«Յայրենիքը մայր է», - շարունակում էի կարդալ նրա հայացքի գիրը, - մեզ մեծացնելիս շատ է տառապել, թող մի քիչ էլ մենք տանջվենք նրա լուսավոր բախտի համար»:

Ճակատագրի կամրջի վրա օրը արևից լճյա էր կորզում...

## ՔԱՐՎԱՃԱՌ

Քարվաճան, հայոց հինավրոց Ոստան,  
 խաչքարերդ հողից և անհունից Ոգու  
 ձչում են՝  
 Չայաստան,  
 Դադիվանքի սուրբ երկնականարում  
 ճախրող աղոթքներով  
 հյուսում ես փրկությունը համայն հայության:  
 Ջինվորն է կանգնած սահմանին Երկրի,  
 որպես պահապան,  
 որպես այս հողում թափված արյան ճիճ,  
 բռննցք հավատի:  
 Ինչքան էլ ջանաց թուրքն աղավաղել  
 դեմքը պատմության՝  
 թաղելով հողում ուղեցույցները  
 հայոց ինքնության,  
 մեկ է՝ հայ ռազմիկը գծեց սահմանը  
 մեր Ազատության,  
 գծեց քարտեզը Ոգու և Լուսի,  
 և հիշողության խարիսխներ նետեց  
 ափին Փրկության,  
 հողին Ինքնության:  
 Քարվաճան, հայոց հինավրոց Ոստան,  
 հայոց բանակի հաղթարշավի դուռ,  
 հույսի ավազան և կամքի խթան,  
 դու՝ մեր Պայքարի անպարտելի թուր:

## ԴԺՎԱՐ ՈՒ ՊԱՏՎԱԲԵՐ ՃԱՆԱՊԱՐՅ

*Որքան վսեմ է մի ժողովրդի հասկացողությունը հայրենիքի համար, այնքան զորավոր է նրա երկիրը, նրա հայրենիքը:*  
**Գարեգին Նժդեհ**

Արցախյան ազատամարտը ազգի ինքնահաստատման և լինելիության համար մղված կարևորագույն Պայքարն է, որը հայությանը վերադարձրեց նախնայանց ոգու անպարտելի հուրը, արիական վարքի անսակարկելի արժեքները, որոնք սերունդների համար դարձան արիության դաս, պատգամ և հաղթական ճանապարհի նորոյա ուղենիշ: Արցախը հզոր է և անպարտելի իր նվիրյալներով: Արցախյան գոյապայքարի նվիրյալներից է Վլադիմիր Սուրենի Կասյանը:



Թերթելով ազատամարտի նվիրյալի կենսագրության էջերը, առիճնող և ուշադրության արժանի շատ բան ենք գտնում. «Վ.Ա.Կասյանի կյանքը սերտորեն կապված է ազգային-ազատագրական պայքարի հետ, որի առաջին իսկ շրջանից սկսած՝ կամավորական ջոկատների կազմում նա ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին, Շուշիի ազատագրմանը և Լաչինի միջանցքի բացմանը: ԼՂՀ Ինքնապաշտպանական ուժերի ստեղծման առաջին իսկ օրից նշանակվել է Կենտրոնական պաշտպանական շրջանի հրա-

մանատարի թիկունքի գծով տեղակալ, 1993թ. հունվարի 1-ից Շուշիի պաշտպանական շրջանի Բերդաձորի 51-րդ գումարտակի հրամանատար: Նրա հրամանատարությամբ գումարտակն ազատագրական մարտեր է մղել ռազմական գործողությունների բոլոր ուղղություններում, այդ թվում՝ Լաչինի շրջանի հյուսիսային տարածքներում, Քելբաջարի, Ղուբաթլուի, Չանգելանի, Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում»:

Վ.Կասյանի համար հայրենասիրությունը կեցվածք չէ, այլ՝ էություն, գործող կենսակերպ: Հող-հայրենին նրա արյան մեջ նոր խորհուրդներ և ծախքեր է բացահայտում: Հայրենիքի նվիրյալը զենքով ազատագրված հողը համարում է սրբավայր, ուր թափված արյան յուրաքանչյուր կաթիլից նոր կյանք է հառնելու: Հայը իր ապրելու և հարատևելու իրավունքը վաստակել է համառ մարտերում:

Լրագրող Գագիկ Երնջակյանը «Հայրենիքի նվիրյալ» հոդվածում գրում է. «1988թ. ալիքված Արցախյան շարժումը նոր էջ բացեց Վ.Կասյանի կյանքում: Նա աներեր, առաջին իսկ օրվանից անդամագրվեց շարժմանը, զենք վերցրեց և մտավ ֆիդայական պայքարի մեջ անարգ թշնամու դեմ: Բերդաձորի ինքնապաշտպանական խումբը կազմակերպել է գյուղի ինքնապաշտպանությունը ազերի հրոսակներից: 1992թ. մայիսի 9-ին Վ.Կասյանը հաղթականորեն մտնում է Շուշի: 1993թ. հունվարի 1-ին նա նշանակվում է Բերդաձորի 51-րդ առանձին գումարտակի հրամանատար: Սերժ Սարգսյանի աջակցությամբ Վ.Կասյանը համալրում է գումարտակը ՀՀ-ում և ԼՂՀ-ում տարաբնակեցված բերդաձորցիներով: Եթե մինչև Վ.Կասյանի գալը զինվորագրվել էին 27 քաջորդիներ, ապա նրա հրամանատարությունը ստանձնելուց հետո հավաքվում են 170-ից ավելի մարտիկներ, իսկ 3-4 ամիս անց 200 մարտիկ»:

- Հայրենիքը սկսվում է ընտանիքից,- գրույցի ժամանակ խոստովանել է Վլադիմիր Կասյանը,- պատերազմի տարիներին չէինք

մտածում, որ բազմաերեխատեր ենք, կամ չամուսնացած, բոլորս էլ մեկ մարդու պես կռվում էինք միասնական:

Հայկ Նահապետի ոգու արևն է լուսավորում հայ մարտիկների և սպաների ճանապարհը, որը սկիզբ առնելով արիական ոգու խորքերից, հաստատուն քայլերով գնում է դեպի ապագան: Արյունով ազատագրված հողը ազգային արժեք է և սակարկման ենթակա չէ:

Արցախյան գոյապայքարի տարեգրության էջերում Վ.Կասյանն իր մարտական ուշագրավ հետազիծն է թողել. «Սկսվում են Աղղամի և Մարտակերտի ազատագրման ռազմագործողությունները, ուր 51-րդ գումարտակը Սոֆանլու գյուղից մինչև Կարմիրավան ընկած տարածքում մղում է ծանր մարտեր, որոնց ընթացքում ոչնչացվում են թշնամական մի քանի ամուր հենակետեր և ազատագրվում են շատ բնակավայրեր: Պատմելով ազատագրական տարիներին 51-րդ գումարտակի անցած փառավոր մարտական ուղու մասին Վ.Կասյանը միշտ խուսափում է իր անձնական մասնակցության մասին` պատմելուց: Հենց այստեղ էլ դրսևորվում է նրա լավագույն մարդկային նկարագիրը` համեստությունը, ընկերասիրությունը, սակայն Վ.Կասյանի մարտական ընկերները պատմում են իրենց հրամանատարի անձնական քաջության մասին»:

Վլադիմիր Կասյանը համոզված է, որ ազատամարտիկների անցած մարտական ճանապարհը ոգու ուժ և կորով է հաղորդելու ապագա սերունդներին: Անհրաժեշտ է միայն բռունցքվել մեր հիշողությամբ և հավատով: «Բավական չէ իր ազգի զավակը լինել. պետք է նաև նրա հրաշունչ զինվորը լինել»:

Վլադիմիր Կասյանի մարտական ուղին կոփվել է մարտադաշտում: Հպարտությամբ թերթելով մեր ժողովրդի նորօրյա պատմության էջերը, տեսնում ենք և այն հիշարժան դրվագները, մաքառման և սխրանքի անմոռաց դասերը, որոնց մեջ իր ուրույն ավանդն

ունի Վլադիմիր Կասյանը: «1993թ. փետրվարին Վ.Կասյանի գլխավորած գումարտակին վստահվում է Սարի բաբի (Քարվաճառի և Շուշիի շրջանի սահմանագիծ) պաշտպանական գիծը, որը ձգվում էր Քարվաճառի Տիգիկ գյուղից մինչև Լիսագոր գյուղը: Մինչև մարտ ամիս գումարտակը պաշտպանել է իրեն վստահված դիրքերը: 1993թ. գարնանը սկսվում են Քաշաթաղի և Քարվաճառի ազատագրման գործողությունները: Այդտեղ գումարտակին վստահված էր Բլինդուզ գյուղից մինչև Քարվաճառի թունել կոչվող տեղամասը, որը ձգվում էր մոտ 100կմ: Վ.Կասյանի գլխավորությամբ գումարտակն իր ճանապարհին ազատագրել է ավելի քան 27 բնակավայր: Շարունակելով և զարգացնելով ռազմական հաջող ընթացքը՝ 51-րդ գումարտակը միանում է Շուշիի գնդի 52-րդ և 53-րդ գումարտակներին և հասնում մինչև Քարվաճառի թունել կոչվող տեղամասը: Այստեղ 51-րդ գումարտակին հրաման է տրվում վերադառնալ Բերդաձոր, համալրել զորքերը և պատրաստվել նոր գործողությունների: Պաշտպանելով իրենց վստահված դիրքերը՝ 51-րդ գումարտակը մասնակցում է Ղուբաթլուի և Ջանգելանի, նաև Լաչինի դեռևս չազատագրված տարածքների մարտերին: 51-րդ գումարտակը Ղուբաթլուի շուրջ 10 կմ շրջագծով ազատագրում է 12 գյուղ», - նշում է Գ. Երնջակյանը:

Մարտական ծառայությունների համար Վլադիմիր Կասյանը պարգևատրվել է «Շուշիի ազատագրման համար» մեդալով և «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:

Անցնելով հայրենի երկրի խաղաղ շինարարությանը՝ Վ.Կասյանը երբեք չի մոռացել իր և մարտընկերների երդումը, այն է՝ հուշարձան կանգնեցնել զոհված տղաների հիշատակին: 2004թ. կենտրոնական մայրուղու վրա (Երևան- Ստեփանակերտ) Բերդաձորի հանդիման հառնեց մի հիասքանչ կոթող: Յուզակոթողի վրա պատկերված են գումարտակի զոհված հրամանատարը, իսկ սև մարմարե պատվո տախտակին փորագրված են 52 նահատակներ:



րի անունները, որոնք իրենց թափած արյունով հնարավոր դարձրին հաղթական այսօրը:

Վլադիմիր Կասյանը Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարն է, Արցախի ազատամարտիկների միության Ստեփանակերտի տարածքային միավորման խորհրդի նախագահը: Հայրենապաշտության ճանապարհը ընտրած հրամանատարը իրեն գերազանց է դրսևորում նաև ետպատերազմյան շրջանում: Նա համարձակորեն և անձնվիրությամբ է ձեռնամուխ լինում ժողովրդի կյանքի բարգավաճման և տնտեսության վերականգնման գործընթացներին:

2017թ.



Նկարում՝ Շուշիի գնդի մարտիկները:

## ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՆՎԻՐՅԱԼԸ



Անդրանիկ Սարգսյան. «Արցախյան հողը մեզ համար ոչ միայն մի կտոր հող է, այլև հայրենիք, պատմություն, անցյալ և հիշողություն...»:

Այսօր Անդրանիկ Սարգսյանին՝ Արցախյան գոյապայքարի նվիրյալին հուզում է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ճակատագիրը, այլև ժողովրդի ապրելակերպը, նրա անխոնջ արարումն ու աշխատանքային գործունեությունը, նվաճումներն ու ձեռքբերումները ռազմական, տնտեսական, սոցիալական,

մշակութային ոլորտներում: «Յայրենասեր մարդն է, որ ամենալավն է ընտանիքում, ընկերական շրջապատում, աշխատանքում... ամենուր»: Մենք հաղթանակած երկիր ենք և այսօր պետք է նվաճենք նաև տնտեսական հաղթանակներ: Ինչպես պատերազմում, այնպես էլ տնտեսության մեջ եկեք համախմբված կառուցենք ու շենացնենք մեր հայրենիքը,- ասում է Ազատամարտի նվիրյալն ու ԱԺ պատգամավորը՝ չմոռանալով իր հիմնական սկզբունքը՝ հասարակությունն այն ժամանակ է լիարժեք կյանքով ապրում, երբ ոչ միայն գնահատվում, այլև պաշտպանվում է քաղաքացու շահն ու իրավունքները, համապատասխան միջոցներ ձեռնարկվում, որպեսզի հայրենիքի ազատության համար զոհողություններ և զրկանքներ կրած մարդը երբեք չդառնա պաշտոնական քմահաճույքի, բյուրոկրատական քաշքշուկի օբյեկտ:

Ա. Սարգսյանը մասնագիտությամբ տնտեսագետ է, ավարտել է

ԱրՊՅ տնտեսագիտության ֆակուլտետը: Մանկուց զբաղվել է բռնցքամարտով, արժանացել սպորտի վարպետի թեկնածուի կոչման: Ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի ազատագրական շարժմանը, կամավոր անդամագրվել զինված պայքարին՝ սկզբում որպես շարքային, հետո՝ դասակի, ապա՝ վաշտի հրամանատար: 1992թ. սեպտեմբերից մինչև 1997թ. նոյեմբերը եղել է Կենտրոնական պաշտպանական շրջանի հետախուզության պետը: Մասնակցել է բազմաթիվ մարտական գործողությունների՝ Արաքսից մինչև Օմար: Երկու անգամ ծանր վիրավորվել է:

«Ես անցել եմ Արցախյան պատերազմի փորձությունը և գիտեմ, որ հաղթանակը ձեռք է բերվել միասնության, միակամության, դժվարությունները հավասար բաշխելու մեր ընդունակության շնորհիվ: Ուրեմն հավասար պիտի բաշխվեն նաև հաղթանակի պտուղները», - համոզված է գոյապայքարի նվիրյալը:

Հայրենիքին մատուցած բացառիկ ծառայությունների, Արցախյան գոյամարտում ցուցաբերած սխրագործությունների համար Անդրանիկ Սարգսյանը 1994թ. արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի, պարգևատրվել է նաև «Շուշիի ազատագրման համար» մեդալով: Նրա անցած մարտական ճանապարհը հարուստ է սխրագործությունների, համառ ու անխոնջ պայքարի, անմնացորդ նվիրվածության ու մաքառումների դրվագներով, որոնք հոգու հարստություն ու խիզախություն լինելուց բացի՝ արիության ու խիզախության դասեր են փոխանցում երիտասարդ սերնդին, մղում հաստատակամ քայլերի, հայրենանվեր գործունեության:

«Արցախյան ազատամարտի տարեգրության մեջ Կենտրոնական պաշտպանական շրջանն ունի իր ուրույն տեղը: Այն մարտական փառավոր կենսագրության տեր մի զորամաս է, որն իր հաջողությունները կերտել է արյան գնով: Պատերազմի ամենադաժան օրերին գունդը մարտեր է մղել ռազմաճակատի բոլոր ուղղություն-

ներում և մեծապես ունեցել փայլուն հաղթանակներ: - Իր համոզմունքներում ոգեշնչման ակունքներ բացելով՝ Ա. Սարգսյանն այսօր նոր հայացքներով է վերարժևորում անցած մարտական ծանապարհը, նորից ու նորից գնահատում ու փառաբանում մարտական ընկերների հայրենանվեր գործունեությունը: - Իր գոյության ընթացքում գունդը կարողացել է դառնալ առավել կայացած և օրինակելի՝ դա լինի թե արտաքին տեսքով, թե զինանձնակազմի կարգապահության առումով: Այսօր էլ այն շարունակում է մնալ առաջինների շարքում: Իսկ դա նշանակում է, որ մեր՝ վետերաններիս կատարածն ապարդյուն չի անցել...»:

Անդրանիկ Սարգսյանը Արցախի ազատամարտիկների միության վարչության խորհրդի անդամ է: 2007թ., ընտրվելով ԱԱՄ Ստեփանակերտի տարածքային միավորման խորհրդի նախագահ, իր ուժն ու ջանքերն է ներդրել Ազատամարտի մասնակիցներին միավորելու և նրանց առջև ծառայած հարցերը միասնաբար լուծելու գործում:

Ա. Սարգսյանը անչափ կարևորում է այցելությունները պաշտպանական դիրքեր: «Դրանք ինքնանպատակ չեն,- գտնում է նա,- այդ այցելություններն ու հանդիպումները հայրենիքի պաշտպանության դիրքերում կանգնած զինծառայողների հետ հսկայական դաստիարակչական նշանակություն ունեն և բարոյական մեծ խթան են նրանց համար: Միաժամանակ հատկանշական է, որ այսօր զգալիորեն բարձրացել է Ղարաբաղյան պատերազմի մասնակցի դերը, որը և խթանում է երիտասարդներին հայրենասիրության ոգով դաստարակելու անչափ կարևոր գործընթացը: Այսօր կարող ենք արձանագրել նաև, որ Արցախի ազատամարտիկների միությունը կայացած կառույց է, իսկ Ստեփանակերտի տարածքային միավորումը՝ նրա հզոր և կայուն թևը: Այդ նվիրական գործում անգնահատելի է Արցախի հերոս, ԱԱՄ նախագահ, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանի ունեցած բացառիկ դերակատա-

րությունը, Ազատամարտի մի անխոնջ նվիրյալ, ով կանգնած լինելով Արցախյան շարժման, գոյապայքարի և բանակաշինության ակունքներում, մշտապես աջակցում և զորավիգ է լինում ազատամարտիկներին՝ ըստ արժանվույն գնահատելով նրանց վաստակն ու ներդրումը Արցախյան գոյամարտում»:

Յոդ-հայրենին փրկած ազատամարտիկն այսօր կերտում է Երկրի ապագան: Իսկ այդ ապագան միշտ լինելու է հուսալի ձեռքերում, որովհետև ազատության և անկախության խորհուրդն ըմբռնած ժողովուրդը ստեղծել է նաև մարտունակ ու հզոր բանակ, հայոց պետականություն, հարուստ ու զորեղ մշակույթ:

«Մենք ակտիվ կենսադիրք ունենք նաև,- նշում է Ա. Սարգսյանը,- երկրի ներքին կյանքին վերաբերող հարցերում և արտահայտում ենք մեր անկեղծ կարծիքն ու մտահոգությունը: Դրանով իսկ փորձում ենք օգնել իշխանություններին վերացնել այս կամ այն թերությունը: Գտնում եմ, որ դա է ճիշտ մոտեցումը և ոչ թե հեռվից սխալներին նայելն ու չարախնդալը, չէ որ Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը մեր ընդհանուր օջախն է, և ամեն մեկը պարտավոր է այնպես աշխատել, որպեսզի երբեք չկտրվի օջախի ծուխը, էլ ավելի հզորանա մեր Արցախ աշխարհը»:

Անդրանիկ Սարգսյանը մտահոգված է նաև Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ճակատագրով: Չէ որ ամենակարևոր արժեքը հայրենիքն է, որի փրկության համար ազատամարտի նվիրյալների արյունն է թափվել, սրբագործվել ու թրծվել է Պայքարի ու Մաքառման ճանապարհը, դարձել Ոգու դարբնոց: «Ժամանակ առ ժամանակ ակտիվանում է Լեռնային Ղարաբաղի գործընթացը: Բնականաբար, մենք չենք կարող անտարբեր լինել այդ գործընթացի նկատմամբ և հաշտվել հարցի անարդար լուծման հետ: Մենք քաղաքականությամբ չենք զբաղվում, բայց չի նշանակում, թե մեր վզին կարող են փաթաթել անընդունելի մի տարբերակ: Մենք շատ թանկ ենք վճարել մեր ազատության և երկրի ան-

կախության համար: Անհրաժեշտության դեպքում մենք՝ ազատամարտիկներս, դարձյալ կանգնելու ենք Յայրենիքի պաշտպանության դիրքերում»:

Ա. Սարգսյանի երազանքը բխում է հայրենի երկրի ոգու արմատներից: Նրա երակներում հոսում է մեր պատմական հերոսների արյունը: Ժողովրդի ոգու արթնացումներում նա տեսնում է հայապահպանության միակ բանալին: Եվ որպեսզի հաստատուն լինեն քայլերդ ապագայում, անհրաժեշտ է մշտապես հիշել անցյալի դասերը. «Մեր պետությունը դժվար ճանապարհ է անցել: Պարտադրված պատերազմում մենք կորցրել ենք մեր լավագույն ընկերներին: Շատերը հաշմանդամ են դարձել: Այսօր արդեն կյանք են մտնում նրանց զավակները: Մենք պարտավոր ենք հոգալ, որպեսզի նրանք գտնեն իրենց արժանի տեղը: Այդ տեղը պիտի պատվավոր լինի...»:

Սա է ժամանակի հրամայականը:

Սեփական ուժերին հենված հասարակությունը լինելության նոր ելքեր է որոնում՝ Ոգու ակունքներից պեղելով հոգևոր անսպառ գանձեր: Մարտական ճանապարհը սոսկ պատմություն չէ. ոգեղեն ընթացք է, որ միավորում է համայն աշխարհի հայությանը, դարձնում մի բռունցք: Հավատը առաջնորդող այն ուժն է, որ մաքրում ու թրծում է մեզ՝ խորքից:

«Արցախյան հողը մեզ համար ոչ միայն մի կտոր հող է, այլև հայրենիք, պատմություն, անցյալ և հիշողություն...», - Անդրանիկ Սարգսյանը համոզված է նաև, որ Երկրի պայծառ ապագայի գրավականը երիտասարդությունն է: Յայրենիքի համար մղված պայքարում անզիջում ու համառ է երիտասարդ սերունդը՝ ազատարար նախորդներին արժանի վարքով ու գործունեությամբ: Գիտակցելով իր քաղաքացիական իրավունքները՝ նա պետք է ինքնաարտահայտման և ինքնահաստատման նորանոր ելքեր ու միջոցներ գտնի, անխոնջ ու աննահանջ պայքարի կյանքի ու լինե-

լիության նոր հեռանկարներ բացելու համար:

Այդ են պահանջում Երկրի ներկան, անցյալն ու ապագան: Հայրենիքի սահմանները հսկող ու պահպանող զինվորը հայ մշակութային դիմագծի կրողն է, ազգային ոգու և հիշողության մեկնիչն ու արտահայտիչը:

Անդրանիկ Սարգսյանը՝ երեկվա Ազատամարտի նվիրյալն ու այսօրվա ընտրյալ պատգամավորը վստահ ու հավատացած է. «Բաղձալի նպատակին կարող ենք հասնել ժողովրդի միասնությանը՝ ապավինելով միայն ու միայն սեփական ուժերին»:

2010թ.



Հուշաթանգարանում

## ԱԿՆԹԱՐԹԻ ԴԵՄՔԸ



Վարդերի բուրմունքն է խառնվում զինվորական առօրյային, որով լուսանկարվում են պահերը և սուզվում հիշողության ալիքներում: Չասված խոսքի տարածքներով մեր ընդերքի փոթորիկներն են անցնում: Կարմիր, կանաչ, սպիտակ, սև գույներով ներկվում են մարտիկների անհայտ ու հայտնի ձակատագրերը: Զինվորական առօրյան անգամ շնչից ձեղքեր է տալիս: Ճեղքերից հոսում է մանկության երկինքը և լցվում զինվորների ոտնահետքերի մեջ: Բառերի ուսերին դրված բեռներն իջեցնում են, թողնում ժամանակի կանգառներում: Ճանապարհներից հավաքում են հիշողության ծվենները, որպեսզի հյուսեն ակնթարթի դեմքը:

Սանասար Գյուրջյանը ծնվել է 1965թ. օգոստոսի 13-ին Մարտակերտ քաղաքում: Ավարտել է Մարտակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը: 1984-85թթ. ծառայել է Խորհրդային բանակում: «Գրադ» կայանքի հետ առաջին ագնամ ծանոթացել է Երևանի շինարարական ինստիտուտում սովորելու տարիներին:

- Ռուս մի դասախոս ունեինք,- պատմում է Սանասարը,- կարծես կանխագգում էր մեզ սպասվող արհավիրքը... Ասում էր՝ լավ սովորեք հայեր, «Գրադ» կայանքը ձեզ շատ է պետք գալու: Մի օր, իսկապես պատերազմը ծեծեց մեր դուռը... Ժորա Գասպարյանի նախաձեռնությամբ Մարտակերտ բերվեց առաջին «Գրադ» կայանքը, որի առաջին զինվորները դարձանք Գարիկ Չարությունյանը, Արմեն Շիրինյանը և ես: Հիշում եմ, Երևանից սպաների հա-



տուկ մի խումբ եկավ Արցախ: Սպաներին հետաքրքրում էր Արցախի հրետանու վիճակը: Ի ուրախություն մեզ՝ խմբի մեջ էր նաև մեր դասախոսներից մեկը՝ կապիտան Շահինյանը: Ցնցող էր... հանդիպումը:

Այո, ճակատագիրը իր կտրված թելերը միացնում է Արցախում: Հայոց հողի վրայով նորից կրակի ու ծխի լավան է հոսում, բարձրացնելով պատմության խորքից հայոց հերոսներին, հետզհետե շարք են մտնում նահատակները, աչքերում՝ վրեժի կրակ, շուրթերին՝ մոխիրե բառեր... Անցյալի գրկում երբևէ խաղաղված մարտադաշտերը արթնանում են պատմական նիրհից. հայ մարտիկների վարած բոլոր մարտերն ասես սկսվում են նորից... Լույսն իր աչքերն է թարթում... Մի մանուկ քայլում է իր պապերի ձայների ուղղությամբ, և նրա դիմաց նահանջում են անդունդները...

- Իմ հիշողության մեջ,- պատմում է Սանասարը,- անջնջելի հետք է թողել բեկումնային մի մարտ, որտեղ Մարտակերտի շրջանի լինել-չլինելու հարցն էր վճռվում: Մեր դիրքերը այդ ժամանակ ձգվում էին Կիրատափից մինչև Սրխավան, ընդգրկելով Ղլեն քարի, Հայկեղանի, Չլղրանի, Կիչանի տեղամասերը: Նահանջելը Արցախի վերջնական կործանում է նշանակում: Սանասարը պատմում էր... իսկ ես հիշեցի, այդ օրերին մարդիկ գենք տեսան Գանձասարի Տեր Հովհաննես քահանայի ձեռքին: Վանքը դարձել էր քարեղեն ձիջ: Հայ մարտիկների շնչից կրակ էր թափվում... Փորձության ահեղ օրեր էին: Մեզ ուղեկցում էր,- Սանասարի ձայնն իմ մեջ կրկին վերագտավ իրեն,- Բենիկ քեռին, Կարեն Մնացականյանը և ես Կիրատափի հետախուզական դիտակետից հետևում էինք թշնամու դիրքերում կատարվող տեղաշարժերին: Ռաֆիկի (Միրուք) գումարտակի զինվորները պատրաստ էին ետ մղելու թշնամու յուրաքանչյուր հարձակում: Թուրքերն անցան հարձակման: Գումարտակի հրամանատարի տեղակալ Ագոյի (Խոլոստոյ) հրամանով մտանք մարտի մեջ: Քիչ անց մեր... հաղորդած կոորդի-

նանտներով թշնամու վրա սկսեց կրակ թափել հրետանին՝ 152 մմ թնդանոթը և «Գրադ» կայանքը («Դոցենտ»): Մարտում իրեն լավ դրսևորեց նաև «Սամովար» Կրեժի ականանետային դասակը: Թշնամու նահանջելուց հետո մեր հետախուզական խումբը բարձրացավ «Շլորեն քար» կոչվող բարձունքը և դիրքավորվեց այնտեղ: Մեծ է այս մարտի պատմական նշանակությունը:

Մարտակերտի պաշտպանական շրջանի հրետանին, որը ձևավորվեց Գառնիկ Իսրայելյանի (Պրոֆեսոր) ջանքերով և ամրապնդվեց Վլադիկ Խաչատրյանի (093) ջերմեռանդ ջանքերի շնորհիվ, Սանասար Գյուրջյանի հրամանատարության ժամանակ մտավ կատարելագործման նոր փուլ՝ ամրապնդելով իր մեջ կանոնավոր բանակի կառուցվածքային տարրերը: Օրինակելի և փորձառու սպաների (Գարիկ Յարությունյան, Գարեգին Յակոբյան, Արթուր Մնացականյան, Կարեն Գրիգորյան, Բորիս Օհանջանյան, Յուրի Ավանեսյան (Սամովար), Սասուն Առաքելյան, Գարիկ Անտոնյան, Գենադի Գյուրջյան, Սեյրան Բաղդասարյան, Սամվել Գրիգորյան, Կորյուն Յարությունյան) ուժերի և նպատակների միավորման շնորհիվ է, որ հրետանու շտաբը կարողանում է ակտիվություն և թարմություն հաղորդել իր գործունեությանը:

- Պարոն կապիտան,- հարցնում եմ,- ռազմաճակատում տիրող անդորրը ինչպե՞ս է ազդում հրետանավորների մարտունակության վրա:

- Մեր զինվորների հոգեբանությունը,- ասում է Մարտակերտի շրջանի հրետանու պետ Սանասար Գյուրջյանը,- ոչնչով չի փոխվել: Մենք ամեն րոպե մտածում ենք, որ թշնամին կարող է հարձակվել, մենք պատրաստ ենք արժանի հակահարված տալ նրան: Ճշմարիտ է ասված. «Խաղաղություն ես ուզում՝ պատրաստվիր պատերազմի»: Զինադադարի ժամանակ մենք նորոգում ենք թնդանոթները, վերլուծելով անցած մարտերը, օգտակար դասեր ենք առնում...

Օրերի շերտերի վրա կնստեն նոր շերտեր: Աշխարհ կգան նոր սերունդներ: Նրանց աչքերի մեջ մեր ոգու փայլը կլինի: Նրանց ականջների մեջ կկրկնվի մեր օրերի հրաշունչ գրույցներից մեկը:

- 0.28 83-ին:

- Ընդունում եմ, Գարիկ:

- Սանո, ես արդեն տեսնում եմ թշնամու դիրքերը: Նկատվում են տեխնիկայի... Նրանց... կոորդինանտները...

- Կապից դուրս չգաս... Չետկիր... արկը օդում է... Խնչպես է...

- 50 մետր առաջ... մեկն էլ խփիր...

- Օդում է... հետևիր...

- Չիանալի է... արդեն... փախչում են...


- Չամազարկ...

Մի երեխա կքայլի իր պապերի ձայնի ուղղությամբ, և նրա դիմաց կնահանջեն անդունդները...

Բայց... ներկան դեռևս իր տարերքի մեջ է: Ներկան բառերի հայացքի մեջ արտահայտվելու իր ծարավն է թաքցնում: Փլվածքների միջից մերթ ընդ մերթ բարձրանում է քառսի ալիքը: Երբ դուրս էի գալիս սենյակից, Սանասարն ասաց. «Մի խնդրանք ունեմ, թող քո խոսքն իմ մասին չափազանցություն չլինի»: «Լավ» - ասացի ես և փակեցի բառի կոպը: Չեմվճում... պատերազմի ժխի միջից մի ծաղիկ էր համբուրում շուրթը ձառագայթի... Ավազներում երկինքն էր տրոփում...

03.07.1994թ.

## ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ



Գարնիկ Իսրայելյան

Մարդատար մեքենան ձյունների միջով բարձրանում էր վեր: Անիվներով կարծես ձգմուն էր հոգուս անսահմանությունը, որ բառերի մեջ բանտարկված էր երկար ժամանակ: Բառերի պես մենք էլ ամեն մեկս մեր աշխարհում կծկված՝ խորհում էինք: Լռության մեջ մեր խոհերը իրար դիպչում ու բոցավառվում էին. «Ե՞րբ կվերջանա այս անտեր պատերազմը»:

Յիշեցի որդուս՝ վեցամյա Վրույրի օրեր առաջ ասաց խոսքերը: Առավոտյան արթնացել էի, բայց դեռ չէի ուզում տեղից վեր կենալ: Երեխաների մանկաբույր զրույցներն էի լսում և հոգիս մի կապույտ խաղաղությամբ էր լցվում: Միշտ չի բախտ վիճակվում ինձ լսելու նրանց զրույցները: «Յայրիկ, ինձ համար խաղալիք - տանկ կբերես, լմվ: Ի՞նձ համար խաղալիք - ավտոմատ կբերես»: Ես գլխով համաձայնության նշան էի անում, բռնում դեպի ինձ էի քաշում երեքամյա Նարեկին, պաչպչելով այտերը: Իսկ Վրույրի խոսքը ուղղակի մնացել է մեխված ուղեղիս մեջ. «Նարեկ, գիտե՞ս, երբ բուլորը մեռնեն, մենք ենք գնալու կռիվ»: Յիշեցի բանաստեղծ ընկերոջս՝ Յրանտի տողերը. «Երեխաների ձեռքին խաղալիք - զենքերը ավելի սարսափելի են, քան ձեր ամբողջ ռազմական տեխնիկան, մի՞ ներքաշեք նրանց պատերազմի մեջ»:

Դժբախտաբար, մեր վզին փաթաթված պատերազմն իր ստվերն է նետել նաև երեխաների հոգեբանության վրա, նրանց խաղերն է խոցոտում ու արյունոտում մանկական երազները:

Մարդատար մեքենան շարունակում էր վեր բարձրանալ ձյունոտ ճանապարհով: Կողքիս նստած տղան ասաց. «Եթե իմանալիք, թե մեքենան ինչպիսի վտանգավոր ճանապարհով է բարձրանում, այսքան հանգիստ չէիք լինի»:

«Ուրալ» մեքենան մեզ առանձնացրել էր դրսի աշխարհից: Գնում էինք հերթափոխելու մեր տղաներին, որոնք արդեն մի քանի օր է՝ Օմարի լեռնանցքը հրետակոծության տակ էին պահում: Յերթափոխող հաշվարկում չորս հոգի էինք՝ Պետյան, Գրիշան, Արթուրը և ես: Երբ տեղ հասանք, մարտերն արդեն ավարտված էին: Տղաների մրոտ դեմքերին գիշերային մարտերի հոգնությունն էր նստել, աչքերի մեջ դժվար ձեռք բերած հաղթանակի ոգին էր հանգստանում: Կարծես սպիտակ մի արև էր սփռված գետնին, որի վրա ընդգծված սև կետերը պայթած արկերի և թշնամու դիակների տեղերն էին նշում:

Օդը սառն էր: Փոքրիկ քամին հերիք էր, որ կրկնապատկվեր ցրտությունը: Այստեղ առաջին թշնամիդ թուրքն էր, երկրորդը՝ ցուրտը:

- Յիմա բավականին մեղմացել է եղանակը,- ասաց Գարիկ Յարությունյանը, բահով խառնելով կրակը,- արև կա, ջերմացնում է: Երկու օր առաջ ցուրտը մտնում էր ոսկորներիդ մեջ: Մեր դիտակետից թշնամու դիրքերը որոշելիս՝ կարծես թե մեկը բռով ձյուն էր լցնում աչքերիդ մեջ: Աչքերդ չէիր կարողանում բացել:



Նկարում (ձախից)՝ Կարեն Գրիգորյանը, Գարիկ Յարությունյանը, Աղավնի Սահակյանը և Գարիկ Անտոնյանը:

Ահա այդպիսի պայմաններում ենք կռվել ու հաղթել: - Վերջին նախադասությունն, իհարկե, ասաց հայացքով միայն: Գարիկը դժվարություններից վախեցողը չէր: Ինչպես միշտ, այս մարտի ժամանակ էլ, նա հրամանատարական դիտակետից ղեկավարում էր հրետանու աշխատանքը: Ձյան քանի շերտ է նստել նրա համբերության վրա ու հալվել, կաթիլ-կաթիլ լցվելով... հոգու մեջ: Նրա մասին է, որ ասում են. «Ոսկի մարդ է, ոսկի հոգի ունի»: Դիվիզիոնի հրամանատարին կարող եք տեսնել հրանոթ մաքրելիս, հրանոթ տեղադրելիս, մեքենաներ բեռնաթափելիս, մազ կտրելիս և այլ հանգամանքներում: Դրսի աչքի համար գուցե դա զարմանալի լինի: Բայց Գարիկի համար... դա առօրյա կյանք է: Եվ պատերազմի դժվարություններն հաղթահարելու միակ միջոցը հենց այն է, որ ինքդ քո մեջ փակես նախկին կյանքի դռները և պատերազմն ընդունես որպես առօրյա կյանք, որից դուրս ... ստրկության մառախուղն է իշխում...

Ես նայում էի Գարիկի, Բորիսի և հրանոթի հաշվարկի տղաների՝ Միերի, Կարենի, Ենոքի, Վահանի դեմքերին և մտածում. «Տեր Աստված, ինչպիսի ուժ ես դրել այս տղաների մեջ, որ ինչքան բախվում են թշնամուն, այնքան ավելի են ամրանում: Եվ եթե թուրքը Քելբաջարը համարում է իր հողը, միթե այսպես են կռվում հայրենի հողի համար»:

Մենք բարձրացանք այն բարձունքը, որտեղ մեր հրանոթներն են տեղադրված: Դա տրակտորով հարթեցված մի փոքրիկ տեղ է, որտեղից միանգամից մի քանի հրանոթներ հրետակոծության տակ էին պահել Օմարի լեռնանցքը, կասեցնելով թուրքերին օգնության շտապող ջոկատների և տեխնիկայի առաջխաղացումը: Այդտեղից էր աշխատում նաև թշնամու հրանոթը, որը վերջնականապես լռեցվել էր առաջին մարտկոցի տղաների կողմից (հրանոթի հրամանատար՝ Կարեն Բաբայան): Հրետանային այդ կատարյալ զարկը չի վրիպել Արցախի հրետանու պետի՝ Ժորա Գասպար-

յանի ուշադրությունից. «Տեսել եք, ինչքան դիպուկ է խփել «Արքան»: Ժորա Գասպարյանի դեմքը փայլում էր ուրախությունից, նաև՝ թաքուն հպարտությունից, որը նրա հոգու խորքից բարձրանալիս՝ մարում էր աչքերի ցուլքերի մեջ: Եվ կարծես այդ թաքուն հպարտությունից էր, որ նրա աչքերը դարձել էին այդքան մոխրագույն ու այդքան բարի:

Չեշտ չէր նաև հակաօդային հրանոթի հաշվարկի զինվորների գործը: Չաշվարկի ավագը՝ Չենրիխ Մանուկյանը, մի քանի խոսքով պատմեց անցած օրերի մարտերի մասին. «Ամեն ինչ սովորեցինք մարտի ժամանակ,- ասաց նա,- հրանոթի այս տեսակի հետ մինչ այս չէինք առնչվել: Մշտական հարվածի տակ էինք պահում թշնամու տեխնիկան և կենդանի ուժը: Մարտի ժամանակ անհրաժեշտություն եղավ նորոգելու հրանոթը: Դա էլ արեցինք: Ստացվեց: Կարևորը ցանկությունն է: Սա իմ առաջին մարտն է: Ինքդ լավ գիտես, որ թշնամու հրետանու հարվածների տակ այդքան էլ հեշտ չէ աշխատելը, հատկապես, երբ բլինդաժ չկա: Չողը երկաթի պես կարծր է, հնարավոր չէ փորել... Ես հաշվարկներն էի անում, Վազգենը նշանառուն էր, իսկ Ռոբերտն ու Վանյան լցավորողն էին: Այս կռիվը միացրել էր բոլորիս, դարձրել մի բռունցք»:

...Վերադարձանք ոչ այն ճանապարհով, որով եկել էինք, հնարավորություն տրվեց մեզ տեսնելու այն վայրերը, որտեղ մարտերն էին ընթացել: Դեպի Յանշաղ ուղևորվող բեռնատար մեքենայում մի կերպ տեղավորվեցինք: Մեր կյանքը կրկին սկսեց օրորվել անիվների վրա: Չիշեցի Գարիկի խոսքը. «Երեկ, փետրվարի 20-ին, ինձ բախտ վիճակվեց լուսանկարվել Օմարի բարձունքում»: Ես նայեցի պատերազմի մառախուղի միջով և հեռու- հեռավում պարզ տեսա այդ պայծառ օրը, որ ժամանակի հարվածներից կծկվել, մի բուռ հող էր դարձել: Այդպես էլ մեզ չհաջողվեց այդ մի բուռ հողում առանց արյան երազանքի ծաղիկ աճեցնել: Դարը վանկերի բաժանվեց. «Մի-ա-ցում»: Վանկերի բաժանվեց նաև մեր

շնչառությունը. «Չա-յաս-տան»։ Ադրբեջանը մեզ ձեռնոց նետեց։ Մենք ընդունեցինք այն։ Եթե չընդունեինք, Ավոյի բառերով ասած՝ պիտի շրջեինք հայոց պատմության վերջին էջը։ Սփոփվենք նրանով, որ աշխարհում ազգեր ու ժողովուրդներ կան, որոնք ստրկության խավարում ապրելով՝ զրկված են հայրենի հողի համար զենքով պայքարելու հնարավորությունից և բախտից անգամ։

Բեռնատար մեքենան իր հանդարտ ընթացքով օրորում էր մտքերս։ Աչքերիս առաջ թերթվում էին թշնամու պարտության էջերը. փշրված վրաններ, ձյունների մեջ ընկղմված արկղեր, արկեր, և իհարկե, դիակներ, որոնց աչքերում սառել էին բազմաթիվ հարցեր։ Վարորդը երբեմն կանգնեցնում էր մեքենան, որպեսզի զինվորները հավաքեն թշնամու թողած զինամթերքը։

Չավաքիր, վարորդ, պատերազմի հետքերը մեր բոլոր - բոլոր ճանապարհներից, հավաքիր կսկիծի, ցավի հետքերը բոլոր սրտերից։ Եվ թո՛ղ, վերջապես, խաղաղություն լինի... Խաղաղություն և.... օրհնություն լույսի...





**«ԿԱ ՄԻ ՄԵԾ ԲԱՆ, ԿՅԱՆՔԻՑ ԷԼ ԹԱՆԿ, ՈՐԻ  
ՅԱՄԱՐ ԱՐԺԵ ԿՅԱՆՔԸ ՏԱԼ, ԴԱ ՄԵՐ ԱԶԳԻ  
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ Է»**



Արցախյան գոյապայքարի նվիրյալներից է Կարմեն Ավետիսյանը: Նրա կենսագրության մեջ կարևորագույն տեղ ունի Արցախյան գոյապայքարը, որը նշանավորվել է նաև մեր ռազմիկների կողմից ցուցաբերած անհատական սխրագործություններով: «Եթե մարդ պարտավորություն է զգում իր ազգի, իր երեխաների, ապագայի հանդեպ,- խոստովանում է Կ. Ավետիսյանը,- ապա պետք է դրան տեր կանգնի զենքով ու երբեք չխուսափի ճակատագրից: Մեր ջախելության լավագույն տարիները անցան ռազմի դաշտերում, սակայն դրա փոխարեն անհամեմատելի մեծ ձեռքբերում ունեցանք, որը ջախելությունից էլ շատ ավելի թանկ է»:

Կ. Ավետիսյանը գտնում է նաև, որ ռազմական յուրաքանչյուր հաջողության հիմքում հայ ազգի նվիրական զավակների արարումն է, բացառիկ ձեռքբերումն ու պայքարող ոգու նկարագիրը: Ազատամարտի նվիրյալի մարտական ճանապարհը առնչվում է կյանքի ակունքներին` հենց այդ պայքարող ոգու ուրույն նկարագրով: «Այս տարիների ընթացքում,- ասում է նա,- մենք` ազատամարտիկներս, համոզվել ենք, որ բարեկեցիկ ապագա կերտելու համար պետք է հենվենք միայն ու միայն սեփական ուժերի վրա: Անչափ կարևոր է, որ մեր դպրոցականները կրթօջախներում դաստիարակվում են` որպես Արցախյան ազատամարտի նվիրյալների հետնորդներ»:

Կարմեն Ավետիսյանը ծնվել է 1955թ. Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղում, մանկավարժի ընտանիքում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել Երևանի Ա. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումի ճարտարապետական բաժնում: 3 տարի աշխատել է Ժամանակի անտառարդյունաբերական կենտրոններից մեկում՝ Ուստ-Իլիմսկում: Վերադառնալով հայրենի երկրամաս, աշխատանքի է անցել Ստեփանակերտի կենցաղսպասարկման կոմբինատում՝ որպես նկարիչ-ձևավորող: Յետո, տեղափոխվելով Ասկերանի շրջկենտրոն, աշխատել է մշակույթի տանը կից արհեստանոցում:

«Իմ կենսագրությունն առանց Արցախյան գոյապայքարի, խոստովանել է Կ. Ավետիսյանը, երևի թե անիմաստ կլիներ: Չատկանշական է, որ օրըստօրե ավելի է բարձրանում Արցախյան ազատամարտի մասնակիցների դերը թե՛ բանակաշինության և թե՛ պետական ծրագրերի իրականացման գործում: Լինելով համախմբող և առաջատար ուժ՝ նրանք կարևոր գործունեություն են ծավալում նաև հասարակական կյանքում, միշտ պատրաստ՝ պաշտպանելու սեփական ձակատագիրն ինքնուրույն տնօրինելու իրավունքը»:

Կարմեն Ավետիսյանի մարտական ուղին թրծվել է ռազմադաշտում: Ականատեսն ու մասնակիցը լինելով բազում կարևորագույն մարտագործողությունների՝ փրկել է մարդկության ամենամեծ արժեքը՝ ազգի արժանապատվությունն ու ոգու դիմագիծը. «Միտինգներին ու խաղաղ ցույցերին փոխարինելու եկավ ինքնապաշտպանության ջոկատների կազմավորումը, ես մեկնեցի գյուղ՝ կոորդինացնելու այդ աշխատանքը, մեր գյուղում էլ՝ Սարուշենում ստեղծվեց կամավորական ջոկատ: Մեր ջոկատը, որը բաղկացած էր 18 հոգուց, իր մարտական մկրտությունը ստացավ Քարապխում՝ մասնակցելով եկեղեցու ազատագրմանը»:

Շուշիի ազատագրումից հետո ջոկատը համալրվեց և դարձավ

առանձին վաշտ, իր շարքերում ընդգրկելով Ղարաբուլաղի, Սարուշենի, Չանախչու, Մխիթարաշենի, Ջաղացների, Սղնախի տղաներին:

«Շուշիի ազատագրությամբ,- ասում է Կ. Ավետիսյանը,- հայոց բանակը կատարեց մեծագույն սխրանք՝ ԼՂՀ անկախությունը դարձնելով իրական ու անշրջելի, լիակատար ու ընդգրկուն: Այդ հաղթանակով ոչ միայն վերականգնվեց պատմական արդարությունը, այլև ձեռք բերվեց համայն հայությանը ոգեշնչող մի գաղափար: Բացվեցին կյանքի և հաղթանակի ճանապարհները»:

Կարմեն Ավետիսյանը պաշտպանելով հող-հայրենին, պաշտպանել է հայ ժողովրդի դարավոր իղձը՝ ազատ և անկախ ապրելու ձգտումը, սեփական բախտն ու ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու իրավունքը:

Նա պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով:

«Ազատության ու հաղթանակի դրոշմ բարձրացրած նվիրյալների գործը կիսատ չի մնա: Հայրենիքի սուրբ նահատակների արյամբ սրբազործվեց հողը: Ազատագրված Երկիրը դարձավ սրբատեղի: Կրկին մեծն Չարենցի խոսքն է դառնում մեր օրերի հիմնական կարգախոսը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», - համոզված է Կարմեն Ավետիսյանը՝ Արցախյան գոյապայքարի նվիրյալն ու ազատասեր հայր: Նրա կարծիքով՝ մեծ է պաշտպանության բանակի դերը մեր անկախ պետության անվտանգության գործում: Այսօր ամեն հայ հպարտանում է մեր բանակի մարտունակությամբ, որի շնորհիվ էլ պահպանվում է խաղաղությունը: Կյանքը հետնաբակ չէ, կյանքը առաջին գիծ է: Եվ ամեն հայ կանգնած է առաջին գծում:

«Կա մի մեծ բան,- համոզված է Կարմեն Ավետիսյանը՝ բանաստեղծ Սերգեյ Ավետիսյանի որդին,- կյանքից էլ թանկ, որի համար արժե կյանքը տալ, դա մեր ազգի արժանապատվությունն է»:

## ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆՎԻՐՅԱԼԸ

### 1. ՍԿԻՉՔ



«Արցախյան գոյապայքարի նվիրյալին», - այս ընծայագրով եմ միշտ գիրք նվիրում նրան, և դա նա ընդունում է որպես ճանապարհի ուղեցույց, իր կենսագրության եզրագծերը միացնող կշռաչափ: Նրա համար հայրենիքը սկսվում է բարևից և շարունակվում մարդկային գոյի անտեսանելի ու անչափելի հորիզոններով:

Ալվարո Շեկյանի հավաստմամբ՝ նվիրյալների արյամբ ազատագրված երկիրը սրբություն է: Եվ պետք է ամեն ինչ անել, որպեսզի նրա անցյալը լինի հայրենասիրության և արիության դաս, ներկան՝ կայուն, իր սահմաններով անխոցելի, իսկ ապագան՝ հուսալի ձեռքերում:

### 2. ԱՆՑՅԱԼԻ ԴԱՍԵՐԸ

Արցախյան գոյապայքարի նվիրյալը՝ Ալվարո Շեկյանը, իր զենքը ոչ թե ցած է դրել, այլ 2007 թվականի օգոստոսին փոխանցել է երիտասարդ զինակցին: Նրա անցած մարտական ուղին խոսուն է և հագեցած հերոսական դրվագներով. «1992թ. մարտի 12-ին մասնակցել է Սրխավանո, Բաշիլար, Ղարաշտար գյուղերի, իսկ մինչ այդ՝ Մալիբեկի, Ղուշչիլար և Խոջալու գյուղերի ազերական կրակակետերի վերացմանը: - 1992թ. մայիսի 7-9 առաջին վաշտի կազմում՝ Շուշիի ազատագրմանը: - 1993-ի մարտի 26-ից մինչև

ապրիլի 7-ը՝ Քելբաջարի ռազմագործողություններին: - 93-ի մայիսի 2-ից մինչև հունիսի 14-ը՝ Խծաբերդին հարող տարածքում մղվող մարտերին: -1993-ի դեկտեմբերի 12-ից մինչև 94թ. հունվարի 4-ը՝ Ֆիզուլու շրջանի Սեիդահմեդլի և Կարախանբեյլի գյուղերի համար մղված կռիվներին: - 1994թ. հունվարի 5-ից մինչև ապրիլի 13-ը՝ Աղդամի շրջանի Սոֆուլու գյուղի ուղղությամբ ծավալված մարտերին»: ...Այսպես, կարծես, բառերով հեշտ է հյուսվում մարտական ճանապարհը քաջ հրամանատարի ու զինվորականի, բայց այն մեծ ու հախուռն ապրումները, որ փոթորկվել են երակներում ու հորդացել, որպես հրահանգ ու կոչ, որպես ելքի փնտրտուք, մտքի ու արյան հրատոչոր ճիգ, մնացել են ժամանակի կադրից դուրս ու խտացել-կուտակվել են սերունդների գենի աներևույթ շերտերում: «Չայրենիքին ազնվորեն ծառայելը իմ միակ բաղձանքն է, իմ հավատամքը, իմ գերագույն նպատակը», - սա է նվիրյալ ազատամարտիկի կյանքի իմաստն ու նշանակությունը: Նրա համար անցյալը դաս է, որ չի անցյալանում: Մարտական առաջին մկրտությունը Ա. Շեկյանը ստացել է Ասկերանի մոտ, երբ մի քանի խիզախ հայորդիներով կարողացել են կանգնեցնել մեծաքանակ խուժանին: Այդ փոքրաթիվ ըմբոստները մեծ ոգի, կամքի ուժ և համառություն ունեին: Նրանք են՝ Սամվել Կարապետյան, Թաթուլ Շեկյան, Վալերի Չայրիյան, Յուրի Իշխանյան (Ջաբի), Լավրենտ Կաֆյան և ուրիշներ:

Աշվարո Շեկյանի համար հայրենիքը ոգու դարբնոց է: Չայոց պատմությունը, որի էջերը գրվում են նաև այսօր՝ Արցախյան գոյապայքարի նվիրյալների վարքով ու գործով, մերթ դառնում է վրեժի կրակ, մերթ հույսի դուռ ու ապաստարան, մերթ կարոտի շեմ, հիշողության բռնունցք... Եվ ամեն սերունդ ուսում առնելուց և արիության դասեր քաղելուց բացի, նաև պատմությունն է կերտում սեփական փորձով ու կյանքի գնով: Սա է ճանապարհը...

### 3. ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԿԱՊՆ ՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ես իմ պարտքն եմ կատարել և ուրիշ ոչինչ»,- սա է, թերևս, հայրենիքը պաշտպանող անհատի ամենաբնորոշ խոստովանությունը: Փորձառու զինվորականն առնչվում ասելիքի ելուստներին և լռում է այն մասին, որ իր անցած մարտական ճանապարհը...



արիության դաս է նոր սերնդի համար: Ապրեցնող տարածություն կա ավանդապահ հայրորդու լռության շերտերում: Բառը ուղեցույց է, որի աջակցությամբ ճանապարհորդում է ոգու և մտքի հորիզոններով: Չի ընդունում, առաջին հերթին, հոռետեսությունը: Չէ որ կյանքը սիրո և լույսի աղբյուր է,- մտածում է նա,- սիրո ալիքներին հույս ու ջերմություն ավելացնելով՝ կարող ես բացահայտել միակ ճանապարհը, որ տանում է ոգու բարձունքներ: «Ես գոհ եմ ձակատագրից, ուրախ եմ, որ Արցախյան պատերազմում տարած պատմական հաղթանակում իմ համեստ բաժինն ունեմ»:

20-րդ դարի վաստակավոր ուսուցիչ, լրագրող Միքայել Բալյա-

նր «Դաժան մարտերից մինչև խաղաղության հանգրվան» հոդվածում Ալվարո Շեկյանի մասին գրում է. «Նա... մի նոր Ալեքսեյ Մերես է, իսկական նվիրյալ, իսկական հայ զինվոր, Ղարաբաղի հողից ու ջրից սերված անկոտրում մի ԱՅՐ: Դե, ասենք, պետք չէ զարմանալ, քանզի ամեն ինչ արմատներից է գալիս, ծնողներից, նախնիներից: Յիշեցնենք, որ հայրը՝ Յովհաննես Շեկյանը, որ 1940-ին պիտի ավարտեր Շուշիի մանկավարժական տեխնիկումը, 39-ի հոկտեմբերին զորակոչվել է խորհրդային բանակ: Մասնակցել է Մեծ Հայրենականին, վիրավորվել, բուժվել Բելոռուսիայի Մոգիլյով քաղաքի զինվորական հոսպիտալում: Ապաքինվելուց հետո շարունակել է հաղթական երթը ու տուն դարձել 1946-ին: 47-ին ավարտել է «կիսատ թողած» ուսումնարանը և մատյանը ձեռքին մտել դասարան: Ու երբ սկսվել է Շարժումը (սա Ալվարոն է պատմում) չնայած առաջացած տարիքին, կարաբինը ուն է գցել ու ջահելների հետ հարազատ օջախը՝ Ղազանչին պաշտպանել: Թոռը՝ Միքայելը (Ալվարոյի տղան), իր նվիրվածությամբ, անվեհերությամբ, կարելի է ասել, տվել-անցել է բոլորին: Նա 16 տարեկանում արդեն զենք էր կրում ու թուրքերի դեմ ձակատ առ ձակատ կռվում: Որտեղ ասես որ չի եղել: Մալիբեկլի, Խոջալու, Ղարադաղու, Նախիջևանիկ, Բաշիլար... Յոր հետ միասին, մեծերի հետ կողք-կողքի, Կարեն Բաբայանի հրամանատարության տակ, 71-րդ մոտոհրաձգային գումարտակում: Երեք անգամ վիրավորվել է, երեք անգամ բուժվել ու վերստին շարք վերադարձել: Յիմա Ստեփանակերտի զինկոմիսարիատում է աշխատում: Մեծերը սխալ չեն ասել. մարդու աչքը ինչ տեսնում է, այն է սովորում»:

Ուսուցչուհի Ծովինար Գրիգորյանը նկատել է, որ «մերօրյա երիտասարդ սերնդի համար հայրենապաշտության դաստիարակությունն է փրկության օղակն ու խարիսխը: Մատաղ սերունդը պիտի գիտակցի, որ կարևորը ոչ միայն կյանքը զոհելն է հանուն հայրենիքի, այլև ապրելը հանուն հայրենիքի, ձեռք բերած հաղ-

թանակի պտուղները վայելելը, մեր չքնադագեղ լեռնաշխարհը շենացնելն ու ծաղկուն դարձնելը»:

Չայրենիքի պաշտպանությունը հայ մարդու համար ամենամեծ առաքելությունն է: Եվ յուրաքանչյուր զորակոչ՝ բանակն էլ ավելի հզորացնելու գործընթաց է, որին մշտապես մասնակցում է Արցախի ազատամարտիկների միության աշխատակից Ալվարո Շեկյանը: Նրա կարծիքով՝ զորակոչը վիճակահանությամբ սկսվում, բայց չի ավարտվում: Այն շարունակական գործընթաց է, զորակոչիկի համար՝ կյանքի պատասխանատու փուլ, երբ նա գիտակցաբար մտնում է ինքնադրսևորման բավականին լուրջ ջրջան, ուր ամրապնդվում ու սրբագործվում է իր և Չայրենիքի միասնական նպատակը:

#### 4. ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ՝ ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ

Ալվարո Շեկյանը թեև 2-րդ կարգի հաշմանդամ է, սակայն մշտապես առաջինն է արձագանքում Արցախի ազատամարտիկների միության նախագահ Սամվել Կարապետյանի՝ առաջնագիծ մեկնելու կոչին: «Չարյուրավոր ազատամարտիկներ,- նշվում է Արցախի հերոս Ս.Կարապետյանի՝ ազատամարտիկներին ուղղված «Շնորհակալական խոսքում», - կամավոր միանալով երկրի պաշտպանության սուրբ գործին, իրենց պատրաստակամությունը հայտնեցին առաջնային գծի ամենադժվարին հատվածներում մարտական հերթապահություն իրականացնել այնքան ժամանակ, որքան պահանջում է հայրենիքի անվտանգությունն ու նրա սահմանների անառիկությունը: ...Դուք ձեր քայլով մեկ անգամ ևս ազդարարեցիք, որ երեկվա պատերազմի մասնակիցը՝ այսօր ու ընդմիջտ շարունակում է կրել հայրենյաց պաշտպանի վեհ պատվանունը և հարկ եղած դեպքում կրկին լինելու է այնտեղ, ուր վճռվում է հայրենիքի ճակատագիրը»:



Իսկ Ալվարո Շեկյանը հայրենիքի ճակատագիրը կռող ազատամարտիկներից մեկն է, ում մշտապես անհանգստացնում է դարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում ստեղծվող լարվածությունը:

Դեռևս 2012թ. մայիսին Ա.Շեկյանը ԱԱՄ Ստեփանակերտի 2-րդ համայնքի ազատամարտիկների հետ մարտական հերթապահություն է իրականացրել առաջնագծում: Այդ մասին նա իր մտորումներն արտահայտեց «Անդրադարձ» հոդվածում, ուր մասնավորապես ասվում է. «Արցախի ազատամարտիկների միության նախագահ, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանի անմիջական հրահանգավորմամբ՝ կարևորվում է զգոնությունն ու պատասխանատվությունը: Գոյամարտի փորձառու ազատամարտիկները սրբությամբ ու անթերի կատարեցին իրենց առջև դրված խնդիրները, որի համար էլ զորամասի հրամանատարի կողմից արժանացան պատվոգրերի: Ալեքսանդր Չարությունյանի գլխավորած խմբի ազատամարտիկները իրենց հերթին շնորհակալություն են հայտնում 9-րդ պաշտպանական շրջանի զորամասի հրամանատար, գնդապետ Արարատ Մելքումյանին և իր տեղակալներին, հանձինս՝ հրետանու պետ, փոխգնդապետ Ալբերտ Աբրահամյանին, ինժեներական ծառայության պետ, մայոր Արտուր Բաբաջանյանին և ֆիզիկական պատրաստության պետ, կապիտան Դավիթ Յովհաննիսյանին՝ ջերմ ընդունելության և համագործակցության համար: Փառք Աստծո, որ ամեն ինչ ավարտվեց հաջողությամբ և Մայիսյան եռատոնի առթիվ կազմակերպված բոլոր միջոցառումներն անցան միանգամայն նպատակային և խաղաղ պայմաններում»:

Առաջնագծում լարվածությունն ուժեղացավ նաև 2014թ. օգոստոսին: Ալվարո Շեկյանը խոստովանում է, որ այս անգամ իր դիրքեր մեկնելու առիթը համընկավ առաջնագծում ուժգնացած լարվածության հետ: Բոլորի պես նա էլ համոզվեց, որ մեր զինծառա-

յողներն ինքնավստահ են, մարտունակ, զգոն ու աչալուրջ. «Ազատամարտի մասնակիցն ու այսօրվա բանակի զինվորը կողք-կողքի են», - այս է մեր հասարակության ոգու և կամքի ամրության գրավականը:

## 5. ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

**- Գիտեմ, որ Ձեր անվան հետ կապված հետաքրքիր հիշողություն կա, որ գրավիչ է, ոգու ընթացքը ուղղորդող մի փաստ կամ ճակատագրի սլաք, որ կարծես նախանշում է Ձեր անհանգիստ կյանքի անցնելիք ճանապարհը:**

- Անունս՝ Ալվարո, իսպանական ժողովրդական հերոսի անունն է, ում մասին հիշատակվում է Գեղամ Սարյանի 2-րդ հատորում:

«Ալվարո» սքանչելի բանաստեղծության մեջ կարդում ենք.

*Թախտ գետի ափով կանաչ՝  
Մի քաջ տղա զինված,  
Քայլում է լուռ դեպի առաջ,  
Հետախուզման ելած:  
Թփուտների մեջ աննկատ,  
Ճամփով արևայի,  
Ալվարոն է երիտասարդ  
Թուլեդոյից գալի:*

*- Իսպանիա, քեզ ազատություն  
Մենք կրքերենք արյամբ,  
Քեզ վառողի ծուխն է պատում  
Հիմա ինչպես սև ամպ.  
Ազատության արևով վառ  
Կըցրենք ամպ ու մեզ,  
Ու կլինենք կռվում համառ,  
Չենք նահանջի երբեք:*

Հիշում եմ, դա 1961թ. հոկտեմբերի 18-ին էր, երբ սկսվեց ԽՄԿԿ 22-րդ համագումարը, որի պատվավոր հյուրին՝ պորտուգալացի պատգամավոր Ալվարո Կունյալին քեռիս՝ ուսուցիչ Միքայել Գրիգորյանը, նամակ հղեց՝ շնորհավորելով նրան՝ Խորհրդային Միու-

թյուն կատարած առաջին այցի կապակցությամբ: Նամակում, իհարկե, նա նշում է նաև իմ մասին, հատկապես այն մասին, որ ես Ալվարո պատվավոր անունն եմ կրում և այդ օրը լրանում է իմ ծննդյան 10 տարին: Շուտով Համագումարների պալատից ստանում եմ մի մեծ ծանրոց՝ լցված շորերով ու կոշիկներով, բայց ինձ համար երջանկացնող նվերը՝ երկփողանի խաղալիք-հրացանն էր՝ իր թղթե փամփուշտներով:

**- Լինելով Արցախյան շարժման և պատերազմի ակտիվ մասնակիցներից մեկը, ինչպես կրնու՞թա՞ք Ձեր անցած մարտական ճանապարհը:**

- Իմ մարտական ուղին սկսվեց 1988թ. փետրվարի 22-ին, Ադրամից ներխուժած բազմահազարանոց խաժամուժի դեմ անհավասար պայքարից: Դա կարելի է համարել նաև մարտական իմ մկրտությունը: Սամվել Կարապետյանն իր ակտիվ մասնակցությամբ ոգեկոչում էր մի խումբ կամավորականների, ովքեր էլ, երկաթե ձողերով ու քարերով զինված, կարողացան կանգնեցնել հրոսակախմբերին հենց Ասկերանի մատույցներում: Դա մեր առաջին հաղթանակն էր: Սումգայիթյան ջարդերից հետո վրեժի ցասումով լցված՝ անպայման ջանում էինք պատասխանել ազերիներին, դեռ ավելին՝ առաջնորդվում էինք արիական կարգախոսով. «զարկին՝ զարկ առավել, մահին՝ մահ առավել»:

Կանոնավոր բանակ ստեղծվելուց հետո հետախուզական դասակի հրամանատար եմ եղել Շուշիի գնդում, իսկ մինչ այդ՝ վաշտի հրամանատար մոտոհրաձգային գումարտակում: Մասնակցել եմ Խոջալուի, Մալիբեյլի-Ղուշիլարի, Սրխավենդի, Ղարաշտարի, Բաշիլարի թշնամական հենակետերը ոչնչացնելու ռազմագործողություններին, ինչպես նաև Շուշիի, Լաչինի, Քարվաճառի, Ղուբաթլուի, Ֆիզուլու, Մարտակերտի, Հորադիզի շրջանների համար մղված ազատագրական մարտերին: Բազմաթիվ անգամ վիրավորվել եմ, սակայն չեմ լքել մարտադաշտը: Պատերազմից հետո

շարունակել եմ ծառայությունս ՊԲ շարքերում: 2007թ. օգոստոսին գորացրվել եմ:

**- Պատերազմը Ձեր հոգեաշխարհում ինչպիսի փոփոխություններ կատարեց, հոգով ու հավատով ավելի ամրացավ, թե՛... թախիծն ու կորստի ցավն են երբեմն բզկտում Ձեր մտածումների թրթռուն շերտը...**

- Դեռ դպրոցական տարիներին սիրում էի վեճի բռնվել ցանկացած անարդարության դեմ, որն էլ վերածվում էր ծեծկռտուքի: Սովորում էի գերազանց, որն էլ ոգի էր ներշնչում ինձ, հաղորդում վստահություն ու կամք: Անզիջում էի ու համառ, ինչպես հիմա: Մարտագործողություններում ինձ առաջնորդում էր անկոտրում ոգին: Հայի հավատն ու ուժը իմ առջև հարթում էր բոլոր խոչընդոտները: Հավատում էի Հաղթանակին: Համոզված էի, որ հայրենիքի համար մարտնչողը անպայման հաղթելու է: Մեր արյան գինը ազատագրված հայրենիքն է: Մարտիրոսվածների հիշատակը մեր ճանապարհի լույսն է, հավատի խաչքարը: Այսօր էլ ես պատրաստ եմ մարտնչել Արցախի յուրաքանչյուր թիզ հողի համար:

**- Արյան գնով ազատագրված հայրենիքը սրբատեղի է: Անկախության սերունդը ինչպես է գնահատում ազատամարտիկների ձեռքբերումները: Բավարար մակարդակով են իրականացվում այսօր Արցախում նոր սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրերը:**

- Նոր սերնդի մասին բավականին գոհացուցիչ կարծիք ունեմ, նախ նշեմ, որ «Պտուղը ծառից հեռու չի ընկնի» ժողովրդական ասացվածքը հենց մեզ համար է հորինված: Հավելեմ նաև, որ երիտասարդությունը հագեցած է (և ուրախալին դա՛ է) ռազմական գիտելիքներով: Մեծ հետաքրքրությամբ է մասնակցում դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում կազմակերպվող «Արիության դասերին»: Վստահ եմ, որ նոր սերունդը միշտ պատրաստ է զենքով պաշտպանել Հայրենիքը:

Մի քանի խորհուրդ երիտասարդներին.

1. Սիրիր ընտանիքդ այնպես ուժգին, ինչպես՝ հայրենիքդ:
2. Ծուլությունն ու ալարկոտությունը որպես գործոն վերացնել է պետք հայ մարդու կենսափորձից:
3. Տիրապետիր ռազմական արվեստին՝ դա՛ է խաղաղության երաշխիքը:
4. Ազգի համախմբվածությունը հաղթանակի գրավականն է:
5. Հանուն ազատության՝ չխնայես անգամ կյանքդ:

**- Ինչպիսինն եք տեսնում Արցախի ապագան:**

- Ես գուշակ չեմ, ոչ էլ մարգարե, բայց հաղթող զինվորը այնքանով է մարգարե, որ իր ձեռքով է կերտում Երկրի պատմությունը: Եվ զինվորականի սրտին բավականին մոտ ու հարազատ է Արցախի նախագահ Բ.Սահակյանի վարած քաղաքականությունը, այն է՝ որպեսզի պատերազմը հեռու լինի Երկրի սահմաններից, պետք է հզորացնել բանակը, զարգացնել տնտեսությունն ու մշակույթը, բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը: Վերացնելով պատերազմի թողած հետքերը՝ ամրապնդում ենք Երկրի քաղաքացու հավատն ու վստահությունը:

Հուսով եմ, որ ապագան ավելի խոստումնալից կլինի և աշխարհը կճանաչի մեր երազած անկախությունը:

## ՄԱՐՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍ



Հրաչիկ Նասիբյանը Արցախյան գոյապայքարի նվիրյալներից է: Երկմտանք բառը վաղուց դուրս է մղվել նրա հոգեաշխարհից: Լինելով հաստատակամ ու վճռական այր՝ նա իր պայքարի ու ոգու նկարագրով հարստացրեց Ազատամարտի պատմությունը: «Շատ-շատերի նման ես էլ քաղաքացիական մասնագիտություն էի ընտրել,- խոստովանում է Հ. Նասիբյանը,- և Խորհրդային բանակում ծառայությունս ավարտելուց հետո անցել էի խաղաղ աշխատանքի: Սա-

կայն սկսվեց Արցախյան շարժումը, և մեզ երկմտելու ժամանակ չէր մնում, որովհետև մեզնից յուրաքանչյուրը հոգու մի անկյունում թաքուն հույս էր փայփայում, որ մի օր արդարությունը ջրի երես կգա: Շատերի նման ես էլ զինվորագրվեցի՝ սկզբից Արցախյան շարժմանը, իսկ որոշ ժամանակ անց՝ ազատագրական պայքարին ու պատերազմին»:

Գոյապայքարի ճանապարհը դառնում է մեր նախնյաց ոգու շարունակությունը: Երբ վտանգված է հող-հայրենին, նվիրյալ զավակները կատարում են անգամ անհնարինը՝ փրկելու համար սրբատեղի դարձած հայրենիքը, հայրենյաց ոգու լույսն ու հավատի խաչքարը:

«Յոթերորդ /Շուշի/ պաշտպանական շրջան» աշխատության մեջ Ս. Հասրաթյանը գրում է. «1992թ. ամռան վերջին և աշնան սկզբին, երբ հանրապետությունում սկսեց ձևավորվել կանոնավոր

բանակային համակարգ և Արցախի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով ստեղծվեցին պաշտպանական շրջաններ ու առանձին զորամասեր, վերոհիշյալ ջոկատների մի մասի, մասնավորապես, 8-րդ վաշտի և Բերդաձորի ջոկատի միավորմամբ ստեղծվեց գումարտակ /հրամ. Մարտիկ Գասպարյան/ և տեղակայվեց Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մասնաշենքում: Այն կազմված էր հետևյալ վաշտերից.

- Առաջին /Եղծահողի/ վաշտ-հրամ.՝ Յրաջիկ Նասիբյան
- Երկրորդ /Մեծ Շենի/ վաշտ-հրամ.՝ Վարուժան Նասիբյան



Նկարում (կենտրոնում)՝ Յրաջիկ Նասիբյանը գինվորական լուսանկարիչ Վյաչեսլավ Ավանեսյանի («Գրաֆ») և որդու Դավթի հետ, 1981թ.:

- Երրորդ /Յին Շենի/ վաշտ-հրամ.՝ Սամվել Յովսեփյան

- Չորրորդ /Ստեփանակերտի/ վաշտ-հրամ.՝ Վլադիմիր Ավագյան

- Յինգերորդ /Ստեփանակերտի/ վաշտ-հրամ.՝ Դավիթ Ժամհարյան»:

Յրաջիկ Նասիբյանը ծնվել է 1957թ. ապրիլի 14-ին, Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է համար 1 միջնակարգ դպրոցը: 1975-77 թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1978թ. ընդուն-

վել և սովորել է խոհարարական ուսումնարանում՝ ստանալով խոհարարի մասնագիտություն: Արցախյան շարժման առաջին օրերից ակտիվ մասնակցություն է ունեցել, ձեռնամուխ եղել պաշտպանական ջոկատների ստեղծմանը: Բերդաձորի ջոկատում նշանակվել է նախ վաշտի, հետո գումարտակի հրամանատար: Մասնակցել է Շուշիի, Լաչինի, Քելբաջարի, Կուբաթլուի, Մարտակերտի ազատագրմանը: 1993թ. օգոստոսի 31-ին Կուբաթլուի ազատագրման համար մղված մարտերում երկու անգամ վիրավորվել է: Ապաքինվելուց հետո վերադարձել է նույն գումարտակը և շարունակել մարտական ծառայությունը:

Հրաչիկ Նասիբյանի հավաստմամբ՝ Արցախյան գոյապայքարը իր կենսագրության ամենակարևոր և նշանակալի մասն է, որով հպարտանալու առիթը գոյապայքարի շարունակական ընթացքի մեջ է: Շատ կարևոր է,- նշում է նա,- որ նոր սերունդը դաստիարակվի ու կոփվի Արցախյան գոյապայքարի անմոռաց դրվագներով՝ ձեռք բերելով մարտունակություն և դիմացկունություն:

«Այդ տարիներին ես հպարտանալու շատ առիթներ եմ ունեցել,- ասում է Հրաչիկ Նասիբյանը,- սակայն մեծագույն հպարտությունը եղել և շարունակվում է մնալ Շուշիի ազատագրմանը մասնակցելը: Շուշին մեզ համար մեծ փորձություն էր, սեփական ուժերի հանդեպ ինքնավստահություն ձեռք բերելու փորձություն: Իսկ Շուշիում մեր տարած հաղթանակը հաղթանակների հաղթանակն էր: Հետագայում ևս Հայոց հին ոստան բերդաքաղաքը ներկա էր մեր բոլոր հաջողություններում՝ որպես հոգևոր ու մարմնավոր մեծ հաղթանակների գրավական և առհավատոյա: Շուշին մեզ գոտեպնդեց ու հավատ ներշնչեց, որ կարող ենք նաև անկարելին անել, եթե միասնական ենք»:

1992թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի օրը, մի քանի հոգով հարձակվել են Նաբիլարին մերձակա «Կարմիր քար» կոչվող դիրքերի վրա՝ զգալի վնաս հասցնելով հակառակորդին: Սակայն գլխավոր



մտահոգությունը մեկն էր՝ գերությունից ազատել հարազատ գյուղերը, վերստին սրբագործել հայոց դարավոր բնակավայրերը՝ դրա համար չխնայելով անգամ ամենաթանկը՝ կյանքը:

«Յրաչիկ Նասիբյանը,- մարտընկերոջ մասին ասում է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Վլադիմիր Ավագյանը,- Արցախյան գոյապայքարի նվիրյալներից է: Նա իր անձնվիրությամբ ու մարտական ոգու դրսևորումներով թևավորել է մարտընկերներին, մղել նրանց նորանոր սխրանքների: Հաստատուն հավատն ու համառ կամքը նրա բնավորությունը դարձնում են ավելի համակրելի ու նպատակասլաց: Նա մարտական գործողությունների ժամանակ իրեն դրսևորել է որպես արի ու համարձակ հրամանատար, որ մարտընկերներին ոգևորել է կատարած սխրագործություններով»:

Հայրենիքի համար ցուցաբերած անձնվեր ծառայությունների համար Յրաչիկ Նասիբյանը պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Պարգևատրվել է նաև «Շուշիի ազատագրման համար», «Հայրենյաց պաշտպան», ՀՀ մարտական ծառայության «Արիություն», «Ծովակալ Իսակով», «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով:

Նրա չորս արու զավակները ծառայել են Պաշտպանության բանակում: «Ես ցանկանում եմ,- ասում է Յրաչիկ Նասիբյանը,- որ բոլոր հայ զավակները ծառայեն խաղաղության մեջ և իրենց ուժն ու եռանդը ներդնեն հայրենի երկրի շենացման ու բարգավաճման գործին, սակայն երբեք չմոռանան ոչ Շուշիի դասերի և ոչ էլ հաղթանակների մասին»:

Հ. Նասիբյանը 2000 թվականից Արցախի ազատամարտիկների միության անդամ է: Նույն թվականին ընտրվել է ԱԱՄ Ստեփանակերտի տարածքային միավորման 5-րդ համայնքի նախագահ: Այսօր էլ նա շարունակում է պատասխանատվությամբ կատարել իրեն վստահված կարևորագույն գործը: Նա սատարելով և աջակ-

ցելով մարտական ընկերներին՝ միշտ պատրաստ է պաշտպանել նաև գոյապայքարի նվիրյալների իրավական շահերը:

Պատերազմական տարիների հիշողությունը Ոգու շնչառություն է, որ կենսունակ ու զգայուն է պահում կյանքի երակները: Հրաչիկ Նասիբյանի համար Արցախյան գոյապայքարին առնչվող ամեն մի դրվագ, պատմություն կամ մասունք սրբություն են և սերունդների համար ունեն դաստիարակչական նշանակություն: 17 տարի շարունակ Չլդրան գյուղի մոտակայքում ընկած է եղել մի ռազմատեխնիկա /ՀՄՄ-1/, որով ազատամարտիկ Արամ Գրիգորյանը մասնակցել է Չլդրանի, Կոճողոտի, Դրմբոնի, Պողոսագոմերի ազատագրության համար մղված ռազմագործողություններին: Արցախի ազատամարտիկների միության Ստեփանակերտի թիվ 5 համայնքային խորհրդի նախագահ Հրաչիկ Նասիբյանի նախաձեռնությամբ և «Բեյզ-Մեթըլս» ՓԲԸ գործադիր տնօրեն Արթուր Մկրտումյանի հովանավորությամբ ՀՄՄ-1-ը վերանորոգվել է և որպես հուշարձան տեղադրվել Չլդրանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրի մոտ, գյուղի կենտրոնում: Պատերազմի կրակներով անցած ռազմատեխնիկան, պատմության մաս լինելով, այսօր սերունդների գիտակցության մեջ նոր իմաստ ու նշանակություն է ստացել: Նա խորհրդանշում է նաև Արցախյան գոյապայքարի պատմությունն ու մարտական ճանապարհի հաղթական ընթացքը:

Գոյապայքարի ճանապարհը դառնում է մեր նախնյաց ոգու շարունակությունը: Երբ վտանգված է հող-հայրենին, նվիրյալ զավակները կատարում են անգամ անհնարինը՝ փրկելու համար սրբատեղի դարձած հայրենիքը, հայրենյաց ոգու լույսն ու հավատի խաչքարը:

Հրաչիկ Նասիբյանը արցախյան գոյապայքարի այն նվիրյալներից է, ում կենսագրության ամենակարևոր և նշանակալից մասը անցած մարտական ճանապարհն է, հաղթական ընթացքը և գոյատևման խորհուրդը:

**ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՆՎԻՐՅԱԼ,  
«ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱԶ» 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ  
ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**



Հուշամրցաշարը՝ նվիրված ազատամարտիկ, ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Մարգարիտա Սարգսյանի հիշատակին, մեկնարկվեց Ստեփանակերտում, մայիսի 31-ին: Միջոցառումը իրականացվեց ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության և Արցախի ազատամարտիկների միության աջակցությամբ: «Պատանի հրաձիգ» մրցաշարը կդառնա ավանդական»,- ասաց ԼՂՀ ԿԳՍ նախարարության սպորտի վարչության պետ Աշոտ Դանիելյանը:

Հուշամրցաշարի մասնակիցները այցելելով Ստեփանակերտի հուշահամալիր, ծաղիկներ խոնարհեցին Մ. Սարգսյանի գերեզմանին: Հոգևոր հովիվ Տեր-Մաթևոս քահանա Դրավանդի գլխավորությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ: Մ. Սարգսյանի մարտական ընկեր և հրամանատար Վլադիմիր Ավագյանը կարևորելով միջոցառման դաստիարակչական նշանակությունը, նշեց, որ այն գեղեցիկ նախաձեռնություն է, արժանի գնահատանքի: «Վստահ եմ,- ասաց նա,- որ հուշամրցաշարի մասնակիցները ևս աչքի կընկնեն իրենց դիպուկ կրակով»:

Հուշ-երեկոն, որը տեղի ունեցավ հունիսի 1-ին հ.1 հիմնական դպրոցում, հուշամրցաշարի արդյունքների յուրովի ամփոփում էր և միաժամանակ Մարգարիտա Սարգսյանի հիշատակին նվիրված



ասմունքի, երգ ու պարի բուրվառ-հանդիսություն: Ցուցադրվեց «Ինձ բացակա չղներ» տեսանյութը:

Հաղթողներին հանձնվեցին պատվոգրեր ու դրամական պարգևներ: Հաղթող թիմերին շնորհավորեց ու նվերներ հանձնեց Արցախի ազատամարտիկների միության աշխատակազմի ղեկավար Էդվարդ Խաչատրյանը: ԼՂՀ պաշտպանության նախարարի հրամանով հաղթողներն արժանացան պատվոգրերի: Լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտներն են՝ Տիգրան Հայրիյանը (առաջին տեղ), Արմեն Ապրեսյանը (երկրորդ տեղ), Սևակ Շադյանը (երրորդ տեղ): Աղջիկներից առաջին տեղը գրավեց Օլեսյա Սահակյանը, երկրորդ և երրորդ տեղերը՝ Իլոնա Ավետիսյանն ու Մարիաննա Աղաբեկյանը:

Միջոցառմանը ներկա էին Մարգարիտա Սարգսյանի մարտական ընկերներն ու ընկերուհիները:

Միջոցառման նախաձեռնող Մարգարիտա Թառանյանը հույս հայտնեց, որ «Պատանի հրաձիգ» մրցաշարը կդառնա ավանդական և իր ջերմ շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտ-

*նեց Սպորտի վարչության պետ Աշոտ Դանիելյանին և ԱԺ պատգամավոր Ռոմելա Դադայանին՝ միջոցառման կազմակերպմանն ու անցկացմանը սատարելու համար:*

Հայրենիքի ազատության երազանքով խանդավառ մի աղջիկ էր Մարգարիտա Սարգսյանը, ով իր կյանքը նվիրաբերելով հայրենիքին, դարձավ արիության և ոգեշնչման աղբյուր, հայրենյաց եզերքի ազատաշունչ ոգին ու պահապանը: Կենսագրական համառոտ տվյալներից դուրս էր հայրենանվեր մարտիկի կյանքը, բայց այն, ինչ գրեց նա իր բացառիկ գործունեությամբ, գրեց արյունով. «Մարգարիտա Վարդանի Սարգսյանը ծնվել է 1960թ. փետրվարի 13-ին, ԼՂ Մարտունու շրջանի Հացի գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1979թ. տեղափոխվել է Ստեփանակերտ, աշխատանքի անցել Ղարմետաքսկոմբինատում: Անդամագրվել է կանանց ջոկատին: Մարտական մկրտությունն ստացել է Շռլանի մատույցներում: Մասնակցել է Լաչինի միջանցքի պաշտպանությանը, բազում այլ մարտերի: Ձոհվել է 1993թ. օգոստոսի 18-ին, Բաշարաթ գյուղի մոտ: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով և «Մայրական երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին» մեդալով: Ամուսնացած չէր: Հանգչում է Ստեփանակերտի Հուշահամալիրում»: Սրանք կենսագրական այն պարզ տողերն են, որոնց միջև ծավալվում և փոթորկվում է հայրենանվեր մարտիկի կյանքը, որը կոչվում է անմահություն:

Մարգարիտա Սարգսյան ազատամարտիկի հիշատակը սերունդների համար դառնում է արիության դաս, հայրենապաշտության նորոյա միջոց, մաքառումի և պայքարի շնչառություն, որը սկիզբ էր առել մարտնչող կնոջ կերպար՝ Սոսե մայրիկից, և ալիքվում ու ծավալվում է նոր սերնդի ոգու ելևէջներում: Նրա համար հայրենասիրությունը սոսկ բառ չէր, այլ՝ ոգի, արյան շրջանառու-

թյուն, նպատակակետ և սխրանքի դուռ:

Կյանքն ապացուցեց, որ հաղթում է նա, ով իր ձեռքով է կերտում հաղթանակը, ով հայրենյաց գործի մեջ իր սիրտն է դնում, ով իր ոգին է դարձնում մաքառումի ճանապարհ:

Ընկերուհուդ՝ Նվարդ Ալեքսանյանի (ինչպես շատ-շատերի) և քո զրույցը շարունակվում է. «Մեր զրույցը չի վերջացել, Մարգարիտ,- «Սպանված պատերազմ» գրքի էջերում գրել է նա,- այն միայն ընդհատվել է: Եվ պիտի շարունակվի քո բոլոր ընկերների հոգում: Եվ քեզ իսկական գնդակ չի դիպել, վկան՝ Յայրենիքի սերը քո հանդեպ: Դու ուզում էիր դաստիարակել մատաղ սերնդին, չիմանալով, որ արդեն սկսել էիր Մեծ Դասը, որն այսօր էլ շարունակվում է քո հոգու լույսով ու անմահությամբ...»:

Մարգարիտա՝ Յայրենյաց պաշտպան: Այսօր Արցախն ուրիշ է, թեև նոյնն է ոսոխը, իսկ գոյապայքարը՝ համառ ու աննկուն, հայրենյաց պաշտպանն ու հերոսը՝ նոր սերունդն է, Անկախության և Ազատության սերունդը:

Այսօր հիշողությունն էլ մաքառող զինվոր է, գոյապայքարի պատմությունը՝ արիության դաս, ուր հայոց միասնական ոգին է կոփվում: Յիշարժան է և ուսանելի մեծ զորապետ և ոգու ճարտարապետ Գարեգին Նժդեհի խոսքը. «Ազգային ոգի- ահա՛ գերագույն հերոսը, միակը, մեր պատմության անիվը դարձնող, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը: Էապես միայն դա է գործում պատմության մեջ և պատմության համար: Անհատ հերոսներն էլ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնավորողները այդ ոգու: Մեռնում են հերոսները՝ Մանուելները, Մուշեղները, Վարդանները, մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնավորումը գտնելով այլ հայերի մեջ՝ շարունակում է ապրել ու ներգործել»:

Մարգարիտա, այսօր քո ոգեղեն ներկայությունը ներգործող էություն է, հավատի ամրապնդում՝ գալիքի շեմին:

Այսօր նոր սերնդի մարտիկներն են համալրում Պաշտպանու-

թյան բանակի շարքերը: Նորակոչիկները... «Խիզախ ու անփորձանք եղեք, ազատության տղերք, ինչպես ձեր հայրերն ու պապերը, նվիրվեք հայրենյաց սուրբ գործին: Հպարտ ենք, որ Պաշտպանության բանակն արժանի հերթափոխ ունի...», - ասում ենք մենք նրանց՝ բռունցքվելով մեր հավատով և հիշողությամբ:

Մարգարիտա, այսօր նոր սերունդն անկանխատեսելի է թշնամու համար: Քառօրյա պատերազմ, ամենօրյա տագնապ և զգոնություն: Արցախի հերոս Սամվել Կարապետյանի հավաստմամբ՝ «Հակառակորդը չի սպասել, որ մեր տղերքը կարող են այդպես դիմադրել: Նրանք հիմա խոսում են, որ մեր դիրքերում կանգնած են եղել հատուկ ջոկատայիններ: Մինչդեռ այնտեղ մեր ժամկետային զինծառայողներն են եղել... Մեր Աբաջյանն է եղել, որ վերջին պահին հերոսաբար ինքն իրեն պայթեցնելով, իր հետ տարել է հակառակորդի մի քանի զինվոր: Սա փաստ է, և նման փաստեր էլի կան: Սա մեր 18-20 տարեկանների հաղթանակն էր հակառակորդի հատուկ ջոկատայինների նկատմամբ»:

Մարգարիտա, Անկախության սերունդները չեն հանդուրժի երբեք օտարի լուծը: Ճշմարիտ է ասված. «Ի սկզբանե հույսերի, սրտատրոփ սպասումների ծնունդ էր դաժան մարտերում թրծված մեր բանակը, որը հերթական անգամ աշխարհին ապացուցեց մեզ համար պարզ մի ճշմարտություն՝ զինատեսակներից հզորագույնը հայրեպաշտությունն է»:

Մեր երակներում հոսում է Անդրանիկի, Աղբյուր Սերոբի և արցախյան գոյապայքարի հերոսների արյունը, որ գիտե անխոնջ պայքարել և մաքառել Հայրենիքի փրկության համար: Չէ որ մեր հայրերից և պապերից ժառանգել ենք թշնամուն դիմակայելու ուժն ու կորովը: Հայրենիքին անձնվիրաբար ծառայելը և ժողովրդի անվտանգությունն ապահովելը յուրաքանչյուր հայ մարդու և քաղաքացու պարտքն է: «Եղել են սերունդներ, - հավաստում է Գ. Նժդեհը, - որոնք ավելի ժամանակ են վատնել իրենց արտաքինը հար-

դարելու, քան իրենց մտքի և սրտի մշակույթի համար: Դու պիտի ապրես ժողովրդիդ համար, այլապես պիտ երկարի նրա հոգեվարքը և պիտ ուշանա նրա քաղաքական հարուստությունը: Թագավոր է նա, ով կարող է: Ես ուզում եմ, որ դու լինես թագավոր սերունդ»:

Սա է ժամանակի հրամայականը:

Այսօր Մարգարիտա Սարգսյան ազատամարտիկի անցած մարտական ճանապարհը արիության դաս է երիտասարդ սերնդի համար:

Քառօրյա պատերազմում մեր բանակն ապացուցեց, որ անպարտելի է Ռուբերտ Աբաջյանի պես հերոս զինվորներ և Արմենակ Ուրֆանյանի պես անձնվեր սպաներ ունեցող Արցախը, և աննկուն է դիրքապահ քաջորդիների կամքն ու ոգին, որոնք արիության ու սխրանքի նոր էջերով հարստացրեցին մեր ժողովրդի գոյապայքարի տարեգրությունը:

Մարգարիտա Սարգսյանի ազատասեր ոգին ոչ միայն ուղեկցում է կյանքի ընթացքին, այլև ոգևորում և խթանում է սերունդների ձեռնարկած յուրաքանչյուր հայրենանվեր ծրագրի իրականացումը:


Երբեք չպետք է մոռանալ, որ պատերազմը դեռ չի ավարտվել, և մեր ուժերն ու ջանքերը պետք է ուղղենք դեպի Յանրապետության անվտանգության ամենամեծ երաշխիք հանդիսացող բանակի հզորացմանը, հայոց պետականության ամրապնդմանը, որը հայ ժողովրդի միասնության ու հպարտության խորհրդանիշն է:

Այդ միասնության ու հպարտության խորհրդանիշ-ծաղիկն է և Մարգարիտա Սարգսյան նվիրյալ ազատամարտիկի անմահ անունը:

2016թ.



## ՃԱԿԱՏԱԳԻՐ



Երկու տարբեր՝ սև ու սպիտակ օրեր նույն աչքի մեջ, նույն հողի վրա, նույն երկնքի տակ: Եվ այդ երկու տարբեր օրերը անասելի ուժով ինձ ձգում են դեպի իրենց շրջապատույտը, որի ալիքների մի մասը քրքրում է հիշողությունս, հանում իմ մտքերից կապույտ ժապավեններ, փռում ճանապարհներին, մյուս մասը սեղմում է ինձ, դարձնում վշտի կծիկ: Եվ այդ շրջապատույտից դուրս գալն արդեն անհնարին է դառնում:

Ակամայից մտաբերում եմ Քարին տակ գյուղի մասին իմ չնկարահանված ֆիլմի սցենարը, որը չորացած մի ծաղիկ է՝ հուշերիս գրքի մեջ դրված: Չորացած, բայց դեռևս հին օրերով ու մտահացումներով բուրոդ: Ըստ այդ սցենարի՝ պիտի կանգնեի գյուղի դիմացի դաշտում այնպես, որ կադրում ընդգրկվեր գյուղի տեսարանը, և արտաբերեի այս խոսքը. «Յեռվից նայողը գյուղը նմանեցնում է զինվորի, որն այս հսկա քարաժայռը կրում է՝ որպես վահան»:

Ինձ համար պարզ է հիմա, թե պատկերն ինչ գծերով է մնացել կապված կյանքին և ինչքան է հեռացել իրականությունից: Այս հսկա քարաժայռից հարևան թուրքերը քարեր էին գլրում դեպի տները՝ փորձելով այդպես ընկճել գյուղի բնակիչների աննկուն ոգին: Դրանով չբավարարվելով, օրեցօր ավելի էին կատարելագործում բարբարոսության եղանակները, պայթուցիկ նյութեր ու սարքեր տեղադրելով մեքենայի անվադողերի մեջ, գլրում էին ժայռից: Մի անգամ պայթյունի հարվածն իր վրա վերցրեց եկեղե-

ցին, փրկելով գյուղը: Բարեբախտաբար, եկեղեցու բակում այդ պահին մարդ չկար, սովորաբար երեխաներն այստեղ խաղում էին մինչև ուշ գիշեր:

Գյուղի հին ճանապարհը, որ հոգնած հնձվորի պես հկիհև բարձրանալով և քրտնած ծակատը սրբելով թաշկինակով, ջուր էր խմում Շուշիի ակունքներից ու հետո իջնում դեպի Ստեփանակերտ, հիմա ընկել է... Ջինվորի՞ պես, թե՛ խաչի...

Իսկ նոր ճանապարհը, որը թեև հնի համեմատությամբ կրկնակի երկար է, իսկ անձրևոտ ու ձյունոտ օրերին՝ դժվարանց, գյուղի բնակիչների համար դարձել է կյանքի ու գոյատևման ճանապարհ: Այդ ճանապարհն ինձ առաջին անգամ է գյուղ տանում՝ այն էլ տխուր առիթով: Իմ աչքի առաջ անվերջ օրորվում է Էդվարդ Յոզսեփյանի դիակը: Այդպես արյունն է մղվում դեպի սիրտը, մինչ սրտի մեջ ցավն է շարժվում: Այդպես թռչունն է ճախրում դեպի իր բույնը, երբ բույնը... վտանգված է:

Կանաչների վրա

անշարժացած ափդ՝

մորթված եղնիկի երազկոտ հայացք...

Տարիներ առաջ, երբ ես Քարին տակ գյուղն էի եկել՝ մասնակցելու բարեկամիս հարսանիքին, հաղորդակցվել էի գյուղի ոգու մի այլ էջի հետ, դա ուրախանալու արվեստն է, որ քարինտակցին կատարում է այնքան յուրահատուկ ու վարակիչ ձևով:

... Երկու տարբեր՝ սև ու սպիտակ օրեր նույն աչքի մեջ, նույն հողի վրա, նույն երկնքի տակ:

Էդվարդի դիակի վրա սգացող հարազատների ձայնը կտրատում է օրվա շոգը, և նրա ճեղքերից ոչ թե զովություն, այլ մաղվում են կսկիծի ու ափսոսանքի ծաղկաթերթեր:

Ահա դագաղն իջեցնում են փոսի մեջ, դագաղի հետ՝ նաև հարազատների սրտերից պոկված աղաղակ-կսկիծը:

Մարդիկ մի-մի բուռ հող են գցում դագաղի վրա, որ բացվածքը

սպիանա, մի-մի բուռ հող են գցում՝ ամեն պահ մտածելով, որ ժայռից հանկարծ կարող են կրակել: Աստված իմ, էս ինչ անխիղճ դարի ենք հասել, մարդ չի կարողանում անգամ «մարդ թաղել մարդունման»: Մի-մի բուռ հող են գցում դագաղի վրա և Ռուսաստանից ժամանած հյուրերը՝ ռուս գրողներն ու թղթակիցները: Քարին տակ գյուղի բնակիչները երբեք չեն մոռանա Ինեսա Բուրկովայի արցունքը, ռուս կնոջ արցունք-բողոքը...

Էդվարդ Յոկսեփյան ազատամարտիկը հպարտ էր իր հողի պես, իր հողի պես կենսունակ էր ու շարժուն, լի երազներով, համառ էր, ինչպես իր հայրենի քարը, զուլալ, ինչպես ջուրը... Յպարտ էր: Դրա համար էլ գերադասեց... սպանվել, քան գերվել, քան ենթարկվել ստորացումների...

«Ինչո՞ւ պիտի ես ճորտ լինեմ իմ հայրենի հողի վրա: Ինչո՞ւ տանտեր չլինեմ իմ սեփական տանը: Ինչո՞ւ չընդվզեմ, երբ ապտակում են: Ինչո՞ւ չուղղվեմ, երբ ծռում են... Ինչո՞ւ... Ինչո՞ւ... Ինչո՞ւ...»: Ամեն օր այս հարցերն էր տալիս նա ինքն իրեն և իր ընկերներին, չզգալով, որ դառնում էր ինքն էլ մի անպատասխան ինչու, խրվելով ու անէանալով ճակատագրի քառսի մեջ:

25.10.1991թ.

**ԵՐԳԸ ՄԱՐՏԱԴԱՇՏԻ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ**



Օրերն արագ էին տրոփում: Երկինքը դարձել էր տագնապի դաշտ, որտեղ հայտնված յուրաքանչյուր թևավոր հիշեցնում էր իսկույն երկնքում սողացող այն մետաղե օձին, որը գնդիկավոր ռումբեր թափելով Խաչեն գյուղի մոտակայքում՝ իր ծխագույն հետքն էր թողնում երագի անաղարտ դեմքին, որպես սպի:

Արկի պղնձե պարկուճն էր կախված դպրոցի մոտակայքում՝ զանգի փոխարեն: Այդ զանգի պղնձե ձայնը միանգամից տարածվում էր դպրոցի

շրջակայքում, աշակերտները շտապ մտնում էին դասարան. սկսվում էր պղնձե օրերի անմոռաց դասը: Դպրոցի բակում նախնական ռազմական պատրաստության ուսուցչի օգնությամբ կառուցված էր ապաստարան, որտեղ վտանգի պահին պատսպարվում էին ուսուցիչներն ու աշակերտները: Դա միակ դասն էր, որ ուսուցիչներն ու աշակերտները միասին և միաժամանակ էին սովորում, հետո պատասխանում՝ առանց գնահատական ստանալու:

Ուսուցիչ Վալերի Ղուլյանը իր զինվոր դարձած աշակերտների հետ կռվում էր ռազմաճակատում, պաշտպանում դիրքերը, մտածելով ոչ թե դասեր տալու, այլ դժվարին կյանքից օգտակար դասեր առնելու մասին:

Մի օր ասաց.

- Մի բանաստեղծություն գրիր իմ մասին:

- Ի՞նչ գրեմ,- հարցրեցի ես՝ նայելով նրա պարզ աչքերի մեջ,- քո կյանքի ամենալավ բանաստեղծը դու ես, գրչի և գրքի փոխարեն

զենք ես վերցրել, կռվում ես՝ պաշտպանելով հայրենիքը: Դու ամեն օր քո ապրած կյանքով մի մեծ պոեմ ես գրում ապագայի մասին, իսկ ապագան քեզ հեռվից ընթերցելով՝ ամրանում է ոգով և իրեն համարում լիովին պաշտպանված ներկայի պատերազմական արհավիրքներից:

- Գրիր իմ մասին,- կրկնեցիր դու՝ իրերը տեղադրելով ուսապարկի մեջ:

- Դու թելադրիր քո կյանքի երգը, ես գրեմ...

- Գրիր՝ «Դռներս փակ են, իսկ լամպս՝ հանգած...»:

Ուսուցիչ Վալերի Ղուլյանը գնաց ռազմաճակատ: Այդ տողը մնաց իմ հիշողության մեջ՝ իբրև ցավի լույս, որը մինչև հիմա լուսավորում է ապրումներիս ճանապարհները և ներշնչանքով լցնում հիշողություններիս դաշտը: Գնաց Վալերի Ղուլյան ուսուցիչը և զոհվեց մարտադաշտում: Յիմա եմ հիշում նրա խոսքը. «Միշտ զգում եմ, որ աշակերտներիս համար պիտի օրինակ ծառայեմ, լինեմ արիասիրտ, համարձակ, չէ որ նրանց համար ես միշտ ուսուցիչ եմ՝ լինի ռազմի դաշտում, թե դասի ժամանակ, տարբերություն չկա: Պիտի արժանի պահվածքով գրավեմ նրանց սրտերը, որպեսզի իրենք էլ ոգևորվեն, անկոտրում լինեն... Թեև նրանց մարտական գործողությունները չէին գնահատվում թվանշաններով, բայց նրանք ամեն անգամ իմ ոգևորված հայացքի մեջ նայելով՝ իրենց գնահատված էին համարում...»:


Յետագայում ես Վալերի Ղուլյանի մասին գրեցի մի բանաստեղծություն, որտեղ ընդգրկվեց նաև նրա հուշած տողը՝ «Դռներս փակ են, իսկ լամպս՝ հանգած...»: Այդ տողը նա իր արյամբ գրելով՝ մխրճեց այն ներշնչանքիս երկնակամարի մեջ, ծնունդ տալով մի նոր ոգեշնչման, որով թել առ թել հյուսվեց «ձերմակ երգ» բանաստեղծությունը:

Դրամատիկ երանգներով ծանրացած էր Վալերի Ղուլյանի կյանքը: Կինը և երեխաները տեղափոխվել էին Ռուսաստան: Ինքը

մենակ էր հայրենի տան և կարմիր արհավիրքի միջև ու երգ էր ուզում, կարոտի ու սփոփանքի երգ, որ իր մենակյաց հոգու համար նեցուկ լիներ և ուղեկից ռազմադաշտի ծանապարհին:

*«Դռներս փակ են,  
Իսկ լամպս՝ հանգած,-  
Շոյիր ինձ, քամի,  
Թաթիկով մանկան...»*

\*\*\*



*Սամվել Եսայան*

Հորեղբորս՝ Սամվել Եսայանի երգը մնացել էր հեռվում, գուցե վիրակապի փոխարեն դրել էր մի ընկերոջ արնածոր վերքին ու այլևս հնարավոր չի եղել ետ վերցնել:

Հիմա եմ զգում, որ նա պարում էր միշտ մեծ հաղթանակի օրվա հայացքի վրա ու արբում նույն օրվա գգխիչ բուրմունքով: Պատերազմի վերջին օրը... նրա ավանդական ու մշտական գիշերն էր: Պառկում էր նոր ընդհատված կրակոցներից հետո տիրող արդորում ու հանձնվում անուշ երազներին: Երազի մեջ լուսավորվում էր գյուղը, որտեղ նրա թողած ոտնահետքերը սիրահարի պես ունկնդրում էին ճամփաների նվազները... Երազը մանկության դուռն էր... Մտնում էր ներս... և աշխարհը մաքրվում էր՝ ազատվելով պատերազմի ցավահարույց ստվերներից... Իսկ առավոտյան միշտ արթնանում էր... հաղթողի զվարթ տրամադրությամբ... Կարծես նոր էր ուրախ լուրն առել... Եվ պիտի տոներ հաղթանակը...

Պատերազմից բերած շքանշանները պահում էր պայուսակում: Հետո այդ շքանշանները, որոնք հորեղբորս անցած մարտական

ուղու խորհրդանշական հետքերն էին, երեխաների համար դարձան խաղալիքներ: Հորեղբայրս լուռ համաձայնությամբ հետևում էր նրանց խայտաբղետ խաղերին: «Թող խաղան,- մտածում էր նա,- պատերազմի հետքերը ինչքան շուտ դառնան խաղալիքներ, այնքան կյանքը կխորանա խաղաղության մեջ»:

Իսկ երբ մեծացա և Աստուծոց ինձ քնար տրվեց, ես անպայման ուզում էի հեռավոր մարտադաշտերից վերադարձնել նրա երգը: Իմ երգը աղավնու պես թռչնում էի երկինք, որ նա հորիզոնի միջով անցնելով՝ մտնի մամռապատ խրամատները ու թե գտնի մի հեռավոր անկյունում քնած նրա երգը՝ տուն վերադարձնի: Բայց երգս վերադառնում էր՝ թևերին մոխրահետքեր, որոնք հավանաբար մեր երկնքի տակ բռնկվելիք պատերազմի առաջին նախանշաններն էին...

Այս անգամ էլ հորեղբայրս իր ավանդական պարը թողեց հարազատ տան շեմին, պատուհանների մեջ, խաղողենու՝ ձեռքերի նման դեպի վեր կարկառված ձյուղերին, իբրև ադամանդե ցող:

Ես ուզում էի իմ երգով վերադարձնել նրա ավանդական պարը: Բայց երգս խլանում էր կրակոցների ու պայթյունների փոշու մեջ: Երգս կույրի պես խարխափում էր վիրավորների տնքոցներից ծանրացած օդի մեջ ու չէր գտնում իր ակունքները:

- Դաժան է այս... պատերազմը,- ասում էր հորեղբայրս՝ արագ-արագ մաքրելով ուշ երեկոյան տուն վերադարձած ու քնելու կարոտը կոպերի տակ մի կերպ խեղդած որդու: Գրիգորիի ինքնաձիգը:

- Դաժան է այս... պա-տե-րազ-մը,- հորեղբայրս բառերը կտրտում, փոշի էր դարձնում ու դեղի պես լցնում մարտում վիրավորված թոռների՝ Հրահատի ու Սամվելի տրոփող վերքերի վրա:

Ես ուզում էի իմ երգով վերադարձնել հորեղբորս իր նահապետական հանգստությունը... Բայց երգիս թևերի վրա կիսակործան տների մոխիրն էր թափվում... Սփոփանքիս ստվերի վրա լալին էր օրը:

Կրակոցների ու պայթյունների ձայներից հորեբորս մարմնի մեջ սկսել էին շարժվել բեկորները՝ կարծես ամեն պահի պատրաստ դուրս թռչելու դեպի կրակված մարտադաշտերը: Եթե այդ բեկորները թռչեին լեռների ու դաշտերի վրայով ու խրվեին թշնամու մարմնի մեջ, գուցե վերադառնային նրա մոլորյալ երգն ու նահապետական պարը: Այնինչ բեկորները շարժվում էին ոչ թե դեպի դուրս, այլ դեպի տագնապներից նվազող սիրտը, ուր արդեն անէանում էր այն, ինչ աշխարհիկ էր:

Չորեղբորս օրը նրա ծանրացող շնչառությունից տարուբերվում էր կար-կա-տա-նի պես:

... Դանդաղ մահի միջով կարկառեց դողդոջուն ձեռքերը, գրկեց ծոռանը՝ փոքրիկ Բորիսիկին, այտերին դրոշմեց մի համբույր, մի երգ-հենարան...



*Նկարում՝ Գրիգորի և Լարիսա Եսայանները իրենց զավակների՝ Արամի և Ֆելիքսի հետ:*



## **ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ**

Արցախյան գոյապայքարը մեր ժողովրդին տվեց ոչ միայն ազատություն, այլև սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք և հնարավորություն: Այն մեր հոգեաշխարհից իսպառ ջնջեց ստրուկի հոգեբանությունը և կերտեց ուժեղ հայի կերպար, որը օժտված է հաղթողի, անզիջում կռվողի ու պայքարողի հոգեբանությամբ: Դա ազգային այնպիսի արժեք է, որ ձեռք է բերվել մեր նվիրյալ ազատամարտիկների արյան գնով, միասնական պայքարի շնորհիվ: Եվ այսօր թեև պատերազմն անցյալից է նայում մեզ, այն դեռևս շարունակվում է մեր վիրավոր ազատամարտիկների սպիներում, անդարձ կորուստների, ցավի մրմուռներում, մարդկային հարաբերություններում և առօրյա կյանքում: Պատերազմի պատճառած ցավը չի անցյալանում: Եվ քիչ է ասել, թե պետության և հասարակության ուշադրության կենտրոնում են գտնվում Արցախյան պատերազմի մասնակիցների խնդիրները: Մեծ ջանքերի շնորհիվ աստիճանաբար լուծվելով այդ հիմնախնդիրները՝ կասեցվում են կյանքի փոքր ու մեծ հարվածները: Հասարակությունն ըմբռնում է, որ առանց այդ ցավոտ խնդիրների լուծման չի կարող նոր տեղաշարժեր կատարել՝ ի նպաստ կյանքի ապագա բարգավաճման: Պատերազմի հետևանքների ազդեցությունը դեռևս մնում է, չի վերացել ամբողջաբար: Գոյապայքարը շարունակվում է (դա բնական է) մեր կյանքի բոլոր բնագավառներում: Մեր առջև ծառայող դժվարությունները հաղթահարվում են միայն միասնական ուժով: Այդպես միայն կարող ենք պահպանել Հաղթողի հոգեբանությունը: Այդպես միայն կարող ենք պահպանել այն արժեքները, որ մենք ձեռք ենք բերել Արցախյան պատերազմում, երկա-

րատն ու համառ մարտերում: Պահպանել մեր անսասանությունն ու անպարտելիությունը:

Մենք չունենք «գրավյալ» տարածքներ, այլ ունենք ազատագրված հայրենական տարածքներ, որոնք կրում են հայկական մշակույթի վառ ու բացահայտ հետքերը: Այդ հետքերը, որ եկեղեցիներ են, խաչքարեր, ճարտարապետական բացառիկ նմուշներ, թշնամին չկարողացավ տասնամյակների ընթացքում ջնջել ու ոչնչացնել, փորձեց մեր մշակույթը յուրացնելու ճանապարհով տիրանալ մեր հայրենական հողերին:



Սակայն Արցախյան համազգային շարժումը կանխեց ու հնարավորություն չտվեց իրագործելու հերթական բարբարոսական ծրագիրը: «Հողը ետ են վերցնում միայն արյամբ». տասնամյակներ առաջ մեր ժողովրդի արդար պահանջին ծաղրալի այս խոսքերով պատասխանեց Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Վահագադեն: Եվ մեր ժողովուրդը պարտադրված պատերազմում հաղթելով՝ ամրագրեց սեփական ճակատագիրը տնօրինելու իր

իրավունքը: Իսկ արյամբ ազատագրված հողը սրբություն է և սրբատեղի, որտեղ սերունդների ոգին է կոփվում ու շարունակում պայքարի ու գոյատևման նորանոր լիցքեր ստանալ մեր նախնիների թողած ավանդույթներից: Մենք հաղթեցինք անհավասար պատերազմում՝ ամրապնդելով մեր իսկ արժեքներով ապրելու ազատությունը: Շնորհիվ մեր ժողովրդի միասնական կամքի՝ ոսոխը ետ շարտվեց և ... ստորագրեց կրակի դադարեցման պայմանագիրը: Մեր բանակը կանգ առավ, չշարունակեց իր հաղթական ընթացքը... պարտված ու խուճապահար թշնամու դիմաց: Դա մեր ժողովրդի կատարած ամենամեծ զիջումն էր, բարի կամքի արտահայտությունը: Այլևս մենք ոչինչ չունենք զիջելու: Հողը հագուստ չէ, որ փոխանակենք: Հողը հայրենիք է, իսկ «հայրենիքը կորցնելուց հետո՝ այլևս ոչինչ չենք ունենա կորցնելու»: Ճիշտ է նկատել Արցախի պետական համալսարանի դասախոս Ա. Վարդանյանը. «Ներկա ժամանակաշրջանում հրամայական պահանջ է դարձել համահայաստանյան հայրենասիրության դաստիարակումը, մերժելով տեղային «հայրենասիրությունը», սահմանելով, թե սուրբ է Հայրենիքի ամեն մի կտոր հողը՝ լինի Արցախը, թե Երևանը, Տարոնը, Ջավախքը, թե Վասպուրականը»:

Մեր բանակի հզորության և մարտունակության շնորհիվ է միայն, որ պահպանվում է գինադադարը, այս «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը, որը միաժամանակ հնարավորություն է տալիս, որ մեր ժողովուրդն այսօր զբաղվի խաղաղ, ստեղծագործական աշխատանքով, կառուցի եկեղեցիներ ու դպրոցներ, զբաղվի սերունդների կրթության ու դաստիարակության գործով, բարեկարգի ձանապարհները: Ժողովուրդն այսօր գիտակցում է, որ սեփական ուժերով ամրապնդելով իր ներկան՝ անխոցելի է դարձնում ապագան: Ճշմարիտ է ասված. «Հավատն ու գործելու կամքն է, որ բանակը կարող են տանել հզորացման ու նորանոր հաղթանակների, երկիրը դարձնել անխոցելի, ժողովուրդը՝ ազատ

ու հպարտ»։ Պատերազմում հաղթած երկրի քաղաքացին, բնականաբար, պետք է ապրի հպարտ ու ազատ և լինի անխոցելի։ Արցախյան պատերազմի մասնակիցները այն առաքյալներն են, որոնք ինքնակամ զենք վերցնելով և փրկելով երկիրը թշնամու համառ ու երկարատև հարձակումներից, փրկել են մարդկային երջանկությունն ու հպարտությունը, ազատ ապրելու ու գործելու հնարավորությունը, ապահովել ժողովրդի խաղաղ, ստեղծագործական ներկան և հեռանկարներ բացել գալիք սերունդների համար։ Ազատամարտի մասնակիցները համառ պայքարով ու նվիրվածությամբ փրկել են հող-հայրենին՝ ներշնչվելով ու ոգևորվելով Նիկոլ Դումանի, Անդրանիկի, Գարեգին Նժդեհի, Գևորգ Չաուշի կերպարներով։ Պատմության և հիշողության շղթան երբեք չի կտրտվում՝ տասնամյակներ տևած կարմիր բռնատիրությանը, մեր ոգուն անհարիր օտարածին բարքերով։ Այն, ի վերջո, լրացվում ու շարունակվում է նոր օղակներով, որոնցով ամրապնդվում ու կենսունակ են դառնում սերունդների կապն ու հաղորդակցությունը։ «Չայրենասիրությունը վարք է, և մարդկային գործերի մեջ հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը»՝ նժդեհյան այս խոսքերն այսօր էլ ժամանակահունչ են և ազդեցիկ, որովհետև այդ խոսքերը բխում են մեր ազգային ոգու ակունքներից։ Արցախյան գոյապայքարի մասնակիցները պարտադրված պատերազմում կռելով արժանապատիվ հաղթանակ, իրենց սխրագործություններով և ցուցաբերած բացառիկ արիությամբ գրեցին մեր պատմության հերոսական և մնայուն էջերը, որոնք խորհրդանշում են ազգանվեր պայքար ու սխրագործություն և հանդիսանում ներկա ու ապագա սերունդների համար ռազմահայրենասիրական դաստիարակության դարբնոց։ Մեր կողքին են մեր հերոսները։ Եվ համոզված եմ, որ միայն սեփական ուժերին հենվելով, կարող ենք նվաճել բարձունքներ, մեր կյանքով, փորձով ու ոգու կորովով ամրագրելով ազգային արժեքներով ապրելու ազատությունը։ Յիշե-

լով և մեծարելով մեր զոհված ազատամարտիկներին՝ մենք միայն հոգու պարտք չենք կատարում: Ինչպես նշում է ռուս բանաստեղծը՝ «Դա նրանց պետք չէ, դա ապրողներին շատ է հարկավոր»: Մենք մեր հերոսներին հիշում և մեծարում ենք նաև նրա համար, որպեսզի չզրկվենք լիարժեք կյանքով ու հպարտությամբ ապրելու հնարավորությունից:

Այսօր ոչ միայն պետության, այլև հասարակության ուշադրության կենտրոնում են գտնվում Արցախյան պատերազմի մասնակիցների խնդիրները: Հասարակությունն ինքն իրեն շտկում է, բուժում վերքերը, լրացնում կիսատն ու թերին, փորձում վերականգնել միասնաբար գործելու և դժվարություններն հաղթահարելու այն բացառիկ ունակությունները, որ լավագույն կերպով դրսևորվեցին Արցախյան շարժման և պատերազմի տարիներին: Այդ հերոսական ոգու կրողները՝ Արցախյան պատերազմի մասնակիցները այսօր էլ շարունակում են նշանակալի դեր խաղալ կյանքում, որոշակի ներդրում ունենալ նաև բանակաշինության գործում: Նրանց կերպարներով դաստիարակվում և ոգեշնչվում է երիտասարդ սերունդը՝ արիության դասերից քաղելով ոգու կորով և նպատակասլացություն:

Պետության և հասարակության աջակցությամբ հաշմանդամ ազատամարտիկները փորձում են իրենց կյանքն ապրել ավելի լիարժեքորեն: Գոյապայքարի հիշողությունը հավատի և ոգու խորքերից ապաքինում է ժամանակի վերքերը, սովորեցնում՝ տոկալ ու դիմանալ...

Հող-հայրենին ազատագրողը շարունակում է կերտել Երկրի ներկան՝ իր ամենօրյա գործողություններում արտահայտելով հայոց ճակատագրին տեր կանգնելու վճռականությունը: Պատերազմը դեռ շարունակվում է սպիներում և հետքերում: Խաղաղությունն այսօր քան երբևէ իմաստավորվում է հիշողության սրտատրոփով, հիշատակի լույսով և անմահության ելևէջներով: Հուշակոթողները

դառնում են սրբատեղի, որտեղ մեր մայրերի և քույրերի աղոթքն է բացում սփոփանքի նորանոր դռներ: Չոհված ազատամարտիկների պատվին կանգնեցված հուշարձանները խորհրդանշում են պայքար ու սխրագործություն:

Պետության և հասարակության ուշադրության կենտրոնում են գտնվում Արցախյան գոյամարտում զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների խնդիրներն ու հոգսերը:

Չոհված ազատամարտիկների հարազատների միությունը մեծ աշխատանք է կատարում Արցախյան գոյամարտի բոլոր զոհերի հիշատակը հավերժացնելու համար և դարերին է ավանդում նրանց սխրագործությունների և հաղթական ոգու պատմությունը: Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությունը փորձում է «մարդկության ուշադրությունը բևեռել «գերություն» կոչվող խոցի և համատեղ ջանքերով դրա բուժման հրատապ խնդրի վրա»:

Չոհված և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշաթանգարանները ոչ միայն ցավի ու կորստի, այլև մաքառումների պատմությունն են արձանագրում ժամանակի մատյանում, որը ներկա և ապագա սերունդների սրտերում ցանում է հայրենասիրության սերմեր: Թանգարաններ, որտեղ սրբությանը են պահվում ազատամարտի մասնակիցների կենսագրական տվյալները, փաստաթղթերն ու իրերը, տոկունության ու սպասումի զգացողություններ են արթնացնում, միավորում կոտրված սրտերի նորահույս թրթիռներն ու հավատի բռնկուն կայծերը: Ցավն այս պայքարի ոգի է, որ երբեք չի մեռնում, ցավն այս մաքառումների ճանապարհ է, հույս ու ընդվզում:

Չուշաթանգարաններում հաճախակի են կազմակերպվում «Արիության դասեր», հանդիպումներ զինծառայողների և աշակերտների հետ: Այդ միջոցառումները սերունդներին հաղորդում են մաքառումի և տոկունության դասեր, նրանց հաղորդակից

դարձնում Ոգու բարձրագույն թռիչքին, սխրանքների և հերոսության դրվագներին:

Բոլորս գիտակցում ենք, որ այսօրվա երիտասարդի մեջ պետք է տեսնել վաղվա հայրենյաց պաշտպանին, որը պետք է լինի համարձակ, արի, պատրաստ անձնազոհության: Նրա մեջ մշտական պիտի բաբախի մեր նախնիների անպարտելի ոգին, անընդհատ զորեղանա հոգևոր հայրենիքը՝ իր անհատնելի ժառանգությամբ: «Չկայ հայրենասիրություն-չկայ հոգևոր Հայրենիք,- գրում է Նժդեհը: - Եղածը լոկ աշխարհագրական սահմաններ են, իսկ նմանը աւազահիմն է, դիրակործան, անապագայ...»:

Արցախյան պատերազմի մասնակիցներն իրենց ներկայությամբ իմաստավորում են ժամանակաշրջանը, իրենց ոգու կորովն ու ջերմությունը հաղորդում երիտասարդներին, դառնում ոգևորության աղբյուր, անձնվեր գործունեության ու նվիրվածության խորհրդանիշ: Նրանք հիմա, ինչպես Արցախյան պատերազմի ժամանակ, իրենց վճռորոշ և նպատակամետ մասնակցությունն են ունենում երկրի զարգացման գործընթացներում՝ ցուցաբերելով կամք ու նվիրվածություն: Ըմբռնումով են վերաբերվում Հանրապետությունում ընթացող սոցիալ-տնտեսական բարեփոխումներին, գիտակցում, որ հասարակական կյանքի առողջ ու կենարար մթնոլորտն ի վիճակի է դրականորեն նպաստել բանակի ու պետության զարգացմանն ու հզորացմանը:

Ազատամարտի մասնակիցն ըմբռնում է, որ առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները անհրաժեշտ է հաղթահարել միասնական ուժով: Հայտնի փաստ է, որ ներկայիս խաղաղության պահպանման երաշխավորը Պաշտպանության բանակն է, որը ոչ միայն անընդհատ զարգացող ու կատարելագործվող մի ամբողջական ուժ է, այլև Հայրենիքի ոգու պահապանն ու արտահայտիչը: Այսօր ավելի ու ավելի է կարևորվում հզոր ու մարտունակ բանակի գոյությունը, երկրի սահմանը պահպանող զինվորի դերը:



*Նկարում՝ ԿԴՇ 3-րդ գումարտակի մարտիկները, կենտրոնում՝  
Գրիգորի և Յրահատ Եսայանները Արայիկ Յարությունյանի հետ, 1993թ.  
(հետագայում՝ ԼՂՀ վարչապետ):*

Նշանակալի դերակատարություն ունեն նաև բանակի և հասարակության միջև մշտական գործող փոխհամագործակցությունն ու փոխօգնությունը: Եվ այդ տեսադաշտում ավելի է ընդգծվում ու կարևորվում Արցախյան պատերազմի մասնակիցների բացառիկ դերը՝ ինչպես երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության առումով, այնպես էլ հոգևոր և մշակութային արժեքների պահպանման ու զարգացման գործում: Այն ամուր հավատն ու վստահությունը սեփական ուժի նկատմամբ, որ Ազատամարտի մասնակիցները ձեռք են բերել Յարենիքի ազատության համար մղված համառ մարտերում, կարևոր արժեքներ են, որոնք ապահովելով ռազմական հաղթանակը, միտված են բարեկարգելու նաև իրական կյանքը, ամրապնդելու կապը սերունդների միջև:



Ազատամարտիկները հիմա էլ ձգտում են ապրել... արժանապատիվ ու լիարժեք կյանքով, որպեսզի անսասան մնա Հաղթողի ոգին: Նրանց սատարում է պետությունը: Նրանց սատարում է հասարակությունը: Հաշմանդամ ազատամարտիկները կորցնելով ամենաթանկը՝ առողջությունը, չեն կորցրել հաղթողի ոգին:

Նրանք մշտապես հոգատարության և աջակցության կարիքն ունեն:

Արցախի ազատամարտիկների միությունը լինելով Արցախյան պատերազմի մասնակիցներին համախմբող ուժ, ծառայում է մեր պետության ամրապնդման և հզորացման շահերին: Միությունը ամուր կանգնած է ազատամարտիկների սոցիալական և իրավական պաշտպանության դիրքերում: Ուշադիր է երեկվա պատերազմի յուրաքանչյուր մասնակցի հանդեպ և ամեն կերպ ձգտում է նրանց կատարածն արժևորել օբյեկտիվորեն: Համապատասխան քայլեր է ձեռնարկում ազատամարտիկների սոցիալական վիճակը թեթևացնելու ուղղությամբ: Միության կարևորագույն առաքելությունն այն է նաև, որ երեկվա պատերազմի մասնակիցներին համախմբելով և նրանց ներուժն ու փորձը արդյունավետ կիրառելով, մշտապես նպաստում է երկրի հզորացմանն ու բարգավաճմանը: «Այսօրվա զինվորն ու երեկվա պատերազմի մասնակիցն իրար կողքի են,- զրույցի ժամանակ նշել է Արցախի ազատամարտիկների միության նախագահ, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանը,- ինչը նշանակում է, որ մենք միասնական ուժ ենք... Իսկ միասնության դրոշի ներքո գործող ժողովուրդն անպարտ է...»:

Արցախյան պատերազմի մասնակիցներն իրենց ներկայությամբ իմաստավորում են ժամանակաշրջանը, իրենց ոգու կորովն ու ջերմությունը հաղորդում երիտասարդներին, դառնում ոգևորության աղբյուր, անձնվեր գործունեության ու նվիրվածության խորհրդանիշ:

## ԸՆԿՆՈՂ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐ ԵՎ ՀԱՌՆՈՂ ԼՈՒՅՍ

Թըբըղլու գյրուղը... Հորիզոնն իր հրե լեզվով լիզում է ճանապարհի մտահղացումները: Ծերունիների հայացքում երազանքների սերմեր են պայթում, դաշտը մի կանաչ խուտուտ է փոխանցում խոտերին. «Բարի՛ լույս խոտեր, խշագեք ազատ»: Ստվերները ասեղնագործում են մարդկային պատրանքները և հանկարծակի փռում սրածայր քարերի վրա: Արյունոտվում են պատրանքների ծնկները: «Բարի՛ լույս, պատրանքներ, բացեք ձեր աչքերը»: Վայրկյանների հայացքն է եփվում ծառերի կատարներին ու հոսում քարերի ճակատն ի վար: Ահա... հայտնի «Թթու ջուր» աղբյուրը, որի ջրերում թրթռում էին քոչվորների ներկայության վերջին ծվենները: Նրանք, որ սովոր էին նստել հոգուդ վրա ընտանեկան վրաններով և իրենց քրքիջը կախել աղբյուրի ջրերում. «Այստեղ մենք ենք տերը»: Իսկ գյուղի ջահելների լռության մեջ ըմբոստության ոգին էր բախվում չարտաբերած խոսքի պարիսպներին, փոշու մեջ ժամանակների վարագույրներն էին ընկնում՝ իբրև պարտված դրոշներ...

Հետո կրակե օրեր եկան: Գյուղն իր քաջարի զավակների բաց ճակատներով գնաց դիմավորելու Հայոց պայքարի արշալույսը: Աղմուկի մեջ խճճվեց երազանքը, երազանքի մեջ՝ ճանապարհը: Ձենքերը խոսելու իրավունք խնդրեցին: Հուշի շնչառությունից երազանքի մի տաք գուլորշի բարձրացավ, երկար օրորվեց օդում, ապա ցողի կաթիլների պես ընկավ մեր համբերության սալերի վրա. «Պայքար, պայքար մինչև վերջ»: Ինքնաշեն զենքերը շտապեցին ասպարեզ մտնել: Քամին քշեց փողոցից-փողոց միտինգների հետքերը, որպես կոնֆետի թղթեր, և նրանցով խցանեց հուզմունքից կարկամած օրվա կոկորդը:

Ապագա վերքերի նշաններից զգաստացած՝ մի երեխա վեր

թռավ քնից և հասկացավ, որ այսուհետ ինքը պիտի հագնի զինվորական համազգեստ և կոշիկներ զինվորական: Նոր մտքերը չտեղավորվելով բառերի մեջ՝ հոսեցին արյան տարերքի միջով... Բեռնաթափվեցին ուղեղները... Նորանոր մտքերը մնալով անտեր, թափթփվեցին մայթերի վրա, ինչպես հնոտիներ: Նռնակ պատրաստելիս Արտուշ Բեգլարյանը կորցրեց իր աջ ձեռքի երեք մատները: Այդ երեք մատները մնացին խրված խավարի կոկորդի մեջ... Որպես լույսի նշաններ՝ հիմա ուղեկցում են մեզ հիշողության բարձրունքից... Արտուշն իր վիրավոր ձեռքի հպարտությանը է սեղմում ծանոթ-անծանոթների ձեռքը և լռությամբ ասում. «Բարիք եմ ցանկանում քեզ»:

Գյուղի հարսերը մի առանձին հպարտությամբ են կախում լվացքը լարերի պես ձիգ պարաններից, հատկապես, երբ լվացքի մեջ գերակշռում են զինվորական համազգեստները: Համազգեստների արանքում երևացող երկնքի պատառիկները մեր երազած խաղաղության իմաստն են օրորում: Ծառերը ներկա են: Ձորերը ներկա են: Անդրանիկ Մարկոսյանը... զոհվել է: Վլադիկ Գրիգորյանը վիրավորվել է: Պառկած է հոսափտալում: Հիշողությունը ներկա է: Մահը... բացակա է:

Գյուղի հայացքում նշմարելի են երեք թարմ սպիներ, որոնց մեջ մոմի պես վառվում է երեք մարտիկների հոգու հուրը: Անդրանիկ Մարկոսյան, Էդիկ Գրիգորյան, Հրանտ Գալստյան: Նրանց պատկերները մահին հաղթահարելով, եկել տեղավորվել են աղբյուրի հայացքի մեջ. «Խմիր, մանկիկ իմ, աղբյուրի ջուրը, խմիր անմահությունը ցեղի: Եվ քո երակներում կփոթորկվի հայոց տարերքի անկրկնելիությունը: Քո աչքերի մեջ կբոցկլտա աչքերը հորիզոնի: Խմիր, մանկիկ իմ, անսահմանությունը հայոց երազանքի»:

Սերժիկ Գրիգորյանը, որ պառկած է եղբոր կորստի խոսուն լռության մեջ, օրորում է գլուխը. «Ինչքան գեղեցիկ էր նա կռվում»: Երբեմն այնքան խորն է լռում, որ նրա հայացքի վարագույրի

ետևում թափվող կարկուտի ձայնն է լսվում: Կարկուտը խշշում է՝ մայթերին փռելով բոլոր եղանակների գրավչությունը: «Գարուն, արևդ տար աշխարհներին, ինձ մի մանուշակ թող մնա միայն», - ասում է Սերժիկ Գրիգորյանի հայացքը:

- Ամեն անգամ թշնամու հանդիպելիս,- լռության միջից վերջապես խոսում է Սերժիկը,- իմ մեջ եռում է վրեժի զգացումը: Նա իմ ուղեցույցն է և եղբորս հանդեպ տածած սիրո ... հանգրվանը:

1993թ. դեկտեմբերի 29-ին «Պուշկեն յալի» բարձունքում Էդիկ Գրիգորյանի հետ զոհվել է նաև «Ատոմ» մարտկոցի հետախույզ Սերժիկ Սարգսյանը: Այդ օրը Արցախի հրետանու պետ Ժորա Գասպարյանը պիտի անչափ կարոտեր քրոջ տղային՝ Սերժիկին: Կարոտը նրան պիտի ստիպեր գալու մարտկոցի զորանոց: Մեքենայից իջնելով՝ պիտի արցունքոտ աչքերով կանգներ... վերջին հրաժեշտի անդունդի դիմաց...

Երազանքի շուկից պայթում է մի բողբոջ ափերիս մեջ, որոնց տաք գծերում բուրո՞ւմ է հողը: Ափերիս ջերմության մեջ կարոտի ծիլերն են շարժվում: Ձեռքերով շփում եմ դեմքս: Յուշերիս լուսինն է կանգ առնում ու անշարժանում սպիների մեջ: Ո՞ւմ ձեռքն է փշրել ժամանակի դիմակը և նրա պատկերավոր բեկորները ցրել հույզերիս հողմապտույտի մեջ: Ո՞ւմ հայացքն է բարձրանում կորստի վիհերից, որ վերևից լուսավորելով աշխարհը՝ ինքնաձանաչման պահեր պարզևի մեզ: Ո՞ւմ ձեռքն է բացում քառսի կափարիչը:

- Յրապուրիչ է խաղաղության շունչը,- մտքերն ինձ հետ կիսում է «Խաչենի» գումարտակի զինվոր Վլադիկ Իսրայելյանը,- բոլորս ուզում ենք վերականգնել Արցախի խարխիված տնտեսությունը: Մեր նվաճումները, որպես դասեր, ուզում ենք փոխանցել եկող սերունդներին: Բայց խաբուսիկ չէ՞, արդյոք, պահը: Ինչքան էլ հրապուրիչ լինի խաղաղությունը, մենք պիտի միշտ զգո՞ն լինենք:

- Մեզ անհրաժեշտ է ոչ թե անվերջ ձգձգվող զինադադար,- ավելացնում է «Լուսինե» մարտկոցի դասակի հրամանատար

Էդիկ Մարկոսյանը,- այլ հաղթող կողմի խաղաղություն միայն:

- 16 տարեկան էի, երբ սկսվեց արցախյան շարժումը,- պատմում է Արսեն Իսրայելյանը,- փայտով և քարով սկսված կռիվը, որի մասնակիցն եմ ես, հանգեց կանոնավոր բախման: Քարի մեջ արյուն կա: Այս միտքը նոր եմ հասկանում: Շատ մարտերի եմ մասնակցել: Հպարտությամբ եմ հիշում «Պուշկեն յալի» մարտերը: Թշնամին համառորեն ձգտում էր գրավել այդ կարևոր բարձունքը: Թուրքական ջոկատները հավաքվում էին ֆերմայում, այնտեղից տարածվում տարբեր կողմերի վրա: Մի անգամ վեց հոգով որոշեցինք հանկարծակիի բերել թշնամուն: Թեմուր Առստամյանի գլխավորությամբ շարժվեցինք դեպի ֆերման: Մեր կարծիքով՝ թշնամու զինվորների թիվը քսանից չափտի անցներ: Մարտի մեջ մտանք: Մեզ առաջնորդում էր տարերքը: Կռվի թեժ պահին հասկացանք, որ թշնամու ուժերը սպասածից ավելի են: Թշնամին խուճապի մեջ էր: Նրան էլ թվաց, թե մեր ետևում օգնական ջոկատներ են կանգնած: Թշնամին զգալի թվով զոհեր տվեց: Հանկարծակի հետ քաշվեցինք: Հետո սկսեցինք բարձրանալ «Պուշկեն յալի» բարձունքը: Վերևից անծանոթ դեմքերով զինվորներ էին իջնում: «Եթե հայեր եք,- հնչեց Թեմուրի ձայնը,- իջեք մյուս կողմով»: Հետո անմիջապես հասկանալով, որ եկողները «Կանաչներ» են, նռնականետը արագ հարմարեցրեց ուսին և քաշեց ձգանը... Նռնակը պայթեց թուրքերի շարքերի մեջ: Լավայի մեջ գալարվեցին մի քանի մարմիններ: Մինչև հիմա այս բախման տարերքն է ապրում կրծքիս տակ:

Մտքիս մեջ լապտերի պես վառվում են Թըրքլու գյուղի փորձված ազատամարտիկների անուն-ազգանունները. Մարտիկ Իսրայելյան, Էդիկ Իսրայելյան, Վահագն Իսրայելյան, Բարմեն Թառումյան, Արտուր Մկրտումյան, Հայասեր Ավանեսյան, Վալերի Իսրայելյան, Անդրանիկ Ավանեսյան, Ռաֆայել Դանիելյան...

- Ե՞րբ և որտե՞ղ եք վիրավորվել,- հարցնում եմ դասակի հրամա-

նատար Սամվել Մկրտումյանին:

- Վիրավորվել եմ Թալիշի մարտական դիրքերում, 1994թ. ապրիլի 25-ին,- պատասխանում է Սամվելը,- թշնամու դիրքերը հետախուզելուց հետո՝ առավոտյան, լույսը դեռ չբացված, հարձակվում ենք և գրավում թշնամու բարձունքները: Հետո այս բարձունքները ձեռքից-ձեռք են անցնում: Մեր աջ թևի զինվորները նահանջում են: Ստիպված ենք լինում մեր ունեցած ուժերը տեղաբաշխել նաև աջ թևի վրա: Խրամատում սպասում ենք: Թշնամին փորձում է հրետանային համազարկերով կոտրել մեր ոգին: Հենց այդ պահին... թշնամու արձակած արկը պայթում է մեր խրամատում: Ձուլվում են Արարատը, Սամվելը և Գենադիկը: Վիրավորվում են Թեմուրը, Վոլոդյան և ես:

Թըբըղլու գյուղը... Հորիզոնն իր հրե լեզվով լիզում է ճանապարհի մտահղացումները:

Գյուղի հարսերը մի առանձին հպարտությամբ են կախում լվացքը լարերի պես ձիգ պարաններից, հատկապես, երբ լվացքի մեջ գերակշռում են զինվորական համազգեստները: Համազգեստների արանքում երևացող երկնքի պատառիկները մեր երազած խաղաղության իմանստն են օրորում:

Ապագա տազնապների նշաններից զգաստացած՝ մի երեխավեր է թռչում քնից և հասկանում, որ այսուհետ ինքը պիտի հագնի զինվորական համազգեստ և կոշիկներ զինվորական:

Մաքառման ալիքն է հոսում երազանքի սպիտակ ճառագայթի վրայով...

04.08.1994թ.

## ՀՈԳԵՎԱՐՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՈԱԶ



Ես ուզում եմ գրել, բայց քո ճակատագիրը բառերի մեջ չի տեղավորվում:

Բառերի հետ ջերմ հայացքներ եմ փոխանակում, մինչև որ դառնում ենք մտերիմներ: Եվ բառն իմ կողքին ինքն իրեն ազատ է զգում և այլևս չի փակում տան դուռը... Մտնում եմ ներս և...քո հիշատակի մոմն եմ վառում...

Ցրտի պատերը փշրվում են...

Ոտքերս

քառսի փրփուրով են ծածկվում...

Քառսի խորքից հանում եմ քո անվան տառերը և շարում թղթի վրա. «Արտիկ Սաղիյան»: Բայց թղթի վրայից տառերը փախչում են չարածճի երեխաների պես և վազում բակ: Բակը կարոտող մոր պես կլանում է նրանց: Հետո քո անվան տառերը տարվում են մանկության խաղերով: Կարմիր, սպիտակ, կապույտ գույների փուչիկներ են օրորվում օդում... Մի այլ տեղ երեխաները «կռիվ-կռիվ» են խաղում: Քո անվան տառերը վիրավորում են... Եղբայրս՝ Ռաֆայելը հասնում է օգնության: Եվ մորդ կանչը կախվում է բակի վրա: Անարյուն պատերազմը մի հեքիաթ է, որ հիմա կծկվել է բակի մի անկյունում և սպասում է... ապագա սերունդներին: Բակը զարմացած աչքերով նայում է քեզ կանչող մորդ և ասում. «Սթափ-վիր, Մելանիա, լվացքդ հավաքիր և մի լվա կորուսյալ որդուդ շորերը, չէ որ դրանք այլևս չեն կեղտոտվում... Արտիկի կյանքը հագուստներից դուրս է... Դու քո ափերով ջերմացրու Անսահմանության այն կապույտ կտորը, որի մեջ բարուրված է խաղաղություն-

նր... հոգնուդ խաղաղությունը»:

Չետո քո անվան տառերը նորից եմ շարում թղթին: Տառերը քսվում են իրար, և տառերից կայծեր են թռչում: Կայծերից լուսավորվում է ճանապարհը...

Պատերազմ բառի ծանրության տակ ոչ մի հենարան չի դիմանում... 91, 92, 93, 94... Սրանք վառողով ծածկված տարիներ չեն լոկ, այլև հենարաններ, որ հետզհետե փշրվել են պատերազմի ծանրության տակ... Չենարանների բեկորները մնացել են վիրավորների սպիներում, խորացել, սուզվել են մինչև գերեզմանոցները և այնտեղից հեգնում են... աշխարհի բարքերը... Իսկ աշխարհը անընդհատ դիմակներ է փոխում և ամեն մի դիմակ փոխելով՝ իր դեմքն է կորցնում... հավիտյան...

Մելանիայի հայացքի մեջ օրորվում է մանկության մի անանց բուրմունք, որ քսվելով փողոցի շենքերին ու մարդկանց՝ փորձում է կյանքից դուրս մղել դատարկությունը... Փողոցը ավերակների հայացքից ցնցվում է և սկսում դողալ... Ներդաշնակություն բառը հոգեվարք է ապրում քաղաքի խաչմերուկում: Փողոցներից աքսորված բառերը գիշերները հավաքվում են բառարանի մի խուլ անկյունում և խորհում մեր մասին... Մեզ փրկելու ելքեր են որոնում...

Արտիկի ընկերների աչքերից թափվում են վրեժի դագաղներ... Օրերի հողմը քշում է այդ դագաղները, որպեսզի ոչ-ոք չտեղավորվի դրանց մեջ: Քշում է, զարկում լեռների ուտերին, փշրված կտորները նորից է փշրում... Բայց, այդուհանդերձ, չի հանգստանում... Չանում է դրանք ու զարկում... աշխարհի ճակատին... Աշխարհի ճակատին գրված տառերը խառնվում են, ինչպես հեռուստացույցի ալիքները... Աշխարհը առաջին անգամ ըմբռնում է, որ ինքը հիվանդ է, գուցե և... մահացու հիվանդ... Ո՛վ գիտե...

Պատերազմը սպառել է իր բառապաշարը: Խեղդվում է՝ խոսելիս: Լռելիս՝ դատարկվում է: Իսկ երբ ուզում է ոչ լռել և ոչ էլ խոսել՝ խելագարվում է, որովհետև գիտե, որ ինքը ի վերջո պիտի գործա-



ծի խաղաղության բառապաշարը: Բայց գիտե նաև, որ այն պահին է ինքը մեռնելու, երբ արտաբերի խաղաղության առաջին բառը...

Արտիկի ընկերները՝ Վիտալի Ավանեսյանը և Արա Գրիգորյանը իրենց վերքերից հանում են մարտական այն ճանապարհը, որ անցել են Արտիկի հետ միասին, և փռում... հայացքիս վրա: Հայացքս եռում է, և եռացող կաթիլները լցվում են ճանապարհի ճեղքերի մեջ: Ճեղքերը դառնում են բիրբեր ու տեսնում... Անտեսանելին: Տղաների աչքերի գույներում Արտիկի աչքերի գույներն են առանձնացնում, նրանց խոսքերում եփվող մարտադաշտերից Արտիկի հայացքներն են հավաքում, որպես մեր բակի երեխաներին հղված նամակներ... Իսկ երբ մեր բակի երեխաները կոնֆետից կշտանան (դա երբ է լինելու), ես նրանց կբաժանեմ այդ նամակները... Պատերազմը մեզնից հեռու կլինի: Քարտեզի գույները կխաղաղվեն: Եվ վառողի հոտը կփչի միայն... դասագրքերից...

Արտիկի ընկերները պատմում են... Նրանց խոսքերի մեջ խրամատների տարածությունն է բաբախում... Մի այլ տեղ... նրանց խմբի տղաները մտնում են թշնամու խրամատները, հավաքում զենքերը, հետո հետ քաշվում: Հետո թշնամին վրեժխնդիր է լինում տղամարդկային այդ ծաղրի համար: Հրետանային հարվածներ է հասցնում մեր դիրքերին... Դիրքերը տնքում են... Վիրավորների շնչառությունից ծանրանում է օդը... Ահա... Արտիկը, վիրավոր ընկերոջը շալակած հանում է կրակակետից: Փրկվում են ընկերոջ ժպիտը, բառերը, հիշողությունը... Արտիկի ընկերները պատմում են... Նրանց դեմքերից քրտինք է կաթում: Քրտինքի մեջ արյուն կա: Ահա «Ուղտեն մեջք» կոչվող բարձունքը... Իրենք 40 հոգով հարձակվել ու գրավել են այն: Մի քիչ շտապել են: Աջ թևի հետ չէր համապատասխանեցվել այդ գործողությունը: Թուրքերը շրջապատման մեջ են առել իրենց: Շրջապատման օղակը անընդհատ փոքրանում է... Տղաների դիմաց թուրքերի զորամասն է: Իսկույն հաղորդում են կոորդինատները: Զորանոցը պայթում է մեր հրե-

տանու ուղարկած առաջին իսկ արկից: Շրջապատման օղակը ավելի է փոքրանում: Մութն ընկնում է: Մեր հրետանու դիպուկ հարվածները շփոթեցնում են թշնամուն, և տղաները դուրս են գալիս շրջապատումից:

Արտիկի ընկերները պատմում են...

Իսկ ես հիշում եմ մեր բակը... Հիշում եմ Արտիկին եղբորս հետ խաղալիս: Հետո հիշում եմ տղայական իրենց կռիվները: Նրանց կրծքի տակ չէր տեղավորվում աշխարհը: Փշովում էր, նորից ամբողջանում... Հիշում եմ, թե ո՞նց էին նրանք մեծանում Արցախի տարօրինակ երկնքի տակ...

Ուտքերս

քառսի փրփուրով

են ծածկվում...

Նայում եմ թղթի հայացքին: Թղթի վրայից քո անվան տառերը փախչում են չարածճի երեխաների պես և վազում բակ: Բակը կարոտող մոր պես կլանում է նրանց: Մորդ կանչը կախվում է բակի վրա: Անարյուն պատերազմը մի հեքիաթ է, որ հիմա կծկվել է բակի մի անկյունում և սպասում է... ապագա սերունդներին: Բակը զարմացած աչքերով նայում է քեզ կանչող մորդ և ասում. «Սթափվիր, Մելանիա, լվացքդ հավաքիր և մի՛ վա կորուսյալ որդուդ շորերը, չէ՛ որ դրանք այլևս չեն կեղտոտվում... Արտիկի կյանքը հագուստներից դուրս է... Դու քո ափերով ջերմացրու Անսահմանության այն կապույտ կտորը, որի մեջ բարուրված է խաղաղությունը... հոգուդ խաղաղությունը...»:

## ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄԵՆԱԹԵԺ ԿԱՆԳԱՌՈՒՄ



Աղավնի Սահակյան

Պատերազմը խառնեց մարդկային ճակատագրերը կրակի ու փոշու շրջապտույտի մեջ: Փլվեցին տներ, ավերվեցին կենսալից օջախներ, որոնք իրենց ծխի ալիքների վրա բախտի աստղերն էին օրորում և չէին հագենում լուսաբացներից ու մայրամուտներից: Ձգվում էր օրը, և առավոտվա ցողը սիրահարների շուրթերին փոխվում էր բառերի... Յետո... ամեն ինչ խառնվեց իրար, վրեժի ծուխ բարձրացավ հողից և դարերի հայացքը լավայի պես սահեց մեր ինքնության լաբիրինթի միջով...

Ո՞վ ենք մենք և դեպի ո՞ւր ենք գնում: Ինչո՞ւ հենց մեր ուսերին ծանրացավ պատմության առեղծվածը: Մեր խճճված երազն ինչո՞ւ հենց մեր մեջ որոնեց իր պարզ ակունքը: Եվ ինչո՞ւ կարմիր գույնը նորից դարձավ արյան խորհրդանիշ: Այս հարցերը, պոկվելով հոգու հորիզոնից, գալիս խտանում են մի տեղ, ինչպես ցորենի հատիկները՝ հասկի մեջ, և ամեն մի հայ ձգտում է իր արյան մեջ գտնել նրանց պատասխանները, իր մաշկի վրա զգալ ժամանակի հարվածները, երբ վտանգված է հող-հայրենին, երբ բոլոր դարերը պատերազմի բոթից արթնացած՝ հավաքվում են ժամանակի ամենաթեժ կանգառում, որ կոչվում է... Արցախ:

Մերը... Ահա այն սուրբ զգացումը, որ անձնվեր այս հայուհուն Երևանից բերեց Արցախ... Կարծես հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշեի խոսքից է ելել, որ այդ խոսքն ավելի ամրանա ու ավելի գեղեցկանա իրականության խոր արձագանքներով. «Յայոց աշ-

խարհի փափկասուն տիկնայք մոռացան իրենց կանացի տկարությունը, առաքինի տղամարդիկ դարձան պատերազմի մեջ, կռիվ բաց արին ու մարտնչեցին»: Առաջին մարտերը, որոնց մասնակցել և որտեղ իր մարտական մկրտությունն է ստացել Աղավնին, Կրկժանի բարձունքների համար մղված կատաղի մարտերն են հանրահայտ «26»-ի պոստերում: Ֆրանսերենի ուսուցչուհին, որն ունի նաև երկրորդ մասնագիտություն՝ բժշկությունը, իր անձնվեր գործունեության շնորհիվ փրկեց բազմաթիվ կյանքեր: Նրա մարտական ճանապարհը, որ ձգվեց Շուշիից մինչև Լաչին, Լիսազոր ու Բերդաձոր, համարձակորեն անցավ նաև Մարտակերտի, Քելբաջարի կրակների միջով...

- Իմ գործի կարևորությունը,- խոստովանել է նա,- զգում եմ միայն մարտի ժամանակ, ձգտում եմ վայրկյան առաջ կատարել պարտականությունս:

Աղավնին շատ ծանր է տանում իր բուժքույր ընկերուհու՝ Կարինե Գևորգյանի և իր առաջին հրամանատար Յուրի Յովհաննիսյանի կորուստը:

Այսպիսի պատմական ժամանակահատվածում յուրաքանչյուր անձնվեր զինվորի կորուստ անհետևանք չի կարող մնալ ժողովրդի ձակատագրում: «Յայ զինվոր» արտահայտության մեջ մի փոթորկված ծով կա, որ իր ալիքներով մեր ամբողջական հայրենիքի երազն է օրորում, և ալիքները, հեռավոր ափերի կարոտն առնելով, մեր կորուստներն են կարծես ետ բերում, որոնք անցնելով մեր երազի ցուլքերի վրայով, իրենց աղն են թողնում մեր դարավոր մրմուռի ձեղքերում: Աղավնին երբեմն իր օրագրի հիշողությանն է հանձնում հասկի պես ծանրացած ապրումները, ձգտում բառերի հայացքի մեջ հարություն տալ իր զոհված ընկերներին, նրանց հետ անցած ճանապարհը տաքացնում է իր քայլերի հորիզոնի մեջ, և հեռվից նայող արևի հայացքի մեջ ամեն ինչ սկսվում է նորից: Նայում է լուսանկարներին և կամաց-կամաց կորչում բարձ-

րացող հուշի մեջ: Բայց հույսը նորից նրա ձեռքը բռնած՝ հանում է երազի կլանող նիրհից: Նա զինվորական առօրյայի միջից նայում է իր հույսի մոմին ու մրմնջում.

*Քունս չի տանում,  
լամպն էլ չի վառվում,  
միայն մոմիս մեղմ  
լույսն է կայծկլտում,  
մտքերս հախումն  
հանգիստ չեն տալիս,*

*կրծում են սիրտս,  
ձայնել են ուզում,  
բայց ես, ինչպես միշտ,  
ամփոփված իմ մեջ՝  
վառվում եմ, հանգչում  
կողքիս մոմի պես:*

Աղավնին նաև հայոց լեզվի զինվորն է: Հայոց տառերի հրաշքն է շարունակվում նրա էության մեջ: Նրա խորքերն ու հոգու գույներն է հայտնաբերում: Նրա էությանը խորթ է կեղծիքը, չի սիրում խոսել իր մասին, թողնում է, որ իր կատարած գործերը ավելի խոսուն ձևով բնութագրեն իրեն: Շատ է մտահոգված, որ հայոց բանակում ոչ միայն խոսեն, այլև բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կազմվեն հայերենով: Չէ որ մեր ազգային շարժումը,- մտածում է Աղավնին,- որ փոթորկվեց 88-ի փետրվարին, մեր ֆիզիկական գոյությունն ապահովելու համար չէր. ամենից առաջ նա միտում ուներ ժամանակի այլասերված ու աղավաղված խաչմերուկներում փրկել մեր հոգևոր դեմքը, որի ամենաբնորոշ գիծը հայոց արքայական լեզուն է: Իսկ այսօր ազգային բանակում հրամաններ են արձակվում սովորույթից եկող լեզվով: Սա ազգային դիմագծի խեղաթյուրումն է:

Ո՞վ ենք մենք և դեպի ո՞ր ենք գնում: Ի՞նչու հենց մեր ուսերին ծանրացավ պատմության առեղծվածը: Մեր խճճված երազն ինչո՞ւ հենց մեր մեջ որոնեց իր պարզ ակունքը: Եվ ինչո՞ւ կարմիր գույնը նորից դարձավ արյան խորհրդանիշ: Այս հարցերը, պոկվելով հոգու հորիզոնից, գալիս խտանում են մի տեղ, ինչպես ցորենի հա-

տիկները՝ հասկի մեջ, և ամեն մի հայ ձգտում է իր արյան մեջ գտնել նրանց պատասխանները, իր մաշկի վրա զգալ ժամանակի հարվածները, երբ վտանգված է հող-հայրենին, երբ բոլոր դարերը, պատերազմի բոթից արթնացած՝ հավաքվում են ժամանակի ամենաթեժ կանգառում, որ կոչվում է... Արցախ:

## ԲԱՐՁՈՒՆՔ ԵՎ ԵՐԱՋ



*Լյուվիզ Ազրյան*

Նա մեր հայացքի վրա փռեց իր ժպիտը և ասաց. «Թող անմահությունը իմ աչքերով ժպտա ձեզ»: Բարության ոգի էր Լյուվիզը, սիրելի բոլորի համար, էությանը՝ բանաստեղծ, որ հասկանում էր բնության լեզուն: Բայց մի ձայն իշխում էր նրա վրա, քրքրում հոգու պաշարները, շուրթերի անսահմանության մեջ ստեղծում բաների խարիսխներ... Դա հայրենիքի ձայնն է, որի արձագանքը Լյուվիզի աչքերում դառնում էր թռչունի բույն, երազը դառնում էր հավատ...

Ծաղկաշեն գյուղի կապույտի մեջ Լյուվիզի անվան տառերն են շողշողում և մեր հայացքի մեջ փոխարկվում երջանկության կայծակի...

Հակատանկալին մարտկոցի հետախուզության դասակի հրամանատար Լյուվիզ Ազրյանը ծնվել է 1966թ. ապրիլի 21-ին Մարտակերտի շրջանի Ծաղկաշեն գյուղում: 1984-88թթ. ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: 1986թ. ընդունվել է Հայաստանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինության բաժին:

Ուսման տարիներին Լյուդվիգը մասնակցել է հայոց համազգային շարժմանը: Յետո տեղափոխվել է Արցախ, դարձել Արցախի ազգային բանակի զինվոր: 1993թ. հուլիսի 1-ից ծառայում էր Մարտակերտի պաշտպանական շրջանի հրետանային դիվիզիոնում: Մասնակցել է «Յեռուստաաշտարակի», «Պուշկեն յալի» բարձունքների, Յակոբ Կամարի, Թալիշ, Լևոնարխ և մի շարք գյուղերի ազատագրմանը:

- Լյուդվիգը,- պատմում է հետախուզության դասակի հրամանատար Աշոտ Ավանեսյանը,- իր ամբողջ էությանը նվիրված էր հայրենիքին: Յողը նրա բառերի մեջ տնքում էր ցավից: Մենք զգում էինք Լյուդվիգի ապրումների խորությունը, շունչը... Այդ օրը, 94թ. ապրիլի 24-ին Կորյունը, Քաջիկը և ես եկել էինք դիրքերը՝ որպեսզի փոխարինենք մեր տղաներին, որոնց մեջ էր և Լյուդվիգը: Վիճակը բարդ էր, բոլորը մնացինք այդտեղ: Գործ շատ կար: Այս օրերի խաղաղությունը հասունանում էր հենց այդ պահերի մեջ: Լյուդվիգը ստիպված էր մնալ դիրքերում:

- Մեր դիտակետից,- ավելացնում է հետախույզ Սամվել Գասպարյանը,- հետևում էինք թշնամու դիրքային տեղաշարժերին: Մանվելի զինվորների հետ էինք: Կատարում էինք հատուկ առաջադրանք: Թշնամու դիրքերի վրա աշխատացնում էինք «Ռուբո», «Ջավեն» և «52» հրետանային մարտկոցները: Մեր հրետանու ճշգրիտ հարվածների տակ թշնամին սկսեց նահանջել: Ռազմաճակատի ձախակողմյան հատվածով մեր զորքերը սկսեցին առաջ շարժվել: Միաժամանակ աջ կողմով սկսեց առաջ շարժվել թշնամին: Աշոտը վիրավորվեց: Քաջիկը և Կորյունը Աշոտին տարան մեր նախնական դիրքը, որտեղ Աշոտին բժշկական օգնություն ցույց տվին: Մեր հետևակը գրավեց շատ կարևոր մի բարձունք: Մանվելի տղաների հետ էր և Լյուդվիգը: Նա շարունակում էր աշխատացնել հրետանին: Մեր գրաված դիրքերի վրա թշնամին հրետանային հարվածներ հասցրեց: Արկը պայթեց... Բեկորների

անձրև տեղաց Լյուդվիգի վրա... Նրա թրթռուն շունչն անջատվեց մարմնից և... գնաց համբուրելու հայրենի գյուղի ծաղիկները, խոտը:

- Լյուդվիգը մեր ընկերության ոգին էր,- պատմում է Քաջիկ Առաքելյանը,- հայրենիքի զգացողությունը նրա մեջ խորն է... Նրա անկեղծությունը սահման չունեի... Սիրում էինք նրան այնպես, ինչպես կար...

- Լյուդվիգը անմնացորդ նվիրված էր իր ընկերներին.- ավելացնում է հետախույզ Յրայրիկ Եղիազարյանը,- կարողանում էր հասկանալ դիմացիներին... Ընկերության նրա փորձը սրբագործվել է մարտերում...

- Ես միշտ էլ առանձին համակրանքով եմ վերաբերվել Լյուդվիգին,- ասում է հակատանկային մարտկոցի հրամանատար Յովիկ Սաղաթելյանը,- զգացել եմ նրա էության նուրբ տեղաշարժերը, հոգու անարատությունը... Մարտի ժամանակ նրա նվիրվածությունը հիացնում էր բոլորիս:

Ծաղկաշեն գյուղի հորիզոնից մի անուն է կաթում և դառնում հրավառություն աղբյուրների մեջ, լեռների վրա... Ես Լյուդվիգի հայացքի վրա փորձեցի գրել երկու բառ... Նրա հայացքի արյունը խառնվեց գրչիս արյանը... փոթորկվեց Անհունը: Ես Լյուդվիգի հրե շունչը տարա բառերի միջով և թողեցի Ծաղկաշեն գյուղի աղբյուրների մեջ... Պահը ծարավեց... Հորիզոնից կաթկթեցին մայրական արցունքները...

*04.09.1994թ.*



## ՄԱՐՏԱԿԵՐՏՆ ԱՅՆՏԵՂ Է, ՈՐՏԵՂ ԱՐՅՈՒՆՆ ՈՒ ԼՈՒՅՍՆ ԵՆ ՀԱՄԲՈՒՐՎՈՒՄ



...Մարտակերտն այնտեղ է, որտեղ արյունն ու լույսն են համբուրվում, որտեղ սրերն են բախվում, և մինչ դիվանագետները կհանդիպեին կլոր սեղանի շուրջը՝ վճռելու պատերազմի և խաղաղության հարցը, խաչված սրերի վրա իր բույնն է հասցնում շինել ծիծեռնակը: Մարտակերտն այնտեղ է, որտեղ զոհերի հոգիներն են գրոհում, ամրապնդելով կռվողների շարքերը, որտեղ հացից վառողի հոտ է գալիս, և հնգամյա երեխան առանց պատմության գրքի օգնության, իր արյան մեջ

նախնիների հերոսական մարտերի տեսարաններն է թերթում, որտեղ բուրում է ծիրանը բախտի նման, և շուրջդ լսվող բարբառը նռան համ ունի... Մարտակերտն այնտեղ է, որտեղ ավերված տների կոպերն են թարթվում և հատակին սփռված լուսանկարներում երջանիկ կյանքի պատրանքն է սավառնում...

- Երեկ, այս տարիների ընթացքում առաջին անգամ մեր տան մեջ մի կտոր հաց ենք կտրել,- իր հուզմունքը չի կարողանում թաքցնել մարտկոցի դասակի հրամանատար Կամո Բեգլարյանը (Կարո),- կուզենայի աշխարհն ինձ համար հարազատ լինի այնքան, ինչքան Մարտակերտի իմ այդ կիսավեր ու փոքրիկ տունը:

Այդ է իմ ունեցած-չունեցածը: Կարող եմ թողնել ու գնալ: Ինչպես թողնեմ ու հեռանամ իմ էության մյուս կեսից: Ինչպես հեռանամ հողի մեջ թաղված այն սուրբ աշխարհից, որ գերեզմանոց է կոչվում: Այնտեղ հանգչում են ծնողներս ու վաղամեռիկ երկու զավակներս: Սարսափում եմ, երբ մտածում եմ, որ նրանց հոգիները բարձրից հետևում են պատերազմի ընթացքին և իրենց կործանված կզգային, եթե իրենց գերեզմանները կոխկրտեն թուրքերը: Սա մեր կռիվն է: Աշխարհում ոչ ոք մեր ուսերի բեռը չի վերցնելու իր ուսերին՝ թեկուզ մի վայրկյան:

Երբ «Արքա» հրետանային մարտկոցի հրամանատար Ժորա Չարությունյանը վիրավորվել է «Պուշկեն յալի» բարձունքում, մի քանի շաբաթ է մնացել հիվանդանոցում: Անհամբեր էր: Եվ կարգին չապաքինված՝ վերադարձել է մարտադաշտ: Երբ հարցրել են, թե ինչո՞ւ մի կարգին չի բուժել ոտքը, ասել է. «Իսկ ո՞վ պիտի կռվի իմ փոխարեն»:

Մարտակերտն այնտեղ է, որտեղ սիրահարների միմյանց հաղորդած վերջին բառերն են մնացել կախված ջրհորդաններից, և գարունն իր կանաչ հրդեհով վարակում է ծառերին, հողին, անգամ լռակյաց նստարաններին, որտեղ սպասումը... մանկան խայտանք է, երգի արարում, օջախի ծխի գալարվող բաղձանք և... անհամություն:

Լավ է, որ պատերազմի երբեմնի առաջին գիծը արագորեն դառնում է թիկունք: Ազատագրված գյուղերը ոտքի են կանգնում՝ իրենցից թոթափելով թշնամու ներկայության վերջին ծվենները: Չայաստանից եկած շինարարների խումբը գյուղից գյուղ է անցնում՝ ավերված տներում հավատի լույս վառելով...

Ահա...թուրքն ու հայը երեք մետր հեռավորության վրա կանգնել են խրամատում, իրար դիմաց... Վաչիկ Ավագիմյանը, խիտ ու սարսափազդու մորուքով, իր և թուրքի միջև եղած տարածքը հայացքով չափեց... Թուրքը Վաչիկից բավականին բարձրահասակ

էր: Վաչիկի խոսքով ասած՝ աժդահա տիպ էր: Կրակելու հնարավորություն թուրքը ուներ, իսկ Վաչիկի ինքնաձիգը դրված էր ուսին, չէր հասցնի կրակել... Պահը ճակատագրական էր: Ակնթարթը ընկնում էր՝ ինչպես արյան կաթիլ: Սրտի զարկերը ծանրացան, ինչպես ջրաղացքարեր... Ո՞ւմ մեջ առաջինը կծնվի վախը: Վճռորոշ էր ամեն մի քայլը: Թուրքը... սպասում էր: Եվ... Վաչիկն արեց քայլը: Ինքնաձիգը բարձրացրեց և ամբողջ ուժով գոռալով, նետվեց առաջ, որպեսզի խփի: Թուրքին մնում էր ընդամենը մատով սեղմել... Հանկարծակի իրավիճակը փոխվեց: Թուրքի մեջ ինչ որ բան փշրվեց: Թուրքը տատանվեց, տատանվեց, երկար տատանվեց... Շրջվեց և փախչողի դյուրախոց մեջքով դիմավորեց մահը: Սա ոգու հաղթանակ է:

Մարտակերտն այնտեղ է, որտեղ սրերն են բախվում, որտեղ միոտանի զինվորների վրեժն է կարծրանում աճող սերունդների ուղեղի մեջ...

Ահա Սասուն Առաքելյանը: Մի քանի ժամով կտրվելով պատերազմական բախումների մառախուղից, մտնում է Դրմբոն գյուղի դպրոցը: Երեխաները մանկական «Աստվածաշունչը» ձեռքներին մտնում են դասարան:

- Սասուն եղբայրն է եկել,- լսվում է տարբեր կողմերից: Շշուկների միջով հոսում է մի ալիք, որ խարխափելով հավատի միջանցքում, բառերի դռներն է բախում: Չգիտենք ի՞նչ դուռը բացել, որպեսզի ներսից մահվան շունչ չփչի: Երեխաները աչքերն են թարթում պատերազմի ահից դուրս: Նրանց թիկունքում շնչում է մահը՝ ծպտված ու աննկատ: Հողը երազի կերպարանք ունի: Սասուն եղբոր շուրթերը շարժվում են... Երեխաները կարծրացած իրենց հավատի մեջ՝ աղոթում են.

- Հայր մեր, որ յերկինս ես...

- Արցախի բոլոր բնակիչները՝ երեխաներից սկսած մինչև ծերերը, ազատամարտիկներ են,- ասում է մարտկոցի ավագ Յուրի

Գաբրիելյանը,- խաղաղ բնակչություն չկա Արցախում, որովհետև չկա... խաղաղություն: Երեխան թշնամու հնքնաթիռից թափվող ռումբերից փրկվում է՝ թաքնվելով շենքի ներքնահարկում: Յետո դուրս գալով բակ, նայում է երկնքին ու ժպտում: Նա էլ այսպես է հաղթում թշնամուն:

Մարտակերտն այնտեղ է, որտեղ վերքերն են դանդաղ սպիանում, և ամեն մարտ ցավերի յուրատիպ բուժում է, այնտեղ է, որտեղ հասկանում են, որ մեր մի ձեռքը երբեք ծափ չի տալիս: Ջինվորն իր զենքով, բանաստեղծն իր երգով, հացթուխն իր հացով, դիվանագետն իր մտքով... Բոլորս միասին և միաժամանակ ենք հաղթում թշնամուն:

Երբ զոհվեց մեր սիրելի բուժքույր Կարինե Գևորգյանը և նրա կռվող ու մաքառող արյունը ներծծվեց Արցախի հողի մեջ, Աղավնի Սահակյանը չասաց, թե մենք ինչպիսի մարդ կամ մասնագետ ենք կորցրել, այլ ասաց. «Գիտե՞ք, թե մենք ինչպիսի զինվոր ենք կորցրել»:

Մարտակերտն այնտեղ է, որտեղ արյունն ու լույսն են համբուրվում, որտեղ սրերն են բախվում, և մինչ դիվանագետները կհանդիպեին կլոր սեղանի շուրջը՝ վճռելու պատերազմի և խաղաղության հարցը, խաչված սրերի վրա իր բույնն է հասցնում շինել... ծիծեռնակը:

10.05.1994թ.

## ՆՐԱ ԵՐԳԸ ՀԱՎԱՏԻ ՈՒ ՀՈՒՅՍԻ ՂՈՂԱՆՋ Է



*Վալերի Իշխանյան*

«Մենք կանգնած ենք մեր դիրքերում, մեր սահմաններն ենք հսկում», «Այն դժվարին օրերին ինչպես էինք դիմանում», «Ով չի եղել պատերազմում, նա դժվար թե մեզ հասկանա», - խրոխտ ու ջերմ ձայնով երգում է ազատամարտիկ Վալերի Իշխանյանը և հայացքով ընդգրկում երազների հեռուն: Կիթառի ձայնի ելևէջներով հյուսվում է հետզհետե մարտական ճանապարհի ոգեղեն հիշողությունը, որի մեջ ցավ կա և տառապանք, կա ոգու տարերք և տոկունություն, որով և հաղթահարվել են դժվարությունները:

Երգում է: Գուցե այս երգը ուղեկցել է Վ. Իշխանյանին իր անցած մարտական ճանապարհին, ոգևորել մարտընկերներին, հույս ու հավատ ներշնչել, զինել ոգու ուժով և կորովով: Բարձունքների նկարագիրն է տեսիլքի պես արտացոլվում երգի ակունքներում, որոնցից հորդող իրականության տարերքը կրկին միացնում է հեռուներում վարագուրված ճանապարհների շնչառությունը ժամանակի ելքին:

Իսկ ժամանակի ելքը ցույց է տալիս ոչ թե երգը, այլ մարտիկի զենքը, ուժը, ոգին: Նվիրյալների արյան գնով ազատագրված Արցախ աշխարհը մեր հաղթական ոգու նկարագիրն է: Ոգեպնդված են սերունդները արիության, քաջագործության բազում դասերով:

Մենք չչրջեցինք պատմության վերջին էջը: Մենք կերտեցինք նոր Սկիզբ, նոր իրականություն: Եվ ապրում ենք հաղթողի հոգեբանությամբ: Կյանքը ինքնահաղթահարման ասպարեզ է:

Արցախյան գոյապայքարի նվիրյալներից է Վալերի Իշխանյանը: Նա 15 տարեկան էր, երբ հոգու թելերով և երազներով կապվեց ու միաձուլվեց ընդվզող ազգի անբեկանելի երթին: «Ես ցանկացել եմ փրկել Չայրենիքը և կյանքս», - այս անկեղծ խոստովանության մեջ է բաբախում այն ճշմարտությունը, որը և նախանշեց աննկուն ու արի ազատամարտիկի ճանապարհը:

«Չաշմանդամների գերակարևոր հիմնահարցերը» հոդվածում («ԼՂ Չանրապետություն», 29 օգոստոսի, 1995թ.) Է.Բալայանը գրում է. «Վալերի Սեդրակի Իշխանյան, ծնված 1974թ., առաջին կարգի հաշմանդամ, վիրավորվել է գանգից: 15 տարեկանից (1988թ.) ակտիվորեն ներգրավվել է մեր շարժմանը (բնականաբար, մինչև այդ մասնակցել է բոլոր հանրահավաքներին): Չանձնարարություն ստանալով, նա մեկնել է Շոշ գյուղը՝ տնտեսության ֆերմաները պաշտպանելու ադրբեջանցիների հարձակումներից: Երբ Ավետարանոցում (Չանախչի) կազմակերպվեց ռազմաուսումնական կենտրոն, նրան ուղարկեցին, որ փորձ ձեռք բերի: 1990թ. Վալերին մտավ Մայիս Սարգսյանի խումբը, որը պահակակետ ուներ Աղդամ-Շուշի մայրուղու վրա: Չետո նրանց ուղարկեցին Ասկերանի շրջան՝ պաշտպանելու Նախիջևանիկը, Փրջամալը, Աղբուլաղը: Շուշին ազատագրելու ժամանակ նրանք հսկում էին ռազմաձակատի Նախիջևանիկ-Փրջամալ գիծը, որտեղ ադրբեջանցիները փորձում էին 20-25 տանկի միջոցով ձեղքել ռազմաձակատի գիծը, որը նրանց չհաջողվեց: Ավելին, մերոնք խփեցին ադրբեջանական բանակի 10 տանկ, իսկ 3-ն էլ վերցրին սարքին վիճակում»:

Սա ընդամենը փոքրիկ մի դրվագ է ազատամարտիկ Վալերի Իշխանյանի անցած մարտական փորձաշատ ճանապարհի հարուստ նկարագրից: 18 տարեկանում նա մտավ Մարտիկ Գասպարյանի գլխավորած վաշտը, որը պաշտպանում էր թիվ 80-81 պահակակետերը: Բառերով գուցե հեշտ է նկարագրել... Բայց իրականում դժվարությունների կծիկ էր րուպեն, որը հաղթահար-

վում էր զինվորականի ամուր կամքով, ոգու ուժով ու տոկունությամբ: Տագնապը, ցուրտը, թշնամու հարձակումները, առանց ջերմության դիմանալու խնդիրը... Այս ամենը հաղթահարում էր



Վալերին, ավելի ու ավելի ամրանում ոգով, դառնում հայրենիքի անձնուրաց ու աննկուն պաշտպանը: Մասնակցել է Քելբաջարի, Ղուբաթլուի կրակակետերի ոչնչացման մարտագործողություններին: Ղուբաթլուում ծանր մարտեր մղեցին, հաղթահարելով շրջափակման օղակը, ձեռքեցին՝ զոհերի գնով:

Զոհված ընկերների հիշատակը սրբությամբ է պահպանում Վալերին: Երբ կիթառը վերցնում և նվագում է, ասես ցավի լարերից ոգու ուժ է ստանում՝ կրկին ու կրկին մարմնավորելով ռազմաճակատի հերոսական տարերքը, որ որպես նոր շնչառություն, լցվում է կյանքի երակները, հիշողությունների ելևէջներով հարստացնում առօրյան:

Ահա Վալերիի ևս մի խոստովանությունը: Կռվել է, որ «քաղաքը տեսնի խաղաղ, երեխաներին հանգիստ բակերում խաղալիս: Հավատացած էի, որ իզուր չեմ կռվում, որ եթե մի բան պատահի, բախտի քմահաճույքին չեն թողնի: Եվ դա թե էր տալիս մեզ»:

«Վալերի Իշխանյանը Արցախյան գոյապայքարի նվիրյալ ազատամարտիկներից է,- ասում է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր Վլադիմիր Ավագյանը: - Աչքի էր ընկնում խի-

զախությամբ և համարձակ ձեռնարկումներով: Մարտական գործողությունների ժամանակ իրեն դրսևորել է՝ որպես համարձակ ու խիզախ մարտիկ»:

1993թ. Վ. Իշխանյանն իր զինակիցների հետ մարտնչում էր Մարտակերտի ազատագրման համար:

Մարտակերտի շրջանում 1994թ. ապրիլի 13-ին զոհվում են գումարտակի շտաբի պետ Ալեքսանդր Դանիելյանը և հետախուզության պետ Սիմոն Գասպարյանը: Նրանք հետմահու պարգևատրվել են «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի ջրանշանով:

1994թ. ապրիլին Վ. Իշխանյանը վիրավորվում է գլխից և տեղափոխվում հոսպիտալ:

«Երկու վիրահատություն կատարեցին,- գրում է Է.Բալայանը,- բայց պետք եղավ նաև երրորդը: Երևանից հրավիրեցին վիրաբույժ Կարո Էբոյանին: Վիրահատությունից հետո նրան տեղափոխեցին Երևան: Այստեղ կատարվեց չորրորդ վիրահատությունը: Երկրորդ վիրահատությունից հետո կաթված ստացան հիվանդի ձախ ձեռքն ու ոտքը: Չորրորդ միջամտությունից հետո աստիճանաբար սկսեցին վերականգնվել ձեռքերի և ոտքերի շարժումները: Բայց պահանջվեց հինգերորդ վիրահատությունը: Սկզբում ինքնազգացողությունը նորմալ էր, բայց հետո առողջական վիճակը բարդացավ և հարկ եղավ նորից մեկնել Երևան: Յիմա նա բժիշկների հսկողության տակ է գտնվում» («ԼՂ Յանրապետություն», 29 օգոստոսի, 1995թ.):

Տառապալից օրերը չեն ընկճում Վալերի Իշխանյանին՝ Արցախյան գոյապայքարի նվիրյալին: Որովհետև միշտ նրա հետ է երգը: Երգով նա բուժում է վերքերը: Ինչքան էլ պատերազմի ստվերը ծանրանա նրա հոգեաշխարհի թրթիռների վրա, ստիպելով լսել տառապանքի ու մրմուռի ձայնը, մեկ է, նա ոգու ուժով հաղթահարում է ամեն դժվարություն, լսում հոգում ամբարված երազների հեքիաթային նվազը: Եվ պատահական չէ, որ այսքան տառա-



պանքներից հետո նա իր մեջ ուժ ու համարձակություն գտավ՝ նորովի շարունակելով կյանքի ճանապարհը: Ամուսնանալով իր կյանքի ընկերուհու՝ Գայանեի հետ, ստեղծում է սիրո ու վստահության վրա հենված մի ընտանիք, որտեղ ծնունդ են առնում և երջանկություն պարգևում ծնողներին երեխաները՝ աղջիկը և տղան: Թվում է, թե վերջնականապես գտնված են երջանկության հասցեները: «Ինչքան էլ, որ մեր կյանքը զարդարենք խայտաբղետ զիզիբիզիներով,- գրում է Ն. Չայրումյանը («ԼՂ Չանրապետություն», 29 օգոստոսի, 1996թ.),- ինչքան էլ որ ջանանք գլխիվայր խրվել դժվարին խաղաղ կյանքի հորձանուտը, մեզ չի լքում այն զգացումը, որ ինչ-որ մեկը հետևում է մեզ: Այդ նա է՝ պատերազմը... Երբեմն շրջվում և տեսնում ենք նրա սարսափելի աչքերը՝ գերեզման գնացող ծեր մորը, կենսաթոշակի համար հերթ կանգնած, երեխան գրկին մատղաշ կնոջը, հաշմանդամի սայլակին գամված երիտասարդ տղային... Չաճախ ենք մտածում, թե նրանց կյանքն ինչ-որ ձևով թեթևացնելու համար արդյո՞ք ամեն բան ենք անում»:

Վալերի Իշխանյանը գիտի երջանկության գինը: Մաքառումների ճանապարհն անցած ազատամարտիկը չի երկնչում կյանքի դժվարությունների առաջ: Նա թեկուզ իր կիթառի ոգեշունչ երգով կարող է թևավորել առօրյա ժամերը, պահերը դարձնել երազահոնչ... Միայն մի բանի մասին է մտածում: Կարո՞ղ է ևս մի անգամ վիրահատվել: Եվ այդ վիրահատությունը կբարելավի՞ իր առողջական վիճակը, թե... Գուցե մի անգամ էլ համարձակվի... Ութերորդ անգամ: «Յոթ անգամ բացել են զլուխս: Չամեմատաբար լավ էի զգում: Մինչև որ այս նոր բնակարանում ընկա... և գլխով խփվեցի պատին: Այդ օրից սկսած՝ ուշագնաց եմ լինում հաճախ,- ցավով խոստովանում է Վ. Իշխանյանը,- ինչպես տեսնում եք՝ բնակարանը ենթակա է վերանորոգման: Ես իմ ուժերով որոշակի չափով կարգավորել եմ: Բայց իմ արածը ինչ պիտի լինի... Թեև սրանք մանրուքներ են... Գլխավորը իմ առողջության վերականգնումն է:

Այս անգամ ես չեմ համարձակվում ենթարկվել ևս մի... փորձության: Վերջերս ուղևորվելով Երևան, հնարավորություն ստացա հանդիպելու Մոսկվայից ժամանած բժիշկներին, որոնք նորից գննեցին ինձ... Դա իրականություն դարձավ հատկապես գեներալ-մայոր Վարդան Բալայանի միջամտության շնորհիվ, որին էլ ուզում եմ հայտնել իմ երախտագիտությունը: Միաժամանակ կուզենայի իմ շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնել Արցախի ազատամարտիկների միությանը՝ իմ նկատմամբ ցուցաբերած մշտական ուշադրության, հոգատարության համար: Ես ինքս ԱԱՄ անդամ եմ և հպարտ եմ դրանով»:

Վալերի Իշխանյանի մարտական ծառայությունները գնահատվել են ոչ միայն մարտական ընկերների կողմից: Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և անձնական արիության համար ԼՂՀ նախագահի 2005թ. թիվ 199 հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով: Պարգևատրվել է նաև ՀՀ «Մարտական ծառայություն», մարշալ Յ. Բաղրամյանի անվան մեդալներով: 2007թ. փետրվարի 23-ին Հայրենիքի պաշտպանի օրվա կապակցությամբ՝ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է Արցախի ազատամարտիկների միության պատվոգրով:

Վալերի Իշխանյանը՝ Արցախյան գոյապայքարի նվիրյալ ազատամարտիկը, այսօր էլ ոգով աննկուն է և համառ, կյանքի թրթռներին առնչվում է նաև... կիթառի նվագով: Երգով փորձում է կրկին քարտեզագրել իր անցած մարտական ճանապարհը: «Եթե նորից հարկ լինի՝ մենք կելնենք մարտի», - նրա երգը ելնում է ոգու խորքից և հասնում երկրի խրամատներին: Նրա երգը հավատի ու հույսի ղողանջ է այս «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» սահմանագծում:

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺԻ ՕՏԱՐԻ ԼՈՒԾԸ

### **- Ո՛վ է նա՝ հայրենիքի պաշտպանը:**

- Հայրենիքի պաշտպան հասկացությունն այսօր նոր իմաստ ու հնչեղություն ունի: Արցախյան գոյապայքարը նորովի բացահայտեց բոլոր այն բառերի և հասկացությունների (հայրենիք, տուն, օջախ, հավատ, պատիվ, մայրենի լեզու) խորքերը, որոնք, դուրս գալով իրենց հին կաղապարներից, դարձան ժամանակի և հայ մարդու բաբախուն ոգին: Բառը սոսկ բառ չէ: Բառի երակից հոսում է իրականության արյունը՝ դառնալով պայքար, խղճի ընդվզում: Եվ հայրենյաց պաշտպանն այսօր անձնվիրության ու հերոսության դասեր է քաղում ոչ միայն գրքերից, այլև կյանքից, Արցախյան գոյապայքարի փառավոր էջերից, Ազատամարտի մասնակիցների ոգու ավյունից: Մեծ ու անգնահատելի է նաև հայ կանանց դերը պատերազմական դժվարությունները հաղթահարելու, ազատամարտիկներին ոգեշնչելու և թևավորելու, մարտական գործողությունները հաղթանակով պսակելու գործում: Ազգովի զինվոր ենք և հայրենիքի պաշտպան:

### **- Ի՞նչ է նշանակում պաշտպանել հայրենիքը:**

- Պաշտպանել հայրենիքը՝ նախևառաջ նշանակում է պատրաստ լինել անձնագրհույսան: Պաշտպանել հայրենիքը՝ նշանակում է պաշտպանել արժանապատվությունդ, ամեն օր և ամեն ժամ պահպանել ու հաստատել ազգիդ դարավոր ինքնությունը, կորստի ճիրաններից փրկել հայ բազմադարյա մշակույթը, ստեղծել ժամանակի շնչառությամբ բաբախող և հավերժի հետ խոսող ստեղծագործություններ: Հինվորը, ուսուցիչը, բժիշկը, դիվանագետը, գրողը, լրագրողը, շինարարը իրենց աշխատանքով ամեն օր և ամեն ժամ պաշտպանում ու փրկում են հայրենիքը:

### **- Ոստիկց մեր հողը պաշտպանելու գործին զինվորագրվե-**

**ցիր կամավոր: Ի՞նչն է մղել այդ քայլին:**

- Երբ Ստեփանակերտի փողոցներում հայտնվեցին Մարտակերտի շրջանի բռնազավթված գյուղերի առաջին բնակիչները, խոր ցավ ապրեցի: Հասկացա, որ լինել-չլինելու սահմանագծի վրա է կանգնած յուրաքանչյուր հայ: Դա է հենց ինձ մղել, որ իմ ուժերի չափով զորավիգ լինեմ Գոյապայքարին: Մինչև այդ կրտսեր եղբայրս՝ Ռաֆայելը, որ 23 տարեկան էր, մասնակցում էր մարտագործողություններին: Երբ ծանր վիրավորվեց և ապաքինվում էր Ստեփանակերտի հոսպիտալում, խնամում էի նրան՝ ինքնըստինքյան հաղորդակցվելով վիրավոր մարտիկների ոգու կորովին, մահվան գիծն անցած ազատարարների վեհանձնությանը: Նրանց տնքոցի ու ցավի մեջ անգամ կար երջանկության փայլ, որ առնականության չափ գրավիչ էր: Հասկացա նաև, որ կամավորության շրջանում զենքով կռվողները ընտրյալներ են: Ես ձգտում էի իմ համեստ մասնակցությամբ միանալ ու ձուլվել Գոյապայքարի նվիրյալների ոգու ընթացքին: Գուցեև դառնալ այդ մարտական ընթացքի մեկնիչն ու պոետը: Փորձում էի լիովին ապրել հրետանավորի կյանքով: «Հրետանու ստվերը ձգվում է, ինչպես ապագայի միջանցք»: Արկերի սուլոցն ու պայթյունի ձայնը դարձել էին դարաբաղյան բնության երևութային համանվագը: Երկաթի հրաշքն ու զինտեխնիկան ռազմադաշտային նոր տեղաշարժերի հնարավորություն էին ստեղծում: Իր ոգևորիչ և հայրենանվեր գործունեությամբ բանակի հրետանու պետ Ժորա Գասպարյանը միավորեց հրետանային կազմավորումները և դարձրեց հուժկու մի ուժ, որի դեմ թշնամու թվաքանակի գերակշռությունը դարձավ անիմաստ, ռազմադաշտում ելք չորոշող մի բան:

**- Պոետ և՛ հրետանավոր: Ինչպե՞ս դարձար հրետանավոր: Քո դեպքում թնդանոթները, ուղղակի իմաստով, որոտում էին: Մուսաները լռում էին:**

- 1992թ. հուլիսի 20-ին Ստեփանակերտում, բարեկամիս՝ Յուրի

Գաբրիելյանի տանը ծանոթացա պատերազմին մասնակցող հրետանավորների հետ, որոնք երկամսյա ծառայությունից հետո պիտի վերադառնային տուն: Նրանք իրենց փոխարինող զինվորներ էին փնտրում: Ես ցանկություն հայտնեցի ծառայել այդ հրետանային մարտկոցում: Առավոտյան նրանց հետ մեկնեցի Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղ, որտեղ տեղադրված էին թնդանոթները: Տղաներից մեկն իր ինքնաձիգը հանձնեց ինձ՝ հավատացած, որ իր տեղը դատարկ չի մնում, զինվոր կա կանգնած: Արտեզրին տեղադրված 3 թնդանոթներից ամեն օր արձակում էինք 100-200 արկ: Իսկ վերևից սպառնում էին թշնամական ինքնաթիռները, որոնց նետած ռումբերը, բարեբախտաբար, պայթում էին մոտակա ձորերում, դիրքերից հեռու: Այդ օրերին մեր զինված ուժերին հաջողվեց ոչնչացնել թշնամական 2 ինքնաթիռ, ինչը մեծ ոգևորություն հաղորդեց ազատամարտիկներին: Հաջորդ դիրքը, որտեղ տեղադրվեցին մեր թնդանոթները, Կիչանի բարձունքն էր: Դա թշնամու կողմից մեզ պարտադրված դիրք էր: Այստեղ բլինդաժներ ունեինք, որոնք դեռևս բաց էին, «չտանհիքավորված»: Թշնամու դիպուկ հրետակոծությունից մի քանի ժամ առաջ, առավոտյան հրամանատարը՝ Գառնիկ Իսրայելյանը (Պրոֆեսոր), պահանջեց տախտակով և հողային ծածկույթով տանիքավորել բլինդաժները: Դեռ նոր էինք ավարտել հանձնարարությունը, երբ հրետակոծվեց մեր մարտական դիրքը: Հրետանու անձնակազմը պատսպարվեց ներքևի բլրի հետևում, իսկ դիրքում մնաց մեր հրետանային հաշվարկը, որը բաղկացած էր 7 հոգուց: Թշնամին թիրախ էր դարձրել միայն մեր գործող թնդանոթը, որից արձակած արկերով փորձում էինք կասեցնել ագերիների առաջխաղացումը: Մեր արձակած ամեն արկից հետո ստիպված էինք պաշտպանվել բլինդաժում: Եվս մի արկ՝ անհրաժեշտ կոորդինատներով: Մինչև որ... թշնամական երկու արկ կիսով չափ ավերեցին մեր բլինդաժը, որն իր հողածածկույթով փրկեց 7 զինվորի կյանք: Տարիներ

անց, հանդիպելով Գառնիկ Իսրայելյանին, հարցրի. «Պրոֆեսոր, ինչպե՞ս զգացիք վտանգը: Դեռ նոր էինք հողածածկույթով ամրապնդել մեր բլինդաժները, երբ ընկերներ հետո դրանք մեզ կյանքի չափ պետք եկան»: «Արտակարգ ոչինչ չկար,- պատասխանեց: - Երբ թշնամին առաջ է շարժվում, դառնում ես խոցելի, և անհրաժեշտ է լինում ամրապնդել պաշտպանական դիրքերը»:

Մարտակերտի հրետանու հրամանատարական կազմում ընդգրկված էին տաղանդավոր անհատականություններ՝ Գառնիկ Իսրայելյան, Վլադիկ Խաչատրյան, Գարիկ Չարությունյան, Սանասար Գյուրջյան, Արթուր Մնացականյան, Կարեն Գրիգորյան, Կարեն Մնացականյան... Պատերազմական կյանքի մասին առաջին ակնարկը («Անիվների վրա») գրեցի Օմարում, որը տպագրվեց «Չայ զինվոր» թերթում՝ արժանանալով թերթի հատուկ մրցանակին: Իսկ առաջին բանաստեղծությունը («Ոստիսն հետ քաշվեց») նվիրեցի հրետանու հետախուզության պետ Կարեն Մնացականյանի հիշատակին:

**- Ի՞նչ է սովորեցրել քեզ պատերազմը:**

- Պատերազմը չարիք է, որովհետև կործանում է մարդկային կյանքեր, փլուզում մարդկային երազանքներ: Բայց այս պատերազմը, որ հայոց պատմության մեջ կմնա որպես հայրենական, մղված ազերի զավթիչների դեմ, մեր հերոսական ոգու արտահայտությունն է, խղճի ընդվզումը, արժանապատվության և ինքնության հաստատումը: «Ես կսիրեմ մեր պատերազմները», - ասում էր մեծագույն մարդասեր Վիլյամ Սարոյանը: Եվ նրա խոսքը բխել է հայոց ոգու պատմությունից, գոյատևման ելքից, հիշողության առանցքից:

Այս պատերազմի դասերը, բացառիկ լինելով կարևորվում են նաև ազգային ոգու և դիմագծի վերաարժևորման հնարավորություններով:

**- Գրչնկերներդ, որոնք վառողի հոտ չեն զգացել, չեն ան-**

**ցել պատերազմական թռիչքով, ինչ-որ բան են կորցրել:**

- «Նույն արժիճից են ձուլում, իմացիր, գնդակն ու տառը», - Գևորգ Էմինի այս թևավոր խոսքն այսօր էլ շատ հարցերի պատասխաններ է տալիս: Կյանքը վտանգում էր ոչ միայն զինվորը, այլև ազգային գործիչը: Վառողի հոտ զգացել է ողջ ժողովուրդը, քանի որ Երկրի ամբողջ տարածքը մարտադաշտի էր վերածվել: Վտանգը համատարած էր: Զոհված խաղաղ բնակիչը նույնպես պայքարող ոգի էր: Նա իր համառությունն ու գոյատևման պայքարն էր արձանագրում՝ մահվան վախը հաղթահարելով: Պատերազմի ժամանակ տուն կառուցող, հող մշակող, երեխաներ դաստիարակող մարդիկ հույսի և հավատի մեծ էներգիա էին հաղորդում յուրայիններին: Իսկ թշնամուն հունից հանում էր նաև մեր համառ գոյատևությունը: Քարին տակ գյուղի պաշարման ժամանակ հետաքրքիր մի փաստ է արձանագրվել. «Թշնամու դիպուկահարը ջղային համառությամբ անընդհատ կրակել-խոցոտել է մանկան հագուստները, որ կախված էին լվացքի պարանից»:

**- Երկիրը ծիջտ է վարվում՝ ներելով ու տեղ տալով նրանց, ովքեր վտանգի պահին, մեղմ ասեմ, հեռացել են ռուսաստաններ:**

- Չինվորը ազատություն ու արդարություն է նվաճել բոլոր հայերի համար: Սրան մեջ է հենց ազատարար հայի վեհանձնությունը: Մյուս կողմից՝ պիտի սերն ավելացնել ազգի հոգում և ոչ թե՛ ատելությունը:

- Եթե ներում ենք, գոնե այնպես անենք, որ նմանները հայրենիքը պաշտպանածների ու պաշտպանողների հանդեպ պարտքի զգացում ունենան և ոչ թե, պաշտոն ու դիրք զբաղեցնելով, վերևից նայեն նրանց:

- Հայրենիքը պաշտպանածների ու պաշտպանողների հանդեպ պարտքի զգացում պիտի ունենան բոլորը: Մամուլի մի ասուլիսի ժամանակ ԼՂՀ պաշտպանության նախարար Մովսես Հակոբյա-

նր նշել է, որ բանակում բարձր պաշտոններ չեն կարող զբաղեցնել նրանք, ովքեր չեն մասնակցել պատերազմին: Սա ճիշտ դիրքորոշում է: Այս պահանջի արդարացիությունը բխում է բանակի և ժողովրդի շահերից: Սակայն այս մոտեցումը, ըստ իս, կիրառելի չէ կրթության, գիտության, մշակույթի և այլ բնագավառներում: Չպետք է բաժանող պատնեշներ դնել մարդկանց միջև: Մարդուն պետք է տալ ինքնադրսևորման ազատություն և հնարավորություն:

**- Ռոբերտ, Ստեփանակերտում էիր բնակվում: Հրադադարից հետո ընտանիքով տեղափոխվեցիր Շուշի: Բնակարանային խնդիր լուծեցիր, թե՛ խորհրդանշական ինչ-որ բան կար դրանում:**

- Ապրել Շուշիում՝ նախևառաջ նշանակում է ձեռք բերել բարձունքային մտածողություն: Չէ որ լինում է նաև հարթավայրային մտածողություն: Շուշիում ապրողները երկնքին ավելի մոտ են: Եվ պատահական չէ, որ եկեղեցիները կառուցում են բարձունքներում: Բոլոր կողմերից երևացող տեսադաշտում: Ես զգացել եմ, որ Շուշին երկրային և երկնային հաղորդակցության առանցքն է: Մշակութային երբեմնի կենտրոնն այսօր էլ չի կորցրել տիեզերական հաղորդակցության կայան լինելու առաքելությունը: Եվ պատահական չէ, որ խմբավար, Շուշիի պատվավոր քաղաքացի Զաքար Քեչիշյանն ասում է. «Բնակվում եմ Բեյրութում, ապրում՝ Շուշիում»: Համոզվել եմ, որ Շուշիում երփներանգվում է մարդու մտածողությունը, դառնում՝ բազմաշերտ: Այստեղ քարերն անգամ ներշնչանքի աղբյուր են: Այն ստեղծագործությունները, որ ես գրել եմ, ներշնչվելով բարձունքային բնապատկերների անակնկալ կրակից, զուտ շուշիահարույց զգացողության ծնունդներ են:

Բերեմ օրինակներ.



*Փրկեցինք խիղճը մարդկության,  
փրկեցինք անունը հերոսիդ,  
և Շուշին, որ քաղաք չէ ու արծան,  
փրկված հայացքն է Մասիսի:*

*(«Նեյտոն Ստեփանյանին»)*

Կամ այս մեկը.

*Ժայռեղեն կամքի կապույտ ծերպերին  
Բոցկլտում են դեռ ոգու խարույկներ,  
Յրեշտակները իրենց թևերին  
Բերում են երկնի լուսե մակույկներ:*

**- «Յայրենյաց պաշտպան» ամսաթերթում, Արցախի ազատամարտիկների միության գործունեության լուսաբանումից զատ, ուրիշ ինչ թեմաներ են արծածվում:**

- Բազմազան, սակայն ամեն թեմա անցնում է հայրենյաց պաշտպանի ոգու և շնչառության միջով: «Յայրենյաց պաշտպան»-ը նախևառաջ, ինչպես ասացիր, արտացոլում է Արցախի ազատամարտիկների միության գործունեությունը: Յաճախակի են տպագրվում ակնարկներ՝ նվիրված զոհված և անհայտ կորած ազատամարտիկներին: Ծավալուն տեղ ենք հատկացնում Արցախյան գոյապայքարի, ազատամարտի և նվիրյալ զինվորականների մասին նյութերին: Ունենք քաղաքական էջ: Թերթում հանդես են գալիս նաև արվեստագետներ՝ գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, երգահաններ: «Յիշողության դաշտ» խորագրի ներքո ներկայացնում ենք նյութեր՝ նվիրված գիտության բնագավառում և ռազմաշխարհում նշանակալի դերակատարություն ունեցած հայազգի երևելի դեմքերին:

**- Որպես ազատամարտիկ ինչ գնահատական կտայիր Արցախի ազատամարտիկների միության աշխատանքին:**

- Միությունը արցախյան պատերազմի մասնակիցներին միավորող ուժ է, որը ծառայում է մեր պետականության ամրապնդ-

մանն ու հզորացմանը: Միաժամանակ պաշտպանում է ազատամարտիկների սոցիալական և իրավական շահերը: Նա այն բացառիկ արժեքների կրողն է, որ ձեռք են բերվել համառ մարտերում, նվիրյալների արյան գնով: Այսօրվա զինվորն ու երեկվա պատերազմի մասնակիցը ոգու կորովով ու կյանքի փորձով են ամրագրում ազգային արժեքներով ապրելու ազատությունը:

Միության աշխատակիցները ԱԱՄ նախագահ, գեներալ-մայոր Սամվել Կարապետյանի գլխավորությամբ ծավալում են ազգօգուտ և հայրենանվեր գործունեություն:

**- Ի՞նչ ես կարծում, իրենց պապերին ու հայրերին արժանի սերունդ է մեծանում:**

- Ամեն սերունդ ունի ինքնակայացման իր ժամանակը, ինքնադրսևորման հնարավորությունն ու պատմական շանսը: Համոզված եմ, որ երիտասարդ սերունդը պապերին ու հայրերին արժանի կլինի: Արցախի ազատամարտիկների միության «Հայրենյաց պաշտպան» երիտասարդական կազմակերպությունն իր շարքերում ընդգրկում է երիտասարդների, որոնք հենց շարունակում են պատերազմին մասնակից սերնդի ավանդները: Հայրենյաց պաշտպանները, մշտապես շփվելով զենքի, խրամատի, առաջին գծի զինվորների հետ, իրենց գործունեությամբ ստեղծում են հայրենապաշտության առողջ ու բաբախուն մթնոլորտ:

Ազատության սերունդը երբեք չի հանդուրժի օտարի լուծը:

**- Պատերազմը, ազգային-ազատագրական պայքարը արտացոլված են քո պոեզիայում: Թեման սպառված ես համարում, թե՞ դա այն նյութն է, որը շարունակ սնելու է քեզ:**

- Պատերազմական թեման շոշափելով՝ ես փորձում եմ բացահայտել իրականության հոգեպատկերը: Եվ քանի պատերազմն ապրում է ցավի մեջ, ներշնչումների դռներ է բացելու: Բանաստեղծը նյութի կեղևից գնում է դեպի նրա անակնկալ խորքերը: Արցախյան պատերազմն ունի իր յուրահատկությունները, որոնք պիտի

անպայման կերպավորվեն տողերի էկրանին: Հոգեբանական պատկերով բացահայտվում է ոչ միայն պոեզիայի ոգին, այլև ժամանակի դիմագիծը: Իմ ապրած ամեն մի օրը ներշնչանքի մի դուռ է բացում: 1993 թվականին ես պատերազմը այսպես եմ տեսել. «Ոստիսն հետ քաշվեց: Ճանապարհն ասես // օձի շապիկ է գետափին ընկած: // Հողի արցունքն է մրգի պես հասել: // Շուրթերիս Աստծո պատկերն է խոցված»: Իսկ 1994 թվականին տեսա այլ պատկեր. «Հրետանու զարկերով կարելի է ծակել պատմության կեղևը, որից պիտի դուրս մղվեն կեղծիքն ու սուտը»: 2010 թվականին «Սահմանագծերի ձմեռ» տեսա «ազատության խաչմերուկում». սա է մեր ժամանակի «Քաղաքական եղանակը»:

Թեման չի սպառվում: Կարևորն այն է, թե պատկերավոր խոսքի ջերմությունն ու լույսն ինչ ներշնչումներ են հաղորդելու իրականության ոգուն: Ընթերցողն ինչ է ստանում՝ կարդալով քո բանաստեղծական բացահայտումները: Նրա ներաշխարհը հարստանում է՝ ընդունելով տեսիլային լույսը:

**Հարցազրույցը՝  
Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**

## ՆԱՄԱԿԱՆԻ

### ՍԵՎԱԴԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Բարև, սիրելի Սևադա:

Հողը լցված է կարմիր բռունցքներով, որոնք մերթ ընդ մերթ բախվում են իրար և արթնացնում մեզ... ցավի մեջ:

Հիշում ես, երբ եկար մեզ մոտ, խաղաղ էր օրը, անհանգստությունն ու տագնապը միայն արտաքին կեղև էին: Ներսում մենք էինք: Մեր բառերը մեղուներ էին, որ մեր դեմքերից ու շուրթերից տաքուկ հայացքներ էին հավաքում: Կատակներից ընդարձակվում էր օրը: Օդը հալվում էր տերևի շուկներից և հոսում ամռան այտերն ի վար: Դու քայլում էիր խոտերի միջով՝ արթնացնելով մեր մեջ վաղուց մոռացված մի զգացողություն՝ քնքշությունը... Քո սև ֆիլտրով ծխախոտը տպավորիչ էր, ինչպես շոյոլ կնոջ ներկած եղունգները: Այս զգացումը կարող է ծնվել միայն մարտադաշտում, ցավի պես արթուն մեր լեռնաշխարհում, որտեղ ով լինում է մի անգամ, հավերժ մնում է տպված խոտերի մեջ, տերևների վրա: Դա մի նկար է՝ պոկված հավերժի բիբերից:

Դու տեսար մեր ապաստարանները: Փորված, բայց դեռևս հողով չծածկված: Դրանք դազաղներ կդառնային, եթե ժամանակին չծածկեինք հողով: Օրեր հետո, 92-ի օգոստոսի 27-ին կրակե հեղեղ անցավ այն նույն դաշտով, ուր դու շրջում էիր, և բնությունն իր բազմազանությամբ ներծծվում էր քո մեջ: Փառք Աստծո, որ այդ օրը դու մեզ հետ չէիր: Առավոտը բացվեց: Հրամանատարը՝ Գառնիկ Իսրայելյանը, պահանջեց, որ անմիջապես հողի հաստ շերտով տանիքավորենք ապաստարանները: Գործն ավարտել էինք արդեն, երբ թշնամին մեզ համար կրակե «նվերներ» ուղարկեց: Թշնամու հրանոթի ձայնը, որ գալիս էր հեռվից, անմիջապես որսում էինք և ժամանակին տեղավորվում ապաստարանում: Ներ-

սում այնքան էինք սպասում, մինչև արկի սուլոցն անցնում էր մեր գլխավերևով՝ ճակատագրի պես... Հետո կրակահերթերն այնքան արագացան, որ չկարողացանք դուրս գալ... Արկերից մեկը դիպավ ուղիղ ապաստարանին: Հողը պահպանեց մեզ: Հետո մի ուրիշ արկ կպավ հողածածկույթի թևին, որտեղ հողի շերտը համեմատաբար բարակ էր, փշրեց մի քանի տախտակ, և ներսում կուտակվեց ծուխը: Ես հանգիստ էի և հետևում էի, թե ամեն մեկն իրեն ինչպես էր «դրսևորում»: Մի արկ ավերեց ճաշարանը, վրանը, հետո հրդեհ բռնկվեց:

- Տղերք, չվախենանք,- ասաց մեզնից ամենակրտսերը՝ Գարիկը: Նրա բիբերը լայնացած էին: Ես հասկացա, որ նա այդ բառերով ոչ թե մեզ, այլ ինքն իրեն է հանգստացնում: Հանկարծ մեկը նկատեց, որ վառվում են մեր զինամթերքի արկղերը, որոնք մեզնից ընդամենը երեք մետր հեռավորության վրա էին: Դա խիստ անհանգստացրեց բոլորին: Եթե արկղերը միանգամից պայթեն, ոչ մի ապաստարան մեզ չի փրկի: Անմիջապես դուրս գալով թաքստոցից, անտառի մոտերքով շարժվեցինք դեպի բլուրը, որի ետևում սպասում էին մեր մարտկոցի տղաները:

- Աստված ձեզ փրկեց,- ասաց հրամանատարը:

Սևադա, սա կատարվեց այն նույն դաշտում, որտեղ դու շրջում էիր, որտեղ այնքան հանգիստ էր, և հանգստությունն ուղղակի ծաղկում էր ափիդ մեջ, ողկույզի պես քամվում շուրթերիդ վրա:

Հիմա արդեն ցուրտ է: Տեռորիստ մոծակներին փոխարինել է ոստիկան խոնավությունը: Ես դեռ բանաստեղծություն չեմ գրում: Մի գիրք ունեմ, որ կուզենայի տպագրել: Ես այն գրել եմ, երբ Ստեփանակերտում իշխում էր Խորհրդային բանակը՝ իր թուրքամետ գործողություններով: Պարետային ժամ էր սահմանված քաղաքում: Ամեն անգամ նայելով պատշգամբից՝ ճնշված էի զգում ինձ, արհամարված ու ստորացված: Նայում էի ու նախանձում դրսի գոյություններին՝ ծառերին, մայթերին, և հատկապես... կատուններին...

Իմ հայացքի կծիկն են գլորում  
Երկու կատու...

Օրերս շարունակում են ձգվել զենքի փողի միջով, որ մի յուրա-  
տիպ ապաստարան է դարձել...

Այս նամակը մի նկար է՝ պոկված Արցախի ոգուց: Ծածկվիր  
նրա կապույտով և հիշիր ինձ: Հիշիր մեր մարտկոցի տղաներին,  
նաև այն տղային, որ ձայնագրության ժամանակ կատակեց. «Այն-  
քան լավ եմ զգում այստեղ, որ չեմ էլ հիշում... անունս»: Այդ տղան  
զոհվել է: Դերենիկը:

... Հողը ծածկված է կարմիր բռունցքներով, որոնց ահռելի բա-  
խումից ծնվելու է ... բանաստեղծությունը...

*Ռոբերտ Եսայան*

*05.11.1992թ.*

*գ. Խաչեն*



*Կամո Բեգլարյանի ընտանիքը աղոթքի պահին:*

## ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ

Բարև, սիրելի Վրեժ...

Օրերի հայացքի վրա հույսի ծվեններ են մաղվում: Քամին մերթ հավաքում է այդ ծվենները իր բռան մեջ, որպեսզի Անհունից լսի մեր սրտի տրոփյունը, մերթ էլ գլորում է Մարտակերտի ամայի փողոցներով՝ հրապուրելով անցյալի հովիտներից նայող մանկության բազմատեսք խաղալիքներին: Ո՞վ էր կիսատ թողել մայթի ականջները խուտուտ տվող այս հարազատ խաղը: Ո՞ւմ հայացքն էր հսկում այս տիկնիկով խաղացող երեխայի... երջանկությունը: Մինչև հիմա... այդ հայացքն է մնացել օդում կախված, որպես սպի: Վայրկյանի սրտից արյուն է կաթում: Տիկնիկի աղաղակը խղճի շիրմաքարն է, որ ամայի փողոցներում գլորում է քամին... Զըրընգ, զըրընգ, զըրընգ,- արձագանքում է դատարկ աշխարհը...

Մարտակերտի այս նորաստեղծ թաղամասում բնակվում էին Սումգայիթից և Բաքվից գաղթած հայերը: Տների անտերության մեջ դեռ տրոփում է վախը: Պատուհանները կույրի պես խարխափում են, հանձնվելով ընդհանուր քայքայմանը: Որտե՞ր են հիմա լվացվում նրանց՝ Չայաստանով լցված աչքերը, նրանց «բարի լույսի» մեջ ուրվագծվում է Մասիսը իր վեհափառ տեսքով, թե... նրանց անեծքի հովիտներում շիրմաքար են դարձել հայոց բառերը, որոնց կողքով... սարսափահար անցնում են մեր հայրենակիցները՝ քաշելով երեխայի ձեռքից, սրբելով ճակատից հուշի քրտինքը:

- Ես մեր աղբրի սառը ջրից եմ ուզում...

Ազատագրված է Մարտակերտը: Ազատագրված են գաղթած հայերի հավատը, հույսը, ուրախությունն ու տխրությունը: Ազատագրված է սակայն նրանց... վերադարձը...

Տներից մեկը դարձրել ենք զորանոց: Վրեժ, մեր թնդանոթները անշարժացել են սպասման մեջ, տարօրինակ տեսք ընդունել,

ասես ոչ մի կապ չունեն ո՛չ այս պատերազմի հետ, ո՛չ էլ մեր ձեռքի շարժումից որոտացել են երբևէ: Խաղաղությունը շնչում է ինքն իրեն: Կլանում է մեզ հեռվից ու մեր... խորքից նաև: Սակայն անորոշության երանգներ կան դեռևս նրա մեջ, Վրեժ: Մենք կրակի ու ցավի այս երկար ճանապարհը նրա համար չենք անցել, որ այսօր ինքներս մեզ խաբենք, լցվենք խաղաղության պատրանքով և ուռչենք երեխայի ձեռքի փուչիկի պես: Մենք այս երկար ճանապարհն անցել ենք, որպեսզի մեր արյան պատմական խորքերից բարձրացնենք մեր փրկությունը, դարձնելով այն երջանկության համատարած երկինք: Որպեսզի Չավերժությունը մեզնով մի քայլ անի...  
Վրեժ...

Բառերի տիեզերքում իմ հայացքը պտտվող մի մոլորակ է, որ խարխափում է հիմա պատերազմի ծխից ու վառողի առատությունից: Անորոշության մառախուղն է բարձրանում ներքևից, իսկ վերևից Աստծո հայացքն է կշռում իմ ճակատագիրը, ասելով՝ ապրիր...

Ապրիր, Վրեժ, պատերազմից և արհավիրքից դուրս, ապրիր ուրախությունից և տխրությունից դուրս, բառերից և ձայներից դուրս... Կարո՞ղ ես... Ե՛ս էլ չեմ կարող: Որովհետև խրված ենք հողի երազանքի մեջ...

Տո՛ւր ձեռքդ...

Չեմվճում... Մասիսի ձյունե թևերի տակ նոր թռչյունների ուրվագծերն են տաքանում... Շարժվում է Չավերժությունը...

*Ռոբերտ Եսայան*

*28.06.1994թ.*

*ք. Մարտակերտ*





## ՀՐԵՇՏԱԿ

*Տարածքը դեռևս հայրենիք չէ:  
Տարածքը հայրենիք է, երբ շուրջդ հնչում է  
հայոց արքայական լեզուն,  
և ազատագրված հողից հառնում է խաչքարը:*

## ԿՐԿԻՆ՝ ՅՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԵՐԻ ՎՐԱ...

Հետաքրքիր երևույթ է Ռոբերտ Եսայանի պոեզիան: Եվ անկրկնելի է ինքը՝ Ռոբերտը, որպես մարդ, անհատականություն: Արցախյան համազգային շարժման ու գոյամարտի մասին նրա քերթվածքները կարդալուց հետո միշտ գալիս են այն մտքին, որ պատերազմական թեմայով գրվող ցանկացած բառ թե ամբողջական երկ պետք է անցած լինի խրամատով, այլապես... պահը միջնորդվածավորություն է ստանում: Սա է ինձ մշտապես հուշում իմ կրտսեր գրչակից Ռոբերտը, որին երբևէ չեմ տեսել որևէ հավաքում կամ ժողովում, այլուր ելույթ ունենալիս, կուրծք ծեծելիս, նա կոնկրետ գործի ու ձեռնարկումի մարդ է. այդպիսի լուրջամբ էլ, առաջիններից մեկը, կամավոր գեներ է առել ու մեկնել ռազմաճակատ՝ ծոցում «թաքցրած» գրիչն ու ծոցատետրը: Հինավուրց հայկական հողն ազատեց՝ որպես հրետանու զինվոր, իսկ հոգևոր աշխարհում «տարածքներ գրավեց» իր բանաստեղծությամբ: Ասել է թե՛ Աստծո դրած նշան ունի ճակատին:

Շուշին ազատեցին Անդրանիկի ու Գարեգին Նժդեհի մերօրյա զինակիցները, դրա մեջ տեսնելով մեծագույն երանությունն այն, որը երագում էր անգամ մեր քերթության Վարպետը՝ Ավետիք Բահակյանը. «Ախ, որքան, որքան կուզեի լինել զինվոր հասարակ, կռվելի, անդու... Անիի հզոր պարիսպների տակ...»

Հայ զինվորը մեր կորուսյալ ու սուրբ աշխարհը վերադարձնելու անդրանիկ քայլն արեց Շուշիում: Շուշին դարձավ այն առաջինը, որի բաց ճամփեքով պիտի գան նաև Վանը, Ղարսը, Արդահանը... Դարասկզբի եղեռնական օրերից ցավն ու անտանելի կսկիծն իր մեջ ամփոփած վրիժակ է Ռոբերտը, չարենցյան խիզախումի ժառանգորդ: Շուշին ազատելուց հետո էլ իր բազմամանչ ընտանիքով նա բնակություն հաստատեց այդ բերդաքաղաքում, որը, դեռևս անցյալ դարի սկզբին, մեր մշակույթի ու դպրության անուղղակի կենտրոններից մեկն էր՝ սրբագործված Մուրաջանի, Աճառյանի, Աղայանի, Լեռնի և ուրիշ բազում նվիրական անուններով... Իսկ շուշեցի հասարակ ուսուցիչ Ավետիք Բահաթրյանի ձեռագիր գրքին Չարենցի տված գնահատականն ուղղակի սիրտ է լցնում, գիրք (արձանագրենք հպարտությամբ), որ ծնվել է Շուշիում... Շուշիում այսօր ապրող ու ստեղծագործող զինվորին տեսնելով, մտածում եմ, որ վերոհիշ-

յալ հանճարեղությունն ու զարմանալիությունը հայոց արցախյան հողինն է... Ռոբերտը դարձավ Շուշիի գրական կազմակերպության հիմնադիր-ղեկավարն ու իր վերագտած քաղաքի դպիրն առաջին՝ ընկերների հետ: Միայն ուրախսանալ կարելի է, թե ինչպես է աշխարհագրագետ Յակուտ ալ Համավու կամ Ստրաբոնի, Կաղանկատվացու և ուրիշ մեծանուն պատմիչների լեզվով անցած Արևելից աշխարհի պատմության հավերժական ընթացքի մեջ Ռոբերտը հելուզում իր պոետական անկեղծ ակունքներից բխող խոսքը... Եվ դա անում է իր բանաստեղծությունից եկող ոսկերչական այնպիսի նրբանկատությամբ, որ կրկին ու վերստին համոզվում ես, թե որքան ոսկեղենիկ է, «ճկուն ու բարբարոս» մեր լեզուն: Աշխարհվերով վերուստ տրված առաքելության մեջ՝ բանաստեղծը խտացնում է իր կերպարում ոչ միայն պատմություն կերտող զինվորի ու մտավորականի, արվեստագետի, այլ նաև պատմիչի նկարագիրը: Նրա առհավատչյան է ընթերցողին ներկայացվող այս գրքույկը («Հրեշտակը»), որում հեղինակը հանգամանորեն անդրադառնում է Շուշիի ինչպես կրթամշակութային, պատմական, ճարտարապետական, երաժշտական, այնպես էլ բոլոր այն խնդիրներին, որոնցով ապրում է մոխիրներից փյունիկվող բերդաքաղաքը: Հիշարժան է, անշուշտ, մեր ազատամարտի հերոսներից մեկի՝ Շուշիի ազատագրման գործում իր արյունը չխնայած շրջանի վարչակազմի ղեկավար Վլադիմիր Կասյանի աջակցությունը: Կարգն այսպես է բերդաքաղաքի. յուրաքանչյուր Շուշեցի ամենից առաջ զինվորյալ է՝ մարտիկ-քաղաքապետ, մարտիկ-բժիշկ, մարտիկ-շինարար, մարտիկ-բանաստեղծ, մարտիկ-հացթուխ, մարտիկ-խմբագիր, մարտիկ-հավաքարար... Հայի ճակատագիր է, օրվա պահանջ: Անգամ երկրի պրեզիդենտն է նախ մարտիկ...

Ասում են, երբ հայոց մեծերը խորհրդային տարիներին այցելում էին Շուշի, տեսնելով անցյալ դարի քսանական թվականներին թուրքերի կողմից ավերված ու դեռևս ծխաթակ, անտանիք պատերը, հառաչում էին, նշելով, որ այդ «ողբերգությունը մեր պատմության ամոթն է»: Այսօր Շուշիի դեմքից ջնջվում է մեր «պատմության ամոթը», հառնում է մեր հաղթության վկա Շուշին... Եվ այդ ամենը չի կարող չզգալ ու խորապես չվերապրել իր ժողովրդի զինվորյալ բանաստեղծ Ռոբերտը, բոլորանվեր Հայր, երբ ամեն անգամ Շուշիում, արյամբ նվաճած իրավունքով, ոտք է դնում մեր ազգային երևելիների սուրբ ոտնաստեղերին...

## ՇՈՒՇԻ

*ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆԻՆ*

Սարերն ի վեր, սարերն ի վեր, ի վեր  
 հասնում եմ երկինք,  
 ու մտնում Շուշի:  
 Գմբեթների շարասյուն է ճամփաներին,  
 խաչքարերի մի երամ արդեն  
 երկնքի տարածքում է:  
 Երբ այստեղ ես՝ եղիր այստեղ: Բառը՝ կամարներից  
 ներս, զանգ է հզոր,  
 դողանջը գալիս է գալիքից:  
 Ջոհասեղանին մի կտոր քար է դրված,  
 երկնային մանանա՝  
 համով ուտվում է:  
 Կրակը հուշերի մեջ ավելի կրակ է,  
 իսկ քարերը ծաղկի  
 կենսագրություն են:  
 Պարսպի պատի մեջ Բեկորը կանգնել է  
 կենդանի, որ Շուշին  
 այլևս մնա անառիկ:  
 Սարերն ի վեր, սարերն ի վեր, ի վեր  
 հասնում եմ երկինք,  
 բաց է դուռն Աստծո:

Ես ողջունում եմ գրքի ծնունդը և մաղթում եմ, որ մայր Չայաստա-  
 նում ու Չայոց Արևելից աշխարհ Արցախում ռազմական հաղթանակն  
 այսուհետև շարունակվի միայն խաղաղության «արևելյան ծնծղանե-  
 րով», դրա կարիքն այնքան շատ է զգում նահատակների արյամբ  
 ողողված մեր հողը: Եվ Ռոբերտ Եսայան այրն ու գրիչը բազմաբեղուն  
 նորանոր հիշատակարաններ ծաղկի՝ գալիքին հղելով խառն ու խր-  
 թին ժամանակները հաղթահարած հոգու լույսը աստվածահաճո:

*Վարդան ՉԱԿՈՒՅԱՆ**Բանաստեղծ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր*

## ԽԱԶԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՆ



Վերջապես Ղազանչեցոց եկեղեցու գմբեթին բազմեց Տերունական խաչը: Հեռվից անգամ նկատվում է, որ խաչը նման է երկնային կետում խաչված սրերի: Մտահղացումը կյանքի եռացող հունից է ծնվել. հայոց խաչը պիտի մարտնչող

լինի: Խաչին նայելիս ո՛չ միայն խաղաղվում է հոգիդ, այլև զգում ես, որ էությունդ դանդաղորեն ձուլվում է վերին վեհությանը:

Երբ չկար խաչը, երկինքը կարծես թե ծնշում էր իր անսահմանությամբ: Իսկ հիմա երկինքն ավելի հարազատ է դարձել, իր գույներով ավելի հուզիչ ու մատչելի:

Հիմա երկինքը օդի պես անփոխարինելի է: Երկինքը օդի պես լցվում է մեր մեջ ու կյանք պարզևում...

Խաչը հաղորդության բանալի..

Տասը տարի առաջ, երբ գրողներ Սպարտակ Ղարաբաղյանի, Վրեժ Իսրայելյանի և Մաքսիմ Ոսկանյանի հետ եկանք Շուշի, Ղազանչեցոց եկեղեցու մոտ հանդիպեցինք մի մարդու, որի ձեռքերն ասես անհագորեն համբուրում էին քարերը, գրուցում մեր գոյատևման դեռևս անտես ոգու հետ: Հետո նա մեր աչքերի առաջ տեսնելով նույն ոգու ցուրքերը, ուրախացավ ու սկսեց այնպիսի խրոխտ ձայնով արտասանել եկեղեցու մասին հորինած իր ոտա-

նավորը, կարծես ձայնի մեջ հղկում էր քարերը, թևավորում հրեշտակներին... Նա արտասանում էր, իսկ ձայնը դեպի երկինքն էր հառնում... խաչի նման...

Այդ մարդը վարպետ Վոլոդյան էր: Նրան օգնող քարտաշը՝ շուշեցի Միքայելը, մեր գրույցի ամբողջ ընթացքում չդադարեցրեց աշխատանքը: Բավարարվեց՝ հայացքով ողջունելով. կարծես ժամանակն այնքան քիչ էր, որ շտապում էր, անընդհատ շտապում... Չլինի՞ թե հանկարծ... Քարտաշ Միքայելը ազերիների ներսի խավարը խորապես ճանաչած շուշեցի էր և տեսնում էր վարագույրների միջով: Իսկ այդ ժամանակ գաղափարներն էին որպես վարագույր օգտագործվում: Եվ ինչքան վարագույրները մերձենում էին, այնքան ավելանում էին բանտերը, մարդիկ օտարանում էին միմյանցից, դառնում սարսափի պատճեններ:

Լուսանկարում է միայն պահպանվել (այն էլ կիսով չափ) Ղազանչեցոց եկեղեցու բակում տեղադրված սև մարմարե գերեզմանաքարը, որը հավերժացնում էր հայրենանվեր հայի՝ Թադևոսի հիշատակը:

Եկեղեցին վերանորոգվում էր... Ազգային զգացմունքները բացվելու այլ հնար չունենալով՝ հորդում ու մաքրում էին մեր հիշողությունը վերանորոգվող եկեղեցու քարերի մեջ, պատերի քանդակապատկերներում ըմպում ինքնաճանաչման լույսը և վերջապես գմբեթին բազմած խաչի մեջ խտանում, որպես տարածությունները միացնող ոգի:

Նույն ժամանակ, Ստեփանակերտում, իր արվեստանոցի դիմաց քանդակագործ Արմեն Չակոբյանը հրեշտակ էր քանդակում՝ ապրումները խտացնելով ձևավորվող սրբագծերում: Քանդակելով՝ նա ձգտում էր հաղթել մահին, որը տասնայակներ շարունակ անդիմության շղարշով էր ծածկում արցախյան հողը: Քանդակում էր՝ չմտածելով, որ անդամալույծ կայսրության վերջին հարվածներից մեկը... ընդհատելու է մի օր իր կյանքը.



*Ստրկահաճ գնդակը  
այդպես էլ չգտավ  
քո աստվածընծա  
կաղապարի մեջ քեզ:  
Նա ուշացել էր: Դու արդեն  
ճախրում էիր հրեշտակի  
թևերի մեջ՝  
որպես հիշատակի երկինք,  
Շուշիի ավերակների  
մոխիրները  
փռելով Հավիտենության  
այն դատարկ  
անցքերում, ուր խղճի  
հալածված ուրվականն է  
թաքնվել:*

Շուշին հայաթափվեց:

Քարտաշ Միքայելը համառեց, չուզեց հեռանալ հայրենի տնից, իր մատնահետքերից, դեմքից, պատմությունից: Չուզեց հավատալ, որ հայ շնչից կարող է զրկվել Շուշին: Բարբարոս ազերիները չկարողացան կոտրել նրա ոգին՝ անգամ ծեծելուց ու մարմնական ծանր վնասվածքներ հասցնելուց հետո: Ղազանչեցոց եկեղեցու վիրավոր խաչը օրորվեց խավար անդունդի վրա: Եկեղեցին թշնամին դարձրեց արկերի պահեստ: Գուցե դրանով նա ուզում էր սեպ խրել մեր և հավատի միջև...

Փլուզվող կայսրության փլատակների տակ պիտի կորչեր հինավուրց մի ժողովուրդ, եթե չբռնկվեր... ազատագրական պատերազմը:

Խաչը Ղազանչեցոց եկեղեցու գմբեթից իջնելով՝ անդունդի

վրայով մտավ մարտադաշտ: Թշնամու վրա գրոհող մեր տանկերին դաջված էր նույն խաչը... Նույն խաչն էր կախված ազատամարտիկների վզից, և նույն խաչն էին համբուրում մարտի գնալուց առաջ:

...Խավարի ոստայն դարձած Շուշին պիտի ազատագրվեր: Ստեփանակերտի խաղաղ բնակչությանը՝ երեխաներին, մայրերին, ծերերին նկուղներից դուրս բերելու, անխնա հրետակոծությունից ամայացած մայրաքաղաքը վերակենդանացնելու, անմեղ զոհերի երկարվող շղթան կտրելու համար՝ պիտի ոչնչացվեին այդ երազակույ կրակակետերը: Արկադի Տեր Թադևոսյանը պատրաստվում էր հայ ազատամարտիկներին գրոհի տանելու...

Արցախի հոգևոր թեմի առաջնորդ Պարգև Սրբազանը մինչև հայ զինվորների դժվարին ճանապարհը օրհնելը, ուզում էր հաղորդակցվել Աստծո հետ, բայց զգաց, որ մեր հոգու հրապարակում դեռևս կանգնած կոմունիզմի կուռքը խանգարում է...

...Վաղուց ուժազրկված կուռքը, որի հետ էինք միամտորեն կապում մեր ազգային հարցի լուծումը, ընկավ, և բացվեց ինքնահատած տան օրհնյալ ճանապարհը:


Թշնամու խավար օղակի անխղճորեն ու դաժանորեն սեղմվելը հայի մեջ ծնեց դիմադրողական հզոր ուժ: Մեր արյան մեջ մեր նախնիների մարտական դարավոր փորձի արթնացումը զուգակցվեց բազում նվիրյալների ու կամավորականների ոգու կորովին: Իսկապես, ոգու տոն եղավ, եղավ պատմության լուսաբաց:

Վերջապես Ղազանչեցոց եկեղեցու գմբեթին բազմեց Տերունական խաչը: Խաչին նայելիս՝ ոչ միայն խաղաղվում է հոգիդ, այլև զգում ես, որ էությունդ դանդաղորեն ծուլվում է վերին վեհությանը:

1996թ.



## ԱՐՑԱԽԻ ՈԳԻՆ



Շուշիի համալսարանում հյուրընկալվեցին նշանավոր բանաստեղծ Վահե Օշականն ու իր որդին՝ Արա Օշականը:

- Կրկին վերանորոգվող քաղաքին,- ասաց պրոռեկտոր Լարիսա Ղազարյանը,- նոր շունչ է տալիս համալսարանը:

Համալսարանի ռեկտոր Արթուր Թովմասյանը հայտնեց, որ մեծ մտավորական

Վահե Օշականը այսօրվանից համարվում է համալսարանի պատվավոր դասախոս և բոլոր այցելությունների ժամանակ հնարավորություն կընձեռնվի նրան դասախոսություններ կարդալ արևմտահայ գրականության մասին:

\* \* \*

Ուսանողներն իրենց հայացքներով շոշափում են անվանի բանաստեղծի լռությունը... Լսարանի պատերը դարձել են համակ լսողություն: Իսկ Վահե Օշականի համար դրանք ամենևին էլ սովորական պատեր չեն, այլ՝ մեր նախնիներից մեզ հասած քարեղեն պատգամներ, պայքարի դասեր ու հառնումի լույս:

Բանաստեղծը լռում է: Նրա բերանի մեջ ասես հալվում են բառերը ու կորչում կարոտի կրակների մեջ: Բառերի հնոցների տակ օրորվում է լռության ծովը: Ձեռքերով տարածության մեջ փնտրում է արտահայտման հենարաններ, որոնց վրա հենվելով, հնարավոր

լինի դուրս մղել կարոտի խորքերից մի քարեղեն հայացք, մի մազադաթե անրջանք ու խոհ:

- Երբ կարոտում եք հայրենի հող ու ջրին, ի՞նչ եք անում,- Ռադիկ Եսայանի հայտնության պես հնչած հարցն էլ մի յուրօրինակ հենարան էր, որի վրա ամենևին էլ չփորձեց իր ուսերի դարավոր բեռներն իջեցնել Ազգային ոգու մեծ որոնողը: Ընդհակառակը: Իր հայացքը ջերմորեն հպեց այդ հարցի լուսածին ակունքին:

- Ես ի՞նչ եմ անում, երբ կարոտում եմ,- տնտղող հայացքով նայեց որդու Արա Օշականի ժպտուն աչքերին, հետո այնտեղ էլ չգտնելով պատասխանը, հայացքը տարածության միջով հառեց նորածին թռռան՝ Սեպուհի հեռավոր խաղերին,- Ես ի՞նչ եմ անում, երբ կարոտում եմ... Գրում եմ, գրում, գրում...

Իսկ երբ գրելն է չի՛ օգնում, գալիս եմ Արցախ և ինձ զգում... պատմության տրոփող երակի՛ մեջ...

Վահե Օշականն իր ստեղծագործություններով ձգտում է միաձուլել ազգային ճեղքվածքները, որոնք առաջացել էին Խորհրդային քաղաքականության հետևանքով, տեսնում է լույսը, ընթացքը ճանապարհի և թռիչքը ոգու՝ ազգային ներդաշնակ միասնության մեջ:

- Եթե այդքան շատ եք սիրում Արցախը, ինչո՞ւ չեք բնակվում այստեղ,- այս հարցն էլ էս եմ տալիս ինձ, ձեր փոխարեն: - Արցախը սփյուռքահայության գոյատևման սլաքն է, որ ուղղված է դեպի Արևմտյան Հայաստանի գերյալ տարածքների վերաազատագրման հույսն ու փափագը: Մենք՝ մտավորականներս, սփյուռքի օտարամետ հոսանքների խաչմերուկներում դիմադրության և ինքնապահպանության բավական փորձ ենք կուտակել... Մեր լեզվի դարավոր շնչառությամբ և կրթական օջախների մշտարթուն գոյությամբ փրկում ենք հայածին սերունդներին... ձուլող մեքենայի զորեղ հոսանքներից: Որպեսզի, երբ անհրաժեշտ լինի, նրանց շարքերում ծնվեն հերոսներ... Մեր ուսերին են դրված նաև

արևմտահայ անզուգական ու հարուստ գրականության ճակատագիրն ու լույսը: Մենք պարտավոր ենք այն լինելիության ավի դուրս բերել նոր սերնդի ոգու ճախրանքի միջով:

Վահե Օշականը որոնում է ազգային ոգու արտահայտման նորանոր ձևեր ու միջոցներ: Այս անգամ էլ նոր մտահղացման լուրով ուրախացրեց մեզ: «Արցախի ոգին» հուշագրքի համար ստեղծագործական նոր պաշարներ է ամբարել իր մեջ, որ պիտի հետագայում դարձնի ոգեղեն խոսք, իսկ որդին՝ Արա Օշականը իր ինքնատիպ ու հետաքրքիր լուսանկարներով կհարստացնի ստեղծագործության էջերը, հայտնաբերելով ազգային ոգու բանալին:



15.10.1999թ.

*Գրողները (ձախից՝ Մաքսիմ Ոսկանյան, Վրեժ Իսրայելյան, Սպարտակ Ղարաբաղցյան, Ռոբերտ Եսայան) եկեղեցին նորոգող վարպետ Վոլոդյայի հետ (ձախից՝ Երկրորդը), 1986թ.:*

## ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

Արցախյան գոյապայքարի խորհուրդն ակունքվում է Վարդան Հակոբյանի դեռևս 1986-87թթ. գրած բանաստեղծությունների ենթատեքստային շերտերում: Խոսքն արտահայտվում է լռության հրաբուխով: Հեղինակի ասելիքը նշանակետին է հասնում ոչ թե ուղիղ ձանապարհով, այլ որոշակի թեքությամբ: «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին».



համար Վ. Հակոբյանին փորձում էին մեղադրել «ազգամոլության» մեջ: Բայց բանաստեղծությունը Ոգու տեսլիք է, որը չի կարող լինել գաղափարի ստրուկն ու իրականության պատանդը: Բանաստեղծությունը սեր է, սիրո արթնացում, որ պատռում է կեղծ պատկերացումների վարագույրը՝ ձանապարհ բացելով գարնանային թարմ հոսանքների համար: «Իսկական բանաստեղծական ոգեշնչումը,- խոստովանում է հեղինակը,- միակ կատարելությունն է տիեզերքի, ազատության ազատությունը, որ բացառում է ամեն օրենք ու սահման»:

Իսկ Արցախյան շարժումը մի փոթորիկ է, որ արդարության ուղիներն է նշում, կտրատում ստրկության կապանքները, կյանքը մղում դեպի վերափոխությունների լուսավոր հունը... Նոր խոսք: Նոր մտածողություն: Նոր դարաշրջան: Ազատությունը դուրս է գալիս զսպաշապիկներից և մուտք գործում կյանք, իսկ կյանքից՝

գրականություն: Գրողը դառնում է կյանքի շնչառությունը՝ միավորելով Անցյալի, Ներկայի և Ապագայի ոգու բևեռները:

*Ես պատմությունից առա աչքերս,*

*ծեռքերս՝ նույնպես,*

*և ընծայեցի հավերժությանը:*

«Այո, արցախցին,- ասում է Վ. Հակոբյանը,- միշտ կերտել ու արարել է՝ լինի բանաստեղծություն, քանդակ, եկեղեցի ու վանք, երգ թե երաժշտություն... Վար ու ցանք է արել մշտապես: Որքան թշնամին՝ բարբարոս, մեր կերտածը այնքան վեհ է, գեղեցիկ ու ամուր: Մեր պատմության քառուղիներում երբեք էլ չի իմացվել, թե արցախցու մեջ որտեղ է սկսվում բանաստեղծը, որտեղ՝ ճարտարապետը, որտեղ՝ զինվորն ու զինվորականը: Այդ ամենը նա համատեղել է իր մեջ՝ միշտ մնալով հարազատ իր արյան կանչին»:

Արյան կանչի զորությունը Ոգու նոր շերտեր է բացում Վ.Հակոբյանի պոեզիայում: «Ձգված աղեղներ» բանաստեղծության մեջ Արցախյան գոյապայքարի թեման բացահայտվում է ուրույն պատկերով.

*Քարտեզի վրա մի ծառս եղած ձի՝*

*Արցախ - դաժան սեր, վիրավոր անուն,*

*տունը փնտրում է աչքեր մայրական,*

*հայկյան աղեղը լարում է հոգին,*

*և օրերն անցնող սլացող նետ են:*

Ազատությունը չի նվիրվում իբրև ծաղիկ կամ թանկարժեք իր: Ազատությունը ձեռք է բերվում արյամբ, պայքարով ու մաքառումով: Եվ բաղձալի հանգրվանի չես հասնի՝ առանց զոհողության: «Գագաթն աստղերի զոհասեղան է»: Զոհասեղանի խորհրդանիշը Վ. Հակոբյանի պոեզիայում արտահայտում է նվիրում, սրբագործություն, պայքարի լույս: Իսկ խավարը խորհրդանշում է հետադեմ ուժերի (բռնակալների) էությունը: Նեռի ստվերն է ծանրացել Արցախի սահմանների վրա, ուզում է ներս սողոսկել, ջնջել հողի վրա-

յից բիբլիական ազգի նկարագիրը: Եվ խաչքարերը, հողը, ջուրը, որոնք մեր ոգու խտացումներն են, մաքառումների ասպարեզ են դառնում: Արյունը խոսում է սիրո և ըմբոստության լեզվով:

«Անդրանիկը հառնում է երկրի ընդերքից՝ միայն հողի այն մասերում, որոնք մենք թրջում ենք մեր արյան կաթիլներով»: Անցյալը ներկային հույսի ու մաքառումի ուժ է հաղորդում: Ահա գոյապայքարի թեման, որ բանաստեղծի հոգու քուրայով անցնելով, ձեռք է բերում նոր արտահայտություն, նոր շունչ, նոր հնչողություն:

«Արյունը չի մեռնում,- ասում է Վ. Չակոբյանը,- արյունը թափվելով հողին՝ չի կորչում, նորից վերադառնում է պարողներին, հավերժական մաքառումի իր շրջանառությունն է շարունակում... Մեր երակներն, այո, պիրկ արմատների պես անցնում են մեր հողով»:

Արցախյան գոյապայքարի թեմային Վ. Չակոբյանն անդրադարձել է մի շարք ստեղծագործություններում՝ «Տաճարն Աստծո» պոեմում, «Քրիստոսի ծաղիկներ» ասքում, բանաստեղծական շարքերում և առանձին բանաստեղծություններում: «Քրիստոսի ծաղիկները» ասքում գոյապայքարն արտահայտվել է ինչպես չափածո, այնպես էլ արձակ հատվածներում: Թեմայի ընդգրկուն լինելը մղել է բանաստեղծին դիմելու նաև արձակ պատումների, ուր տեղ են գտել նաև մարտական գործողությունների նկարագրություններ:

«Քարիտակը պլթալթում է կրակի ու արյան մեջ: Ձյունասպիտակ հրեշտակները Ղազանչեցոց եկեղեցու և Կանաչ ժամի նախաշաքանդակ կամարներից պոկվել, եկել, թևերի շոյանքով բալասանում էին վերքերը զինվորների, հավատ ու հույս էին ցրում մանանայի պես, քարինտակցու ուժն ու կորովը բազմապատկում էին»:

Վ. Չակոբյանը, իր ժամանակի տրամադրությունը արտահայտելուց բացի, կերտում է նաև մարտնչող զինվորների, հայրենան-

վեր մարտիկների կերպարներ, որոնք իրենցով մարմնավորում են հայրենիքի երազը: Հայրենիքը փրկելու համար միավորվում են քաջորդիները: Բանաստեղծը բացահայտում է մարտնչող մարդու հոգեաշխարհն ու հոգեբանությունը: «Արյան միջով եկող բառը ի՞նչ է բերում... քեզ ասվելիս»:

*Թե որ Քիրսը, Աստված չանի,  
հանվի հանկարծ իմ թիկունքից, իմ ցավի  
և արյան միջից`  
ես կփլվեմ,  
և իմ սերը չի լինի սեր,  
մինչդեռ  
քանի սիրում եմ ես` կա Հայրենիք:*

ՄիՖն ու հեքիաթը խառնվելով գրական իրականության թրթռուն ոգուն, նոր իմաստ ու հմայք են հաղորդում` կրկնապատկելով պատկերի ազդեցությունն ու ուժը:

«Մի օր էլ, գիշերային դադարի պահին, երբ մի պահ նինջ էր պատել աչքերին, դիմացը կանգնեց սրբի լուսապսակով մի մարդ, ոչ այն է` հայրն էր, ոչ այն է` չէ, Դեդին պարզեց հոր ձեռքերով արված գծագիրը: Մուրակների, մարդկանց, թռչող ձիերի պատկերներ են, բայց որ խորն ես նայում` Ղարաբաղն է, պտտվում է արևի շուրջ...»:

«Վարդան Հակոբյանն ընդվզման ու պայքարի ներթափանցման և խորը ապրումի բանաստեղծ է, որ իր իմաստուն կենսափորձի շնորհիվ պատկերավորում, ոգեկոչում, բացահայտում ու իրական է դարձնում Արցախ և պոեզիա անվանումների մեջ ապրող մոգական ուժերը», - գրում է բանաստեղծ Արտեմ Հարությունյանը:

Այո, Վ. Հակոբյանի պոեզիայում հոգեբանական նոր խորքեր է բացում որոնման ոգին: Սերը, որ բխում է «բառերից ու ձայներից», միավորում է Պատկերի և Հոգու առնչությունները, Ցավի, լույսի

մեջ հայտնաբերելով Հավատի ուժը:

*Էջմիածնա զանգի դողանջները  
սահմաններ չեն ծանաչում աշխարհում՝  
Արցախից մինչև Տիգրիս ու հավերժություն,  
և Մասիսների ձյունների վրա  
նրանց ելևէջները  
ծաղիկ-ծաղիկ կրակներ են վառում:*

2008թ. փետրվար




*Նկարում (ձախից)՝ բանաստեղծներ Սոնա Համբարձումյանը,  
Դավիթ Միքայելյանը, Ժաննա Բեգլարյանը, Վարդան Հակոբյանը,  
Ռոբերտ Եսայանը «Գրիգոր Նարեկացի» համալսարանում:*



## ՄԱՇՏՈՑԻ ՕԳՆԱԿԱՆԸ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ

Արցախյան գոյապայքարի թեման միշտ էլ հրահեղուկի պես եռացել է անվանի բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանի ստեղծագործությունների հիմքում, դարձել ինքնության հաստատման յուրօրինակ արտահայտություն, լեզվի, ոգու, հավատի միջոցով ազգային ակունքներին հաղորդակցվելու հնարանք, որ կոչված էր արվեստի ճանապարհով փրկելու սերունդներին այլասերման, բարոյալքման և ուժացման ազգակույ վտանգներից:



«Այբուբենը երգերի մեջ» գիրքը, որ լույս է տեսել 1967թ., արժանանալով Հովհաննես Շիրազի և Սերո Խանզադյանի ջերմ գնահատությանը, ոչ միայն ապահովեց Գ. Գաբրիելյանի տեղը հայ մանկագրության մեջ, այլև հանդիսացավ հեղինակի առաջին գլուխգործոցային երկը, որի շնորհիվ բուռն սիրո և նվիրվածության ալիք առաջացավ մանուկների հոգում մայրենի լեզվի նկատմամբ:

«Գիրքն ամփոփող՝ հայոց այբուբենի ամեն մի տառին նվիրված գողտրիկ բանաստեղծությունները,- գրել է բանասիրական գիտությունների թեկնածու Լենա Գրիգորյանը,- որոնք, ասես միմի ավարտուն նովելներ լինեն, կոչված են ոչ միայն դարձնելու այբուբենը երեխաներին սովորեցնելն ու քնքուշ սեր առաջացնելու մայրենիի նկատմամբ, այլև նոր նյութ մատուցելու, հարստացնելու մանկանց աշխարհաճանաչողությունը»:

Մյուս ստեղծագործությունը, ու ծնունդ առավ մեծ ապրումների

և տվայտանքների խտացումից ու եռքից, «Ղարաբաղի հորովելն» է, որի մեջ կերպավորվել են ժողովրդի երազն ու տառապանքը, երաժշտության միջոցով վեր հանվել հայ հողվորի հոգու գեղեցկությունն ու արևաբույր հույսը, գրականություն բերելով դարաբաղյան անկրկնելի կոլորիտ:

«Անշուշտ,- նշել է երգահան Էդվարդ Ղազարյանցը,- պետք է անչափ սիրահարված լինես քո հայրենի երկրամասին, քո ժողովրդին, որպեսզի կարողանաս ստեղծել այնպիսի երգ-հիմներ, ինչպիսին «Ղարաբաղի հորովելն» է կամ «Դադիվանքը»:

Մոռացությունից փրկելով բանահյուսական նշխարները, Գ. Գաբրիելյանը ներառել է դրանք ոգու ջերմության մեջ, հղկել հայացքի լույսով ու ստացել բոլորովին նոր արժեքներ, որոնք հիացմունք ու բավականություն են պատճառում երգարվեստի վարպետներին և նվիրյալներին: Այդ մարգարիտներից են «Ուրուրուցեն երգը», «Ըխպրին երգը», «Խնեցուն երգը», «Յընգերը», «Ըխպրին ախճիգը», որոնց մեջ հեղինակը իր ներշնչված էությունն է դրել, «իր հոգին է դրել», մշտապես ձգտելով կատարելության հասցնել ոգու գանձարանից պեղված հղացումները, երազանքները, լույսը:

Արցախյան գոյապայքարի թեման յուրօրինակ ձևով է արտահայտվել Գ.Գաբրիելյանի «Իմ Ղարաբաղ», «Թարթառ», «Մռով», «Քիրս», «Արցախական», «Կարկառ», «Անկնիք վճիռ» և այլ բանաստեղծություններում, որոնք ընդգրկվել են 1996թ. Երևանում տպագրած «Կապույտ երակ» գրքում, որի միջով «կարմիր թելի պես անցնում է սերը հայրենի Արցախի, նրա հրաշք ավանդույթների, հերոսական ժողովրդի նկատմամբ»:

*Ես որ ասեմ միլիոն տարի,*

*Դու չորս միլիոն ասա, Աստված...*

*Այնքան, որքան Մասիս սարին*

*Քո Նոյ որդու նավն է նստած:*

*Այդքան տարի ու այդքան դար,  
Մասիս սարի սերը վկա,  
Մի տեր ունի Արցախն արդար,  
Դա արցախցի հայն է որ կա:*

Մաշտոցի օգնականը (բանաստեղծ Վարդան Հակոբյանի բնորոշումն է), որ ստեղծել է իր լավագույն երկերը՝ «Գույների երգը», «Ջրվեժի երգը», «Ձյան գույները», «Այբուբենը երգերի մեջ», «Երգող ծառը», «Ուրախ հայերեն», արժանանալով Հայաստանի գրողների միության Ստեփան Զորյանի անվան մրցանակի և վալյելով բուռն ժողովրդայնություն, սեր, Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից նվիրվեց ժողովրդական հուզումների տարերքին և որպես շարժման առաջատար ղեկավարներից մեկը, որպես քաղաքական գործիչ ու բանաստեղծ, իր կրակոտ ելույթներով ու թևավոր խոսքերով («Արդար պահանջ, ոչ մի նահանջ», «Չքնեք, տղաներ, չքնեք») հուսավառեց, ըմբռնելով մի ճշմարտություն, որ ժամանակի պահանջով բանաստեղծը Պայքարի Առաջամարտիկ է, Ջինվորն ու Անզիջում Պահանջատեր:

*Թող թշնամին, ով էլ լինի,  
Կրակ դառնա տեղով-ցեղով,  
Մոր հետ կապրի Արցախն էլի  
Իր սրբազան հույս ու հողով:*

ԼՂԻՄ Մարզխորհրդի հայտնի նստաշրջանին նվիրված բանաստեղծությունը ժողովրդի անցնելիք ճանապարհի դիմագիծն ու ոգին է բերում.

<i>Մենք մարդավարի</i>	<i>Ու թեև չունեն</i>
<i>Ապրել ենք ուզում,</i>	<i>Վճիռն այդ կնիք,</i>
<i>Ուզում ենք մենք մեր</i>	<i>Ժողովն այդ փրկեց...</i>
<i>Սուրբ հողն ու լեզուն:</i>	<i>Մի ողջ հայրենիք:</i>

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԱՐԿԵՐԱԿՈՂ ԿՅԱՆՔ



Ազատության պտուղները ճաշակած սերունդները այլևս չեն հանդուրժում անգամ Ստրկության ստվերի միջնորդված ներկայությունը:

Արցախյան գոյապայքարը ժամանակի մեջ արձանագրում է հայ ոգու և մաքառումների պատմության նոր էջեր, բացահայտում հայրենասիրության, խիզախումների այնպիսի դրսևորումներ, որոնց խորքում տարերք կա, նվիրվածություն և հիշողությունների ընդվզում, որոնք այսօր էլ դաստիարակչական անմիջական

ներգործություն ունեն սերունդների ներաշխարհի ձևավորման վրա:

Գրականությունը, բնականաբար, անմասն չի մնացել ժողովրդական տարերքի դրսևորումներից. ոչ միայն արձագանքել է իրադարձություններին, այլև դարձել հոգևոր սնունդ «սերունդների ճանապարհը նախանշող» խորհուրդ, միավորող ոգի ու ելք...

Արցախյան շարժման առաջին իսկ օրերին, որպես պայքարի կոչ է հնչում Հրաչյա Բեգլարյանի «Ղարաբաղցին» բանաստեղծությունը՝ միաժամանակ դառնալով ազգային միասնության խորհրդանիշ ու հիշողության ճիչ... Ստեղծագործությունը, որ նվիրված է մեծ Ազատասեր Բագրատ Ուլուբաբյանին, կյանքի ակունքներին կապվում է երկրորդ շնչառությամբ, ասես վերածնվում է կրակված տողերի տարերքով՝ ընդլայնելով մաքառումների տեսադաշտը: Դա այն դեպքն է, երբ գրական ստեղծագործություն

նը պայթում է ինչպես բողբոջ, իր ներքին հրից և ենթատեքստի նոր արարումներից: Հայրենի հող, խաչքար, կամուրջ, սար, տուն, երազ, հիշողություն, հավատ բառերը բանաստեղծի պոեզիայում դառնալով խորհրդանիշներ, բացահայտում են ներշնչանքի և սիրո նոր հանգրվաններ, որտեղ խոստովանության լույսի է վերածվում հայրենաշունչ գիրը. «Խելագար էինք տնով ու տեղով// Եվ ամբողջ ցեղով// Խելագար էինք» կամ «Հերթը հիմա մեզ է հասել», //Ոչ մի աստված մեզ չի ների, //Թե որ նետը, //Հայկյան նետը// Չփոխանցենք սերունդներին»:

Հրաչյա Բեգլարյանի պոեզիայում հայրենասիրությունը կեցվածք չէ, այլ զարկերակվող կյանք, որը սրբացող քարերի երազն է խառնում հորովելի շնչին, գնում հոգու մրմունջ քարերի հետքերով և լսում տուն ու կամուրջ քարերի առասպելական զրույցները: Պատերազմի դռների առաջ անգամ չընկրկեց բեգլարյանական պայքարի ոգին.

*Ախ, այս խաչքար քարերի,  
Խաչված, խաչբառ քարերի,  
Մտքի քանքար քարերի,  
Հոգու բարբառ քարերի  
Համար ենք կռվել:*

«Որտեղ Ավարայր, այնտեղ ես թուր եմ», - սա է բանաստեղծի հավատամքը, որը նրան տարավ դեպի հոգու մատյանների արարում... Երկինք, հող, ջուր, սերմ բառերը ազատվում են իրենց կեղևներից՝ հոսելով ժողովրդական երգի երակներով, որտեղ հոգու հաղթանակ է դառնում Տողի իրականությունը:

Հողից ելնող դարերի շնչառությունն է տալիս բանաստեղծին ոգևորության անանց պահեր, երբ լռությունն անգամ դառնում է հուշարար, իսկ ցավը՝ ըմբոստության աղաղակ: Պատմության դասերից լույս առնելով՝ բանաստեղծը փոխանցում է այն մարտնչող սերունդներին, որպեսզի չհատվի հայրենասիրության արթուն

երակը, սուր ու նիզակով մարտնչած նախնիների ոգին միաձուլելով օրերի եռքին, ամրապնդում է կամքն ու հավատը զինվորյալների:

Յրաչյա Բեգլարյանը քարի մեջ տեսնում է մատյան, գիր, ծակատագիր, ինքնահաստատման կարծրություն, որից հավատի ու երջանկության կայծեր են ցայտում: Յողի երակներում հասցեներ կան ծլարծակումի, որոնցով ընթանում է ճանաչողության ոգին: Ահա ելքը Յույսի: «Յույսի արև», - այսպես է ձևակերպել Յրաչյա Բեգլարյանը՝ կերպավորելով իր ճանապարհի ընթացքը:

Բնության տեսարանների նկարագրությունը բանաստեղծի պոետիկայում ինքնանպատակ չէ, հավատի ակունք է դառնում ծառի կեղևը, որ դիմանալով հողմերի հարվածներին, հաստատում է վերհառնումի առասպելը: Յայրենիքի պատկերը հոսում է աղբյուրների ջրերում և միաձուլվում հողին, ծիլերին, հարատևության տաք երակներին:

Արցախ: Մի կերպար, որ ոգեշնչում է ներսից և կյանքին ու զորության արմատներին հաղորդում նոր իմաստ: Ազատության դրոշն է փողփողում ոչ միայն հայոց լեռնաշխարհում, այլև բառերի մեջ, ոգու շերտերում. «Չի նվաճվում այն դրոշը, որ պահվում է սրտերում», - ասում է Պարույր Սևակը: Ազատության պտուղները ճաշակած սերունդները այլևս չեն հանդուրժի անգամ Ստրկության ստվերի միջնորդված ներկայությունը: Յաղթանակը, որ ձեռք է բերվել հերոսների արյան գնով, ընդմիջտ վերացրել է զոհի կերպարը և վերարթնացրել ու կերտել հաղթողի աննկուն հոգեվիճակը...

*Ախ, այս խաչքար քարերի,  
Յոգու տրտունջ քարերի,  
Միշտ զուսպ ու լուրջ քարերի,  
Տուն ու կամուրջ քարերի,  
Մեկ էլ բոլոր դարերի  
Յամար ենք կռվել:*


Արցախյան գոյապայքարի թեման արժարժվել է Հրաչյա Բեգլարյանի «Արցախյան Ավարայր», «Ավո», «Շիկացած օրեր», «Լեգենդար բանակ», «Գրադ ժորա», «Դու ոգի ես», «Մեր բախտի աստղը» և այլ ստեղծագործություններում, որտեղ Արցախի երգիչն ու նվիրյալը կերտել է անկախության և ազատության համար մարտնչող հայի կերպարները, որոնք տարբերվում են իրենց անհատական հատկանիշներով, ներաշխարհով, հոգեբանական նկարագրով:

Արցախյան գոյապայքարը ժամանակի մեջ արձանագրում է հոգու և մաքառումների պատմության նոր էջեր, բացահայտում հայրենասիրության, խիզախումների այնպիսի դրսևորումներ, որոնց խորքում տարերք կա, նվիրվածության և հիշողության ընդլզում, որոնք այսօր էլ դաստիարակչական անմիջական ներգործություն ունեն սերունդների ներաշխարհի ձևավորման վրա:



*Նկարում (ձախից)՝ բանաստեղծներ Ռոբերտ Եսայանը, Վարդան Հակոբյանը, Հրաչյա Բեգլարյանը, Դավիթ Միքայելյանը, Սեյրան Բալայանը, Հրանտ Ալեքսանյանը, 1989թ.:*

## «ՉՆՉԵՑՆԵՆՔ ԶԱՆԳԸ ԳԵՐԱԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ»



Շուշիի կենտրոնական գրադարանի ընթերցասրահում նշվեց բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանի 85-ամյակը:

Ս. Խանյանի պոեզիան ժամանակին բարձր են գնահատել Նաիրի Զարյանը, Մկրտիչ Արմենը, Դավիթ Գասպարյանը, Սևակ Արզումանյանը, Սուրեն Դանիելյանը, Գուրգեն Գաբրիելյանը, ուրիշներ: Ուշագրավ է նաև Հրաչյա Բեգլարյանի կարծիքը. «Սոկրատ Խանյանը Ղարաբաղի գրական օջախի խաչագարդ սյունե-

րից մեկն է: Նա բանաստեղծ է, գրականագետ, մանկավարժ ու նաև լավ ղարաբաղցի: Խանյանի երգերը հյուսված են արցախյան բնության խայտաբղետ նախշերով, շնչավորված են լեռնաշխարհի ծաղիկների բույրով»: Իսկ արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի հավաստմամբ՝ «Սոկրատ Խանյանը իր մարդկային նկարագրով ուրույն տեղ ունի մեր ժողովրդի արցախյան հատվածում ստեղծվող մշակույթի անդաստանում: Նրա լավագույն բանաստեղծությունները ներշնչանքի գեղեցիկ դրսևորումներ են: Այսօր էլ նա շարունակում է արդյունավետ ու բեղմնավոր աշխատել բանաստեղծության մեջ՝ դրսևորելով ջահել տրոփյուն, գիտական աշխատանքում՝ ներհուն միտք»:

Բանաստեղծի հետ իրենց խոհերն ու ապրումները կիսեցին Շուշիի մի խումբ մտավորականներ՝ Լեոնիդ Հարությունյանը, Ժասմեն Գաբրիելյանը, Փիրուզե Իշխանյանը, Ալբերտ Խաչատրյանը, Ժորա Հարությունյանը, Գոհար Մարգարյանը, Լաուրա Հով-



սեփյանը, Վարդիթեր Յակոբյանը: Վերջում գրադարանի աշխատակիցներն արտասանեցին հորեյարի բանաստեղծություններից:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց Ս. Խանյանը, արժևորելով հայ գրի ազգապահպան նշանակությունը նորօրյա իրադարձությունների պտտահողմում. «Երիտասարդներին առաջին հերթին ցանկանում եմ, որ ժողովրդի պատմական անցյալի հանդեպ հպարտության զգացում ունենան: Որովհետև անցյալը մեռած ժամանակաշրջան չէ: Անցյալը հիշողություն է, տոհմածառի արմատ է, գալիքին ծիածանված կամար է: Կցանկանայի նվիրում ու սեր ազգային մշակույթին, քանի որ առանց մշակույթի յուրացման հնարավոր չէ ոչ սեփական ժողովրդի ճանաչում, ոչ էլ՝ ինքնաճանաչում»:

### ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

**- Սոկրատ Աղալարի, ուր էլ որ լինում եք, հանդիպում եք Ձեր ուսանողներին, որոնք Ձեր պոեզիայի երկրպագուներն են, Ձեր լավագույն ընթերցողները: Բանաստեղծի աշխարհում հոգևոր ինչպիսի՞ դաշտ է ստեղծում ընթերցողը:**

- Այդ առումով ես ինձ երջանիկ մարդկանցից մեկն եմ համարում: Դա առեղծված չէ, այլ այն մասնագիտության արդյունք, որ ընտրել եմ «էն գլխից»: Պատկերացրեք, թե ինչ ուղի եմ անցել: 1962 թվականից դասավանդում եմ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նախ Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում, ապա Արցախի պետական համալսարանում, նաև «Գրիգոր Նարեկացի» և «Մեսրոպ Մաշտոց» պետհավատարմագրված համալսարաններում: Ուստի դրա հետ է առնչվում իմ պոեզիայի երկրպագուների մեծ թիվը ոչ

միայն Արցախում, այլև մայր Հայաստանի կրթօջախներում: Բայց չպետք է կարծել, որ իմ պոեզիան նախընտրում են միայն այն պատճառով, որ իմ հազարավոր սաներ դասավանդում են մայրենի լեզու և գրականություն: Ես գոհ եմ Աստուծուց, որ ինձ պարգևել է ստեղծագործելու կարողություն և զգուշացրել, որ պոեզիայի աղբյուրը կյանքն է, որ հաջողության գրավականը անմիջականությունն ու պատկերավոր մտածողությունն է: Երբ պոեզիան սրտաբուխ է, գտնում է նաև սրտեր տանող ուղին: Դրա հետ է զուգահեռվում հոգևոր այն դաշտը, որ ստեղծում է ընթերցողը:

**- Ձեր գրական հավատամքը:**

- Իմ գրական հավատամքը կամ հավատո հանգանակը մեր դարավոր գրականության լավագույն ավանդույթների ամբողջությունն է: Ասել է թե՛ բանաստեղծը Աստծո քարտուղարն է, որ պետք է աստվածային սիրով ծառայի իր ժողովրդին՝ բազմաշերտ կյանքի բոլոր առումներով: Թումանյանը կասեր՝ «Բանաստեղծը ժողովրդի սիրտն է», Չարենցը կուսուցաներ՝ «Ժամանակի շունչը դարձիր», Պարոյր Սևակը խորհուրդ կտար թափանցել ժողովրդի հոգու խորքը, Սահյանը մատնացույց կաներ արարիչ բնությունը: Անսալով այս խորհուրդները՝ շարունակել եմ դասական պոեզիայի անթառամ ավանդույթները, ասելով իմ խոսքն այնպես, որ «ես» մնամ իմ «ես»-ի սահմաններում:

**- Ներշնչանքը ինչ դերակատարություն ունի Ձեր ստեղծագործական աշխատանքում:**

- Առանց ներշնչանքի ոչինչ չի ստեղծվում: Սակայն ներշնչանքը չի կարելի պատկերացնել որպես բարեսիրտ այցելու: Չպետք է մոռանալ, որ ներշնչանքի աղբյուրը կյանքն է: Միաժամանակ ճիշտ չէր լինի ներշնչանք-ոգևորությունը համարել ստեղծագործական աշխատանքի նախապատճառ: Պուշկինն ասել է. «Ոգևորություն որոնելն ինձ միշտ թվացել է ծիծաղելի և անհեթեթ տարերայնություն, նա ինքը պետք է գտնի բանաստեղծին»: Ասել

է թե՛ ներշնչանքն ակունքվում է կյանքից ու թևեր առնում ստեղծագործական բարեբեր աշխատանքի ժամին:

**- Արցախի գրական ընտանիքն աշխարհին այսօր ինչ ստեղծագործություններով կարող է ներկայանալ:**

- Արցախում ստեղծվող գրականությունը հայոց գեղարվեստական խոսքի անբաժանելի մի մասն է: Այսօր մենք ունենք նկատելի հաջողություններ թե՛ պոեզիայի և թե՛ արձակի բնագավառներում: Մենք ամենուրեք կարող ենք ներկայանալ բովանդակալից ու բազմերանգ մանկագրությամբ, բանաստեղծական բարձրարվեստ հունձքով, գեղարվեստական արձակով ու հրապարակախոսությամբ, նոր սերնդի խիզախությամբ:

**- Լեռնային Ղարաբաղի Յանրապետության միջազգային ճանաչմանը ինչպե՞ս են նպաստում գրողները՝ իրենց ստեղծագործություններով և գրական-հասարակական գործունեությամբ:**

- Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը ծնվեց հայ ժողովրդի միասնական, նպատակամետ գոյամարտի շնորհիվ: Չմոռանանք, որ այդ գոյամարտի առաջամարտիկն Արցախն է: Մենք ճանաչում ենք մեր հերոսների արյամբ օծված ազատության Եռագույնը: Աշխարհի բոլոր պետությունները չէ, որ ձգտում են ճանաչել մեր ինքնությունը: Բայց ունենք և բարեկամներ, որոնք այցելում են Արցախ, զգում մեր օջախների հայկական հազարամյակների շունչն ու ծփանքը և համոզվում, որ արցախահայությունն իրավունք ունի անկախ և ազատ ապրելու: Այս ուղղությամբ մեծ դեր ունի գրողը և՛ իր ստեղծագործությամբ, և՛ կեցվածքով: Հիշենք Արցախում կազմակերպված պոեզիայի միջազգային փառատոները, տասնյակ արտասահմանյան գրողների մասնակցությունն այդ միջոցառումներին ու նրանց բանաստեղծական շարքերը՝ նվիրված Արցախին և ազատատենչ արցախցու ոգուն, նրա անվտանգության հզոր երաշխիքը հանդիսացող բանակին:

**- Գիտնականի Ձեր պրպտուն միտքն ինչ նոր ծրագիր է իրականացնում: Գիտնականն ու բանաստեղծն իրար հետ հաշտ ու խաղաղ են, թե՛, այնուամենայնիվ, վեճեր ունենում են:**

- Իմ մասնագիտությամբ ես գրականագետ եմ: Դրան հասել եմ իմ երազանքով ու աշխատասիրությամբ: Տասնյակ գրականագիտական ուսումնասիրություններից հետո հնարավոր չէ հանգիստ նստել: Այս օրերին ինձ հուզում են ժամանակակից հայ գրողների նվաճումները, որոնք ըմբռնչվելուց հետո ձգտում եմ ասել գրաքննադատի իմ խոսքը: Ինչ վերաբերում է իմ բանաստեղծական հունձքին, կարող եմ նշել՝ երբ չեմ գրում, թվում է՝ կյանքս իմաստ չունի:

Համաշխարհային մշակույթի պատմությունն ապացուցել է, որ փորձառու գրողը նաև լավ գրականագետ է, ու երբեք միմյանց չեն խանգարում: Վերջերս ծանոթացա «Ռուս գրաքննադատության պատմություն» նոր ձեռնարկին և հաճույքով իմացա, որ Պուշկինը եղել է նաև անզուգական քննադատ: Նույնը կարող ենք ասել Յուզի. Թումանյանի, Պ. Սևակի, Հ. Մաթևոսյանի և մյուս մեծերի մասին: Գրականագիտությունն ու գրական-գեղարվեստական արժեքները միասնական են, իրար չեն խանգարում:

**- Ժամանակը հերիքում է Ձեզ և՛ ընթերցելու, և՛ գրելու համար:**

- Գրողը եթե չի ընթերցում, տանուլ է տալիս: Սիստեմատիկ ընթերցանությունը ոչ միայն հարստացնում է գրողի լեզուն, այլև նպաստում է նրա վառ երևակայության թևաբախմանն ու կոմպոզիցիոն միջոցների ու ձևերի որոնմանը:

**- Ձեր բարեմաղթանքները անկախություն և ազատություն կերտած հայ ժողովրդին:**

- Մենք՝ գրողներս, ինչպես բոլոր հայ մարդիկ, մեր ժողովրդի հարազատ զավակներն ենք, առանց որի չենք ունենա ո՛չ երջանկության զգացում և ո՛չ էլ ազգային դիմագիծ: Անկախություն և

ազատություն կերտած մեր ժողովրդին կմաղթեի խաղաղ օրերի անխաթար կյանք, տնտեսական, գիտական, մշակութային խիզախումներ, մայր Հայաստանի, Արցախի և Սփյուռքի եռամիասնության ամրապնդում, Հայոց վերածնված պետության շուրջ համախմբվելու գիտակցված կամք, հզոր բանակ պահելու զորություն, հատու զենքի և նժդեհված ոգու միաձույլ առկայություն:

Իմ այս բարեմաղթանքները մեր ազգային ճակատագրի հրամայականն են՝ թխած 21-րդ դաժանացող դարի թելադրանքով:

Բռունցվենք մեր հավատով և մեր ոգով հնչեցնենք զանգը գերակա ժամանակի:


*19 դեկտեմբերի, 2015թ.*



*Նկարում (ձախից)՝ Հրաչյա Բեգլարյանը, Տեր-Հարություն քահանայ, Սոկրատ Խանյանը:*

## ԹԱՏԵՐԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Չատված համանուն գրքից)



ԼՂՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանն այն նվիրյալ արվեստագետներից է, ում կյանքի իմաստն ու բովանդակությունը թատրոնն է: Նա իր ստեղծագործական կյանքի ընթացքում բեմադրել է 100-ից ավելի թատերական ստեղծագործություններ: Նամակներից մեկում խոստովանել է. «Գերմանիայի մայրաքաղաքում հազար թատրոն կա գործող... Չասարակության կյանքի մակարդակի չափանիշը սա է...»:

Շիրվանզադեի վկայությամբ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Չայրիկը թատրոնը համարել է երկրորդ եկեղեցի, հավանաբար նկատի ունենալով թատրոնի՝ մարդկային հոգին մաքրագործելու և գեղեցկացնելու հատկությունը:

«Երկու հազարամյա մեր թատրոնի պատմության մեջ արդեն նշմարելի է Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի նպաստը», - 2000թ. օգոստոսին թատերարվեստի տարեգրության մեջ արձանագրեց բանաստեղծ, գրականագետ Սոկրատ Խանյանը:

Թատերարվեստի մեծ երախտավոր և հանճարեղ դերասան Վահրամ Փափազյանն իր «Լիր արքա» գրքում ունի ազդեցիկ և ուղղորդող այսպիսի տողեր. «Ասում են Սիցիլիայի ծովահենները հաճախ բաց ծովում գերի էին բռնում աթենացիներին իրենց նավերով և փոխանակ փրկանքի, այդ կիսավայրենի ավազակները պահանջում էին գերիներից Էսքիլոսի գործերից կարդալ: Իմա-

ցողներին բաց էին թողնում, իսկ չիմացողներին կապում իրենց նավերի կայմերից, որպես պակասավոր, հետևաբար և վտանգավոր մարդիկ: Նույն միջոցառումը որոշ փոփոխությամբ չէր կարելի արդյոք կիրառել և մեր օրերին, զոնե հետևողական լինելու համար, առանց գործը կախաղանի հասցնելու, իհարկե, համոզող պարտադրությամբ մեր երիտասարդությանը սովորեցնել սիրել Շեքսպիրը առհասարակ և մասնավորապես նրա «Լիրը»: Այդ ձեռնարկը կբարելավեր մեր երիտասարդների բարքերը, գեղագիտական ծաշակը կհրահրեր նրանց մոտ: Դա կլիներ մի յուրատեսակ բարոյական բաղնիս, որովհետև հասուն մարդիկ դժբախտաբար այնպես են կեղտոտվում կյանքի առօրյայից, որ հազիվ թե նման բաղնիսը կարենա նրանց վերադարձնել իրենց նախկին մաքրությունը»:

Թատրոնն այն ստեղծագործական օջախն է, որտեղ հանդիսատեսը հաղորդակցվում է հայոց ոսկեղենիկ լեզվի հարստություններին, գրական արժեքներով սրբագործում և գեղեցկացնում իր հոգեաշխարհը:

«Եթե երեխան ներկայացում չի դիտում, ուրեմն կողոպտված է նրա ներկան և ապագան», - զգուշացնում է ռեժիսոր Լեոնիդ Չարությունյանը: - Թատրոնը մեծ դերակատարություն ունի սերունդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում, - հավելում է վաստակաշատ արվեստագետը: - Սկսած Արտավազդ թագավորի օրերից մինչև Արցախյան գոյապայքարով սրբագործված ու փառավորված մեր ժամանակային ծիրը՝ թատերական ստեղծագործությունը թափանցել է հայ մարտիկի հոգեաշխարհը, բացահայտել նորանոր ելքեր՝ ազգանպաստ սխրագործությունների համար: Թատրոնը ռազմահայրենասիրական դաստիարակության լավագույն միջոց է, որով հղկվում, գեղեցկանում և արիանում է հայրենյաց պաշտպանի ոգին»:

Մոտիկից առնչվելով թատերական կյանքին և տեսնելով Լեո-

նիդ Չարությունյանի ռեժիսորական ինքնատիպ աշխատանքը, ես սկզբում զարմացել եմ, հետո՝ հիացել, և իմ մեջ ծնվել է արտակարգ մի պատկեր: Արտակարգ եմ ասում, որովհետև թատրոնը, որպես թեմա, առաջին անգամ է իմ մեջ ոգեղենացել... Ես մտածում էի՝ Աստված իմ, ինչքան բաներ կան կյանքում, որոնց մարդիկ երբևէ չեն առնչվում: Ապրում են իրենց կյանքը և մի օր հեռանում, չտեսնելով և չճանաչելով Ամբողջը: Ահա մի հատված այդ բանաստեղծությունից.

*Թևող հրեշտակը նոր արար է  
հուշում,  
և դու պտտում ես սկավառակը  
Ոգու՝ առնչվելով Անհայտի ձեռքի  
պտտահողմին:*

Այսօր էլ Լեոնիդ Չարությունյան ռեժիսորն ու գեղարվեստական ղեկավարը լեցուն է ստեղծագործական եռանդով և ավյունով, ապրում է նորանոր մտահղացումներն ու ծրագրերը իրականություն դարձնելու երազանքով: Իսկ արհեստավարժ ռեժիսորի համար ստեղծագործելու լավագույն վայրը Արցախն է՝ Առյուծների երկիրը:

## ՄԵՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

*Սկիզբը  
իմ բառն է, իմ խաղի ոգին:  
Ռոբերտ Եսայան*

**- Լեոնիդ Ավետիքի, 24 տարեկան էիք, երբ համարձակվեցիք բեմադրել Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգությունը և ներկայացնել դա, որպես նախադիպլոմային աշխատանք: Նույն տարում Լենինականի պետական տիկնիկային թատրոնում**



**բեմադրեցիք Վ.Վարդանյանի «Լուսերեսն ու Վարդերեսը» հեքիաթը, որպես դիպլոմային աշխատանք: Սա ձեր ստեղծագործական եռուն կյանքի սկիզբն էր, որը նախանշեց դժվարին և միաժամանակ ձեռքբերումներով հարուստ ճանապարհ:**

- Սիրելի Ռոբերտ, ձեր հենց առաջին հարցն իմ մեջ հիշողության անսպասելի և թանկ էջեր է բացում: Այդ էջերը կապված են (ուսանողական բառ ու բանով արտահայտվեմ) համարձակ և խենթ, կարծես տրամաբանության չենթարկվող քայլերի հետ: Եվ հենց դա է երիտասարդության անհաշվենկատ շռայլված տարիների արդյունքը՝ հուշերի ոսկե պահուստը, իսկ երիտասարդության արժեքն այն ժամանակ ենք ըմբռնում, երբ այն անդարձորեն կորցնում ենք: Փանք Աստծո, որ տարիների խորքից ոչ թե հիասթափությունը, այլ մեր կատարած գործերն են խոսում:

Եվ այսպես՝ Շեքսպիրի «Մակբեթ»... Ասեմ, սակայն, որ դեռ Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի դերասանական 2-րդ կուրսի ուսանող էի, երբ բեմադրեցի Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետա» ողբերգության մի ամբողջական հատված՝ Տիբալտի և Մերկուցիոյի մենամարտի տեսարանը, որտեղ ես և ռեժիսոր էի, և Մերկուցիոյի դերակատարը: Շեքսպիրագետ, իմ շատ սիրելի ուսուցիչ՝ դոկտոր-պրոֆեսոր Լուիզա Սամվելյանի խորհրդով և աջակցությամբ ընկերներով լրացուցիչ աշխատանք էինք կատարում՝ թատերարվեստում արագ հմտանալու նպատակով: Հետո ես գրեցի և բեմադրեցի մի չափածո պիես՝ «Եվ կյանք, և սեր, և երազանք»-ը: Այդ հաջողություններն էին պատճառը, որ ռեժիսորական ամբիոնի ղեկավարի՝ պրոֆեսոր Արտաշես Հովսեփյանի առաջարկով ես տեղափոխվեցի ռեժիսորական կուրս: Իմ ուսուցիչները... ռեժիսորներ Գրիգոր Մկրտչյանը և Ռուլանդա Խարազյանը... Չգնահատված և տաղանդավոր Գ. Մկրտչյանի և հոգեխոյզ դասախոս Ռ. Խարազյանի ուշադիր և ջերմ հայացքները մշ-

տապես հառած են իմ կատարած աշխատանքին, ես նրանց ոգու լրյսով եմ որսում բեմական պատկերը, շնչավորում դեկորներն ու գույները, հաստատելով և ամրապնդելով իմ ինքնությունը: 17 ուսանողներից միայն երկուսը՝ ես և Սամվել Գայամյանը, համարձակվեցինք, որպես նախադիպլոմային աշխատանք, ներկայացնել ամբողջական և ավարտուն բեմադրություններ՝ Ե.Շվարցի «Վիշապը» և Շեքսպիրի «Մակբեթը»: «Վիշապը» ներկայացման մեջ ես վիշապի դերակատարն էի: Պատմեմ մի դրվագ, հիշողության մի անջնջելի պատառիկ, որ պեծկլտում է անընդհատ, երբ ես ինքնաբերաբար մտաբերում եմ... Սովորաբար «Մակբեթ»-ի բեմադրության փորձերը կատարում էինք, հետո լրիվ հավաքում բեմը, տարածքն ազատելով «Վիշապի» համար: Բեմը, որ վեր ու վար՝ բարձրացող և իջնող աստիճանների մի բարդ ու հետաքրքիր կառույց էր, մեզ՝ ուսանողներիս մղում էր գտնելու բեմական նոր հնարանքներ: Երաժշտական ձևավորման հեղինակը Ռուբեն Չախվերդյանն էր: Դա մի կոմպոզիցիա էր, որ ինքնատիպ ու հուզիչ նվագով հարստացնում էր բեմական մթնոլորտը, նոր լուծումներով ընթացքավորում դրամատիկ գործողությունը: Փորձի ամենառուն ժամն էր, և ես սպասում էի իմ բեմամուտի պահին, որ անընդհատ հետաձգվում էր, քանի որ մեր դասախոսը՝ Յամլետ Յովհաննիսյանը, կրկնել էր տալիս խաղացված դրվագը: Աստիճաններով բարձրանում եմ վերև և արդեն վերևից դիտում բեմում կատարվող գործողությունը: Տեսարանը վերջանում էր: Իսկ ես վերևում եմ և պիտի բեմ մտնեմ չժրագրված մի վայրից՝ առաստաղին հասնող բարձրությունից: Ենթագիտակցաբար բռնում եմ երկաթե ձողը և վարագույրի հետ ցած եմ գահավիժում... Պահը սարսափելի էր, վտանգով լի: Յասնում եմ հատակին և ծանրաձող բարձրացնող մարզիկի պես կարծես անծանոթ զանգված եմ հրում վեր, դժվարությամբ ուղղելով մեջքս...

Ծափահարությունների ներքո ըմբռնում եմ, որ իմ կատարածը ոչ միայն համարձակ քայլ էր, այլև թատերական գյուտ: Գտել ենք բեմադրության բանալին: Դա դարձավ ելակետ: Այլևս հարկ չկար ութ մետր բարձրությունից ցատկելու: Նկարիչ ընկերս՝ Հրաչ Գալստյանը, վարագույրի վրա նկարեց վիշապի հսկայական մարմին, որից ես դուրս էի գալիս լողազգեստով և մտնում բեմ:

Իհարկե, «Մակբեթ»-ի բեմադրությունը ռիսկային էր ու չափազանց պատասխանատու, նախ՝ այն առումով, որ ստեղծագործության հեղինակը Շեքսպիրն է, հետո՝ կար այն իրողությունը, որ Ռաֆայել Զրբաշյանի ղեկավարած կուրսի բոլոր ուսանողները աշխատում էին շեքսպիրյան պիեսների բեմադրության վրա: Այսինքն՝ Շեքսպիրն ուսանողներին «լայն սպառման» նյութ էր տալիս: Մթնոլորտը գրգռիչ էր, տաք ու առեղծվածով լի: Ուսանողների միջև ընթանում էր մի չհայտարարված մրցակցություն: Եվ այս հոգեբանական կռիվը կարող էր շարքից հանել ուզածը մրցակցի և ի չիք դարձնել ամենալավ մտահղացումն անգամ, մանավանդ, երբ այն ինչ-որ մեկի փոխանցմամբ՝ կարող էր հայտնվել «հակառակորդի» ներկայացման մեջ, և դու չես էլ կարող ապացուցել, որ այն հենց քո մտքի արգասիքն է և ոչ թե՛ ուրիշից թռցրած միտք:

«Մակբեթ»-ի բեմական ձևավորումը ստացվել էր շատ յուրօրինակ: Այն աստիճանների ցանցով ու ճուպաններով ազուցված նկուղ էր հիշեցնում, որը թաղված էր գույնզգույն սարդոստայնների մեջ: Տեսարանը լրացնում էին գինու հսկայական տակառները, որոնցից մատռվակները (իմ բեմադրության մեջ՝ վիուկները) խնջույքի սրահ էին տանում գինին: Արբեցնում էին և իրենք էլ՝ արբում... Վիուկները Մակբեթի հոգու և ներքին ծայնի արտահայտությունն են: Հերոսի մեջ ընթացող պայքարը մի երկրնտրանք է, որի մեջ գիտակցության մթագնում է կատարվում: Սպանել, թե՛ չսպանել, տիրանալ գահին, թե... Գայթակղությունը դրական հերոսին մղում է մարդասպանության: Նրա խղճի ծայնը մեռնում է, և սկս-

վում է մարդ-հերոսի գահավեժ անկումը մինչև դժոխքի խորխորատները:

«Դաշույնի» պատկերը տպավորիչ էր և անսպասելի: Դաշույնը և կար, և չկար... Ընթանում էր Մակբեթի մենախոսությունը: Երբեմն նրա աչքին դաշույն էր երևում, երբեմն՝ անհետանում: Այս տեսարանի մասին կարդացել էի, քրքրել ձեռքիս տակ եղած նյութերը, գիտեի, թե շեքսպիրյան ողբերգակ դերասաններից ով ինչպե՞ս է լուծել դաշույնի տեսիլքը, որպեսզի այն և բնական լինի, և ազդեցիկ: Կարդացել էի Ռուբեն Զարյանի խոսքը Վահրամ Փափազյան-Մակբեթի մենախոսության տեսարանի մասին: Ինձ ծանոթ էին նաև անգլիացի և լեհ ողբերգակ դերասանների՝ Ջոն Գիլգուդի, Ադամ Խանուշկևիչի կիրառած բեմական միջոցները: Դրանք խոսքային բառաշերտի վրա հիմնված ստատիկ, անշարժ, առանց միզանցքի լուծումներ էին: Մեկի մոտ դաշույնի տպավորությունը ստեղծվում էր լույսի շողի երևումով և անհետացումով, իսկ մյուսի մոտ՝ մի կետի վրա շեղբի անշարժ կենտրոնացումով: Ես որոշեցի դաշույնը դարձնել իրական, որպեսզի այն նաև հանդիսատեսը տեսնի: Բայց այն պահին, երբ Մակբեթը ձեռքով կփորձի բռնել դաշույնը, կանհետանա... Վիուկները, որ Մակբեթի մտքերն են, հանգցնում են նրա ձեռքի վառվող ջահը գինու տակառում: Դա նշանակում է, որ այստեղ տիրում է խավարի իշխանությունը: Խեղդվում է լույսը, և գլուխ են բարձրացնում դիվային ու խղ մտքերը:

## ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՃԱՆԱՊԱՐՅՈՒ ԱՆԼՈՒԵԼԻ ԸՆԹԱՑՔՈՎ

Պարույր Սևակի պոեզիան շարունակում է բացել ժամանակի փակագծերը, Նաիրյան ոգու ավյունը հաղորդել սերունդներին: Մեծ բանաստեղծի ծննդյան օրվան էր նվիրված Շուշիի կենտրոնական գրադարանի ընթերցասրահում կազմակերպված միջոցառումը, որի ընթացքում Մ. Խանդամիրյանի անվան դրամատիկական թատրոնի դերասանները հուզիչ ու ազդեցիկ միջոցներով ներկայացրեցին սևակյան պոեզիայի յուրահատուկ ելևէջները, ևս մեկ անգամ հաստատելով այն իրողությունը, որ պոեզիան ժամանակի հասցեն է, ոգու շնչառությունը, որով միանում են Գեղեցիկի շունչն ու Անսահմանի բանալին, տիեզերքի լույսն ու տարածության դեմքը:

Ճակատագրի բերումով դաժան

Ճակատո՞ղ հիմա՝ փոքրից էլ փոքրի՞կ,

Մինչդեռ ճակատիդ գիրը՝ մեծից Մեծ:

Իսկ ռ՛վ է դրա ընթերցողն, ռ՛ւր է...

«Սևակի բանաստեղծությունների ակունքը,- ժամանակին նկատել է Գևորգ Էմինը,- ոչ թե ազգագրական ժողովածուներից քաղված պատառիկներ են կամ «ազգային ձևի» զանգուլակներ, այլ ինքը՝ կյանքը: Ինքը կյանքն է Սևակի գործերում դառնում չափ ու հանգ, պատկեր ու ոգի:

Պատահական չէ, որ հանկարծ պարզվում է, թե եռացող թեյնիկի քլթքլթոցում կամ լուսամուտի՝ ցրտից սառած ապակու զարդերի մեջ ավելի շատ թաքնված պոեզիա կա, քան հազար անգամ կրկնված «առունների, քարերի ու բարդիների մեջ»:

Դերասանական կազմը (Նվեր Ղարաբեկյան, Աշխեն Յարուսյունյան, Սվետա Առստամյան, Գայանե Առուշանյան, Լիլիթ Բասենցյան, Արմեն Յայրապետյան, Գևորգ Յայրապետյան, Կարա-



*Թատերախմբի հյուրն է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ասմունքի վարպետ Սարգիս Նաջարյանը (աջից):*

պետ Համբարձումյան, Նունե Ոսկանյան), ոգու փնտրումների ծանապարհին առանձնահատուկ փորձ է ձեռք բերում, ամրապնդում գիտելիքները և ընդլայնում կարողությունների դրսևորման շրջանակը:

Հազար տեսակ պատկերի հետ

Հազար տեսակ լռություններ կան

աշխարհում:

Կենդանի, իրական պոեզիա դառնալը բնորոշ է Սևակի շատ քանաստեղծությունների համար:

- Արվեստագետը ժամանակի դեմքն է,- իր խոսքում շեշտեց ԼՂՀ ժողովրդական արտիստ, Մ. Խանդամիրյանի անվան դրամատիկական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Լեո-

նիդ Չարությունյանը,- որով իմաստավորվում է ճանաչողության դաշտը: Պարույր Սևակն այն մեծ բանաստեղծն ու անկրկնելի անհատականությունն է, ով իր պոեզիայով կամրջում է ժամանակային տարբեր հատվածներ, կերպավորում հորիզոնների ասելիքն ու լռությունը: Այսօր նրա խոսքը ճանաչողության նոր դռներ է բացում, հանդիսատեսին մղում դեպի ինքնահայտնաբերման հրաշագործ պահը:

*Եվ կա կանչ արյան,  
որով մեր նախնիք  
Դարերի խորքից մեր մեջ են խոսում,  
Մեր հետ են խոսում մեր իսկ բերանով:*

Խոսքն է այն հանգրվանը, որին հասնելով՝ հարստանում ենք հոգով, ապրում ենք նորովի և մեզնով իմաստավորում տարածության ընթացքը: Թատրոնը Շուշիի հոգևոր դեմքն է, ժամանակի հայացքն է՝ ուղղված մեր անցյալին, ներկային և ապագային,- իրենց մտքերը հանդիսատեսների հետ կիսեցին 20-րդ դարի վաստակավոր մանկավարժ Ալբերտ Խաչատրյանը, «Նարեկացի արվեստի միության» խմբակավար Լուսինե Չալումյանը, Շուշիի կենտրոնական գրադարանի տնօրեն Ժասմեն Գաբրիելյանը: Միջոցառման կոմպոզիցիայի հեղինակն է գրադարանի աշխատակից Փիրուզա Իշխանյանը, որի ջանքերով և հմտությամբ նորից բացվեցին սևակյան պոեզիայի անսպասելի խորքերը: Այո, պոեզիայի թատրոն ունենալը ստեղծագործական սխրանք է, արվեստի ճանապարհին յուրօրինակ խիզախում ու թռիչք:

*Եվ ամեն կարգի՝  
Բաց ու բերանփակ,  
Խորունկ ու տափակ,  
Թե՛ մարդկայնության հրում թրծված,  
Թե՛ վառ հնոցից հում-հում վերցրված*

*Ամեն անոթում  
 Հիմա տեղում եմ,  
 Հիմա հեղում եմ,  
 Նույնիսկ մղում եմ  
 Խոր մարդկայնությամբ...*

*«Հավատարմությունը սրտի արատ չէ»:*

- Պարույր Սևակի բանաստեղծությունը Ոգու անսպառ արարողություն է,- ասաց Շուշիի շրջանի վարչակազմի մշակույթի բաժնի վարիչ Անահիտ Եսայանը: - Մեր սրտերում փոթորկվող տարերք է ճանաչողության լույսը, որ բերում է Մ. Խանդամիրյանի անվան թատրոնի կոլեկտիվը՝ ամեն անգամ լուսավորելով առեղծվածային ոգու խորքերը: Հասնել կատարելության՝ նշանակում է մաքառել անհատույց և ինքնամոռաց նվիրումով չափել ստեղծագործական ճանապարհի անսանձ ոգին, բացահայտել հոգու կնիքը ելևէջներում տարածության: Սա է մշակույթի դիմագիծը, ստեղծագործական մաքառումների ելքը... Հավատացած եմ, որ արդյունավետ է լինելու նաև Մ. Խանդամիրյանի անվան թատրոնի ապագան, քանի որ աշխատասիրությունն ու նվիրվածությունն է թատերական կոլեկտիվի ուղեցույցը: Ոգին է առաջնորդում: Հանձին Լեոնիդ Հարությունյանի՝ Արցախի մշակույթն ունի տաղանդաշատ արվեստագետ և նվիրյալ գործիչ...

Պարույր Սևակի պոեզիան շարունակում է բացել ժամանակի փակագծերը, Նաիրյան ոգու ավյունը հաղորդել սերունդներին:

Պարույր Սևակի բանաստեղծական նավը անդուլ ու անդադար ճեղքում է համաշխարհային պոեզիայի օվկիանոսը, իր ոգու թևերով ալիքավորելով և ռիթմավորելով տիեզերքի շնչառությունը, շարունակելով Ոգու ընդերքի ճանապարհը՝ Անլռելի ընթացքով...

2014թ.



## ԵՐԱՋԱՆՔԸ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լույսը թրթռում է:

Թրթռում են երկու ընկերների գրույցի ալիքները մայթերին թռչկոտող թռչնի թևերով:

- Բեյրութի այս երեխաների սրտերում հավատի պես ապրում է Շուշիի պատկերը, դառնում Լինելիության խորհրդանիշ,- ասում են՝ նայելով օդի չընդհատվող ծիծաղին:

- Այո՛, սիրելի Ռոբերտ, այդ հուրը, որպես սրբազան զգացողություն, կփոխանցվի գալիք սերունդներին,- ավելացնում է Սեպուհ Այնթապյանը՝ հայացքը հառելով դեպի ճանապարհը...



**14.07.2001թ.**

Երկու ավտոբուսները առավոտյան Շուշիից շարժվում են դեպի Երևան: «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի սաները համով-հոտով գրույցներով օրորում են ճանապարհի ընթացքը: Հույսը հույսով է ընդարձակվում, կարոտը՝ կարոտով:

Երբեմնի մշակութային կենտրոն Շուշին իր լավագույն ավանդույթները վերականգնելու ճանապարհին պեղում է իր ներուժի պաշարները և գտնում... անհայտության մարգարիտները: Դեպի վեր, դեպի լույսը նախնայաց...

Թերթում են համատեղ համերգաշարի ծրագիրը... Պատուհանից ցայտած լույսն ընդգծում է տողերի հողածին ընթացքն ու սահքը:



«Ձենքին պիտի միանա ոգին,- գրում է ԼՂՅ մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարար Արմեն Սարգսյանը,- մեր ծանապարհն այսուհետ կընթանա մեր ազգային ձգտումների լույսի միջով՝ վերականգնելով ոգի ունեցող մշակույթի մշտաբաբախ ավանդույթները: Համատեղ համերգաշարը մշակութային օջախները կամրջող սրբազան առաքելություն ունի»:

Հայացքս կանգ է առնում Ջաքար Քեչիշյանի խոսքի վրա, որը կրում է. «Ե՞րբ ենք համատեղ ելույթ ունենալու» վերնագիրը:

«Հայաստանի մշակույթի նախարարության «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում երգ-երգի, սիրտ-սրտի, միտք-մտքի և ձայն-ձայնի տված Ձեզի համար պիտի երգեն քույր երգչախմբերը: Իրենց շուրթերին պիտի խառնվեն «գ»-ն և «կ»-ն, «ծ»-ն և «ձ»-ն, «բ»-ն և «պ»-ն՝ թրթռալու համար նույն ոգիով ու ապրումով, որ իրենց պապերինը եղավ երեկ, իրենցն է այսօր ու իրենց զավակներինը՝ վաղը», - խոստովանում է երգչախմբերի գե-

ղարվեստական ղեկավար և խմբավար Զաքար Քեչիշյանը:

Ճանապարհը ձգվում է երազի նման:

Իմ դիմաց նստած է նախկին բեյրութաբնակ դերասան Մանուել Մարգարյանը, որը հպարտությամբ է ցույց տալիս Հայաստանի քաղաքացիությունը հաստատող անձնագիրը: Հարյուրավոր հեռացողների դիմաց այս մի հատիկ վերադարձը մաքառման ոգու ճառագում է՝ հայոց տոհմածառի ճյուղի ծայրին:

- Տաղանդավոր դերասան է,- ներկայացնում է Զաքարն իր արվեստագետ ընկերոջը,- տղան էլ լավ երգում է: «Կարկաչ»-ի սան էր, դարձավ «Վարանդա» երգչախմբի սան:



*Զաքար Քեչիշյանը տիկնոջ՝  
Կամիլայի հետ*

- Բեյրութում «Ծաղրածու և ծաղրածու» երգի կատարման ժամանակ,- ասում է Մանուելը,- ես մնջախաղով կերպավորել եմ ծաղրածուին: Երգի և դերասանական արվեստի համակցումը բեմում տալիս է հետաքրքիր արդյունք:

Ճանապարհին օրերի հորիզոնից իր բաժին լույսն է ընկում և փայլատակում անակնկալ մտահղացման նման:

«Երազանքը դառնում է իրականություն,- ծրագրի էջերում կարդում եմ ՀՀ մշակույթի նախարարության Սփյուռքի հետ համագործակցության վարչության պետ, գրող Սպարտակ Ղարաբաղյանի խոսքը,- «Վարան-

դա» և «Կարկաչ» երգչախմբերի համատեղ համերգաշարը ոչ միայն մշակութային հարուստ երանգների միաձուլում է, այլ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի շրջանակներում կազմակերպված միջոցառումներում նախադեպը չունեցող երևույթ, որը արժա-

նի է համընդհանուր ուշադրության»:

Ճանապարհին իր անիվներով կծկում է լեռների համբերությունը, որից անընդհատ ցայտում են Ոգու և Լինելիության կայծերը:

\* \* \*

Քաշաթաղի դահլիճում «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի կատարմամբ հնչեց «Երազ իմ երկիր հայրենի» երգը: Յուրաքանչյուրի պես հիշեց իր հաղթական մարտերը, ծաղիկների աչքերում փողփողացին անկատար մնացած երազանքների բազում ծվեններ... Կարմիր... կապույտ... կանաչ...

Լրագրող Աշոտ Պետրոսյանը իր խոսքում անհնարին համարեց կշռել երգչախմբերի կատարած աշխատանքի նշանակությունը... Որոշ հանդիսատեսներ Ջաքար Քեչիշյանին առաջարկեցին համերգային ծրագրով հանդես գալ նաև իրենց գյուղերում:

- Եթե ես Ձեր խնդրանքը հիմա կատարեմ, - մեծահոգաբար բացատրեց Բարի Յսկան, - ապա երգչախմբերի սաները չպիտի կարողանան լինել Կոմիտասի անվան այգում, Պարույր Սևակի տուն-թանգարանում, մատենադարանում և այլ ծրագրով նախատեսված վայրերում:

«Երազ իմ երկիր հայրենի» երգի կապույտ ելևէջները մնացին փարված Յավատի և Յույսի ժեռուտ քարերին:

\* \* \*

Եղանք Պարույր Սևակի տուն-թանգարանում: Ողբերգական մահը առեղծվածի սերմ է՝ նետված գեղեցկության հերկերի մեջ: Ջաքար Քեչիշյանն իր սաներին համառոտ տեղեկություններ հաղորդեց մեծ բանաստեղծի հրատարակած գրքերի մասին: Նշեց, որ «Անլռելի զանգակատունը» ժայթքել է հայ ժողովրդի դարավոր տառապանքից և կենարար լույսով ընդարձակել հայոց իղձերի հորիզոնը:

Բանաստեղծի շիրմաքարը՝ օրիգինալ ստեղծագործություն: Կարծես պոետի տառապանքն է կարծրացել և որպես քարեղեն բողոք մխրձվել ժամանակի շնչառության մեջ: Ամեն ինչ հիշեցնում է մեծ բանաստեղծի տառապանքը: Նրա ողբերգական մահվան լռությունն է նստել իրերի վրա: Այս արահետով մի օր քայլել է Պարույր Սևակը և մտածել. «Ես մտածում եմ. բան չեմ մտածում: Ես նույնն եմ անում, ինչ այս առվակը կամ գետը՝ ցածում: Շարունակում եմ իմ գոյությունը»:

Նստեցի հիշողության լավայով ծածկված տան դիմաց գտնվող քարե նստարանին: Դեպի երկնքի անհուն խորքերը սկսեցին ալիքվել «Երևան-Էրեբունի» երգի հրաշալի ելևէջները, որոնք ոգու ճերմակ փաթիլներ մաղեցին ծառերի վրա, որոնումների թելերով պատված խոտերի մեջ:

Խոտերի վրա փռված մնացել է Պարույր Սևակ երևույթի կենցաղի քարտեզը, տեղ-տեղ կիսատ թողած մտքերի, պատկերների ու մտահղացումների պատառիկներ են ընկած:

«Ձեռք տո՛ւր նրանց,- ասում է Պարույր Սևակի ներկայությունը,- և նրանք իրական հրաշքով աստղեր կդառնան և կզարդարեն, այցելու՝ բարի ու հավատակից, հոգուդ անսահմանությունը»:

- Պարույր Սևակի տողերը ճառագայթներ են,- ասաց ժամանակը,- որոնք դուրս են թռել մի օր Սասունցի Դավթի թրի զարկից...

### 15.07.2001թ.

Ծիծեռնակաբերդ: Լռությունն ասես երկնքից իջած ոգու տարածություն է, որ թրթռում է՝ մրմուռի սև ու կարմիր թելերն ալեկոծելով հուշահամալիրի երազն ի վեր: «Ողբամ մեռելոց, անթանգ մեռելոց», - ձայնն ալիքվում է տարիների խորքից և փարվում եղանակի սարսռացող ծնկներին: «Կոչեմ ապրողաց», - հաստատում են «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի սաներն իրենց քայլե-

րով, լռության կոկոններից թրթռացող հայացքներով:

Ճանաչումը բացում է իր կոպերը: Ազգերի անտարբերության շունչը կծկվում է լեռների առնական հայացքի ներքո: Հայոց դարերն աղբյուրների ակ են, որոնցից սերունդները խմում են արիության և հերոսության ավիշը: Տխրության կայծքարը քսվում է մտքերիս շեղբերին, և հեռվում լուսավորվում է ոգու մի քարանձավ, որտեղ նախահայրերիս պատկերներով տեսիլներն են անցնում ժամանակի միջով:

«Կոչեմ ապրողաց», - հաստատում է իրականության ձայնը:

Լռությունն ասես երկնքից իջած ոգու տարածություն է, որ թրթռում է՝ մրմուռի սև ու կարմիր թելերն ալեկոծելով հուշահամալիրի երազն ի վեր:

Մի մանուկ իր հայացքով մայրերի անդորրն է ձեղքում: Կարծես ոչ թե հայացք, այլ մոմ է վառվող: Հիշատակի ափերը ջերմացնող մոմի արցունքը թրթռում է ճանապարհի կոպերին: Բառը ճիչ է կարծրացած, անժամանակ տարածությունը՝ աղոթք... Տիեզերական լույս...

### 16.07.2001թ.

Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տան դահլիճում վերջին տասնամյակում երևի հազվադեպ է եղել, որ երաժշտասեր հանդիսատեսները ցուցաբերեին այսպիսի բուռն ոգևորություն, հուզիչ արվեստի նկատմամբ իրենց խոնարհումը արտահայտեին այսպիսի երկարատև ծափահարություններով:

- «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի այս համատեղ համերգը, - իր ելույթի ժամանակ ջերմորեն ընդգծեց Բեյրութի «Բարսեղ Կանաչեան» քոլեջի տնօրեն Երվանդ Երկանյանը, դաստիարակչական նշանակությունից բացի ունի նաև բարոյական արժեք:
- Հիացած եմ Ջաքար Քեշիշյանի ազգօգուտ գործունեությամբ,-

ասաց Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի խմբավարական բաժնի պրոֆեսոր Իվան Վարդանյանը,- նա միավորելով երկու տարբեր՝ Բեյրութի և Շուշիի երգչախմբերի երեխաներին, համատեղ համերգներով ընդլայնում է մշակութային դաշտը, դարձնում այն ավելի կենսունակ ու բերրի, դրանով իսկ իրականացնում հայության նվիրական իղձերից մեկը, այն է՝ երգարվեստով մերձեցնել հայության բաժան-բաժան հատվածները՝ փրկելով սերունդներին Այլասերող մեքենայի երկաթե ձիրաններից:

Երգով միաձուլված սրտերը երբեք չեն խարխափի անորոշության և անհուսության սարդոստայններում, որովհետև երգարվեստի այս մղումը, որ սկզբնավորել է տաղանդավոր խմբավար Զաքար Քեչիշյանը Շուշիի «Արամ Մանուկեան» վարժարանում, լեռան աղբյուրի զորությունն ունի և անհատնում է...

Շվիի ծայնը երազանքի լույսի պես հալվում է երևանյան ունկնդիրների շուրթերին, լուսավորում կարոտի ակունքներն ու հիշողության տեսադաշտը, ուր նորանոր գծեր ու ցուլքեր են ավելանում Զաքար Քեչիշյանի մատների շարժումներով...

Իսկ ի՞նչ է մտածում Զաքար Քեչիշյանը երգարվեստի նվիրյալների կատարած աշխատանքի մասին:

- Անցյալ օր էլի Շուշիի թանգարանում եղա: Շուշիի թեմական և Մարիամյան դպրոցներում որպես երաժշտության ուսուցիչ ու խմբավար պաշտոնավարած Ստեփան Դեմուրյանին հանդիպեցի (1872-1934թթ.), որի լուսանկարի կողքին իր թանկագին մտորումն էր. «Չեմ չափազանցացրել և երբեք չեմ կարծել, որ երգը շատերի մասնագիտությունը պիտի դառնար: Հազար երգողներից մեկը թող երգիչ դառնա, մնացած բոլորը թող երգ սիրեն միայն, նպատակս մինչև վերջ կատարված կլինի: Հեշտությամբ կարելի է սովորեցնել սիրել երգը: Սա է իմ պարտականությունը՝ պիտի անեմ»:

Ավելացնելու ոչինչ չունեմ:

Կը մնա այս արցախյան-երևանյան համերգաշարը նվիրել բուրի անոնց, որոնք ընկան հայրենի եզերքի պաշտպանության ի խնդիր, և անոնց, որոնք ընկածների զենքը վերցրել ու սահմանապահ դիրքի վրա են...

### 17.07.2001թ.

Մատենադարան: Պատմության շնչառությունն ես զգում աստիճաններով բարձրանալիս: Իսկ երբ ներս ես մտնում, զգում ես, որ աշխարհին հանձարներ տված ազգի արյուն ունես երակներիդ մեջ և մաքառման երկարածիգ ու հարուստ ճանապարհ, որ դիմագիծ է շնորհում քո ապրած ամեն վայրկյանին...

Մատենադարան: «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի սաների հոգում լույսի ալեկոծություն ես արարում ու ընթացք, որ այլևս դադար չի ունենալու, քանզի հայի թիկունքում հանձարների լույսն է, որ իրականության խոչընդոտները հաղթահարելու զորություն ունի և Անհայտության կոպերը բացելու զարմանալի հնար:

\* \* \*

Չայաստանի պատմության թանգարան: Երեխաները մի քանի ժամվա ընթացքում հազարամյակների պատմության տարածությունն անցան և զգացին իրենց պատմության ավյունով զորեղացած և իմաստնացած:

\* \* \*

Էջմիածին: Եկեղեցիների վեհությունն է ալիքվում Լինելիության սյուներն ի վեր: Խաչակնքող ձեռքը լույսի շարունակությունն է, իսկ խաչը որոնման հենարան է և սփոփանքի տիեզարական հնարավորություն: Սրբազան հայր Փարենը Բեյրութից և Շուշիից այցելած երեխաների և ծնողների համար բացեց դռները վեհարանի և



գանձատան: Իրական հրաշք է կոչվում մեր տեսողության մեջ ընդգրկված հարստությունը:

\* \* \*

Կոմիտասի անվան այգում Ջաքար Քեշիշյանը մանրամասն տեղեկություններ հաղորդեց իր սաներին Կոմիտաս վարդապետի և հանձարեղ երգահանի կյանքի և ստեղծագործական ճանապարհի մասին, որ միտված է եղել մեծագույն նպատակին, այն է՝ «Չայն ունի ինքնուրույն երաժշտություն»:

\* \* \*

«Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի սաները ելույթով հանդես եկան Չայաստանի հեռուստատեսության «Ռուբիկոն+» ծրագրում:

- Չամերգային ծրագրերն իրականացնելու գործում ովքեր են Ձեզ օգնում,- հարցնում է «Ռուբիկոն+» ծրագրի հաղորդավարը Ջաքար Քեշիշյանին:

- Մինչև 1999թ. ես աշխատել եմ մենակ: Եվ իմ երեք ամիսների ընթացքում կատարած աշխատանքը բնականաբար չէր զարգացվում հետագա ամիսներին: Արդեն մի քանի տարի է, ինչ «Վարանդա» երգչախմբին Արցախի կառավարության և մշակույթի նախարարության կողմից շնորհվել է պետական ճանաչում և հոգածություն: Իմ բացակայության ժամանակ երգչախմբի աշխատանքը ղեկավարում է խմբավարի օգնական Վիոլետա Բախշյանը: «Վարանդա» երգչախմբի տնօրեն Ռուզաննա Աղաջանյանը և դաշնակահար Չամեստ Ավանեսյանը իրենց ավյունն ու ուժն են ներդնում աշխատանքային պայմանների բարելավման և ստեղծագործական մակարդակի պահպանման գործում: Չամերգների ժամանակ անփոխարինելի աջակցություն է ցույց տալիս նաև Չամազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեջի շրջանավարտ Զելա Մարկոսյանը:

\* \* \*

Երգչախմբի սաները այցելեցին Սարգարապատի հուշահամալիր և Եռաբլուր:

### **18.07.2001թ.**

Սևանա լիճ: Դու մեր լինելիության կապույտ ալեկոծություն: Քո ջրերում արտացոլվում են հայոց ոգու մաքրությունն ու հարստությունը: Թերակղզու բարձունքում երևացող եկեղեցիները հավատի և հաղորդության վեհ միջոցներ են: Բարձրանում ենք աստիճաններով: Բարձունքի հարթ տարածքում «Քոչարի» պարի փորձերն են անցկացնում երևանյան մի համույթի սաները: Վերջին փորձը նկարահանվելով՝ համարվում է հաջողված:

Եվս մի առանձնահատուկ պատկեր: «Վարանդա» և «Կարկաչ» երգչախմբերի սաները եկեղեցիների բակում հանդիպելով արգենտինահայ շրջանավարտների՝ նրանց են նվիրում իրենց հանրահայտ երգերից մեկը՝ «Երազ իմ երկիր հայրենին»: Ասում են, որ արգենտինահայ բոլոր շրջանավարտների համար ուսումը վերջացնելուց հետո Չայաստան այցելելը համարվում է պարտադիր և ավանդություն դարձած արարողություն:

### **19.07.2001թ.**

Չասունանում է հրաժեշտի պահը... Երկու երգչախմբերի սաների աչքերում բողբոջում են արցունքները: Ծիծաղն էլ դառնում է ալիքվող թախծի արտահայտություն: Շշուկը չի տեղավորվում օրվա ծրարում: Այս ինչ են անում երեխաները... Դեռևս իրար մոտ լինելով՝ կարոտի նամակ են գրում, երկու խոսք, թե ապսպրանք... Չաքար Քեշիշյան խմբավարը իր կախարդական փայտիկով չի թողնի, որ հեռանան իրարից երգով միավորված երկու աշխարհ-

ները՝ «Վարանդան» և «Կարկաչը»: Խմբավարն իր երկա՛ր թևերով մշտապես կհյուսի երգի երկնակամարը, և կշողողան որոնման և գտնման, կարոտի և լինելիության աստղերը:

Հասունանում է հրաժեշտի պահը և կարոտի ծիլեր տալիս երազանքների հողից: Վայրկյանները գնալով՝ ավելի ծանրակշիռ են դառնում: Անհոգությունն ու անսահման զրույցները պիտի ընդհատվեն... Չէ որ երգչախմբերի սաները միավորվել են երգով և ծիծաղով, կարոտներով և զրույցներով, հիացմունքներով և երազներով: Նամակներով կշարունակեն հաղորդակցվել... Երկինքները ի զորու կլինեն միավորվել երգով... Ես միայն կասեմ հետևյալը. նրանց հեռացնողը տարածությունն է, իսկ միացնողը՝ երգի անխոնջ ասպետ Ջաքար Քեշիշյանը...

Հասունանում է հրաժեշտի պահը, բայց չի ընկնում ծառից՝ ինչպես միրգը: Այն, ինչ սկիզբ է դրվել երգով ու տառապանքի լույսով, չի ունենա ավարտ, որովհետև Սկիզբն այս սովորական քայլ չէ, այլ երգի ոսկե ակունքի հայտնագործություն, որ անընդհատ բխում է...

14-19.07.2001թ.

ք. Երևան

## ԱՐՑԱԽԸ ԱՊՐՈՒՄ Է ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐՈՒՅԹԻ ՈԳԵՂԵՆ ՀՄԱՅՔՈՎ

«Վարանդա» երգչախումբը այս տարի նույնպես հանդես է գալիս նոր երգացանկով: Ամեն տարի երգչախմբի համար ստեղծվում են տասնյակ նոր երգեր: «Դա մշակութային դաշտում կարևոր իրողություն է,- ասում է Շուշիի պատվավոր քաղաքացի, խմբավար Զաքար Քեչիշյանը,- նոր երգերով է «Վարանդան» ողջունում Արցախի արվեստասեր հանդիսատեսներին: Արցախը մշտապես ապրում է մշակութային նորույթի ոգեղեն հմայքով»:

Անմահության շունչն ու հոգին նոր տեղաշարժեր են արձանագրում նաև մշակութային դաշտում, որտեղ իր ներդրումն ունի նաև Շուշիի մանկապատանեկան երիտասարդական երգչախումբը, որը 1992թ. հիմնադրել և ղեկավարում է այնժարցի խմբավար և շվիահար Զաքար Քեչիշյանը: «Բնակվում եմ Լիբանանում, ապրում՝ Շուշիում»: Սա նրա հավատամքն է:

Զ. Քեչիշյանը ծնվել է Լիբանանի Այնճար գյուղում: Երաժշտական բարձրագույն ուսումը ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: 1988-91-ին վերականգնում և ղեկավարում է «Կաքավիկ» մանկապատանեկան երգչախումբը: 1992-ին հիմնում է Լիբանանահայ ազգային վարժարանների «Ծիածան» երգչախումբը և նվագախումբը: 1992-ին հիմնադրում է Շուշիի «Վարանդա» մանկական, պատանեկան և երիտասարդական երգչախումբը: Իսկ 1997թ. հիմնադրում և ղեկավարում է Լիբանանի Համազգային «Կարկաչ» մանկական և պատանեկան երգչախումբը: 2008-ին հիմնադրել է Լիբանանի «Այգ» երիտասարդական երգչախումբը և նվագախումբը: Գեղարվեստական ղեկավարն ու խմբավարն է Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախմբի:

«Հատկանշական է,- գրում է բանաստեղծ, լրագրող Դավիթ Մի-

քայեյանը,- որ «Վարանդան» ծնունդ առավ մի այնպիսի ժամանակ, երբ օր-օրի ավելի էր սաստկանում պատերազմը, ամենուր նոր ռումբեր ու արկեր էին պայթում և Աստված անգամ չգիտեր, թե որքան կշարունակվի հրեշավոր պատերազմը: Իսկ Ջաքար Քեշիշյանի որոշումն անսասան էր, վճռական: Ամեն տարի առնվազն երեք ամսով Արցախ էր ժամանում ու համերգային թարմ ծրագրերով նոր շունչ ու ոգի հաղորդում երգչախմբին»:

- Իսկ որտեղից է սկսվում հայրենիքը,- ավանդական այս հարցին իր յուրօրինակ պատասխանն է տալիս Ջ. Քեշիշյանը: - Հայրենիքը հույսի դողանջներով ինձ դիմավորող Շուշին է, այն տունն է, որտեղ հայ գրերն են սերտում մանուկները, այն ճանապարհն է, որ տանում է դեպի Գանձասար: Հայրենիքը կարո՞տ է, որն ինձ միշտ կանչում է «Վարանդա»-ի սաների ոգեշունչ ձայնով:

«Ջաքար Քեշիշյանն այլ խնդիր չուներ,- հավելում է Դ. Միքայելյանը,- քան հայ երգն ու երաժշտությունը հախուռն հնչեցնել Արցախ աշխարհում, Շուշիի բարձունքներում ավետելով հինավուրց բերդաքաղաքի լուսաբացը, ջերմացնել երեխաների հոգիները և հավատ ներշնչել նրանց՝ հաղթանակի, գալիք պայծառ օրերի նկատմամբ»:

«Վարանդա» երգչախումբը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, զորանոցներում, դպրոցներում, ինչպես նաև Հայաստանում և Լիբանանում: Հայրենի ականավոր բանաստեղծներն ու երգահաններն ավելի քան 200 նոր երգերով հարստացրել են երգչախմբի երգացանկը, երգչախմբի մասին պատրաստել են 2 վավերագրական ֆիլմ, իսկ 2004թ. «Վարանդա»-ն ձայնագրել է «Բերդաքաղաք» խտասալիկը:

«Եթե դեռ մոտիկ անցյալում միահամուռ ջանքերով, բազում նահատակներով նվաճեցինք մեր իսկ սեփական տան մեջ տանտեր ճանաչվելու արդար իրավունքը,- ասում է Ջաքար Քեշիշյանը,- այսօր այն պահել-պահպանելն ու ամրագրելը մեր ամենօրյա

ապրումն ու աշխատանքը պիտի լինի»:

Որպես խմբավար ու շվիահար Զաքար Քեչիշյանը ելույթներ է ունեցել Յայաստանի, Արցախի, Ավստրալիայի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի տարբեր քաղաքներում:

2002թ. պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, իսկ 2005թ. արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակին:

*2009թ. սեպտեմբեր*

### **ՃՈՒՃԻԻ «ՎԱՐԱՆՂԱ» ԵՐԳՉԱԽՄԲԻ 25-ԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՅԸ**

Երգը ճանապարհի խորհուրդն է, որ ուղեկցում է «Վարանդա»-ի սաներին, հաղորդակցվելով նրանց վերելքի և հույսի ղուղանջներին: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար, Շուշիի պատվավոր քաղաքացի Զաքար Քեչիշյանի կարծիքով՝ «Ազգային երգարվեստի քարոզչությունն է «Վարանդա»-ի գործունեության գլխավոր նպատակը»: Այս տարի լրանում է երգչախմբի հիմնադրման 25-ամյակը: «Մենք մեր ներկան պետք է ապրենք ու լցնենք այնպիսի հայրենանվեր գործերով ու արարումներով,- ասում է խմբավարը,- որ նոր սերունդների համար անկախությունը ունենա այն արժեքն ու իմաստը, որի համար թափված արյունը ոչ միայն վատնված չլինի, այլև նվիրագործվի խաղաղ, բարօր, նպատակամետ կյանքով ու նվաճումներով: Արցախի անկախությունը մեծ ոգևորությամբ է ընկալվում նաև սփյուռքահայության կողմից, որը իր ներկան և ապագան կապելով Արցախի զարթոնքի հետ, նոր շնչառությամբ և ոգևորությամբ ապրում է հայրենի կյանքը: Փանք և պատիվ Արցախի անկախությունն ու անվտանգությունը պահպանող քաջորդիներին»:

«Չետպատերազմյան ծանր ու դժվարին օրերին «Վարանդա»-ի ծնունդը ոգևորեց շուշեցիներին,- գրում է Անահիտ Եսայանը: - «Վարանդա»-ն հայրենական ջերմ օջախի պես իր գիրկն առավ փոքրիկներին՝ կտրելով նրանց փողոցի միապաղաղ, գորշ միջավայրից և երզը դարձրեց նրանց կյանքի, հույսի ու հավատի բաբախող երակը, մանկական հոգիները սնուցող զուլալ աղբյուրը: Ոգևորված երեխաները սովորեցին հոգու պայծառ աչքերով նայել ծխաբույր ավերակներին: Քարերի ռնգերին կարծրացած վառողաբույրն աստիճանաբար նահանջեց՝ չդիմանալով երգի ջերմ թրթիռներին»: Ինչպես Ջաքար Քեչիշյանը կասեր՝ «Եկավ ժամանակը ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի, միտք-մտքի տված պահելու և ամրագրելու միահամուռ ջանքերով, բազում նահատակների թանկ արյան գնով ձեռքբերածը»:

Եվ պատահական չէ, որ «Վարանդան» հիմնադրվեց հայոց բերդաքաղաք Շուշիի ազատագրումից անմիջապես հետո: Ազատության կանչով և վարակիչ ոգևորությամբ ծնունդ առավ մշակութային մի բաբախուն օջախ, որը կյանքով ու ներշնչանքով լցրեց հայրենի եզերքը, Շուշիի ոգու խորքից հանեց արթնության ու ըմբոստության երգեր և փոխանցեց սերունդներին՝ որպես հավատի ու հույսի անմեռ խորհուրդ: «Շուշեցու մեջ կրկին արթնացավ երբեմնի տանտերն ու պահանջատերը, և նա տեր կանգնեց իր դարավոր մշակութային ժառանգությանը, վստահ տնօրինեց սեփական ապագան...»:

Ջաքար Քեչիշյանն ու Կամիլան նոր ավյունով ու եռանդով դաշնավորում են երգչախմբի սաների ձայնային ելևէջները, թևավորում նրանց հույսերը:

Ինչպես ամեն տարի, այս տարի էլ «Վարանդան» նախապատրաստում է համերգային նոր ծրագիր՝ նվիրված ԼՂՀ անկախության հռչակման 26-րդ տարեդարձին: Ավանդույթ է դարձել երգչախմբի համար նոր երգերի ստեղծումը՝ հայրենի երգահանների



**«Վարանդա» և «Այգ» երգչախմբերը**


երաժշտությամբ և բանաստեղծների խոսքով: Դա ինքնին մեծ ձեռքբերում է, առաջընթաց մշակութային կյանքում: Շուշիի հոգևոր կյանքը լցվում է ոգու և երազի նոր շնչառությամբ:

- Շուշիի ազատագրումն ու երգչախմբի ծնունդը տարեկիցներ են,- ասում է լրագրող Անահիտ Չակոբյանը: - «Վարանդա» հիմնադրվել է 1992-ին Շուշիի «Արամ Մանուկյան» վարժարանում: Չամույթը ավելի քան 200 համերգներով հանդես է եկել Արցախի տարբեր շրջաններում, զորանոցներում, դպրոցներում, ինչպես նաև Չայաստանում և Լիբանանում:

«Վարանդա»-ն անցնում է հոգևոր արթնացման իր ճանապարհը՝ ոգեշնչելով բազում հանդիսատեսների, ովքեր սրտի թրթիռով և ուրախությամբ են ընդունում արվեստի անակնկալ զարթոնքը, ապրում արվեստի կենսաթրթիռ ակնթարթներով: Ի սրտե շնորհավորենք «Վարանդա»-ին՝ հիմնադրման և ստեղծագործական գործունեության 25-ամյակի կապակցությամբ, մաղթենք նորանոր ծրագրերի իրականացում: Երգերը կարոտի պես թող միշտ միավորեն տարածությունները, գտնելով այն բացառիկ նոտաները, որ կոչվում են հավատի և ինքնահաստատման այգաբացներ:



## ՀՈԳՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ



Ճարտարապետ, ասմունքող և բանաստեղծ Հակոբ Գույումճյանի համար Արցախը պատմության խորքերից բարձրացող աստղ է, որի լուսավոր ներկան և խոստումնալից ապագան միավորում են համայն աշխարհի հայությանը՝ հաղորդակցելով նրան պապենական արմատներին, արիական ոգու ելքերին: «Նա ասմունքելով՝ ճարտարապետում է», - այսպես է բնութագրել Հակոբ Գույումճյանի ազդեցիկ արվեստը ռեժիսոր, ԼՂՀ ժողովրդական արտիստ Լեոնիդ Չարությունյանը: Իսկ կիպ-

րահայ լրագրող Երան Գույումճյանը գրում է. «Հայ բանաստեղծության շունչով յագեցած Երեկոյ մը՝ արդարև, ուր շնորհալի ասմունքողը՝ Յակոբ Գույումճեան, կրցաւ կատարողական բարձր ճաշակով, կիրթ ու զուսպ շարժուձեւով, խօսուն արտայայտչականութեամբ փոխանցել հայ քերթողութեան համակ գեղեցկութիւնը, հմայքը, վեհութիւնը, անոր խորին խորհուրդը»:

Հակոբ Գույումճյանի արվեստը եփվում և կատարելության է հասնում հայաշունչ ոգու բավիղներում: Դոկտոր Մինաս Գոճայեանի հավաստմամբ՝ «Յակոբ Գույումճեանին շնորհված են բնատուր արտաքին բեմական առավելութիւններ՝ հասակ, ձայն, պատկառելի կերպարանք, սակայն այս յատկանիշները կուգան պարզապէս աւելանալու իր արուեստագէտի յատկանիշներուն վրայ»: Հ. Գույումճյանը օժտված է նաև բանաստեղծելու շնորհով, որով նա կարողանում է ներթափանցել իրերի հոսքի մեջ և ստեղ-

ծագործության մեջ բացահայտել հոգեբանական խորքեր, տեսնել անտեսանելիներն և համակարգել գունային երանգները ոգու կտավին: Դոկտոր Արմինե Ղազարյանի կարծիքով՝ «Մեծ վարպետը իր հնչեղ ու հոգեթով ձայնով, պարզ ու մաքուր առողանությամբ, հրաշալի ու ազդեցիկ բեմական կեցվածքով, հնչած ամեն գործի խոր ըմբռնմամբ, անկեղծ վերապրումով ու վերարտադրմամբ հմայեց ու տիրեց բոլորին: Թերևս իմ կյանքում ամենահրաշք երևույթներից մեկին, ուր ասմունքողը երկար ժամերը պարզապես տարրալուծեց իր հզոր էներգիայի հորձանուտում և հեղեղեց դրանով ողջ դահլիճն ու ունկնդիրներից յուրաքանչյուրին...»:

Անշուշտ Յ. Գույումճյանի ելույթները անմոռանալի հետք են թողնում ունկնդիրների հոգում և մղում նրանց ապրելու ինքնաբացահայտման երանելի պահեր: Յայ պոեզիայի մոգական ուժն է դա, որ երանգ առ երանգ ավշավորում է ունկնդիրների զգացողության դալար ծյուղերը՝ Բարձրյալին պարզելով հրձվալից ոգու գեղեցկությունը: Վիպասան Ստեփան Ալաջաջյանը գրում է. «Ինքս էլ չէի սպասում այդպիսի ուրախութիւն. քանի որ ունկնդրել էի Սուրէն Բոջարեանի, Յայկանոյշ Քալանթարի, Թամարա Դեմուրեանի, Ժան Էլոյեանի, միսների ասմունքները և մտածում թէ՛ արդեօք պիտի կարողանայ յաղթահարել այն դժուարութիւնները, որ կան մեր սերնդի տաղանդաւոր բանաստեղծներին ներկայացնելու գործում: Բայց ահա Յակոբ Գույումճեանը... կարողացաւ քնքշորեն, սահուն, վառ առողանութեամբ ներկայացնել հայրենի բանաստեղծների երկերը, ունկնդիրների մօտ խորացնելով սէրը մեր քերթողութեան հանդէպ եւ խորացնելով նաեւ հայրենիքի կարօտը: Կատարողական արուեստն ու ձայնը շատ տպաւորիչ էին...»: Այն տպավորությունն է ստանում ունկնդիրը, որ կարծես վերափոխվում է ոչ միայն իր զգացողությունը, այլև՝ հոգեաշխարհը: Եվ իր ունկնդրածը ոչ թե սովորական ասմունք է, այլ «բանաստեղծության տոնահանդես»: Մի այլ ունկնդիր էլ հրաշք է համարում այս

պահերը, քանի որ հաղորդակցվում է մեր բանաստեղծության ակունքներին, ըմբռնելով մեր մայրենիի անզուգական հմայքն ու գեղեցկությունը: Դոկտոր Գևորգ Խրլոբյանը վկայում է, որ «կատարման տպավորչականութիւնը բխում էր երկի ներքին տրամաբանութիւնից, որի ճիշդ մեկնաբանումի ու վերլուծումի վրայ էր նա դրել շեշտը: Յակոբը գնում էր տրամաբանութիւնից, իմացական արժէքից դէպի զգացմունքայնութիւն և ոչ հակառակը: Կատարումը ծայր առ ծայր բացահայտում էր երկի գեղագիտական հարստութիւնը յաճախ ունկնդրին դնելով նոր յայտնագործումների դէմ յանդիման»:


Իրավ, երաշխիքի և գնահատանքի է արժանի այս տաղանդավոր արվեստագետը: Նրա ծայնն ու ոգին հայ ունկնդրի մեջ արթնացնում են սիրո պոռթկումներ դէպի հայրենիքն ու մայրենի լեզուն, բռնկուն կարոտներ ջրվեժում դէպի աստղային բարձունքներ և, ամենակարևորը, միավորում են արվեստասեր հայության բաժան-բաժան հատվածները մեկ հունի մեջ, որ կոչվում է Ազգային երազանք: Դոկտոր Անդրանիկ Սիմոնյանը խոստովանում է. «Իհարկե, եթե չլիներ Եղեռն, ցավ ու վիշտ, բոլորս էլ գոհ կլինեինք, բայց ինչ արած, որ նույնիսկ արվեստագետի խոսքի վարպետությունը ըմբռնելիս, պարտավոր ես լինում ոչ միայն գնահատել նրա՝ այս դեպքում Չակոբ Գոյումճյանի բնական օժտվածությունը, հրաշալի ձայնը, մեծ ընկալումը, խոսքի խորքի գիտակցումը և այդ ամբողջի վարպետ, ես կասեի՝ արհեստավարժ կատարումների մեջ մարմնավորելը, այլև այն վերաբերմունքը, որ նա տածում է ցեղի մեծ վշտի ու հայ մտավորականի մեծ պարտքի նկատմամբ»:

Չակոբ Գոյումճյանը վարպետ ասմունքող է, հոգու ճարտարապետ: Նրա հոգեաշխարհում կարոտի ու հույսի հանգրվան է Արցախը՝ իր Շուշի պատմական քաղաքով, ուր նա հաճախակի է լինում, առնչվում արվեստի մեծ գործիչներ տված բերդաքաղաքի ստեղծագործ ոգուն, կիսում շուշեցիների խոհերն ու մտորումները

և խոստովանում. «Ամեն հայ, որտեղ էլ ծնված լինի, արցախցի է, այսինքն՝ պահանջատեր ու հաղթանակ կռող ազատամարտիկ»:

Հակոբ Գույումճյանը թեև ապրում է Լիբանանում, հոգով ու էությանը կապված է Հայաստանին: Հայրենանվեր արվեստագետը շարունակում է իր արվեստով հմայել բազում ունկնդիրների, նրանց փոխանցելով իր ոգու կենարար լույսն ու կարոտի անսպառ ավյունը:

**ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ  
ՇՈՒՇԻԻ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



Մարտի 16-ին Շուշիի Նարեկացի արվեստի միության դահլիճում տեղի ունեցավ գրող, հրապարակախոս Սպարտակ Ղարաբաղյանի «Արևի բնակավայրը» գրքի շնորհանդեսը, որին ներկա էր ԱՅ ՄԵ հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը: Ս. Ղարաբաղյանի հավաստմամբ՝ սույն գրքի շնորհանդեսային արարողությունը մեկնարկվել է Լիբանանում: «Զարմանալին այն էր,- իր խոսքում նշեց հեղինակը,- որ լիբանանյան շնորհանդեսին մասնակցեցին նաև հալեպաբնակ ընթերցողները: Այս շնորհանդեսը, որ կայացավ Շուշիում, ինձ համար նույնպես բացառիկ կարևորություն ունի: Ավելին: Ես այն կարծիքն ունեմ, որ Շուշին մեր ուխտատեղին է, հայության Երուսաղեմը»:

Գրքի շնորհանդեսն ընթացավ հետաքրքիր և օրիգինալ սցենարով: ԼՂՀ ՄԵՀ նախարարության աշխատակազմի երիտասարդու-

թյան հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ Անի Ղարաբեկյանը ներկայացնելով գրողին և հատվածներ ընթերցելով նրա պատմվածքներից, միջոցառումը շարունակեց՝ հանպատրաստից հարցազրույց ունենալով Ս. Ղարաբաղյանի հետ: Մ.Խանդամիրյանի անվան թատրոնի դերասաններ Նվեր Ղարաբեկյանն ու Գայանե Առուշանյանը հուզեցին ներկաներին իրենց ասմունքով: Սփյուռքահայ մտավորական Մովսես Պազեշյանն իր ելույթում նշեց, որ գիրքն իր համար ճանապարհ է, հիշողություն, որ կտանի Ապագային: Նա արտասանեց Սիամանթոյի բանաստեղծություններից:

Ցուցադրվեց նաև Սպարտակ Ղարաբաղյանի «21-րդ դարի վանդալները» ֆիլմի Շուշիի մասին հատվածը:

Շնորհավորանքի խոսքով հանդես եկան նաև գրողի գրչակից ընկերները՝ Վարդգես Բաղդյանը, Միքայել Յաջյանը և ձեր խոնարհ ծառան: Ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում իմ խոսքը:

### **ՏՈՂՄԱԿԱՆՉԻ ԱՐԵՎԱԲՈՒՅՐ ԱԿՈՒՆՔԸ**

Սպարտակ Ղարաբաղյանի «Արևի բնակավայրը» գիրքը պատկերում է Հայ ոգու նկարագիրը, տոհմականչի արևաբույր ակունքը, սիրո և հավատի բնակավայրում ապրող սերունդների հավերժական ընթացքը: Մարդկային կյանքի ողջ փիլիսոփայությունը հեղինակն ամփոփում է Հայ բառի մեջ, բացահայտելով Հայի ոգու տիեզերական գեղեցկությունը, հմայքը, առանձնահատուկ բնույթը: Հողը, որ բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանը կոչել է ոչ թե հայրենի, այլ հայրերի հող, բնավորություն ունի, հավատ ու երազանք, ինչպես մարդը, հողը ավետաբեր է, ինչպես հողից հառնող խաչքարը: «Քաղաքները շենքեր, փողոցներ, հրապարակներ ու շատրվաններ ունենալուց բացի բույր էլ ունեն, ու երբ երկար ժամանակով բացակայում ես,- խոստովանում է հեղի-



*Նկարում՝ Վրեժ Իսրայելյանը, Ռոբերտ Եսայանը, Սպարտակ Ղարաբաղյանը, Մաքսիմ Ոսկանյանը Ստեփանակերտում, 1986թ.:*

նակը,- հանկարծ հենց այդ բույրն է արթնանում քո մեջ, որ քո քաղաքինն է, և աշխարհում ոչ մի քաղաք չունի այն»:

Սպարտակ Ղարաբաղյանի ստեղծագործություններում առանձնահատուկ կերպար է հիշողությունը: «Հիշողները, այսինքն՝ Հիշողություն ունեցողները, այսինքն՝ այս քաղաքի տերերը...»: Այստեղ Հիշողությունը գրված է մեծատառով: Հեղինակը մեծատառով է գրում և Հայրենիք բառը... Սեր, Ցավ, Տառապանք... բառերը: Իսկ Կարոտը... գործող կերպար է: Անվանի բանաստեղծ

Վահագն Դավթյանի հավաստմամբ՝ մարդն այնքան էր հեռացել ինքն իրենից, որ Աստված բառը գրում է փոքրատառով: Սա մի ամբողջ դարաշրջանի նկարագիր է: Հայն այսօր բաց ձակատով է ընդունում իրականությունը: «Պատմության հետ պահմտոցի խաղալու ժամանակը իրոք որ սպառվել էր,- ահագանգում է հեղինակը՝ հավատալով, որ անհնար է արդուկել հիշողությունը, որովհետև

«Մեր հիշողությունը սահմանագծող ուղեփակոցը քանդվել էր, որից այն կողմ Մեր պատմությունն էր, Մեր կենսագրությունը, Մերը... Ասֆալտի տակ տնքացող հողի պես հիշողությունը պայթել էր Ցավից»:

Մենք մեզ կարոտել ենք: Արցախյան գոյապայքարը Հայի ինքնահաստատման աստղային ժամերից մեկն է: Հզոր մի պոռթկում, որ միավորեց համայն աշխարհի հայությանը նույն նպատակի շուրջ` Լինել: «Պատերազմի ժամանակ շրջակա բարձունքներին տիրած թուրքը մահվան շուրջպարով էր օղակել քաղաքը: Թվում էր` ուր որ է, անձնատուր կլինի քաղաքը, ու թուրքն իր արյան խրախճանքը կսկսի Ստեփանակերտի փողոցներում: Բայց հայի ոգին չծնկեց. թալինցին, ապարանցին, էջմիածնեցին, գյումրեցին, տավուշցին, արցախցին մի մարմին ու մի հոգի դարձած` ձեռքեցին մահվան օղակը, և հրաշք կատարվեց... Արցախը բռունցքված հայության երազանքն էր... Եվ այդ գորությունից էր վախը ինչ-ինչ ուժերի, որ դարաբաղցի-հայաստանցի կեղտոտ ու անբնական խաղը հորինեցին... Մոռացան, որ Սասունի, Վանի ճանապարհը Արցախով է անցնում: Ու եթե իրոք, խաղ չկա, միմիայն բռունցքված հայության դեմ խաղ չկա», - գրում է Սպարտակ Ղարաբաղյանը` տող առ տող հյուսելով իր հոգեաշխարհը` «Արևի բնակավայրը»:

«Հեղինակը լավ գիտե իր նյութը,- գրում է Թորոս Թորանյանը,- երկրին շունչով կապրի, անոր ձեռքը ժողովրդին բազկերակին վրա է»: Իրոք, Սպարտակ Ղարաբաղյանի դիտողական հայացքից դուրս չի մնում նշանակալի ոչ մի հոգեվիճակ, պահի լուսանկար, մեր հոգում կարոտի ծիածաններ արթնացնող երանգ, գույն ու եզրագիծ: Գրողի խոսքը պատկերավոր է, հուզիչ և ազդեցիկ. լեզուն հարուստ է, ճոխ ու կենսաթրթիռ: «Գլխավորներն էլ հառաչել գիտեն ու մեկ-մեկ էլ ԱՍՏԾՈՒՆ են հիշում», - սա հեղինակի կատարած բացահայտումներից մեկն է, որն ընթերցողին տանում է դե-

պի հոգեվիճակի բուն խորքը, ուր... «Դեղահաբերից հոգնած մարդու ներսը տակնուվրա եղավ: Կարոտած, քաղցի մատնված մարդու պես՝ այս անգամ ամբողջ ափը մոտեցրեց ռունգերին ու ագահաբար ներս քաշեց... Ինչ-որ բան խլրտաց ներսում, կենդանացավ... Ուրցի բույրը ոտաբոբիկ մանկության օրերը տարան, ձյունաթագ լեռներից իջնող անապակ աղբյուրների անուշ սառնությունը հիշեցրին...»:

Վերջապես «Արևի բնակավայրն» այն է,- գտնում է գրականագետ Ֆելիքս Բախչինյանը,- ինչ գրականության ու գրականագիտության մեջ որակվում է որպես իրականության ժշմարտացի նկարագրություն, ակնարկագրություն, լրագրողական արհեստավարժություն և այլն: Մի խոսքով այն, ինչ ասում է՝ ահա ես, դու և մենք առանց երևակայության չարչրկումների, հանելուկային տողատակերի, նմանակումների,... իզմերի... Անգամ եթե փորձ կա վերանալու իրականությունից, հակառակ ծանապարհով, բայց կրկին վերադառնում ես նույն իրական աշխարհը»: Գրականագետը «Արևի բնակավայրը» գիրքը համարում է «Մեր թաղը» մատենաշարի երկրորդ հրատարակությունը: Իսկ ես կուզենայի այս մատենաշարը կոչել «Տոհմականչի արևաբույր ակունքը», որը բնորոշում է հեղինակի կերտած գրականությունը՝ որպես հոգու պատմություն: Ի վերջո գրականության նպատակը իրականության վերարտադրությունը չէ, այլ օդափոխիչ այն թարմ շունչը, որը հայտնության պես ապրեցնում է ընթերցողին, նրան մղելով դեպի Բաղձալին, դեպի Աստված: Ես այն կարծիքին եմ, որ անմահ ու հավերժական է այն գրականությունը, որտեղ շարունակում է ապրել ոչ թե իրականությունը, այլ հոգու պատմությունը, որը և կոչվում է Գրական իրականություն: Սպարտակ Ղարաբաղյանի «Արևի բնակավայրը» գիրքը գրավիչ ու արժեքավոր է հենց իր պատկերավորությամբ, ասելիքով և Գրական իրականությամբ:

10.03.2017թ.



**ԳՐԶԻ ԵՎ ՄՇԱԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**



Դավիթ Միքայելյանի «Խորհրդավոր ժամադրություն» գիրքը, որ հեղինակն անվանել է երգիծական պատումներ, որպես մանրակերտ ստեղծագործությունների ժողովածու, ընթերցվում է հետաքրքրությամբ, գրավում անակնկալ դրվագներով: Հայ մարդը երբեք չի կորցրել հումորի զգացումը, դժվարություններն հաղթահարել է ծիծաղով, երգով: Անգամ պատերազմի և երկրաշարժի ժամանակ իր մեջ ուժ է գտել, ստեղծել անեկդոտներ, հորինել մարդկանց

տրամադրությունը բարձրացնող կենսաթրթիռ զրույցներ: Դա ժողովրդի կենսունակությունից եկող հատկանիշ է, որ փոխանցվում է սերնդեսերունդ: Եվ ամեն ժամանակաշրջան երգիծանքի ու հումորի նոր շերտեր է բացում, գտնում հասարակական կյանքի փակուղին պայթեցնելու ելքը: Մարդկային ոգու հնարավորությունները ընդլայնվում են, երբ անգամ անասելի դժվարությունների մեջ հայտնված ժողովուրդը փորձում է հումորով, երգիծանքով հաղթահարել ցավը, հոգեբանական նոր հարթակի վրա տեղափոխելով ներաշխարհային կուտակումները, գտնելով և ամբողջացնելով իր իդեալների նկարագիրը:

Դ.Միքայելյանի խոսքի հմայքն ու պարզությունը նկատել և գնահատել են անվանի գրողներն ու գրականագետները: Ուշագրավ է բանաստեղծ, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանի խոսքը. «Դավիթ Միքայելյանը, խոստովանեմ, իր նկարագրի մեջ գեղեցկամարդու այնքան հատկանիշներ է ամփոփում, որ ինչպես ասում են, բարու և լավի դեֆիցիտի մեր ժամանակներ-

րում կհերիքեին միանգամից մի քանի մարդու: Դավիթը, բնավորություն է, խոսքը համ ունի, գործը սրտով է կատարում, տողերի մեջ հոգի է դնում, մի խոսքով, գրչի մշակի ու նվիրյալ դպիրի իր առաքելությունը կատարում է առանց ավելորդ հավակնությունների, հասունահասկ խոնարհությամբ, որի համար էլ մեր գրական ընտանիքում բոլորս սիրում ենք նրան, մեծից մինչև փոքրը»:



Ներաշխարհը բացահայտող հանդիպավայր է «խորհրդավոր ժամադրություն» գիրքը, որի հենց կազմի նկարը հուշում է՝ ժամանակը ջերմ և սրամիտ երկխոսությունների շղթա է: Կերպարները յուրովի են ներկայացնում իրենց կենցաղային բարքերը, զավեշտային իրավիճակում հայտնվելով՝ կարողանում ելք գտնել: Նույնիսկ պատումների վերնագրերը («ժլատ Սեդրակի հյուրասիրությունը», «Լաչառ Զարվարդի մտահոգությունը», «Շառ Ծատուրի բարևը»,

«Ջերմաչափի հունարը») խոսում են, տիպական երանգավորում ունեն և ինքնին բացահայտում են հեղինակի մտածողության տեսակը: Այս գրքի առաջին ընթերցողներից մեկը մայրս է, երկու անգամ ընթերցել և վշտից ծանրացած հոգին թեթևություն է զգացել, լցվել կենսական լիցքով: Ասում է՝ «Դավիթը տնտեսուն մտե՛լ է այսքան մանրամասնություններ հավաքելու համար»: Հեղինակը դիտողական հայացքի թելին հավաքելով դրվագների խմբաքանակներ՝ նոր շունչ է հաղորդել, հղկելով՝ դարձրել պատումներ, որոնք զբաղեցնում և հուզում են այսօրվա ընթերցողին (դա այնքան էլ հեշտ չէ, իսկ վաղվա ընթերցողի համար, հավատացած եմ, այս ստեղծագործությունները կունենան ճանաչողական և գեղագիտական նշանակություն):

Ուշագրավ ու հետաքրքիր են անվանի բանաստեղծ Յրաչյա Բեգլարյանի կյանքից վերցրած պատումները, որոնց մեջ հումորի ու սրամտության միջոցով բացահայտում և ամբողջանում են ժողովրդի կողմից սիրված բանաստեղծի և մարդու կերպարը: Ահա մի օրինակ: «Օրերից մի օր Յրաչյան հերթական քեֆից ուրախ տրամադրությամբ վերադառնում էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրություն: Աշխատանքային օրն արդեն ավարտվում էր: Ուտքերն աստիճաններին խփելով նա արագ բարձրանում է 2-րդ հարկ: Այդ պահին հանկարծակի ընդառաջ է գալիս խմբագիր Յովհաննես Արզումանյանը:

Վերջինիս նկատելով, Յր.Բեգլարյանը սովորության համաձայն, նրան ողջունում է՝ բացականչելով. «Ա՛, հշտեղ ըս»... Խմբագիրը զարմացած սաստող հայացքով փորձում է հորդորել. «Յետաքրքիր տղա ըս, Յրաչիկ, փոխանակ ես քեզ հըրցընիմ՝ հըշտեղ ըս, հալա տո՛ւ ըս ինձ գյունաքար թողնում»...

«Ղարաբաղցին» հանրահայտ բանաստեղծության հեղինակը երգիծապատումներում ներկայացված է բնավորության նոր կողմերով: Այս շարքը կարելի է վերնագրել՝ «Յուստաստեղծ Յրաչյա Բեգլարյանը» կամ «Ա՛ հշտեղ ըս»:

Ուշագրավ է բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Բեգլարյանի կարծիքն այս գրքի մասին. «Խորհրդավոր ժամադրությունը» մարմնավորում է արցախցու մեր տեսակը: Մի աչքում՝ արցունք, մյուսում՝ ծիծաղ է: Անգամ պատերազմական տարիներին ժողովուրդը կարողացավ պահպանել իր հոգու զվարճությունը և ժպտալ ցավի միջից: Նրա հերոսները մտացածին չեն: Լուսածորցի Մուքին լուսածորցի չէ: Արցախը առակախոսների, սրամիտների, խոսքի տակ չմնացողների երկիր է: Արցախի յուրաքանչյուր գյուղ ունի իր Մուքին, իր Գրիգորը, իր Սեդրակը, Լաչառ Զարվարդը, Շառ Ծատուրը, Իզվեստիան... Այս առումով պատումների հիմնական հերոսն անհատականացված լինելով հանդերձ, հավաքականություն է ձեռք բերում: Նա ար-

ցախցի սրախոսն է, հայտնի Պըլը Պուղու զարմից սերվածը՝ իր ուժեղ և թույլ կողմերով: Գրողը կարողացել է սինթեզել բանահավաքի ու բանահյուսական նյութի գրականացնողի աշխատանքը: Ու դա արել է առանց ավելորդ ծիգերի, պարզ ժողովրդական լեզվով, առանց պաժուժապատումների ու գունազեղումների»:



*Նկարում (ձախից)՝ Ռոբերտ Եսայանը, Աշխեն Հարությունյանը, Սոկրատ Խանյանը, Արմեն Հայրապետյանը, Լեոնիդ Հարությունյանը և Քր.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում, 2013թ.:*

## ԵԹԵ ԳՐՈՂՆ ԻՆՔՆԱՏԻՊ ՁԵՌԱԳԻՐ, ԱՊՐԵՑՆՈՂ ՁԱՅՆ ՈՒՆԻ



Արձակագիր Մարտիրոս Որնը սեփական ձեռագիր ունեցող, յուրօրինակ ոճի տեր հեղինակ է, ով կարողանում է հոգեաշխարհ բացող բառը գտնել և հաղորդակցվել Անտեսանելի ոգուն: Նա արվեստագետի պրպտուն հայացքով կարողանում է հետ նայել և տեսնել սկիզբը, այն պահը, երբ լռությունը կար, բայց բառը դեռևս չկար, և ինքը սկսում է խոսել Անհայտի լուսանցքից հանված նշաններով: Լռության ձեռքերը միավորվում են իրականության սարսռուն շերտով:

Պատմվածքը Մարտիրոս Որնի համար բառ չէ, այլ՝ խորան, ուր կատարվում է մի ամբողջ «ծիսակարգ»: Գործողությունը կյանքի դրամատիկական շերտի բացահայտումն է, որ հանգում ոգորումների շիկացած կետին և կոչվում է ճակատագիր: Փողոցը կերպավորվում է հերոսների բացահայտվող հոգեբանությամբ: Ամեն պատմվածքի համար գտնելով յուրօրինակ սկիզբ կամ, ինչպես ասում են՝ անակնկալ մուտք, Մարտիրոս Որնը ինքնին շարժում է ընթերցողի հետաքրքրասիրությունը և տանում նրան դեպի գործողության գրավիչ խորքերը: «Պատմվածքում դեպքերն իմ կարծիքով բնական են զարգանում, և ընթերցողը մոռանում է նույնիսկ հեղինակ-պատմողի ներկայությունը», - խոստովանում է Մարտիրոս Որնը «Ինձ հասկանալու փորձ» հոդվածում:

Ստեղծագործության բառապաշարը ինքը չի ընտրում, այն բխում է ասելիքի ոգուց, ստեղծելով նաև միջավայրի կոլորիտը:

Բառը ելք է, որ տանում է դեպի գործողության դրամատիզմը:

«Մի հատկանիշ ևս,- գրում է բանաստեղծ, գրականագետ Վարդան Չակոբյանը,- որ առանձնացնում է նրա արձակին որակ հաղորդում. դա այն է, որ իր բնավորության մեջ (նաև՝ գրական) նա համադրում է ծննդավայր Քաջարանի ու Արցախի լավագույն գծերը՝ ամենահայկական առումով»:

Մարտիրոս Որնը կարողանում է ներթափանցել իրերի խորքը և շնչավորել լռության ասելիքն ու միտքը՝ հասնելով յուրօրինակ ընդհանրացման: Դիտողական հայացքով ընտրում է ամենակարևոր պահը, որ հոգեվիճակ է և առանձնահատուկ երանգ է մտցնում հաղորդակցության շղթայի մեջ: Դիալոգների շղթայի մեջ բացահայտում է հերոսների հոգեաշխարհի նուրբ տարրեր, իսկ բնապատկերի միջոցով լրացնում ու խթանում գործողության ընթացքը: Ահա մի հատված «Փաղիժ» պատմվածքից.

«- Ինչ է, ուզում ես գլխիվայր կախնի:

- Էսպես դինջ է, փորձից գիտեմ:

- Վայ թե մեռնի:

- Ապրել ուզի չի մեռնի:

Անտառապահին գլխիվայր կախելուց հետո միայն խանը իրեն հանգիստ զգաց:

- Դե, շարժվեցինք,- ասաց, ու իր թաց շորերի բոխչան թևատակն առավ: - Էդ ինչի՞ համար է,- զարմացավ, որ Վրեժն էլ դազանակը վերցրեց:

- Ոտս զգվելի ցավում է:

- Կուզին բեռն էր պակասում,- խանը դժգոհեց:

Դրսում խոնավ սառնություն էր: Վաղորդյան մուժը դեռ նորնոր, աննկատ սկսել էր ետ քաշվել դեպի լեռները՝ ծերպերում պահ կենալու:

Երկուսով էլ գոհ էին, որ մառախուղը չէր շտապում անտառը լքել, մանավանդ, որ մի տասը քայլի վրա աչք էր շաղվում այդ կա-

թե անսահմանության մեջ» («Փաղիժ»):

Բառերի և նախադասությունների միջև լռությունը ապրումն ամբողջացնող կարևոր հանգրվան է: Կարևոր հատկանիշ է նաև Մարտիրոս Ռբնի «զգացումի ինտելեկտուալությունը (Վ.Յակոբյան), որը «իրականով գերիրականին հասնելու» միջոց է: Տողի մեջ ասվածը հաղորդակցվում է տողից դուրս ասվածի ոգուն: Մարկեսի խոսքով՝ «պատմվածքը, այսբերգի նման, պետք է հենվի իր այն մասի վրա, որը չի երևում, այսինքն՝ վերլուծության վրա, մտորումների վրա, շարադրանքին անմիջականորեն չմասնակցող հավաքված նյութի վրա»: Մարտիրոս Ռբնի պատմվածքը ընթերցողի մեջ շարունակում է բացվել նաև իր երկրորդ շնչառությամբ:

Յեղիճակը տարբեր թեմաների խորքից ասելիքի նորանոր տեսարաններ է հանում և ագուցում բովանդակային շղթային: «Տեսարան» բառը պատահաբար չգործածեցի. այն Մարտիրոս Ռբնի ստեղծագործությունների «պատուհանն» է, որ բացվում է դեպի աշխարհը, այսինքն՝ դեպի ընթերցողը: Յեղիճակի գեղարվեստական մտածողությունը իրարահաջորդ տեսարաններով է զարգանում: Թատերարվեստի և կինոարվեստի արտահայտության միջոցներն ու հնարանքները Մ. Ռբնի մտահղացումներում ինքնին գործում են և իրենց եռքով մասնակցում ստեղծագործական գործընթացին: Այդ է պատճառը, որ նրա պատմվածքներն ընթերցելիս՝ մեկ-մեկ թվում է, թե կինոնկար ես դիտում կամ թատերական ներկայացում: Այսինքն՝ ընթերցողի երևակայության տեսադաշտում այդքան տեսանելի ու կենդանի է ոբնական պատկերը: Սա, իմ կարծիքով, Մարտիրոս Ռբնի ստեղծագործությունների կարևոր առանձնահատկություններից մեկն է:

Լեզուն գրողի ոչ միայն ոգին է, այլև ստեղծագործական մտահղացումները իրագործող քուրան: Արձակագիր Մաքսիմ Յովհաննիսյանի կարծիքով՝ «Մարտիրոս Ռբնի պատմվածքների գլխավոր արժանիքը նրանում է, որ հեղինակը կարողանում է հոգեբանա-

կան հետաքրքիր, անսպասելի զննումներ կատարել, բացահայտել հերոսների ներաշխարհի անատոմիան... Անկաշկանդ օգտվում է բարբառի ոճերից, ինչը և ստեղծում է բնաշխարհի կոլորիտը»: Մարտիրոս Ռբնի յուրաքանչյուր պատմվածքի լեզուն հոգեբանական խորքի նկարագիր է, մարդկային տենչի նպատակակետին հասնելու անտես մի վերելակ: Յեղիճակը կարողացել է շոշափել նաև իրականության այնպիսի շերտեր, որոնք «ղարաբաղյան արձակում հազվադեպ կամ համարյա չեն արտացոլվել» /Մ. Յովհաննիսյան/:

Մ. Ռբնը հասկացել է, որ յուրաքանչյուր թեմա կամ իրականության շերտ ունի ոգի, որն արթնացնել կարող է միայն կենդանի լեզուն: Ահա ևս մի հատված «Փաղիժ» պատմվածքից. «Փամփշտակալը արձակեց, հանեց նաև նրա սվիտերն ու վերնաշապիկը, ժամացույցը, որից հետո ուշագնացի ձեռքերը մեջքին ոլորած կապուտեց, իսկ շալվարը հանելուց հետո, ոտքերն էլ՝ ծնկներից ծալած կապեց ձեռքերին: Այդպես կասես հատակինը մարդ չէր, այլ մի մեծ բոխչա»:

Գրողի վերջնական նպատակակետը «սուր բախումներով հագեցած սյուժե, էկզիստենցիալ իրավիճակ, իրադարձությունների կտրուկ շրջադարձեր» ստեղծելը չէ, այլ կյանքի հատակին ընկած մարդուն դեպի վեհանձնության թրթռուն շողը մղելը, փորձություններով անցած մարդու հավատի ու ոգու մաքրությունն է, որի մեջ է հենց փրկությունը: «Կենդանի եմ՝ դողդոջ շշնջաց, բայց սարսափը ծվարել էր մոտիկ ինչ-որ մի տեղ: Դրա համար էլ նա, ավելի քան գորովանքով մտածեց, որ ապրելն, իսկապես հրաշալի է: Եվ ապրելու անափ տենչից կրկին սկսեց առաջ մղել իր ուժատ մարմինը, չնայած հիմա, կասես ինչ-որ մեկն ավելի հաճախ ու թափով էր տարուբերում երկաթե դագաղը...» /«Սալամանդր»/:

Լինելով գրականության նվիրյալ և բնությունից օժտված հեղինակ, Մարտիրոս Ռբնը առանձնահատուկ վերաբերմունք ունի



կյանքի և գրական երևույթների նկատմամբ: «Ոչ մի շեղում ընտրած ճանապարհից», - սա է նրա ուղեցույցը: Նա գիտի, որ արվեստը խաղ չէ, այլ՝ ճակատագիր: Գրողի ճանապարհը անմնացորդ նվիրում է ու տքնաջան աշխատանքի արտահայտություն: Մարտիրոս Որբնը համոզված է նաև մի բանում. «Որքան մեծ է գրական իրականության հավաստիությունը, այնքան բարձրարվեստ է ստեղծագործությունը, և հակառակը՝ գործն ինչքան մոտ է գտնվում ռեալ իրականությանը, այնքան պարզունակ է, թերի»: Հավատարիմ լինելով գրական այս սկզբունքին՝ հեղինակը սկսում է մտածել, որ, այդուհանդերձ, գալիս է մի ժամանակ, երբ գրական իրականությունը իր գրավչությամբ ու ազդեցությամբ սկսում է գերիշխել...

Ընթերցողը գրական ստեղծագործության միջոցով առնչվում է նաև արարչագործության սուրբ պահերին: Կլանելով տողերի թախիծն ու գորովը, լուսավորվում է հոգևոր կյանքի անսահմանությամբ: Գրականագետ Հասմիկ Հակոբյանի կարծիքով՝ թախիծը Մարտիրոս Որբնի արձակում «ոչ թե գեղարվեստական հնարանք է, այլ՝ չկայացած կյանքի դրամատիզմ»: Էրոտիկ պատկերները արհեստական ծնունդ չեն հեղինակի արձակում, այլ թերի կյանքն ամբողջացնելու, չկայացած կյանքը իմաստավորելու փորձ: Նշեմ նաև, որ էրոտիկ պատկերների թրթռուն ֆոնին վառ ընդգծվում է կյանքի ու մահվան հակադրությունը:

Մի հատված «Նիրվանա» պատմվածքից.

«Հագինը նախշավոր ատլասե խալաթ էր՝ երկարափեշ, ցածի կոճակներն արձակած:

Տղամարդը ավերով խալաթի տակից զգում էր ծանոթ, հյուսիսի ու ձիգ մարմինը: Շարժվելիս կնոջ ազդրերը քսվում էին իր ոտքին, ինչպես ճյուղը՝ պատուհանի ապակուն, ու կրակը ժամանակից շուտ բորբոքվում էր»:

Գրականագետ Սոկրատ Խանյանի կարծիքով՝ Մարտիրոս Որ-

նը «մարդու հոգևոր ներքին աշխարհը ցուցադրելու անժխտելի կարողություն ունի: Նրա ստեղծագործական ձեռքբերումներում համարյա սխեմա չկա: Նա նախատիպը գեղարվեստական ճշմարտության է հասցնում պատումի անկաշկանդ հնարանքներով»:

Արձակագիր Մարտիրոս Ռբնը ինքնատիպ ձեռագիր ունի, ապրեցնող ձայն, որ միավորում է լինելիության բևեռները, ընթերցողին հասցնում այնտեղ, ուր արարվում են գեղեցկությունն ու կյանքը:

*2014թ. սեպտեմբեր*



## ԱՅՆ ԽՈՒՎԱՐՈՒՅՁ ՕՐԵՐԻ ՑԱՎՈՏ ՀԵՏԱԳԻԾԸ

*Հարցազրույց Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան, Արցախյան պատերազմի մասնակից Մարտին Ալոյանի հետ:*

Մարտին Ալոյանը ծնվել է 1957թ. մարտի 6-ին Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգն ավարտել է Երևանում: Հայրը՝ Գուրգեն Ալոյանը 1967 թվականի Արցախյան շարժման մասնակից է: Ադրբեջանի իշխանությունների հետապնդումներից հալածվելով, տեղափոխվում և բնակություն է հաստատում Երևանում:

Մարտին Ալոյանը աշխատում է Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, որպես դերասան: Մասնակցել է Արցախյան պատերազմին: Պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Շուշիի ազատագրման համար», «Գարե-



գին Նժդեհ», «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեղալներով:

**- Ինչպե՞ս մուտք գործեցիք թատերական աշխարհ:**

- 1975թ. ավարտելով Երևանի Ավ. Իսահակյանի անվան N 16 միջնակարգ դպրոցը, որոշեցի ընդունվել թատերական ինստիտուտ:

Այդ օրերին Երևանում էր գտնվում ճանաչված բանաստեղծ և մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը: Նա հուսադրեց ինձ. «Արի գնանք Ստեփանակերտ, այնտեղ դու կաշխատես որպես դերասան»: Ես զարմացա. «Ինչպե՞ս, առանց կրթությամբ»: Նա բարեհոգաբար ժպտաց. «Դերասան դառնում են ոչ թե ինստիտուտում, այլ բեմում»: Սիրտս ուրախությունից թրթռում էր: Միանգամից դուրս եկա մեծ բեմ: Աշխատանքի ընդունվեցի որպես սկսնակ դերասան: Իսկ երկրորդ հարկի փորձասենյակում ինձ էր սպասում իմ առաջին դերը: Շտապ բեմադրվեց ուկրաինացի դրամատուրգ Նիկոլա Ջառուդնու «Ծիածան» պիեսը, որտեղ ես կատարեցի Սաշկոյի դերը:

**- Արցախյան շարժումը լիովին վերափոխեց մեր կյանքը: Շարժումը նաև հոգեաշխարհի փոթորիկ էր: Ինչպիսի՞ անմոռաց դեպքեր էին ուղեկցել Ձեզ այդ տարիներին:**

Մասնակցում էի հավաքույթներին, ձգտում մի բանով օգտակար լինել ժողովրդին և ազգային շարժմանը: Մի օր Սոս Մայիլյանի հետ մեր տան պատշգամբն էինք նորոգում և միաժամանակ լսում ռադիոլուրերը: Տխուր իրադարձություններ էին զարգանում՝ ադրբեջանցիները հարձակվում էին հայ հովիվների վրա, քշում տանում էին ոչխարի հոտերը, ծեծում անմեղ մարդկանց: Այդ ժամանակ էր, որ ես ու Սոսը նայեցինք իրար աչքերի մեջ և հասկացանք, որ պետք է ինչ-որ բան անել:

Թատրոնի կոլեկտիվը հյուրախաղերով գտնվում էր Երևանում: Երևանյան բեմերում այդ օրերին կայանում էր «Տունը վաճառքի

ենթակա չէ» ներկայացումը, որտեղ ես խաղում էի լեհ տղայի դերը, որի հայրը հայ է: Պատրաստվում էինք վերադառնալ Ստեփանակերտ: Աշոտ Ստեփանյանն ասաց. «Մարտին, շատ կարևոր բեռ կա, կարո՞ղ ես հասցնել Ստեփանակերտ»: «Ի՞նչ բեռ», - հարցրեցի: «Ինքնաշեն նռնակների նմուշներ»: «Որտե՞ղ է ծանրոցը», - հարցրեցի ես՝ ուրախություն ապրելով այն բանի համար, որ ինձ այդպիսի ազգանվեր գործ է վստահվում: Գիտե՞ինք, որ Ստեփանակերտի օդանավակայանում տիրություն էին անում ազերի օմոնականները: Ինքնաթիռով այդ բեռը տեղափոխելը անհնար էր, խստորեն ստուգում էին բոլոր ծանրոցները: Փորձեցինք Լաչինի ճանապարհով մուտք գործել Ստեփանակերտ: Մի քանի կիլոմետր էինք հեռացել Տեղ գյուղից, երբ մեր մեքենան կանգնեցրին ոստիկանության աշխատակիցները: «Լաչինում Ձեզ կսպանեն: Եթե ուզում եք կենդանի մնալ, հետ վերադարձեք»:

Յուրայի մեքենայով ճանապարհվեցի դեպի օդանավակայան: Օդանավակայանի տնօրենը հայրենասեր մարդ էր, նախապես տեղեկացրի նրան ծանրոցի մասին, խոստացավ օգնել: Բայց ասաց՝ ամեն օր կգաս օդանավակայան, որ հարմար պահն ընտրենք: 30 կգ կշռող ծանրոցի պարունակությունը բաժանելով երկու մասի տեղավորեցի արկղերում, «քողարկելով» մանկական հագուստներով և դպրոցական իրերով: Ճանապարհվեցի դեպի օդանավակայան: Տնօրենն ինձ տեսնելով հրավիրեց աշխատասենյակ, որտեղ ծանոթացրեց երկու չսափրված մարդկանց հետ: «Այս մարդիկ Ռուսաստանից բերված հարազատի դիակ ունեն: Երիտասարդ տղա է մահացածը, խեղդվել է լճում: Ղարաբաղում տեղակայված ռուսական զորքի հրամանատարությանը խնդրել ենք զինվորական ուղղաթիռ տրամադրել, որպեսզի դիակը հասցնենք Շեխեր: Այս մարդկանց հետ դու էլ կուղևորվես: Դա քո վերջին հնարավորությունն է»:

Արկղերը տեղավորեցի ինքնաթիռում՝ նստելով արկղերից մեկի

վրա: Իմ դիմաց նստած էր մի ռուս սպա, որը զննող հայացքով նայում էր ինձ: Չետո իմացա, որ նա Ղարաբաղում տեղակայված ռուսական զորքի շտաբի պետն է: Ուրիշ ուղևորներ էլ կային: Դիակը իջեցրինք: Մեր հազուստներից դիակի հոտ էր փչում: Ուղղաթիռը կրկին օդ բարձրացավ և քիչ անց իջավ Խոջալուի օդանավակայանում: Չեռվից նկատեցինք, թե ինչպես էին ազերի օմոնականները մանրակրկիտ ստուգում Երևանից ժամանած ուղևորներին: Աղայան ազգանունով մի տղայի հետ ճանապարհին ընկերացել էի: Նա ինձ օգնեց: Ծառայողական դռնով դուրս եկանք և մոտեցանք տաքսիների կանգառին: Այդպես կատարեցի իմ առաջին առաջադրանքը՝ Ստեփանակերտ հասցնելով կարևոր նշանակություն ունեցող ծանրոցը:

**- Սումգայիթի կոտորածը Չայոց մեծ եղեռնի շարունակությունն էր մեր օրերում: Լսել եմ, որ Դուք Սումգայիթյան եղեռնից անմիջապես հետո բեռնատար մեքենայով մտել եք «ինտերնացիոնալ» այդ քաղաքը և այնտեղից դուրս բերել մի հայ ընտանիքի պատկանող տան գույքը: Ինչպիսի՞ ապրումներ եք ունեցել՝ մտնելով այդ դժոխային քաղաքը:**

- Մինչ այդ ես մի քանի անգամ եղել էի Սումգայիթում: Չյուրընկալվել էի իմ հեռավոր ազգական Էլֆրիդայի տանը, որը գտնվում էր ծովից հարյուր մետր հեռավորության վրա: Լողանում էի ծովում և հանգստանում ծովափին: Երբ այլևս վտանգավոր դարձավ Սումգայիթում ապրելը, Էլֆրիդան իր երկու երեխաների հետ տեղափոխվեց Ստեփանակերտ: Նրա ընտանիքը հանգրվանեց երկսենյականոց նկուղային բնակարանում: Դա էլ փրկություն էր: Մի օր նա եկավ մեր տուն, հուզված էր ու տխուր և խնդրեց, որ ես իրեն օգնեմ մի հարցում: «Իմ տան գույքը մնացել է Սումգայիթում, այս օրերին պետությունը մեքենա է հատկացնում նրանց, ովքեր ցանկանում են Ադրբեջանի բնակավայրերից իրենց տնային գույքը տեղափոխել... Քեզ եմ դիմում, որովհետև, միակ տղամարդ բարե-

կամս դու ես... Կարող ես ինձ օգնել...»

Ես համաձայնեցի: Հաջորդ օրը մտա Բորիս Դադամյանի աշխատասենյակը, որպեսզի պայմանավորվեմ ուղևորության համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման հարցում: Նա ոտից գլուխ զննեց ինձ և ասաց. «Ալոյան, ռվ է ուղեկցելու վարորդին»: «Ե՛ս», - ասացի: «Այդ դեպքում գնա հաշվապահություն և մուծիր 110 ռուբլի... Հետո կգաս մոտս, ասելիք ունեմ...»:

Բ. Դադամյանը հորեղբորս մտերիմ ընկերն էր: Մի քանի կարևոր խորհուրդներ տվեց, անփորձանք ճանապարհ մաղթեց, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց լռեց. «Տղա, զգույշ կլինես...»:

Բեռնատար մեքենայի վարորդը 35 տարեկան տղամարդ էր: Սև գանգուր մազերը, խիտ հոնքերը և արծվային հայացքը բացահայտում էին առնական ոգին: Անունն Էդիկ է: Ճանապարհվեցինք: Զգացվում էր, որ Էդիկը այսպիսի առաջադրանք կատարում էր ոչ առաջին անգամ: «Մեքենայից երբեք չես իջնում, ադրբեջանցիների հետ որևէ առնչություն չես ունենում», - վարորդն ինձ մի քանի խորհուրդ տվեց, երբ արդեն անցնում էինք Սումգայիթի փողոցներով: Լայն ու ասֆալտապատ ճանապարհները, որոնք անշուշտ կառուցվել էին հայ վարպետների կողմից, առանձնանում էին իրենց որակով ու գրավչությամբ: Տազնապան ինքնին մի քանի րոպե համրացրել էր մեզ: Չէինք խոսում: Բայց և լուռ չէինք: Որոնում էինք Էլֆրիդայի տան ուղղությունը: Ո՞ւմից հարցնել... Ժողովուրդների բարեկամության մասին պատմությունը իրականության ծաղրապատկերն էր: Մայթով մի ռուս տղամարդ էր անցնում՝ որդու ձեռքը բռնած: Իջա մեքենայից և ռուսերեն ողջունելով նրանց, հարցրի մեր որոնած փողոցի տեղը: Ռուս տղամարդը երկյուղած հայացքով նայեց ինձ և անխոս ու արագ հեռացավ՝ տղային քարշ տալով իր ետևից: Բարձրահարկ շենքերի պատուհաններից սևեռուն հայացքով մեզ էին նայում: Տրոփող տազնապ կար: Այս ոճրագործ քաղաքում այլևս հայ չկար: Բայց հայի շինարար ձեռքի

հետքերը դեռ շատ կապրեն այստեղ: Այս թշնամական ու լարված մթնոլորտում իսկույն ընդգծվում և առանձնանում էր հայն իր ներկայությամբ: «Ինտերնացիոնալ» քաղաքում հայը տեղ չուներ: «Ախ երանի թե մարդը երբևէ չգունավորվի», - Պարույր Սևակի հոգու թախծանքն էր սա: Սումգայիթն այլևս նախկինը չէր: Նա ազատվել էր գաղափարական վարագույրներից և իր թուրքական ժանիքները ցցել... Հայի արյունն էր ներկել փողոցները: Եվ քաղաքն այդ ձեռք էր բերել բարբարոսի վարք: «Դեպի ռ՛ւր քշեմ», - հարցրեց վարորդը: «Դեպի անորոշություն», - իմ փոխարեն կարծես պատասխանեց օտար փողոցը: Որոնող հայացքով սկսեցի փնտրել ծանոթ ճանապարհը: Կեսժամյա պտույտից հետո վերջապես գտանք անհրաժեշտ փողոցը: Մեքենան կանգնեց փողոցում: Էլֆրիդան այս հասցեն էր տվել: Բարձրացա երրորդ հարկ և սեղմեցի դռան կոճակը: Դուռը բացեց մի միջահասակ կին: Աղբբեջաներեն լեզվով տեղեկացրի իմ մասին: Տանտիրուհին ժպտաց և ներս հրավիրեց: Ասացի մենակ չեմ, դրսում վարորդն է սպասում: «Թող վարորդն էլ ներս գա», - արտաբերեց կինը:

Իջա բակ, մոտեցա վարորդին: «Ես պիտի մնամ այստեղ, - ասաց վարորդը, - պիտի հսկեմ մեքենան, թուրքի լակոտները իմանալով, որ դարաբաղյան մեքենա է, անպայման մեխեր կտեղադրեն անվադողերի տակ, որպեսզի չկարողանանք տեղ հասնել»: Դիմացի փողոցով մի տարեց թուրք էր անցնում՝ ետևից քարշ տալով մի մատաղացու ոչխար, որի եղջյուրներից կարմիր ժապավեն էր կապած: Թուրքի լակոտները ուրախ կանչերով ուղեկցում էին նրան: Հավանաբար որդին բանտից էր փրկվել կամ էլ ազատվել ռուս զինվորի ձեռքից... Կոտորածներ հրահրած, բայց անպատիժ մնացած թուրքի ուրախությո՛ւն...

Տանտիրուհին զանգեց Էլֆրիդայի քրոջ ամուսնուն, որ աղբբեջանցի է: Շուտով նա եկավ երկու ընկերոջ հետ: Բարևեց ռուսերեն լեզվով: Արագ բարձեցինք մեքենան: Ընկերները հեռացան՝ ինչ-որ



բանից զգուշանալով... Էլֆրիդայի քրոջ ամուսինը մեզ ուղեկցեց: Ճանապարհին հայրությանքներ թափեց իր ազգի գլխին. «Խայտառակվեցինք աշխարհի առաջ: Ինչքան դիակներ են փոսերի մեջ լցրել, ասֆալտապատել...»:

Ես լսելով նրան՝ ավելի խորն ու ուժգին ատեցի Կասպից ծովի ջուրը, որին կուլ էին գնացել մեր հայրենակիցները: Սոււմգայիթից դուրս եկանք: Բաքվում հյուրընկալվեցինք վարորդ Էդիկի բարեկամի տանը: 5 անց կես ճանապարհվեցինք դեպի Ստեփանակերտ: Կեսօրին տեղ հասանք: Գույքը իջեցրինք Էլֆրիդայի տան մոտ: Էլֆրիդան ուրախությունից ցնծում էր: Ես նույնպես գոհ էի:

Ես ու վարորդ Էդիկը (հետագայում նա զոհվեց Արցախյան պատերազմում) վերջին հայերն էինք, որ հեռացանք դժոխային քաղաք Սոււմգայիթից:

Նամականի**ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ**

Բարև, սիրելի Ջաքար:

Նամակդ ուրախության պես մտավ տուն ու բախվեց իմ տխուր հայացքի ճաղերին: Դու այնքան շատ կաս Շուշիի և իմ կյանքում, որ քո ներկայությունը բխում է յուրաքանչյուր օրվա եզրագծերից... Ամենաճշմարիտ ինքնահաստատումը սա է: Մնացածը՝ սուտ է: Յիշեցի իմ և բանաստեղծ Մանուել Ջավախքի հղած տողերը. «Կարոտն այնպես կլանեց մեզ, որ մի անգամ ևս մեր որոնումների հնոցում լուսացավ հայրենիքի տառապած դեմքը: Յայրենիք, որ այնպես է ներծծված մեր երակներում հոսող արյան մեջ, որ շատ հաճախ չենք նկատում նրա տիրական ներկայությունը, քանզի մենք՝ ինքներս աստիճանաբար դառնալով նրա պայքարող ու արթուն մասը, ազատվում ենք մեր նեղ եսից, փոխակերպվում բառերի ու բանաստեղծության տողերի,- այդ ճանապարհով մենք ոչ միայն կրկին անգամ հաստատում ենք մեր գոյությունը, այլև հարություն ենք տալիս մեր պատմության կեղևի տակ նիրհող արժեքներին: Բնականաբար, ժողովրդի ոգու սերմնացանի հայացքը միշտ էլ ցավով է նայում իր այն սերմերին, որոնք տարերային աղետի բաժին են դառնում, սակայն հողի ակոսներում մնում է այն առողջ ու կայուն սերմը, որի ծլարձակումն անխուսափելի է, ինչքան էլ բնությունը դաժան լինի և ժամանակը՝ անողոք: Շուշիում ցանած քո հոգևոր սերմերը ոչ միայն ոգևորող ուժ են հաղորդում կյանքի երակներին, այլև քո սաների մեջ դառնում են բնավորության և հոգևոր տարածությունների հետ հաղորդակցության միջոց, որոնք միշտ էլ մեր ժողովրդի էությանը բնորոշ գծեր են եղել և նրանց արթնացման գործում առկա է նաև քո անձնուրաց մասնակցությունը»:

Ձաքար ջան, կյանքը ունի նաև իր տխուր ու անմոռաց էջերը... 1999թ. փետրվարի 13-ին մահացավ հայրս և ես անփոխարինելի մարդու կորուստ զգացի: Հանկարծ հասկացա, որ ինձ տրված կյանքը ժամանակավոր է (գիտեի ես դա, բայց չէի հավատում), զգացի, որ այլևս մանուկ չեմ, նույնիսկ ջախել չեմ, այլ մի մարդ, որին մնացել է ապրել... Կարծես միանգամից թիկունքս դարձավ հեշտ խոցելի, իսկ առջևում անորոշությունն էլ ավելի խտացավ: Ես մնացի կանգնած բաց տարածքում, ոչ թե ինչպես միշտ՝ հորս ու որդիներիս արանքում, այլ՝ մենակ, որովհետև, երբ հայրս չկա... որդիներս սկսել են ինձ դժվար հասկանալ... Չգիտեմ, ինչու, բայց ես հենց այս ապրումներն ունեցա: Վարդան Հակոբյանն ասում է, որ դա այդպես էլ պիտի լինի. հայրը հոգու մոլորակների վրա ազդող զարմանահրաշ էություն է:

Ժամանակը մեզնից խոսք է պահանջում, բանաստեղծական ընդհանրացնող խոսք: Պոեզիան բխում է կյանքից ու մեր երևակայությունից... Բառերը զննում են բանաստեղծի լռության խորքերը, լսվող ահռելի ձիչից արթնանում են փողոցները, երգերը և թռչունները: Դարպասների ճռնչունից զորեղանում են պատմության միտքն ու շնչառությունը... Բայց ես կանգ եմ առնում անսովոր մի ծաղկի դիմաց և... գրում իմ կյանքի տողերը, որոնցով կայանում է հաղորդությունը բացառիկ պահերի և իրերի բնույթների միջև...

Ձաքար ջան, սպասում ենք քո գալստյան առաջին ականաթի թին...

Ճիշտ է նկատված. «Շուշիում և ընդհանրապես Արցախում կազմակերպած քո բոլոր համերգները իրենց ուրույն նշանակությունն ունեցան արցախյան ազատամարտի ոգեկոչության բռնկումներում, կայունացրին պայթյուններից տազնապահար երեխաների հոգեկան հավասարակշռությունը, կրկին անգամ հաստատելով այն ճշմարտությունը, որ երաժշտությունը լավագույն սպեղանի է

ցաված ու հուսահատված սրտերի համար: Ջինվորը՝ ինքնաձիգով, իսկ Ջաքար երաժիշտը պայքարեց խմբավարական փայտիկով և նոտաներով»:

Մեր մեջ ձգվող տարածությունն ու հեռավորությունը անկարող են փլուզել մեր հոգևոր արարչության այն լուսե կամուրջը, որի թռիչքը անցնում է ժամանակի և տարածության վրայով՝ ամբողջացնելով հայրենիքի և արտերկրի հայության երազանքների աստվածահաճո պատկերը:

*Ռոբերտ Եսայան*

*05.03.1999թ.*

*ք. Շուշի*



*Նկարում (աջից)՝ Ջաքար Քեշիշյանը և Ռոբերտ Եսայանը իրենց տիկնանց՝ Կամիլայի, Անահիտի հետ Աննա տատի բնակարանում:*

## ՍՊԱՐՏԱԿ ՂԱՐԱԲԱՂՑՅԱՆԻՆ

Բարև, սիրելի՛ Սպարտակ:

Հիշում ես հողից հանված այն խաչքարը, որի մեջ մեր անցյալն էր արթնանում: Քարը մեզ ասում էր՝ զգաստացե՛ք, հայեր: Արմատներ ձգեցե՛ք միմյանց հայացքի մեջ և զգացե՛ք խորության ահավորությունը: Գյուղացիք հողից հանում էին խաչքարը՝ հիշողության լուսաբացը, և մենք վազում էինք նրա առաջին շողերին ընդառաջ:

Հիշողությունն է հողի լուսանում կույս խաչքարով:

Քարին տակ գյուղում հարսանիք էր: Բայց մենք վազում էինք հողից բարձրացող արշալույսին ընդառաջ:

Հողի մաշկի տակ ժամանակների խոնավությունն էր խտանում: Շողը հազում էր մեր երազանքի տխուր խորաններում, և հողի շնչառության մեջ լեռների ուժն էր կուտակվում: Թիթեռի հևոցի մեջ հայոց բառերն էին բոցավառվում, և հիշողության քարանձավներն էին լուսավորվում մեր պրպտուն հայացքների կայծերից: Բախտի շշուկից հալվում էր ճակատագրի մշուշը: Հիշողության քարանձավի անկյուններում կծկվել էին մեր երազանքի խճուկ ծվենները...

Օղը կարմիր էր՝

Ինչպես

Վերքը.

Մարդկային իրանները օրորվում էին փողոցներում՝ պատաստ յուրաքանչյուր պահի վերածվելու կախաղանների...

Մահն իմացյալ անմահություն է:

Դու եկար Արցախ և հողի ականջների մեջ շնչացիր մի հրեղեն տող. «Մենք մեզ կարոտել ենք»: Լեռները նայեցին իրար հայացքի մեջ ու որոտացին. «Մենք մեզ կարոտել ենք»: «Մենք մեզ կարոտել ենք», - ձչացին աղբյուրները: Եվ հիշողության ակունքները ազատ-

վեցին թմրության շերտերից: Լույսը շողշողաց՝ ինչպես դանակի շեղբը: Վրեժի ալիքներ անցան բառերի երակների միջով, և բառը 70 տարվա ընթացքում առաջին անգամ իրեն տեսավ սրի շեղբի մեջ և զգաց, որ ինքը գեղեցիկ է, երբ մերկ է, զգաց, որ ինքը ահավոր է, երբ ժամանակի շնչի մեջ է, հզոր է, երբ ճորտ չէ:

Հայոց ճորտության հորիզոնն էր կեղևաթափվում:

Դու եկար Շուշի քաղաք և ծոծատեսորիդ մեջ գրեցիր.

*«Արձիվների քաղաք ես դու, Շուշի,  
Բայց քո մեջ ագռավներն են բնակվում»:*

Հողը տնքում էր ցավից: Ագռավների թևերի տակ օրորվում էր հայոց կոտորածների մառախուղը: Նույն մառախուղի արհամարհված ծվեններն էին լալիս Շուշիի հայ բնակչության աչքերում: Ամեն օր Շուշիում պղծվում էին Հայոց հիշատակի քարերը: Մեռնող երազների դիակների վրայով անցնում էր մահը: Լսվում է խավարի քայլերգը: Ծափահարող ձեռքերի մկաններում նիրհում էին անանուն խռովքներ, բախումների սաղմեր:

Հիմա այլ է Շուշին:

Հայոց սրի պես բաց ու վեհատեսք է Շուշիի հայացքը:

Շուշին ազատագրող հայ մարտիկներն իրենց հարվածի ահագնությամբ պատմության հայացքի մեջ գրեցին. «Մենք ենք մեր սարերը»: Եվ մարդկության պատմությունը հարստացավ հերոսական մաքառման ևս մի էջով:

Շուշին ազատագրող հայ մարտիկը աշխարհի շուրթերից քերեց «սրբապղծություն» բառը և նոր բառ դրեց նրա ազատագրած տարածքի մեջ:

Վերականգնող վարպետների ձեռքերի սփոփիչ ուժն է հոսում կրկին Ղազանչեցոց եկեղեցու քարերի միջով: Մարդկային հիշողությունն է սրբագործվում քարերի մեջ: Բառերն իրար հետ այն-

պիսի հայացքներ են փոխանակում, որ ջերմանում է Շուշիի օդը... «Արամ Մանուկեան» վարժարանը Շուշիի հոգևոր կյանքի ճկված սյուններն է փորձում բարձրացնել խորքերից: Լույսը խարխափանքների քղանցքներն է պատռում: Ես ձուլվեցի վարժարանի ստեղծագործող ոգու հետ, առնչվեցի այդ հոգևոր օջախի ջերմությանն ու թարմությանը՝ Հովիկ Մուսայելյան, Զաքար Քեշիշյան, Հովիկ Գասպարյան, Մարգո Հարությունյան, Ակսել Կնյազյան, Ռոբերտ Աղաջանյան...

Ինձ հիացնում է նրանց նվիրվածության խոսքը, եռանդի հրավառությունը:

Շուշիի համար այս օրերը վերածննդի օրեր են: Հավերժության ավիշ է շարժվում քաղաքի էության մեջ: Որովհետև քաղաքի էությունը գտել է ինքն իրեն:

Հանիր քո ծոցատետրը, Սպարտակ Ղարաբաղյան, և նոր երկտող գրիր Շուշիի մասին:

Սիրելի ընկեր...

Ինքան փրփուր է հոսել աշխարհի ոսկորների վրայով,

Ինքան շատ են ձերմակել Անհունի վարսերը...

Պատերազմի անորոշության մեջ ես հենվում եմ ինձ համար հարազատ կետերի վրա: Քո պատկերով, քեզ հետ առնչվող իմ անցյալով ես սփոփում եմ ինձ, ես իմ վերքերն եմ բուժում քո հայացքի լույսով, քո բառերի ջերմությամբ...

Ինքան հին են հայոց տառապանքն ու հայոց երջանկությունը:

Ես, ծունկի իջած, ճառագայթի հայացքի մեջ գրում եմ հայերեն մի տառ:

*Ռոբերտ Եսայան*

*24.08.1994թ.*

*ք. Մարտակերտ*

**ԱՆՆՎԱՃ ՈԳԻՆ ԼԵՌՆԱՊԱՐԵՐԻ**

Պապիս շուրթերին ծաղկած մի հյուլե  
Լուսավորում է ճանապարհը իմ,  
Որ այս աշխարհում չընդունված հյուր է,  
Աննված ոգին լեռնապարերի:

Պանկ, քո հայացքը տանիքի նման  
Փրկում է մթին զարկերից հողմի,  
Նրանից ցայտող ճառագայթն անմար  
Օրորոցվում է դեռ մորս կողմից:

Քո կնձիռները՝ կարոտների բույն:  
Ծիածանի թև, որ մնացել է  
Իմ հայացքի մեջ, որպես սրբություն:  
Ոգեղեն գագաթ-երազանքի հուն,-  
Քո պատարագող ձայնը դարձել է  
Ինձ համար արյան շրջանառություն:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՈԳՈՒ ՃԱՆԱՊԱՐՅ ..... 3-150

ՅՐԵՇՏԱԿ ..... 151-238



**ՌՈՒԲԵՐՏ ԱՐԱՄԻ ԵՍԱՅԱՆ**

*Հատոր ութերորդ*

**ԽԱՉ ԵՎ ԼՈՒՅՍ**

Սրբագրիչ՝  
Համակարգչային շարվածքը՝  
Էջադրումը՝  
Կազմի ձևավորումը՝

Անահիտ Եսայան  
Բելլա Մինասյանի  
Թամար Հարությունյանի  
Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84<sup>1/16</sup>,  
ծավալը՝ 15 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում  
Հ.Հակոբյան, 25  
Ստեփանակերտ-2018